Azg Ազգ

15 ՀՈԿՏԵՄԲԵՐ 2005 ՇԱԲԱԹ 186 (3352)

ՀԹՄՄ-ն հաստատում է տարեկան նոր՝ «Արա եւ Մարալ» մանկապատանեկան մրցանակ

Նյու Յորֆից Իրմա եւ Սիլվա Տեր-Ստեփանյանների նախաձեռնությամբ եւ հովանավորությամբ Հայաստանի Թեֆեյան մշակութային միության վարչությունը որոշել է հաստատել տարեկան նոր մրցանակ, որը կենսրհվի այն ստեղծագործությանը, որը հայրենական կյանքի գեղարվեստական պատկերների միջոցով նախադպրոցական եւ դպրոցական տարիքի երեխաների մոտ զարգացնում է մայրենին եւ դաստիարակում հայեցի մտածողություն:

Փաստորեն մանկապատանեկան մրցանակի գաղափարը Տեր-Ստեփանյաններինն է, որոնք ամերիկյան ափերում արդեն տասնամյակներ շարունակ իրենց ջանքը կենտրոնացնում են մանկական ծրագրերի՝ հայեցի կրթության վրա: Նրանց փափագով նոր մրցանակը, որը նրանք հաստատում են իրենց հոր եւ մոր՝ Միհրան եւ Ալիս Տեր-Ստեփանյանների հիշատակին, կոչվելու է այդ ծրագրերից մեկի՝ «Արա եւ Մարալի» անունով:

Մրցանակի արժանացած ստեղծագործությանը կտրվի վահանակ-դիպլոմ եւ 1000 դոլարին համարժեք դրամ պարգեւ:

Նոր մրցանակի հայտարարությունն ու կանոնադրությունը կհրապարակվի առաջիկայում:

Հայաստանում թռչնագրիպի հավանականությունը խիստ նվազ է

Վաճառվող տեղական եւ ներկրվող հավի միսը վտանգավոր չէ

ԹԱՄՈՒՐ ՀԱՍՈՒԲՅԱՆ

Հայաստանում թռչնագրիպի հավանականությունը խիստ նվազ է, գրեթե անհավանական: Այս մասին «**Ազգին**» հավաստիացրեց գյուղնախարարության անասնաբուժական վարչության պետ Գրիգա Բաղյանը: «Հանրապետության խանութներում եւ առեւտրի այլ կետերում վաճառվող տեղական եւ ներկրված հավի միսը ստուգված է, որեւէ վտանգ չկա օգտագործելուց: Թռչնագրիպի դեպքը Թուրքիայում հայտնաբերվել է հոկտեմբերի առաջին տասնօրյակում, իսկ այդ ընթացքում Հայաստան թռչնի միս չի ներմուծվել», ասաց նա:

Երեկ «Ռոյթեր» գործակալությունը հաղորդեց, որ Թուրքիայի արեւմտյան Թուրգութլու քաղաքի հիվանդանոց են տեղափոխվել 9 քաղաքացիներ, որոնք կասկածվում են որպես թռչնագրիպի վիրուսակիրներ: Նրանք բոլորն էլ շփումներ են ունեցել աղավնիների հետ, որոնք հավանաբար վարակվել են թռչնագրիպով: Վերջին երկու շաբաթվա ընթացքում քաղաքում սպանվել են 40 աղավնիներ: Նախորդ շաբաթվա վերջին Թուրքիայի արեւմուտքում՝ ֆերմաներից մեկում 2 հազար հավերի ոչնչացման պատճառը, ամենայն հավանականությամբ, թռչնային գրիպն է եղել: Հինգշաբթի օրը, ըստ BBC-ի, հաստատվել է, որ Թուրքիայում տարածվածը թռչնագրիպի H5N1 վիրուսն է, նույն վիրուսը, որից Ասիայում ավելի վաղ մահացել էր 60 մարդ:

Տես էջ 3

ՈՐՔԱՆ ԿԱՐԵԼԻ Է ՄԱԽՍԵԼ

2006-ի պետական բյուջեի նախագիծը ԱԺ հիմնական հանձնաժողովների նիստերում

Քննարկումներն ընթանում են համարյա առանց հարցուպատասխանի: Բայց հարցեր ամեն դեպքում կան: Դրանցից մեկը արդեն երկրորդ տարին բարձրաձայնեց ՄԱԿ խմբակցության ղեկավար Գուրգեն Արսենյանը. «Արդյոք արտաքին գերատեսչությունը գոհար ունի՞ հայկական քարոզչության համար: Եվ ինչո՞ւ բաց թողնվեց Հայաստանի հետ դիվանագիտական հարաբերություններ չունեցող եւ ակնհայտորեն հակահայկական տրամադրությամբ 4 իսլամական երկրներից մեկի՝ Պակիստանի հասարակության վերաբերմունքին ազդելու հնարավորությունը: Ինչո՞ւ համապատասխան գործողություններ չձեռնարկվեցին պակիստանյան աղեղից հետո»:

Պատասխան չէր էլ ակնկալվում, հաշվի առնելով արտաքին գործերի նախարարի բացակայությունը: Փոխնախարար Գեղամ Ղարիբջանյանն ի պատասխան ընդգծեց նախ քարոզչության ծրագրի լինելիության եւ ապա գումարի կարետությունը եւ տեղեկացրեց, որ նախարարի ընթացիկ այցն էլ կարետված ճեպազրությունն է կրում: Իսկ հարցի պատասխանը տվելու է գրավոր:

Քաղաքացիների ու դիվանագետների աշխատավարձերի բարձրացում է նախատեսվում

35, 4 մլրդ դրամ է ծրագրվել 2006-ի պետբյուջեից հատկացնել օրենսդիր, գործադիր եւ դատական մարմինների պահպանման ընթացիկ ծախսերի համար: Ընթացիկ տարվա համեմատ հատկացումներն ավելացել են 3035.6 մլն դրամով: Այս աճը բացատրվում է պետական կառավարման համակարգի բարեփոխման նպատակով նոր մարմինների ստեղծմամբ եւ նշված ոլորտներում աշխատավարձերի բարձրացմամբ: Քաղաքացիի միջին աշխատավարձը ծրագրվում է հասցնել 86 հազար 700 դրամի, օրենսդիր մարմնում աշխատող քաղաքացիինը՝ 131 հազար 900, գործադիր իշխանության մարմնում՝ 102 հազար 900, դատական մարմնում՝ 107 հազար 100 դրամի: Կառավարման համակարգի աշխատողների թիվն էլ աճելու է մինչ 15.074: Այս տարի նրանք 14.525-ն են:

Բյուջեից նախագահի աշխատակազմի պահպանման համար տվելիք գումարն էլ նախորդ տարվա բյուջեի համեմատ 62 միլիոնով ավելի՝ 1, 9 միլիարդ դրամ է կազմելու:

Տես էջ 2

Ռեկտորները գործում են առանձին, իսկ բողոքող դասախոսները հարգախնվում են

Բուհերի խորհուրդների նոր կարգի դեմ դժգոհությունները չեն դադարում

«Ներկա պահին յուրաքանչյուր բուհ իր հարցն առանձին է լուծում, ռեկտորներն առանձին-առանձին են բանակցում երկրի նախագահի հետ, իսկ ուսանողությունը նույն պահանջով շարունակում է իր պայքարը՝ կասեցնել կառավարության բուհերի կառավարման նոր կարգի վերաբերյալ որոշումը: Ի տարբերություն պետական մյուս բուհերի, Երեւանի պետական համալսարանը դեռեւս գիտխորհրդի ցուցակ չի ներկայացրել», **«Ազգին»** երեկ ասաց ԵՊՀ քաղաքացիների եւ միջազգայնագետների հայկական ընկերակցության ներկայացուցիչ **Գոհար Վեզիրյանը**:

«Բուհերի ավտոնոմիայի պաշտպանության խորհուրդը» երեկ դարձյալ ճնշարկում է կազմակերպել Ռազմավարական եւ ազգային հետազոտությունների հայկական կենտրոնում: Նախորդ անգամվա պես ճնշարկմանը չեն ներկայացել կրթության նախարարության ներկայացուցիչները, իսկ ներկա ակադեմիկոսներն ու դասախոսները խոստացել են աջակցել ուսանողությանը՝ բարձրագույն կրթության ոլորտի քաղաքականացումն արգելելու համար:

Գայանե Վեզիրյանի ասելով, «Բուհերի ավտոնոմիայի պաշտպանության խորհրդի» թիվ մեկ խնդիրը տեղեկատվական շրջափակումից ազատվելն է, որի համար նախատեսում են աշխատանք տանել ուսանողական խմբերի հետ: Խորհրդի գործը բարդացնում է այն, որ ուսանողական խորհուրդն իրեն հեռու է պահում կազմակերպվող ակցիաներից:

Քննարկման ժամանակ ելույթ է ունեցել նաեւ բուհական խորհուրդների նոր կարգի դեմ բողոքող պետական համալսարանի աստվածաբանության ֆակուլտետի դասախոս Վարդան Խաչատրյանը, որը նախորդ օրը «զույգի էր հրավիրվել» ՀՀ ոստիկանության 6-րդ վարչություն:

Ռ. Պ.

Շարժայի էմիրի նվերը

Արտաքին գործերի փոխնախարար Գեղամ Ղարիբջանյանի տեղեկացմամբ՝ վերջերս ԱԳՆ հրավերով Հայաստան այցելած Շարժայի էմիրը Հաղարծինի համալիրի եւ ճանապարհի նորոգման համար նվիրաբերել է 5 միլիոն դոլար: Նրա վերադարձից հետո Արաբական Միացյալ Էմիրությունների շեյխը համաձայնել է աջակցություն ցուցաբերել Արփա-Սեւան թունելի վերականգնմանը:

Ն. Պ.

Երեւան կժամանի ԱՄՆ պետքարտուղարի օգնական Դենիել Ֆրիդը

ԱՄՆ պետքարտուղարի Եվրոպայի եւ Եվրասիայի հարցերով օգնական Դենիել Ֆրիդը հոկտեմբերի 18-ին կարճատեւ այցով կժամանի Երեւան, հաղորդում է «Մեդիամաքսը»՝ վկայակոչելով իր աղբյուրներն ամերիկյան դեսպանությունում: Այցի ընթացքում Ֆրիդը կհանդիպի Հայաստանի նախագահ Ռոբերտ Քոչարյանին: Մինչեւ պետքարտուղարի օգնականի պաշտոնում նշանակվելը Ֆրիդը զբաղեցնում էր ԱՄՆ Ազգային անվտանգության խորհրդի Եվրոպայի եւ Եվրասիայի հարցերով ավագ տնօրենի պաշտոնը:

Դենիել Ֆրիդը կդառնա ամերիկյան վարչակազմի առաջին բարձրաստիճան պաշտոնյան, որը կայցելի Հայաստան 2004 թվականին Ջորջ Բուշի՝ ԱՄՆ նախագահի պաշտոնում վերընտրվելուց հետո: 2004 թվականի մարտին Հայաստան էր այցելել ԱՄՆ պետքարտուղարի տեղակալ Ռիչարդ Արմիթեյջը: 2001 թվականի օգոստոսին Երեւան էր եկել ԱՄՆ պետքարտուղարի Եվրոպայի եւ Եվրասիայի հարցերով օգնական էլիզաբեթ Ջոնսը, իսկ 1999 թվականի հոկտեմբերին՝ Քլինթոնի վարչակազմում ԱՄՆ պետքարտուղարի տեղակալ Ստրոբ Թալբոթը:

Ամերիկյան արտաքին քաղաքական գերատեսչության ղեկավարը Հայաստան է այցելել ընդամենը մեկ անգամ. 1992 թվականին Երեւան էր ժամանել ԱՄՆ պետքարտուղար Ջեյմս Բեյքերը:

Հայ մամուլի տոնը

Արդեն երկրորդ տարին հայ լրագրողները նշում են հայ մամուլի օրը: 2004 թ. կառավարության որոշմամբ հայ մամուլի օրը համարվեց հոկտեմբերի 16-ը՝ ի պատիվ «Ազդարար»-ի առաջին համարի լույս ընծայման: 1794-96 թթ. Հնդկաստանի Մադրաս քաղաքում Հարություն քահանա Շմավոնյանի խմբագրությամբ ազդարարվեց հայ մամուլի սկիզբը:

Երեկ ժուռնալիստների միության նախագահ Աստղիկ Գետոյանը շնորհավորելով հայ մամուլի նվիրյալներին, հայտարարեց 2005 թ. «Ազդարար» մրցանակի արժանացածների անունները: Ժյուրիի նախագահ Գրիգոր Զանիկյանը տեղեկացրեց, որ ընտրվել են հինգ անվանակարգեր. Պարբերական մամուլ անվանակարգի մրցանակը հանձնվեց «Ավանգարդ» թերթի գլխավոր խմբագիր Զուլիետ Մարտիրոսյանին, մարզային, քաղաքային՝ Սոչիակի «Լուսարձակ» թերթի գլխավոր խմբագիր Ֆահրադ Ափուջանյանին, հեռուստատեսության՝ Հանրային հեռուստատեսության «Կարոտ» ստեղծագործական խմբի ղեկավար Մանուկ Մուրադյանին, ռադիո՝ Հանրային ռադիոյի խմբագիր, «Սպորտ» բանաձեւ հաղորդաշարի համար Գոհար Մարտիկյանին եւ ֆոտոլրագրության անվանակարգում «Գոլոս Արմենիի» թերթի ֆոտոլրագրող Հակոբ Բերբերյանին՝ Արցախի հերոսամարտի լուսանկարչական վավերագրությունը ստեղծելու համար:

ՀԺՄ կանոնադրության համաձայն, ինչպես «Ոսկե գրիչ», այնպես էլ «Ազդարար» մրցույթների հանձնաժողովները կազմվում են «Ոսկե գրչի» դափնեկիրներից, մրցանակներն էլ տրվում են միայն ժուռնալիստների միության անդամներին, տեղեկացրեց Աստղիկ Գետոյանը:

Մ. Մ.

«Լինսի» հիմնադրամի կառավարման խորհուրդը որոշել է ավելի հրապարակային դարձնել «Դպրոցաշինություն» ծրագրի իրականացումը

«Լինսի» հիմնադրամի «Դպրոցաշինություն» ծրագրով նախատեսված 18 դպրոցի հիմնանորոգումն արդեն իրականություն է դառնում: Երեկ քննարկվում էին հիմնանորոգման համար ընտրված երեւանյան 13 դպրոցներից 9-ի էսքիզային նախագծերը:

«Ազգը» սեպտեմբերի 24-ին գրել էր, որ «Լինսի» հիմնադրամի 20 մլն դոլարով 18 դպրոց են նորոգում՝ վկայակոչելով տարիների փորձը, թե այդ գումարով 50 դպրոց կարելի է նորոգել: Երեւի այս եւ նույն թեմայով «Ազգի» այլ հրապարակումները հենց նկատի ուներ ՀՀ նախագահի աշխատակազմի ղեկավար Արսաշես Թումանյանը երեկ, հիմնանորոգվելիք 18 դպրոցից 9-ի նախագծերի հրապարակային քննարկմանը, երբ ասում էր, թե ուրախ է մամուլի ուշադրությունից այս ծրագրի հանդեպ, քանի որ այդպիսի սեւեռուն ուշադրությունը կօգնի առավել արդյունավետ վերահսկողություն իրականացնել: Գուցե նաեւ մամուլի հրապարակումներն են պատճառ դարձել «Լինսի» հիմնադրամի կառավարման խորհրդի՝ այս ծրագրի ընթացքն ավելի հրապարակային դարձնելու որոշման համար, ժամանակ առ ժամանակ հասարակությանն իրազեկելով ծրագրի մանրամասները: Ամեն դեպքում՝ լայն հասարակությունը չափազանց զգայուն է «Լինսի» հիմնադրամի ֆինանսական միջոցների արդյունավետ օգտագործման հանդեպ՝ այդպես արտահայտելով իր գոհունակությունը Քըրք Քըրքորյանին:

Ըստ Ա. Թումանյանի՝ մեծ ցանկություն կա այս նոր 60 մլն դոլարանոց ծրագիրն ավելի անկոտրուս իրականացնելու: Դրա համար առկա է նախորդ ծրագրի փորձը, եղած խնդիրների իմացությունը: Մասնավորապես 20 մլն դոլարանոց «Դպրոցաշինությունը» առավել կատարյալ տեսնելու ցանկությունից էր նաեւ երեկվա քննարկումը, որտեղ հավաքված մասնագետներն ու պատասխանատուները 9 նախագծերի ուրվագծերի ներկայացումից հետո պետք է ասեին իրենց կարծիքներն ու տեսակետները տեխնիկական, շինարարական եւ նախագծային լուծումների վերաբերյալ: Դրանք պետք կլինեն հետագայում շտկումներ իրականացնելիս եւ վերահսկողություն կազմակերպելիս: Քննարկման ընթացքում հայտնի դարձավ, որ նորոգվելիք դպրոցների հարակից տարածքներում արդեն պրոբլեմներ եւ խանգարող հանգամանքներ կան, սակայն Ա. Թումանյանը հուսով է, որ համայնքային իշխանություններն ու պետական մարմինները կաջակցեն, որպեսզի գործն արվի ժամանակին ու որակով: Ըստ ծրագրի իրականացման գրասենյակի ղեկավար Հրայր Սարգսյանի՝ ամեն դպրոցի հիմնանորոգման արժեքը որոշվում է քառակուսի մետրով՝ ներկա գներով այն կազմում է 230 դոլար, դրա մեջ է նախագծման, վերանորոգման, տեխնիկական հագեցվածության, գույքի, բոլոր մյուս բաղադրիչների արժեքը: Քննարկման ժամանակ ասվեց, որ շինանյութի եվ այլ բաղադրիչների հետագա թանկացման դեպքում հնարավոր է, որ այդ արժեքը մի փոքր փոփոխվի:

Ինչպե՞ս են ընտրվել հատկապես այդ 18 դպրոցները. այս հարցին պատասխանելով՝ Ա. Թումանյանը հիշեցրեց, որ Հայաստանում 1400-ից ավելի դպրոց կա, որոնց զգալի մասը հնացած է, տեխնիկապես հագեցած չէ, նրանց կեսից ավելին հիմնանորոգման կարիք ունի, բայց հենց այդ 18-ի ընտրության սկզբունքներն անխոցելի են. «Այդ 18-ի վրա կանգ ենք առել հավակնորդ 21-ից. նկատի են առնվել դպրոցների կառուցման տարեթիվը, դպրոցների իրական վիճակը, անցած տարիներին դպրոցներում կատարված հիմնանորոգման աշխատանքների մակարդակը (տվյալ դեպքում՝ դրանց բացակայությունը), երեխաների թիվը», պարզաբանեց Ա. Թումանյանը: Հավանաբար բոլոր դպրոցները չէ, որ հենց 1 մլն դոլարով կնորոգվեն, գյուղական դպրոցները գուցե ավելի պակաս գումար կպահանջեն:

Ե՞րբ կսկսվեն հիմնանորոգման աշխատանքները. «Դպրոցաշինությունը» «Լինսի» ծրագրի մյուս երկու բաղադրիչներից առավել բարդն է. երեք ծրագրերը միասին պետք է ավարտվեն 2008-ին, թեեւ Ա. Թումանյանը կարծում է, թե կավարտեն ավելի շուտ: Համենայն դեպս դպրոցների հիմնանորոգման նախագծերը կավարտվեն 2006-ին, շինարարությունն էլ կսկսվի հենց եկող տարի՝ 2007-ն ավարտելու տարեթիվ նախանշելով:

ՄԱՐԻԵՏԱ ԽԱՉԱՏՐՅԱՆ

2006-ի պետական բյուջեի նախագիծը ԱԺ հիմնական հանձնաժողովների նիստերում

1-ին էջից

Օմբուդսմենի ներկայացուցիչներն անհրաժեշտ են նաեւ Երեւանից դուրս

Հիմնականում աշխատավարձերի բարձրացմամբ բացատրվող կառավարման համակարգին հատկացվելիք գումարների աճին հակառակ վիճակ է մարդու իրավունքների պաշտպանի ոլորտում՝ ներկայացվել է 171 մլն դրամի հայտ, բայց նախատեսվում է տրամադրել 130 միլիոնը: Լարիսա Ալավերդյանի կարծիքով այդ գումարը բավարար չէ բնականոն գործունեության համար՝ միայն 20 մլն կազմում է տարածքի վարձակալումը: Ալավերդյանը գտնում է, որ օմբուդսմենի ներկայացուցիչներ պիտի լինեն առնվազն չորս մարզերում՝ Շիրակում, Գեղարքունիքում, Սյունիքում, Տավուշում:

Երեւանի ղեկավարները չեն դժգոհում տրամադրվելիք գումարի չափից

Մայրաքաղաքին տրամադրելիք գումարի առնչությամբ առարկություններ չկան: Երեւանի փոխքաղաքապետ Կամո Արեյանի վստահեցմամբ՝ նախատեսված ծախսերի ծրագիրը հնարավոր է իրականացնել նախատեսված ֆինանսավորման շրջանակներում: Իսկ գումարը 389.760.9 հազար դրամ է: 12 համայնքների դոտացիաների համար նախատեսվել է շուրջ 5 մլրդ դրամ:

Դրսում Հայաստանը ներկայանալի է երեւալու

Արտաքին քաղաքականության ոլորտին տրամադրվելու է 8.117. 820.8 հազար դրամ: Արտաքին գործերի նախարարությանը հատկացվելիք 820.368.6 հազար դրամից 700.570.7 հազարը նախարարության պահպանման, 119.797 հազարը արտաքին գործերի ծառայությանը: Միջազգային կազմակերպություններին ՀՀ անդամակցության վճարները 1.053.545.3 հազար դրամ են կազմելու: ՀՀ դեսպանություններին տվելիքն էլ ավելին է, քան նախորդ բյուջեում էր՝ 4.164.784.7 հազար դրամ: 200.000.0 հազար դրամ էլ տրամադրվելու է դեսպանությունների շենքեր գնելու համար: ԱԳՆ դիվանագիտական ծառայողների աշխատավարձի բարձրացումն էլ կազմելու է 40 տոկոս: Փոխնախարարը չդժգոհեց, բայց եւ նախատեսված գումարները բավարար չհամարեց լավագույնս երկիրը ներկայացնելու համար:

Առաջիկա երկու տարիներին արտաքին պետական պարտքի ցուցանիշով նվազ ծանրաբեռնված երկրների շարքում է լինելու

Հայաստանի Հանրապետության արտաքին պետական պարտքը (ՀՀ ԱՊՊ) 2005-ի վերջին պետբյուջեով նախատեսված միջոցների ամբողջությամբ ստանալու դեպքում կկազմի մոտ **1227** մլն դոլար: Նախատեսված ծրագրերի դեպքում 2006-ի վերջին ՀՀ ԱՊՊ կկազմի մոտ **1285** մլն դոլար: Իսկ ապագա երկու տարիներին արտաքին պետական պարտքը բնութագրող ցուցանիշներով Հայաստանը նվազ ծանրաբեռնվածություն ունեցող երկրների ցուցակում է լինելու:

ՆԵՌԱ ՊԵՏՐՈՍՅԱՆ

Կիեւի թիվ 85 դպրոցում բացվեց հայկական դասարան

Արտաքին գործերի նախարարությունից ստացված հաղորդագրությունը տեղեկացնում է, որ օրերս Կիեւի թիվ 85 միջնակարգ դպրոցում բացվել է հայկական դասարան, որի հանդիսավոր արարողությանը մասնակցել են Ուկրաինայում ՀՀ դեսպանության աշխատակիցները, Հայ առաքելական եկեղեցու Ուկրաինայի թեմի հոգեւորականները, Կիեւի հայ համայնքի եւ Կիեւի Գոլոսեեւյան շրջժողկրթբաժնի ներկայացուցիչները, դպրոցի ղեկավարությունը եւ այլք: Հայաստանի անցյալի եւ ներկայիս, հայ մշակույթի, 1600-ամյա հայոց գրերի եւ հայ-ուկրաինական դարավոր բարեկամական հարաբերությունների մասին ելույթ են ունեցել դեսպան Արմեն Խաչատրյանը, Հայ առաքելական եկեղեցու Ուկրաինայի թեմի առաջնորդ Գրիգորիս արք. Բունիաթյանը: Դպրոցում այսուհետեւ պատշաճաթես կգործի հայկական դասարան, որում ընդգրկված հիմնականում հայազգի 35 աշակերտներին դեռեւս հայոց լեզու եւ գրականություն, հայոց պատմություն եւ աշխարհագրություն: Նշված առարկաների թվանշանները կներառվեն աշակերտների ավարտական փաստաթղթերում:

ՀՀ դեսպանությունը դպրոցի գրադարանին հանձնեց հայերեն դասագրքեր, իսկ Կիեւի հայ համայնքը դպրոցին նվիրեց հեռուստացույց եւ տեսամագնիտոֆոն:

ԱՆՕՐԻՆԱԿԱՍ

Բուզանդի փողոցի բնակչին ոստիկանները բաց են թողել

«Ազգը» երեկ տեղեկացրել էր, որ Բուզանդի փողոցի 17 շենքի 5-րդ տան բնակիչ Հովհաննես Հովհաննիսյանը նախորդ օրը հրավիրվել էր ոստիկանության Կենտրոնի բաժանմունք: Երեկ տեղեկացանք, որ նրան մի քանի ժամ այնտեղ պահելուց հետո երեկոյան բաց են թողել:

Երեկ, վաղ առավոտյան, կարմիր բերետավորներն ու ոստիկանները 2 կողմից փակել են փողոցն ու բանվորներին կարգադրել քանդել Բուզանդի 23 տունը, որի սեփականատերը՝ տիկին Անժելան հրաժարվել էր իրեն առաջարկվող գումարով փոխհատուցման պայմանագիր կնքելուց եւ արդեն երկար ժամանակ պայքարում էր տարածքը մաքրելու համար ստացած ոստիկանների եւ կարմիր բերետավորների դեմ՝ իր կիսաքանդ տան տանիքը բարձրանալով ու նրանց կարգադրություններին չենթարկվելով: Այս անգամ նա չհասցրեց տանիք բարձրանալ ու լուսաբացը - դիմավորեց իր ավերակ տան պատկերը տեսնելով սեփականության իրավունքից զրկվելով:

Բնակիչները ենթադրում են, որ այստեղ ոստիկանությունը կգործի կամ գիշերով, կամ էլ վաղ առավոտյան, որպեսզի իրենք չկարողանան լրատվամիջոցների օգնությանը դիմել:

Ոստիկանությանը համառ դիմադրություն է ցուցաբերում հատկապես Բուզանդի 15 շենքում, որտեղ նրան կդիմավորեն այս փողոցի վերջին բնակիչները:

Ռ. Պ.

Մենք պետք է «նորմալ վերաբերվենք», երբ «ուրիշի բակում» մեզ նեղացնում են

Երեւանի բնակիչ Կարեն Թովմասյանին մեղադրում են խուլիգանության, հասարակական կարգը խախտելու, ինչպես նաեւ հարկային պարտականություններից խուսափելու համար: Եղելությունը հետեւյալն է: 2005 թ. ապրիլի 18-ին Կարեն Թովմասյանը մեքենայով Արտաշատից վերադառնում է Երեւան: Ճանապարհին՝ Մասիս գյուղում, դիմացից եկող մեքենան լուսային ազդանշաններով խանգարում է նրան: Վարորդները կանգնում են, լուսարձակով եկող մեքենայի վարորդին Կարեն Թովմասյանը հարցնում է. «Ինչո՞ւ ես էդպես քշում, խանգարում ես»: Մյուսը պատասխանում է. «Մեր գյուղն է, դու պիտի ասե՞ս ոնց քշեմ»: Վարորդը ենթադրաբար Գալստյանն է՝ երբեմն պատգամավոր Ժորա Գալստյանի տղան, իսկ նրա հորեղբայրը Արտաշատի բրեական վարչության պետ Սերգեյ Գալստյանն է: Արդեն պարզ է, չէ՞, ինչն է երիտասարդին այդչափ համարձակություն ներշնչել: Նրանց զրույցի ընթացքում ենթադրաբար Գալստյանը կանչում է իր պատշաճավոր հորեղբորը, հավաքվում են մարդիկ եւ մոտ 20 րոպե տեւած զրույցից հետո կողմերը հեռանում են: Ապրիլի 29-ին Կարեն Թովմասյանին ձերբակալում են բրեական օրենսգրքի 258 հոդվածի 4-րդ մասի մեղադրանքով՝ խուլիգանության, հասարակական կարգը խախտելու համար: Իսկ մինչ այդ Երեւանի դատախազությունը Կարեն Թովմասյանի նկատմամբ գործ էր հարուցել քր. օր. 205 հոդվածի 1-ին մասով՝ իրականացրած գործունեության համար հարկային տեսչությանը հարկեր չմուծելու համար: Դատախազությունն այդ գործը եւս ուղարկում է Արարատի մարզի դատախազություն, 2 գործերը զարմանալիորեն ենթվում են մեկ վարույթում:

Հարկային տեսչությանը հարկեր չմուծելու մեղադրանքին չենք անդրադառնում, իսկ խուլիգանության մեղադրանքը բավական հետաքրքրական է:

Քրեական գործը լսվում է Արարատի մարզի առաջին ատյանի դատարանում, իսկ նախաքննության եւ դատական մոտ 6-7 նիստերի ժամանակ լսվել են վկաների ցուցմունքները, որոնք ուշագրավ են եղել: Օրինակ, նախաքննության եւ դատաքննության ժամանակ վկաների տված ցուցմունքներում կան տարբերություններ: Ըստ ներկայացվածի, փաստորեն, «տուժող» է համարվում անկարգություն անողը՝ լույսերով դիմացից եկող մեքենայի վարորդը, իսկ անկարգության համար նկատողություն անողը համարվում է հանցագործ եւ մեղադրվում: Մեր իրականության համար արդեն սովորական դարձած հերթական դեպքերից է: Օրինակ, «տուժող» համարվողին դատավորը հավատում է, որովհետեւ նա վկաներ է բերել, իսկ մեղադրյալ Կարեն Թովմասյանին կարող է չհավատալ, որովհետեւ նա վկա չունի: Նկատենք, որ Արտաշատի բնակիչ վկաները վկայություններ տալ: Իսկ Կարեն Թովմասյանի հետ եղել է 1 հոգի, որին նախ «չեն գտնում», հետո էլ մեկի ցուցմունքը երեւի թե քիչ ապացույց համարվի «տուժող» կողմի «բերած» ցուցմունքների համեմատ: «Ազգի» հարցին, թե ինչպե՞ս է, որ Ենոք Գալստյանին կարելի է հավատալ, իսկ Կարեն Թովմասյանին՝ ոչ, դատավոր խաչիկ Հովհաննիսյանը պատասխանեց. «Մենք տուժածին ենք հավատում»:

Ամբաստանյալ Կարեն Թովմասյանի պատմելով, ինքը 10 հազար դոլար է տվել Երեւանի բնակիչ Էլմիրա Գյուլնազարյանին, որի հետ պետք է դեղատուն բացեին, իսկ մյուս մասով էլ ապրանքի արտահանման իրավունք ձեռք բերեին: Այդ գումարը Էլմիրա Գյուլնազարյանը պետք է վերադարձներ ամբաստանյալին: Կարեն Թովմասյանը նշեց. «Էլմիրան մոտ է մարզի դատախազի հետ, չգիտեմ՝ ինչ են խոսել, բայց երբ ես մտա քննիչ Արսենյանի մոտ, ինձ ասաց, որ կամ պիտի դատվեմ, կամ պիտի հրաժարվեմ այդ 10 հազար դոլարից՝ սա է հարցի լուծումը»:

Երեկ Արարատի մարզի առաջին ատյանի դատարանում մեղադրյալը ցուցմունքից հետո նշեց, որ իրեն մեղավոր չի ճանաչում առաջադրված մեղադրանքի՝ խուլիգանության համար, իսկ հարկերը չվճարելու մեղադրանքում մասնակի մեղավոր է: Նա նշեց նաեւ, որ հարկերը վճարելուց կանխամտածված չի հրաժարվել եւ այժմ էլ պատրաստ է որոշակի մարման փուլում վճարել այդ գումարը: Հետաքրքրական է, որ իրական հանցանքը կարելի է խորությամբ քննել, քանի որ մեղքը սաստկացնող փաստեր կարելի է ավելի շատ գտնել, իսկ ինչ-որ վեճի համար մեղադրյալը պարտավոր է ի՞նքը ապացույցներ բերել:

ԳՈՌԱՐ ԳԵՎՈՐԳՅԱՆ

«ԱԶԳ» ՕՐԱԹԵՐԹ
Հրատարակության ԺԳ տարի
Հիմնադիր եւ հրատարակիչ
«ԱԶԳ ՕՐԱԹԵՐԹ» ՍՊԸ
Երեւան 375010 Հանրապետության 47
Ֆաքս 374 1 562863
e-mail: azg2@arminco.com
www.azg.am
Գլխավոր խմբագիր
ՅԱԿՈԲ ԱՐԵՏԻՔԵԱՆ / հեռ 521635
Խմբագիր
ՊԱՐՈՅՐ ՅԱԿՈԲԵԱՆ / հեռ 529221
Լրագրողների սենյակ / հեռ 581841
Համակարգչ. ծառայություն / հեռ 582483
Շուրջօրյա լրահավաք ծառայություն / հեռ 529353
Համակարգչային շարուածքը «Ազգ» թերթի
Թերթի նիւթերի ամբողջական թէ մասնակի արտատպումները տպագիր մամուլի միջոցով կամ ռադիոհեռուստատեսութեամբ առանց խմբագրութեան գրաւոր համաձայնութեան խստիւ արգելւում են համաձայն ՀՀ հեղինակային իրաւունքի մասին օրէնքի
Նիւթերը չեն գրախօսւում ու չեն վերադարձւում
"AZG" Daily NEWSPAPER
Editor-in-chief
H.AVEDIKIAN / phone: 521635

Ընթացիկ

«Ռոյալ Արմենիա» սուրճի ներկրմամբ եւ փաթեթավորմամբ զբաղվող ընկերության իրավաբան Գետրգ Մինասյանի եւ ընկերության տնօրեն, Լիբանանի քաղաքացի Թոնի էլ Լաբակիի երեկ հրավիրած մամուլի ասուլիսի առիթն էր նախօրեին ընկերության նախագահ ու համասեփականատեր Գագիկ Հակոբյանի եւ փոխտնօրեն Արամ Ղազարյանի ձերբակալությունը:

Ինչու են ձերբակալվել «Ռոյալ Արմենիայի» նախագահն ու փոխնախագահը

Որպեսզի հպայթի մամսային կոմիտեի հորինած առասպելը

Գետրգ Մինասյանը ներկաներին հիշեցրեց, որ ընկերության եւ մամսային կոմիտեի հակամարտությունը սկսվել է դեռ երկու տարի առաջ, երբ կոմիտեն սկսեց խստական մոտեցում ցուցաբերել «Ռոյալ Արմենիայի» նկատմամբ մամսային արժեքներ սահմանելիս: Դա առիթ դարձավ, որ ընկերությունը դիմի դատարան, փորձի համոզել եւ հարկադրել կոմիտեին աշխատելու օրինականության դաշտում: Այս ամենը, ընկերության իրավաբանի բնորոշմամբ, մամսային կոմիտեին դուր չեկավ, ինչի պատճառով էլ հորինվեց մամսային կանոնների խախտման գործը: Այն ինն ամիս ենթվում է արդեն:

Գետրգ Մինասյանն այստեղ պարզաբանեց, թե խոսքն ինչի մասին է: Մամսային կոմիտեի նախագահը զանգվածային լրատվամիջոցներով հայտարարել է, որ 1,5 մլրդ դրամի մամսանենգության դեպք է բացահայտվել, ինչի մասին տեղեկացրել է նաեւ երկրի նախագահին: Այդ գումարն ամբողջությամբ վերաբերում է ընկերության ներմուծած ապրանքի արժեքին, որը ներկայացվում է որպես մամսանենգություն: Այդ կապակցությամբ «Ռոյալ Արմենիան» դիմել է տնտեսական դատարան, հնարավորություն տալով մամսային պետական կոմիտեին հիմնավորումներ եւ ապացույցներ ներկայացնելու իր սահմանած մամսային արժեքների համար: Դատական նիստի ժամանակ, ըստ իրավաբանի, «Ռոյալ Արմենիան» ներկայացրել է իր իրավացիությունը փաստող հիմնավորումներ, չնայած օրենքը պահանջում է, որ պետական կառույցը հիմնավորի իր մեղադրանքները: Դատարանը ժամանակ էր տվել մամսային կոմիտեին, որ հաջորդ նիստի ժամանակ այդ հիմնավորումները ներկայացվեն: Հենց այդ ընթացքում էլ ձերբակալվել են ընկերության ղեկավարները: Ըստ Գետրգ Մինասյանի, դա արվել է այն նպատակով, որպեսզի քաղաքացիական գործով հաջորդ դատական նիստին մամսային կոմիտեի ներկայացուցիչն առաջարկի կասեցնել դատավարությունը՝ ձերբակալությունները կապելով այդ գործի հետ: «Ռոյալ Արմենիայի» ներկայացուցչի համոզմամբ, դատարանը կհարգի այդ խնդրանքը, հակառակ դեպքում մամսային կոմիտեն չէր կարողանալու ապացուցել ընկերությանը վերագրվող մամսանենգության մեղադրանքները, եւ պարզվելու էր դրա առասպել լինելը:

Պատասխանելով լրագրողների հարցերին, Գետրգ Մինասյանը նաեւ հայտնեց, որ ձերբակալություններին պաշտոնական հիմնավորումներ չեն տրվել, եւ երեկ արդեն պետք է պարզ դառնար՝ ընկերության ղեկավարները կալանավորվելու են, թե՞ ոչ:

«Ռոյալ Արմենիայի» ներկայացուցիչը վերոհիշյալ թվարկեց մամսային կոմիտեի այն բարձրաստիճան աշխատակիցների անունները, որոնք սվերային գործարք են առաջարկել Գագիկ Հակոբյանին, եւ որը վերջինս մերժել է: Դրանք են մամսային կոմիտեի պետի տեղակալ Գագիկ Խաչատրյանը, մամսատակագնային վարչության պետ Սուրիկ Ֆահրադյանը: Գետրգ Մինասյանը նրանց գործունեության համար պատասխանատու համարեց նաեւ մամսային կոմիտեի նախագահին:

«**Ազգի**» այն հարցին, թե մինչ մամսային կոմիտեի հետ հակամարտությունը «Ռոյալ Արմենիան» սվերային գործարքի մեջ չի՞ գտնվել կոմիտեի հետ եւ միայն, երբ չի համաձայնել նոր՝ բարձրացված սվերային դրույքաչափերին, սկսվել է հակամարտությունը, Գետրգ Մինասյանը պատասխանեց, որ «Ռոյալ Արմենիան» միշտ գործել է օրինական դաշտում եւ մամսային կոմիտեի հետ անդրկուլիսյան գործարքի մեջ չի գտնվել:

Այդտեղ, անկախ այն բանից, թե ինչ հարաբերություններ են եղել կողմերի միջեւ մինչեւ հակամարտությունը, մամսային կոմիտեն ոչ մի կերպ չի կարողանում հանդուրժել իր դեմ հանդես եկած ընկերությանը եւ ձգտում է ամեն կերպ հաշվեհարդար տեսնել նրա հետ: Ինչն, ի դեպ, ամբողջովին համահունչ է երկրում ստեղծված մթնոլորտին:

ԱԲՈՒ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

Հայաստանում թռչնագրիպի հավանականությունը խիստ նվազ է

1-ին էջից

Տեսականորեն թռչնագրիպի վիրուսի տարածումը Հայաստանում չի կարելի բացառել, քանի որ տարածվում է օդով, ջրով եւ ցամաքով, եւ ինչպես նշեց Հայաստանի գյուղնախարարության անասնաբուժական վարչության պետը, «մեր հանրապետությունը Թուրքիայի հետ շփվում է թե՛ օդով, թե՛ ջրով, թե՛ ցամաքով»: «Թռչնագրիպի դեպքերը գրանցվել են Թուրքիայի արեւմտյան շրջանում, հետեւաբար վիրուսի թափանցելը մեր հանրապետություն շատ փիչ է հավանական: Բացի այդ, անասնաբուժական տեսակետից Թուրքիայի հետ սահմանը խիստ հսկողության տակ է», ասաց Բաղյանը:

Հայաստանում թռչնագրիպի վիրուսի տարածման մեկ այլ վտանգ կա՝ չվող թռչունները: Տեսականորեն, ինչպես նշեց Բաղյանը, այս երանակով վիրուսի տարածումը եւս մեզ հավանական է, քանի որ Հայաստանում մոտենում է ձմեռը, եւ թռչունները չվում են մեր հանրապետությունից ավելի տաք երկրներ, այլ ոչ թե հակառակը: Ամեն դեպքում, ցանկալի է, որ այս օրերին մեր որսորդները խուսափեն թռչունների որսից: Ի դեպ, Թուրքիայի շրջակա միջավայրի պաշտպանության նախարարի հրամանով արգելվել է վայրի թռչունների որսը Թուրքիայի տարածքում:

Երեկ Ադրբեջանի համաճարակաբանության կենտրոնի տնօրեն Սուլեյման Չաբարովը հայտարարել է, որ Նախիջեւանում հնարավոր են թռչնագրիպի դեպքեր թռչունների չվելու պատճառով: Նախիջեւանում, որը սահմանակից է ինչպես Թուրքիային, այնպես էլ Հայաստանին, կանխարգելիչ միջոցառումներ են իրականացվում թռչնագրիպի տարածումը կանխարգելելու նպատակով: Լիովին արգելվել է թռչնի մսի ներկրումը Թուրքիայից:

Գրիշա Բաղյանն ասաց, որ գյուղնախարար Դավիթ Լոյանի հրամանով արգելվել է հավի մսի ներկրումը բոլոր այն երկրներից՝ Թուրքիա, Ռուսաստան, Ռումինիա եւ այլն, որտեղ հայտնաբերվել է թռչնագրիպ: Կա վտանգ, որ վիրուսը կարող է Հայաստան անցնել Վրաստանից: Բաղյանի ասելով, վրացական իշխանությունները եւս արգելել են թռչնամսի ներմուծումը վարակակիր երկրներից: Երեկ Վրաստանի նախագահ Միխայիլ Սաակաշվիլին ասել է, որ կառավարությունը կես միլիոն դոլար է հատկացրել թռչնագրիպի տարածումը կանխելու նպատակով:

«Հայաստանի թռչնաբուծական ֆաբրիկաներում, ինչպես նաեւ վայրի թռչունների շրջանում ինֆեկցիոն, վիրուսային տեսակետից անկումներ չկան: Հետեւաբար մեր հանրապետությունում հավի մսի օգտագործումը որեւէ վտանգ չի ներկայացնում», ասաց նա:

Թռչնագրիպի վիրուսն արդեն Թուրքիայից անցել է Ռումինիա: Եվրոհանձնաժողովն արգելել է հավի մսի ներմուծումը ԵՄ երկրներ Թուրքիայից եւ Ռումինիայից: ԵՄ արտգործնախարարները երեքշաբթի օր Լյուքսեմբուրգում կքննարկեն թռչնագրիպի տարածման վտանգի հարցը:

Սուրբ Էջմիածնի ամրագրումը սահմանադրության մէջ՝ հրամայակա՞ն

Սփյուռքահայ բազմաթիվ շրջանակներ, կուսակցական թե անկուսակցական, պարզապես ընդվզած վիճակ ունեն ի տես այն բացթողման, որը վերաբերում է սահմանադրական փոփոխությունների նախագծից Հայ եկեղեցու կենտրոնավայրի՝ Մայր աթոռ Սբ. Էջմիածնի զանցառմանը: Սփյուռքահայ շատ թերթերում հարցն արծարծվում է ամենայն խստությամբ: Խնդրի մասին հերթական հոդվածն է օրերս ստորագրել ՌԱԿ Բեյրութի պատասխանատու «Զարթօնք»-ի պատասխանատու խմբագիր Պարույր Աղբաշյանը:

Այս անգամ մեր ակնարկությունը մասնատելով, կ՚ուզենք անդրադառնալ Հայ եկեղեցւոյ գերագոյն աթոռ՝ Ս. Էջմիածինի մասին սահմանադրության մէջ նշմարուող թերութեան:

Սահմանադրությունը կ՚ըսէ. «ՀՀ ճանաչում է Հայաստանեայց Առաքելական սուրբ եկեղեցու, որպէս ազգային եկեղեցու պատմական բացառիկ առաքելությունը հայ ժողովրդի հոգեւոր կեանքում, դրա ազգային մշակոյթի զարգացման եւ ազգային ինքնութեան պահպանման գործում»:

Հոյակապ բանաձեւում մը: Սակայն կայ պակաս մը ասոր մէջ, որ կը վերաբերի Մայր աթոռ Ս. Էջմիածնի վայրի եւ անոր գերակայութեան ամրագրման անհրաժեշտութեան, որոնք յստակեցուած չեն:

Թերեւս այս նուրբ, այլապէս հրատապ հարցը մեր ուշադրությունը չգրաւէր, եթէ Ազգային ժողովի փոխնախագահ Տիգրան Թորոսեան խիստ մակերեսային եւ անընդունելի շուտիկութեամբ ըսած չըլլար. «Դէ, բոլորս էլ գիտենք, որ իտահանչիւ հայի համար Էջմիածինն ընկալւում է որպէս մեր եկեղեցու կենտրոն: Սա արդէն հիմք է, որ այդ իրողութեան ամրագրումը Սահմանադրությունում այնքան էլ չկարեւորենք»:

Տեսէք, օրենսգէտ ղեկավարը ինչպիսի՞ անհեթեթութեամբ կը խօսի յոյժ կարեւոր հարցի մը մասին, այդ ալ «մաալէշ»-ի լիբանանեան տրամաբանութեան մը նման (այսինքն, եղածը ինչ է որ, հաւկիթին մէջ մազ կը փնտռէ):

Պրն Թորոսեան կը մոռնա՞յ, որ կը խօսուի պետութիւն-եկեղեցի պաշտօնական ու սահմանադրական մակարդակով գերխնդիրի մը մասին, ուր Հայաստանեայց Առաքելական եկեղեցւոյ գերագոյն աթոռի վայրի (Ս. Էջմիածին) ամրագրումը հրամայական է:

Կրնա՞յ ըլլալ, որ ասիկա պատահականութիւն է, կամ արդեօք խորհրդարանի անդամները չե՞ն գիտակցած (կամ բեխաբար են), որ Հայաստանեայց Առաքելական եկեղեցւոյ մէջ կայ յամեցող անլոյծ իրավիճակ մը, որուն շուրջ, ճիշդ է, կան մերձեցումի փորձեր, սակայն ատոնք տակաւին կը պահանջեն երկարաւունչ հանգրուաններ:

Մեր կարծիքով, այս բոլորը անմեղսունակ չեն, ոչ ալ անտեղեակութեան արդիւնք, երբ կոալիցիոն կառավարութեան ու խորհրդարանին մէջ կան խմբակցութիւններ, որոնք լաւագոյնս կը գիտակցին սահմանադրութեան մէջ Ս. Էջմիածինի ամրագրումին բերելիք տեղաշարժներուն հետեւանքներուն, հետեւաբար կը ջանան սահմանադրութենէն դուրս պահել զայն:

Այս տխուր օրինակը մեզի կը յիշեցնէ այն արտաքոցութիւնը, երբ Դաշնակցութեան շարքերէն դէպի կառավարութիւն ելումուտ կատարած յատենի նախարար Լեւոն Մկրտչեան դատապարտելի յայտարարութիւն մը կատարեց, ըսելով. «Ս. Էջմիածինը՝ հայրենիին, իսկ սփիւռքը՝ Մեծի տանն Կիլիկիոյ կաթողիկոսութեան...»:

Դժբախտաբար, այս առնչութեամբ օրին պաշտօնական թէ եկեղեցական մակարդակով ոչ ոք արժանի պատասխան տուաւ պետական այս այրին, որ հիմա ալ կը գտնուի պետական դիրքերու վրայ ու նաեւ կը վայելէ յարգանք (...) հայրենիքսփիւռք կարգ մը փխրուն ծիլերու վրայ:

Ասկէ մեկնելով, երբ Սահմանադրության մէջ կը տեսնենք այս խորհրդատր բացթողումը, անխուսափելի կը դառնայ միամիտ ձեւանալ, որ աչիկա տեղի ունեցած է «Էջմիածինը՝ Հայաստանին, Անթիլիասը՝ սփիւռքին» տրամաբանութեամբ:

Հայաստանեայց Առաքելական զոյգ աթոռները, մէկը իր գերակայութեամբ ու պետութիւն-եկեղեցի սահմանադրութեամբ, իսկ միւսը՝ իր Կիլիկիոյ կաթողիկոսութեան աւանդական շառաւիղի պահպանումով, ունին իրենց հիմնական ազգային-եկեղեցական դերակատարութիւնները:

Պէտք է գիտակցիլ այս պատմական ճշմարտութեան ու չփորձել շրջանցել զայն. հետեւաբար, անյետաձգելի է Մայր աթոռի վայրի ամրագրումը Սահմանադրության մէջ:

ՊԱՐՈՅՐ ԱՂՊԱՇԵԱՆ

Ֆրանսական «Ախսա» ընկերությունը համասեփականատիրոջ կարգավիճակով գործում է նաեւ Թուրքիայում

Հոկտեմբերի 4-ի համարում «**Ազգը**» տեղեկացրել էր, որ Հայոց ցեղասպանության ժառանգորդները 17 մլն դոլար փոխհատուցում կստանան ֆրանսիական աղահովագրական ընկերությունից: Խոսքը տվյալ դեպքում «Ախսայի» մասին էր, որն ընդգրկված է աշխարհի առաջատար 30 ընկերությունների ցուցակում: Հիշեցման կարգով նշենք, որ ցեղասպանության ժառանգորդներն ԱՄՆ-ի Կալիֆորնիա նահանգում փոխհատուցման պահանջով դատական գործ էին հարուցել «Ախսայի» դեմ եւ մինչ դատավարության ավարտն ընկերությունն առաջարկել էր փոխհատուցում վճարել: Առաջարկի հիման վրա կողմերը կնքել էին համաձայնագիր:

Ըստ համաձայնագրի, «Ախսան» բացի ցեղասպանության ժառանգորդների համար նախատեսված 17 մլն դոլար փոխհատուցումից, պատրաստվում է մի քանի մլն դոլարի օգնություն ցուցաբերել նաեւ Ֆրանսիայում գործող հայկական բարեգործական միություններին: Ենթադրվում է, որ կողմերի համաձայնության գալու որոշման հիման վրա Կալիֆորնիայի նահանգային դատարանն առաջիկա նոյեմբերին վճիռ կկայացնի: Այսպիսով դատարանում կհաստատվի նրանց կնքած համաձայնագիրը:

Հոկտեմբերի 13-ին այս համաձայնագրին անդրադարձավ նաեւ թուրքական հանրային հեռուստատեսությունը, իսկ հաջորդ օրը՝ «Զաման» թերթը: Անդրադարձներից հայտնի դարձավ, որ ֆրանսիական «Ախսա» աղահովագրական ընկերությունը «Axa-Oyak» անվամբ գործում է նաեւ Թուրքիայում:

1961 թ.-ին որպես աղահովագրական ընկերություն հիմնադրված «Բանակայինների փոխօգնության միությունը»՝ «Oyak»-ը՝ ներկայումս Թուրքիայի կարեւորագույն ընկերություններից է, ավելի քան 40 գործարաններով երկրում արդյունաբերական բուռն գործունեություն է ծավալում, ընդհուպ՝ մեքենաշինությունը: 1994 թ. վերջերին «Ախսան» ձեռք բերելով բաժնետոմսերի 11 տոկոսը, միացել էր «Oyak»-ին, 1999 թ. փետրվարի 5-ից «Ախսայի» մասնաբաժինը բարձրացել է 50 տոկոսի, եւ ֆրանսիական այս ընկերությունը «Axa-Oyak»-ի համասեփականատերն է դարձել:

Հ. Ղ.

ԱԶԳ

Իրավիճակ

Ականատեսները վկայում են, որ երբ Սուրբ Փրկիչ Քրիստոսի եկեղեցու օծման արարողության ժամանակ Մոսկվայի եւ համայն Ռուսիո պատրիարք Ալեքսի Բ-ն պատվո տեղ հատկացրեց Ամենայն հայոց Գարեգին Բ կաթողիկոսին, ուղղափառ եկեղեցու որոշ ներկայացուցիչներ դժգոհեցին: Նրանց դժգոհությունը կարելի է բացատրել մի պատճառաբանությամբ՝ այդ ինչպես է, որ ռուս օրթոդոքս եկեղեցու քահանայապետը այդպիսի պատվի է արժանացնում քրիստոնեական մեկ այլ եկեղեցու ընտանիքի անդամի, ինչպիսին Հայ առաքելական եկեղեցին է: Չէ՞ որ ռուս (այս պարագայում՝ հույն ուղղափառ) եւ հայ եկեղեցիները, բացի եկեղեցական տարբեր ընտանիքների պատկանելուց, 451 թվի Քաղկեդոնի ժողովի պատճառով հերձված ու հերետիկոս են անվանել միմյանց: Ավելին՝ նրանց բաժանում է ծիսական արարողակարգի մի այնպիսի անջրպետ, ինչպիսին նզովքն է: Սակայն դժգոհությունը մի պահ է կասկածել հանդիսավոր արարողության մասնակիցներին: Ամենայն հավանականությամբ նրանք հիշել են բոլոր ժամանակների համար հրատարակված եկեղեցական կարգախոսը՝ «Միություն ի կարեւորս, ազատություն յերկբայականս եւ սեր ամենայնի»:

Այնուամենայնիվ, ռուս եւ հայ եկեղեցիներն ունեն մի շարք տարբերություններ, որոնց մասին խոսում է Երեւանի Սուրբ Տիրամոր հովանու տաճարի քահանա հ. **Արսենիյ Գրիգորյանը**: «Այսօր դժվար է տարանջատել հայ քրիստոնյա հասկացությունը, քանի որ հայերը հիմնականում հավատացյալ են եւ մեծ մասամբ Առաքելական կամ Գրիգորյան եկեղեցու հետեւորդ են: Իսկ ռուսներն այլ կերպ են հասկանում դավանանքը, քանի որ նրանք օրթոդոքս՝ ուղղափառ եկեղեցու զավակներ են: Իսկ դա նշանակում է, որ մեր եկեղեցին ոչ թե «ռուսական» որակավորում ունի, այլ «ուղղափառ», որ բազմազգ եկեղեցական միավոր է: Բացի այդ, ռուս եկեղեցին ո՛չ կրթական, ո՛չ ազգային, այլ միայն հոգեւոր կենտրոն է, որ մարդիկ գալիս են միայն աղոթելու: Մինչդեռ Հայ առաքելական եկեղեցին եւ՛ հոգեւոր, եւ՛ ազգային, եւ՛ մշակութային կենտրոն է», ասում հայր Արսենիյը:

Բացի այս տարբերակումից, գոյություն ունեն ժողովրդական մի շարք ծիսական տարաձայնություններ, որոնցից ամենացավոտը մատաղի արարողությունն է: Հայն իր ուրախությունն առանց մատաղի չի պատկերացնում, իսկ ռուսը դա համարում է հեթանոսություն, բարբարոսություն եւ ոճիր: Հավանաբար նմանատիպ տարաձայնություններից ու որակումներից է ծնվել կրոնական այն մոլեռանդությունը, որը դարեր շարունակ պաղ ու անհանդուրժող է պահել երկու հնագույն եկեղեցիների հավատացյալներին միմյանց նկատմամբ:

«Սակայն եկել են նոր ժամանակներ», ասում են առաջադեմ եւ քրիստոնեական երկխոսության ջատագով, առողջ աստվածաբանական մտածողության տեր հոգեւորականները, ովքեր կարծում են, որ դավանաբանական տարաձայնությունները հիմնականում սխալ փոխհասկացողության եւ եզրերի ոչ ճիշտ մեկնաբանության հետեւանք են: Դրանք պետք է լուծում ստանան ոչ միայն եղբայրական համագործակցության, այլեւ եկեղեցական բարձրագույն ժողովների ժամանակ վերացվելիք հաշտության փաստաթղթերի տեսքով: Մեր այն հարցին, թե ինչո՞ւ մինչ այժմ եկեղեցիները չեն լուծել այդ հարցերը, պատասխանեց Մայր աթոռ Սբ. Էջմիածնի միջեկեղեցական հարաբերությունների բաժնի պատասխանատու **Եզնիկ եպս. Պետրոսյանը:** Նա ասում է, որ նման հարցերը շատ առագ չեն կարող լուծվել զուտ այն պատճառով, որ պետք է ուղղափառ 14 եւ արեւելյան 5 եկեղեցիներ մեկ առ մեկ գումարեն իրենց եկեղեցիների բարձրագույն մարմինների հավաքներ, քննարկեն եւ վավերացնեն որոշումներ, որ չկան լուրջ եւ մտահոգիչ աստվածաբանական, դավանաբանական տարաձայնություններ երկու եկեղեցական ընտանիքներին պատկանող այս կամ այն եկեղեցիների միջեւ: Այնուհետեւ պետք է գումարվի եկեղեցական մեծ համաժողով, որի հայտարարությունից հետո կարելի է փաստացի վավերացված համարել նզովքի վերացումը, ջերմ հարաբերությունների իրավականությունը եւ դավանաբանական անվտանգությունը: Անշուշտ, վաղուց ընթացքի մեջ գտնվող այս գործողությունը դեռ տարիներ է պահանջում: Միաժամանակ Սրբազան հայրը պատմում է, որ այս հարցի լուծմանն իրենց անոտանալի նպաստն են բերել երջանկահիշատակ Վազգեն Ա եւ Գարեգին Ա կաթողիկոսները:



Լուսահոգի հայրապետների գործն այսօր շարունակում է Գարեգին Բ Ամենայն հայոց հայրապետը, որի անձնական ջերմ հարաբերությունները Ալեքսի Բ պատրիարքի հետ կարեւոր դեր են խաղում ռուս եւ հայ եկեղեցիների բարիդրացիական հարաբերությունների զարգացման եւ համագործակցության կայացման գործում:

Վերլուծելով երկու եկեղեցիների փոխհարաբերությունները, Եզնիկ սրբազանը «**Ազգի**» խնդրանքով մի պատմական էսքիզ կատարեց, որից պարզ դարձավ, թե ինչքան լայնախոհ էր Վազգեն Ա կաթողիկոսը, որ շուրջ 30 տարի (1964-1993 թթ.) երկխոսություն վարեց ռուս եկեղեցու գահակալի հետ, որի արդյունքում ծնվեցին բազմաթիվ համաձայնագրեր, խաղաղության կոչեր եւ հայտարարություններ: Բարիդրացիական հարաբերությունների արդյունք է նաեւ այն, որ եւ՛ լուսահոգի Գարեգին Ա եւ ներկայիս կաթողիկոս Գարեգին Բ հայրապետներն իրենց պաշտոնական առաջին այցերը կատարեցին դեպի ռուսաց պատրիարքություն: Որպես պատասխան Մոսկվայի եւ համայն Ռուսիո պատրիարք Ալեքսի Բ-ն անձամբ գլխավորեց Հայաստանի քրիստոնեության պետականորեն ընդունման 1700-ամյակի տոնական արարողություններին մասնակցող ռուսական պատվիրակությունը: Այն դեպքում, երբ հրավիրված 130 պատվիրակություններից միայն 5-ն էին գլխավորում քահանայապետները:

Մեր օրերում ռուս եւ հայ եկեղեցական հարաբերությունները թեւակոխել են ավելի ուշագրավ մի փուլ, որ կարձ ձեւակերպվում է այսպես՝ միջեկեղեցական համագործակցություն սոցիալական ոլորտում եւ աջակցություն քաղաքական հարցերում: Վերջինիս հաճախ տրվում է միջպետական նշանակություն: Խոսքը Մոսկվայի եւ համայն Ռուսիո Ալեքսի Բ պատրիարքի նախաձեռնությամբ դարաբաղյան խնդրի կարգավորմանը միտված հանդիպումներն են Գարեգին Բ Ամենայն հայոց կաթողիկոսի եւ Կովկասի մահմեդականների հոգեւոր առաջնորդ, Շեյխ Հաջի Ալլահ Շյուքյուր Փաշազադեի միջեւ: Ի դեպ, նման հանդիպումներ եղել են նաեւ Վազգեն Ա կաթողիկոսի գահակալության շրջանում: Արդեն կայացած երեք հանդիպումները տվել են իրենց բարի պտուղները՝ գերիների փոխանակման տեսքով: Պետք է նշել, որ հայ եւ ադրբեջանցի հոգեւոր պետերի հանդիպումները դարձել են նաեւ քառակողմ, քանի որ ռուս, հայ եւ ադրբեջանցի հոգեւոր առաջնորդներից բացի, վերջին հանդիպմանը (2004 թ.) մասնակցել է նաեւ վրաց պատրիարք Իլյա Բ-ն: Ճիշտ է, վերջին հանդիպումը, նախատեսված ընթացիկ տարում, հետաձգվել է ինչ-ինչ պատճառներով, սակայն առաջիկա տարում կկայանա, հավատացնում է Եզնիկ սրբազանը: Թե որքան կարող են այս հանդիպումները նպաստել քաղաքական եւ միջպետական լարվածության թուլացմանը, թողնում ենք ընթերցողի երեւակայությանը:

Մայր աթոռի միջեկեղեցական հարաբերությունների պատասխանատու Սրբազան հայրը մատնանշեց նաեւ ռուս եւ հայ եկեղեցական հանձնաժողովի (ստեղծված 2001 թ.) աշխատանքները: Դրանք միտված են լուծելու եկեղեցիների հավատացյալների սոցիալական դաշտի խնդիրները (սոցիալ-տնտեսական, կրթական եւ գինեռայության ոլորտներ), ինչպես նաեւ լուծումներ գտնելու բիոէթիկայի հարցերի շուրջը, ինչպիսիք են մարդու կլոնավորումը, աբորտի, դիակիզման եւ այլ քրիստոնեական էթիկայի հարցեր:

Այսպիսանդերձ, ակնկալիս է, որ ռուս եւ հայ եկեղեցիները եւ, ինչու չէ, նաեւ մյուսներն ունեն նմանատիպ բազմաթիվ մարտահրավերներ: Ժողովրդական լեզվով ասած՝ «նրանք մի տնից չեն, բայց մի հալից են»: Եվ որքան մտահոգիչ են դժվարությունները, այնքան հուսադրող, որ հայ եւ ռուս եկեղեցիները դրանք կհաղթահարեն գաղափարական եւ գործնական միասնությամբ: Սա է ժամանակի եւ նոր հասարակության հրամայականը:

ՍՈՒՍԱՆՆԱ ՄԱՐԳԱՐՅԱՆ

Հ. Գ. Մինչ այդ Երեւանի Տիրամոր հովանու տաճարում (կառուցված 1917 թ., ռուսական կայազորի համար) տոնական տրամադրություն է: Հայր Արսենիյը մկրտում է փոքրիկ Անաստասիային, որ ուրախությամբ թաթիկները ճդում է դեպի քահանա հայրը՝ կարծես գիտակցելով, որ մկրտվում է, այսինքն՝ կատարում է քրիստոնյայի ամենանվիրական եւ կարեւոր քայլը հոգու փրկության, հավերժանալու ճանապարհին...

ԳՅՈՒՄՐԻ

Թեքեյանցիները մշտապես ուշադրության կենտրոնում են

Արդեն 7 տարի Ամերիկայի եւ Կանադայի Թեքեյան մշակութային միության մասնաճյուղերի ատենապետուհի Մարո Պետրոսյանի գլխավորությամբ, նաեւ միության անդամների նախաձեռնությամբ եւ միջոցներով հանգանակվում են որոշակի գումարներ, որոնք տրամադրվում են Հայաստանում Վահան Թեքեյանի անունը կրող կրթօջախների ուսուցիչներին ու աշխատողներին:

Այդ նախաձեռնության շրջանակներում Գյումրու Վ. Թեքեյանի անվ. միջնակարգ դպրոցում հյուրընկալվեցին ԱՄՆ-ի եւ Կանադայի Թեքեյան մշակութային միության կենտրոնական վարչության փոխատենապետ Երվանդ Ազատյանը, Հայաստանի ԹՄՄ վարչության անդամներ Գայանե Մուրադյանը եւ Մարիետա Մակարյանը: Կրթօջախի մանկավարժական խորհուրդը՝ տնօրեն Անտոն Փիլոյանի գլխավորությամբ, դիմավորեց հյուրերին, զրուցեց առկա խնդիրների շուրջը, որից հետո դպրոցի 70 ուսուցիչները եւ սպասարկող անձնակազմի 20 անդամներն սաստաց իրենց հատկացված գումարները: Երվանդ Ազատյանը ներկաներին ներկայացրեց Վահան Թեքեյան բանաստեղծի գրական գործունեությունը: Քիչ անց կրթօջախի սաներն ասմունքեցին Վ. Թեքեյանի բանաստեղծությունները, իսկ հայոց լեզվի ուսուցչուհի Էմմա Միրզախանյանը Երվանդ Ազատյանին հանձնեց թեմատիկ պլանն ու տեղեկացրեց, որ դպրոցում բացվում է Վ. Թեքեյանին նվիրված անկյուն ու խնդրեց հնարավորության սահմաններում տրամադրել համապատասխան նյութեր:

Կրթօջախի տնօրեն Անտոն Փիլոյանից տեղեկացանք, որ «198 աշակերտի համար նախատեսված դպրոցում այսօր սովորում են 898-ը: Սակայն մենք ունենք մի շարք խնդիրներ ու չլուծված հարցեր: Այսօր դպրոցական գույքը չի բավարարում, չկա փափուկ գույք, ուսումնատարական արհեստանոցը կահավորված չէ, ճաշարանը՝ նույնպես: Սակայն մենք մեր հույսը չենք կտրում եւ ապավինում ենք, որ ԹՄՄ-ն կլուծի ու կկարգավորի այդ հարցերը եւս», պատմում էր պրն Փիլոյանը:

Այս տարի Վ. Թեքեյանի դպրոցի սաները մասնակցել են հանրապետական եւ միութենական մի շարք օլիմպիադաների եւ մրցանակային տեղեր շահած վերադարձել Գյումրի: Այժմ էլ դպրոցի չորս ուսուցիչներ վերապատրաստման դասընթացներ են անցնում 2007 թ. նոր 12-ամյա կրթակարգին անցնելու համար: Պրն Փիլոյանը տեղեկացրեց, որ կրթօջախն առ այսօր պատրաստ չէ նոր կրթակարգին անցնելու եւ չի էլ ընդգրկված այդ դպրոցների ցանկում՝ համապատասխան հարմարություններ չլինելու պատճառով: Ինչպես, սպասենք ու տեսնենք, թե ինչպես է 12-ամյա ուսուցումը մտնելու մեր առօրյա:

ՄԱՐԻԵՏԱ ՄԱՐԳԱՐՅԱՆ

«Սիրված երգեր»

Երեւանում ծանոթներիցս մեկը, շատ լուրջ դեմքով նվիրելով մի ձայնասկավառակ, ասաց, որ օտար երկրում լսելով այդ երգերը, լրիվ կարելի է փարատել հայրենի երաժշտության կարոտը: Վերադառնալով Մոսկվա եւ խրվելով աշխատանքի մեջ, ես մոռացա ձայնապնակը եւ մի օր իրոք ներքին պահանջ զգալով ըմբոշխնելու հայ երգը, միացրի: Հնչեց երգը, ես տարակուսեցի. սա եւ տիպիկ արաբական երաժշտություն է... հետո հետեւեցին թուրքական մոտիվներ... եւ վերջապես լսվեց հայաբառ մի երգ, բայց անվանել հայկական... Ճիշտ է, երգը նվիրված էր մորը, բայց ոտեկցվում էր ականջ սղոցող թուրք-ադրբեջանական երկարաձուն կլկլոցներով, մայրակարոտ տառապանքներն արտահայտվում էին մոտավատիպ ելեւէջումներով, մեղեդին միջարկվում էր կլառնետի, ակորդեոնի թե հարմոնի ստակոտոր միջամտություններով եւ այլն: Դասական ռաբիս: Երկրորդ երգը նվիրված էր հորը, եւ ամեն ինչ կրկնվում էր նույն համաչափությամբ ու դինամիզմով: Հուսահատությունս կատարյալ էր, ուժ չմնաց լսելու մյուս «երգերը»: Հանում եմ սկավառակը՝ «Հայկո. Հայկ Ղեւոնդյան»: Եվ ամենահնչեղը... «Սիրված երգեր»: Մեղա՜ քեզ, տե՛ր Աստված, եւ այս ադրբեջանահաճ, իսկական հայ երգին խորթ այս բարբաջանքները համարվում են սիրվա՞ծ: Եթե միայն թուրքական աղտեղություններից հայ մեղեդին փրկած անմահ Կոմիտասը լսեր այս աղավաղումները...

Աղաչեցնում է մի հանգամանք. արդյոք չի՞ կարելի երգել նորմալ հայկական հնչեղությամբ՝ առանց այդ գարշելի կլկլոցների ու երկարաձգումների, առանց այդ կեղծ արեւելյան հավելումների: Այն տպավորությունն է ստեղծվում, որ Հայաստանի անկախացումից լիուլի շահել է միայն... ռաբիսը: Ազատվելով կոմունիստական կապանքներից, նա այսօր լայնորեն քայլում է Հայաստանի առեւտրակետերով, ի դեպ, իր շառավիղներով հասնելով նաեւ բովանդակ Ռուսաստան (չգիտեմ, թե ինչպիսին է իրավիճակը հեռավոր Ամերիկայում): Պարզվում է, որ դարաբաղյան անողոք հակամարտությունն անգամ անզոր եղավ հայ երաժշտության նորաթուխ «աստղերի» մեջ մեռցնելու խստմնելի թուրքամոլ հակումները: Արդյոք այդ անձինք չե՞ն հասկանում, որ այդ բերանակոկորդային ծամածռությունները նսեմացնում են հայ մեղեդին: Գուցե իրավացի՞ են ադրբեջանցիները, երբ ամենուր տարփողում են, թե հայերը գողացել ու յուրացրել են իրենց երաժշտական կոլտուրան: Համենայն դեպս, Հայկոն կարող է հավակնել այդ դերին:

Չխոսենք ցենզուրայի մասին: Բայց մի՞թե Հայաստանում, թեկուզեւ մշակույթի նախարարությունում, կոմպոզիտորների միությունում չկան մարդիկ, որոնք իրենց հեղինակավոր խոսքով, խորհրդով, հանձնարարականով կանխեն կամ գոնե թուլացնեն ռաբիսի բարգավաճումը, պաշտպանեն ազգային երաժշտական մշակույթի այդ գոռ շոշափելի տարածման դեմ:

Թե՞ այս ասպարեզում էլ է անտերություն...

ՌՈՒԲԵՆ ՀԱՅԲԱՊԵՏՅԱՆ

Մտահոգություն

«Ազգագիտությունը» վերացրինք, գրագիտությունն ալ հետը:

Հրայր Աճառյան

Ասում են, կարծեմ ես ալ մի տեղ կարդացել եմ, որ երբ մարդ առարածը ֆիզիկապես թոլանում է, մարմնին մեջ թաքնված հիվանդությունը կամ հիվանդությունները երեւան են գալիս, որոնց գոյությանը անձը չէր կասկածում մինչ այդ եւ իրեն թվում էր, որ ինքը կատարելապես առողջ է: Կարծես հասարակությունն ալ այս պարագային նման է անհաս մարդում:

Եվ եթե մի բան պատահի, ասենք բնական աղեն, երկրաշարժ, որը, օրինակ, մեր սիրելի «երկիր դրախտավայրից» անպակաս է, համաճարակ, ջրհեղեղ, ինչպես տնտեսական «կրիզիս», որը սկսելով անցած դարու 30-ական թվականներուն Միացյալ Նահանգներում, սարսեց մոլորակի բնակչության կյանքը: Եվ ահավասիկ այս տեսակ մի աղեն եւ հասարակությունը կտկարանա, հասարակության մեջ ալ երեւան կրնան գալ թաքնված «հիվանդություններ», ծանր հիվանդություններ: Ըսածս հաստատող ամենանոր օրինակը. վերջերս ամբողջ աշխարհի առաջ «Քաթրինա» կոչեցյալ մի փողոցային, ըսենք, կին, արեւելքից ժամում 250 կիլոմետր արագությամբ, իբրեւ մի անկոչ հյուր, առանց դռան զանգը հնչեցնելու, առանց պետությունների սահմաններու անձեռնմխելիության միջազգային սոնրք օրենքի հետ հաշվի նստելու հարձակվեց հրաշալի, բարեկեցիկ Միացյալ Նահանգներու վրա եւ քարուքանդ արեց չեմ գիտեր քանի բնակավայր, վիրավորելով եւ մահվան պատճառ դառնալով հազարավոր միամիտ խաղաղ բնակիչներուն, մանավանդ հատուկ ուշադրություն դարձնելով այն ամերիկացիներուն, որոնց մաշկի գույնը սեւ էր: Ահավասիկ բնական մի աղեն, որը անշուշտ մի պահ տկարացուց Միացյալ Նահանգներու պես հզոր մի երկիր եւ, տեսեք, հանկարծ ինչ սարսափելի եւ անհավատալի բան պարզվեց: Պարզվեց, որ աշխարհի ամենահարուստ, կազմակերպված, հավատացյալ, ամեն ինչ աղոթքով սկսող, դեմոկրատական, հանրապետական, սահմանադրական, կոնգրեսական, նախագահական այդ չնաշխարհիկ երկրում, որուն քաղաքացիներուն կենսամակարդակը իդեալ ու երազ է ուրիշ ժողովուրդներու համար. «American way of life»: Որ ունի գլուխգործոց զենքեր, որոնցմե ամենափառավորը ջրածնային ռումբը չէ միայն, բակտերիական զենք, քիմիական ռումբ, նեյտրոնային ռումբ: Մի պետություն, որ չի ննջում իր դափեթոսակներուն վրա, այլ շարունակում է տնաջան աշխատիլ ստեղծելու նոր գլուխգործոց զենքեր, որպեսզի կարողանա իրականացնել իր վսեմագույն առաքելությունը՝ հեռամնաց եւ անկիրթ ժողովուրդները քաղաքակիրթ դարձնել: Եվ ահավասիկ: Այդ առողջ երկիրը իր մի տկար պահին պարզեց, որ իր ամենաառողջ թվացող մարմնին մեջ ինչ զգալի հիվանդություններ է պահել, որոնք հարմար պահ էին սպասում բացահայտվելու համար: Մարդասպաններ, գողեր, դիակապուներ, երեխաներ առեւանգողներ, բռնաբարողներ եւ չեմ գիտեր ուրիշ ինչ տեսակ գարշելի բաներ, Միացյալ Նահանգների տարբեր տեղերից հրասակախումբեր կազմած, կայծակնային արագությամբ խուժեցին դեպի վայրը եւ ինկան աղետյալներու վրա իբրեւ խրախճանքի մը ճոխ սեղան:

Բարեբախտաբար, ինչպես ասում են, ամեն չարիքի մեջ բարիք կա: Ամերիկյան կառավարությունը ստիպվեցավ իր բանակը զորակոչել, որպեսզի վերջապես պատերազմի իր իրական թշնամիներուն հետ, եւ ամերիկացի զինվորը վերջապես իմանա, որ ինքը ինչի՞ համար է իր արյունը թափում, եւ ամերիկացի ժողովուրդն ալ տեսավ, որ ինքը անպատշաճ չէ իր հայրենակից հանցագործներուն դիմաց: Այստեղ ինքնաբերաբար միտք է գալիս Ավետարանի իմաստուն պատգամը՝ մարդ նախ իր աչքին մեջի գերանը թող հանի, հետո փորձի դիմացինի աչքի մեջի շյուղը հանել: Լաթիս համաձայն, սգացողների թիվը պակասում է, երկիրը դեպի առողջացում է գնում: Հո չեն նստելու հավիտյան լացելու, բա իրենց բիզնեսը ո՞ւմ վստահեն: Բիզնեսը գիտե՞ ինչ բուժիչ հատկություն ունի: Բանաստեղծն ասում էր. «Մի լար, մի թացիր աչերդ... կանցնի՞»: Ժողովրդական խոսքն ալ կա, ասում է. «Այո, կանցնի, բայց եւ ծակելով կանցնի...»:

Ինչպես ասացի, ըսածս վերաբերում է ամբողջ մարդկության: Այնպես որ, լավ կըլլա՝ մենք մեզի նայինք: Հայերուս հետ պատահածներուն գանք, քանի որ խոսքը մեր ժողովուրդի մասին է: Եթե մեր ժողովուրդը հազարավոր տարիներ շարունակում է ապրիլ, կնշանակի, որ կրնա շատ անգամներ հիվանդացած ըլլալ, բայց առողջացեր է եւ դիմացեր:

ՀԱԿՈԲ ՀԱԿՈԲՅԱՆ

Հայոց գրերի գյուտի 1600-ամյակին, Ս. Մեսրոպ Մաշտոցի հիշատակին

ԴԵԿՐԵՏԸ

Ս. Ներսիսյան. «Մեսրոպ Մաշտոց». 1882թ.

Ջեմ ուզում շատ հեռուներեն սկսիլ: Կուզեմ պատմության սանդխներով իջնել ներքեւ: Ահավասիկ, գրեթե մեր ժամանակներն ենք, 19-րդ դարի վերջերը, երբ հայ ժողովուրդը տկարացեր էր եւ գաղտնի պահված հիվանդություններ երեւացին, որոնցմե մեկը՝ մանավանդ մահացու, իբրեւ քրոնիկ հիվանդություն, կպավ մեր ժողովուրդին: Այդ հիվանդության անունը եթե ճշգրիտ չկա, կարող ենք կոչել օտարամոլություն, ստրկամտություն ազգային, ուրացում, կամ այս բոլորի միացումով մի բառ: Օհ, կներեք, ինչպես է որ ինչ մնաց մոռանալու էի այդ հիվանդության անունը: Դա ԲՈԼՇԵՎԻԶՄՆ է: Այս հիվանդությունը ամենաշատ փորձությունները բերավ մեր հին ժողովուրդի գլխին: Նշեմ այդ փորձությունների կամ փորձանքներեն մեկը՝ ամենավնասակարը երեւի. հասել ենք 1922 թիվը, Հայաստանի երկրորդ հանրապետությունում ենք արդեն, երբ մահափորձի ենթարկվեցավ հայու հոգին: Թեեւ հոգին անմահ է: Խառը ժամանակներ էին եւ ամեն ինչ շատ պարզ չէր: Մի խումբի մաս կազմող երկու հոգի ուշադրություն դարձրին երկրագունդի վրա իրենց երեւալուց 1600 տարի առաջ Ս. Մեսրոպ Մաշտոցի ստեղծած ուղղագրության եւ տառերուն վրա եւ գտան, որ Ս. Մաշտոցի ստեղծած գրերը «էն չի» եւ ուրեմն արդեն ժամանակն է, եթե նոյնիսկ ուշ չէ, որ 1600 տարվա ուղղագրությունը իր տեղը զիջի «նորին», չիմանալով, քանի որ տգեղներ էին, որ հոգին չի կրնար ըլլալ «նոր» կամ «հին»: Լավ, ինչ որ է: Որպեսզի անորոշ չմնամ, խոսքս մեծանուն հայ Մանուկ Աբեղյանի եւ մեծանուն ազգային Պողոս Մակինցյանի մասին է: Ահավասիկ տեղեկություն մը մեջբերված «Հայկական սովետական հանրագիտարանից». «...զբաղվել է նաեւ ուղղագրության հարցերով: Աբեղյանի անվան հետ է կապված 1922-ի մարտի 4-ի դեկրետով Հայաստանում կատարված ուղղագրության բարեփոխությունը (իսկ ինչու ոչ չարափոխություն - Հ.Հ.), որը արեւելահայ արդի ուղղագրության հիմքն է»:

Ուղղագրությունը Աբեղյանի անունին հետ կարելի է կապել, բայց դեկրետը ում անունին հետ պիտի կապել: Աբեղյանը չէր կարող դեկրետ հրապարակել: Հնարավոր է, որ Աբեղյանը ուզենար բարեփոխել Մեսրոպյան ուղղագրությունը, մինչեւ կյանքի վերջը շարունակեր իր հետազոտությունները, որոնք իր հայագիտական աշխատանքներուն կարգին մնային իր գիրքերուն մեջ: Ջեմ հավատում, որ Աբեղյանը ուզենար տեսնել մեր երախաներու ձեռքերում հայերեն լեզվի դասագրքեր Մեսրոպ Մաշտոցի ուղղագրությամբ: Այստեղ է, որ լսվում է Պողոս Մակինցյանի անունը: Ջեմ գիտեր իրապես Մակինցյան ինչ դեր ունեցած է դեկրետի հարցում, բայց գիտեմ, որ ինքը ափսոսանքով էր նշել, որ չարժեր Մեսրոպյան ուղղագրության ձեռք տալ, եթե նաեւ Մեսրոպյան գրերը պիտի չփոխարինվեին լատինական տառերով: Սպանությունը կիսատ է մնացել: Ինչ էին ուզում այս մարդիկը հայ ժողովուրդից: Խեղճ հայ ժողովուրդ, եթե դուն արժեք մը ունիս, այն ալ քու ազգային ըլլալդ է: Ուրացիր ազգդ, դուն ոչինչ ես: Որովհետեւ աղագայնացած այդ խումբը (որուն մաս էր կազմում Պողոս Մակինցյանը, որոնց հետ ոչնչացուց դահիճ ընկեր Ստալինը), այդ ողորմելի խումբը մի երգ սորված էր՝ այս հին աշխարհը մինչեւ հիմքերը փորելու երգը: Բայց Հայաստանում ինչ մնացած էր, որ փորեին մինչեւ հիմքերը, եւ գտան 1600 տարվա սրբություն սրբոց հայ ուղղագրությունը (Մեսրոպին) հիմքերը քանդելու եւ քանդելու համար: Չէ՞ որ իրենց նախահայրը ընկ.Փանջունին էր, որուն համար «քանդելը» նշանակում էր «շինել»: Հե՞ դիտի Երվանդ Օտյան, լուսահոգի մարդ: Հայոց պատմությունը չեմ գրում, բայց արժե այստեղ նշել. 1918 թվականի մայիսի 28-ից մինչեւ 1921-ի մայիսի 21-ը Հայաստանը եղել է «արյան ծով», ներսը պատերազմ, դուրսը՝ պատերազմ, եւ այսպես կործանվում է Հայաստանի առաջին հանրապետությունը: Եվ ահավասիկ, մի տարի էլ չի անցել՝ բոլշեւիկների իշխանության հաստատվելուն եւ Ուղղագրության մասին դեկրետը: Ինչ էր պատահել, սոված, քանդված, վերքերով ծածկված երկիրը բուժե՞լ էր իր վերքերը, լուծե՞լ էր իր ժողովուրդի ֆիզիկական աղահովությունը եւ բարեկեցությունը: Բոլոր հարցերը լուծվել էին, մնացել էր ուրեմն լուծելու անգրագիտության հարցը: Հայ ժողովուրդը ժամկետից շուտ գրաճանաչ դարձնելու համար պետք էր 1600 տարվա հայոց ուղղագրությունը՝ պղծել: Աբեղյանը եւ Մակինցյանը եւ ընկերները նոր ուղղագրությունը «սորվելով» ավելի՞ գրագիտացան:

Բայց ես ուզում եմ այս հարցի հետ կապված մի բան էլ նշել, կապված մեր օրերու, մեր 3-րդ հանրապետության օրերուն հետ: Ջեմ գիտեր ճի՞շտ է ըսվելը, որ հարյուրամյակներ մեր ժողովուրդը երազել է վերականգնել իր անկախ պետականությունը: Ճի՞շտ է: Կրնա ըլլալ: Բայց այդ անկախությունը ձեռք բերելու համար մենք ինչ ենք արել: Ջեմ գիտեր, ավելի լավ չէ՞, որ ճիշտ խոսինք: Ավելի շուտ մեզ պարտադրվել է անկախ պետություն ունենալը: Ամենայն դեպս, կարեւոր չէ, թե ինչպես մենք ունեցանք մեր առաջին հանրապետությունը, երկրորդը եւ երրորդը: Լավ, որ ունեցեր ենք: Այս հարցերու քննարկումը չէ իմ նպատակս: Երրորդ հանրապետությունը հանկարծ երկնքից չինկավ մեր գիրկը: Ամենայն դեպս իսկապես երանելի ժամանակներ էին, կարծեք Հայաստան աշխարհը ողողված էր գարնանային զեփյուռով մը, որ ժողովուրդը լիաթոք հագիվ սկսել էր շնչել տասնամյակներ սովետական «խոր վիրապին» մեջ մնալե հետո, եւ մեկ էլ վրա հասավ մահացու սառնամանիքը, եւ ժողովուրդը նորից տկարացավ: Այստեղ չեմ ուզում ցանկը կազմել այն զգալի հիվանդություններուն, որոնք երեւան եկան: Բայց կյանքը բարդ բան է, չես գիտեր ինչեր կարող են պատահիլ: Տեսեք, մեկ էլ ժողովուրդին մեջ լուրեր սկսան տարածվիլ, որ ՄԱՐՏԻԿԸ ողջ է եւ վերադառնում է: Տասնամյակներ մարդիկ կարծում էին, որ նա անհայտ կորածներուն մեջ է, բայց պարզվեց, որ ողջ եւ առողջ է, վիրավորվել է, գերի է ընկել, փախչելով գերությունից հասցեին: Հայաստանեն գրված հոդվածները հատուկ «Յառաջի» համար ողողված էին շոշորդությամբ եւ պարզապես շողոքորթությամբ, որը խանգարում էր ընկալելու հոդվածագրին գրելուն նպատակը: Եվ քանի որ ընթերցած եմ այդ հոդվածները, կրած այդ հոդվածներուն ազդեցությունը, բնական է, որ մեջս ստեղծված է հակազդեցություն մը, որ իմ հերթիս ուզում եմ փոխանցել ընթերցողներուս: Տեսնում եք եւ պիտի տեսնեք, որ ես չեմ մասնակցում այդ հարցի լուծմանը՝ սխալը վերացնելու, Աբեղյանի ուղղագրությունից հրաժարվելու եւ Մեսրոպյան ուղղագրության դառնալու: Որովհետեւ նախ, ինչպես հայրենակիցներուս 999 տոկոսը, ես ալ չեմ գիտեր իրական պատմությունը՝ Մեսրոպյան ազնվական ուղղագրությունեն անցումը փողոցային «դեկրետով» ստեղծված ուղղագրության: Ուրախ պիտի ըլլայի եւ ուշադրությամբ պիտի կարդայի, եթե իրական ուսումնասիրություն մը գոյություն ունենար կամ ձեռքս անցած ըլլար այդ նյութին շուրջ գիտական եւ վստահելի գիրք մը: Պիտի ուզեի սորվիլ այդ հարցին պատմությունը: Ինչպես հաճախ է պատահում հայերուս հետ, որ երբ ստեղծվում է տարակարծություն մի հարցի շուրջ, պառակտում է առաջանում, եւ չանցած մարդիկ կարծես մոռանում են ինչի մասին էր վեճը եւ սկսում պառակտման մի կայուն վիճակ, որ շուտով սառչում, քարանում է,եւ մարդիկ մոռանում են, թե ինչի մասին էր վեճը: Կռվողները խրամատներու մեջ ամրացած սկսում են դիրքային մի պատերազմ, որուն վերջը չի երեւում:

Ջեզ չձանձրացնեմ, արդեն շատ խոսեցի, եւ անցնեմ իմ նկատողություններուս՝ այդ հոդվածներուն մասին: Ահավասիկ սկսիմ իմ նկատողություններս: (Կրնա ըլլալ, որ սխալվում եմ, պատրաստ եմ ընդունելու): **Առաջին:** Այն զգացողությունը ունիմ, որ հոդվածագիրները, ըլլան Հայաստանի քաղաքացիներ, ըլլան սփյուռքահայեր, թվում է, թե իրենց մտքին իշխում է անցյալեն եկած մի վիճակ, որը հատուկ էր սովետական կոչված աննորմալ հասարակարգին: Ամբողջ Սովետական Միության պատմությունը կգտնեք կամայական դեկրետներու տեքստերուն մեջ՝ գործադրվելու պարտադրված սովետ ստրկացած ժողովուրդին: Այս խոսակցությունը կրնա շատ ընդարձակել հոդվածս. անհեթեթ, հիմար, զավեշտական, ողբերգական օրինակներ ուզածիդ չափ՝ սովետական «դեկրետներուն» վերաբերյալ:

Ինձ թվում է, որ հոդվածագիրները իրենց մտասեւեռումեն ճնշված կարող չեն պատկերացնելու ավելի խելոք միջոց եւ կարծեք այս հարցին լուծումը՝ Մեսրոպյան ուղղագրության վերածնունդը կապել հրամանի մը, դեկրետի մը: Իմ տպավորությունս է, որովհետեւ, ինչպես ըսի, երկրորդ հանրապետության կառավարությունը դեկրետի դիմեց Աբեղյանի ուղղագրությունը անցկացնելու համար, բնական է, որ մարդիկ մտածեն՝ իսկ ուրեմն ինչու 3-րդ հանրապետության կառավարությունը չի կարող դեկրետով մը նոկաուտ ընել Աբեղյանի ուղղագրությունը: Այսպես մտածողները անպայման կասկածելի են: Կամ՝ տկարամիտ մարդիկ:

Երկրորդ նկատողությունս: Հոդվածներուն մեջ անպայման առաջ է քաշվում այն միտքը, որ աբեղյանական ուղղագրությունը պատճառ դարձած է, որ հայերը

Տես էջ 8

«Գարունի» մարդկանց երկիրը

ԱՆԺԻԿ ՎԱԿՈԲՅԱՆ

Հիմնադրման առաջին իսկ տարիներից «Գարունը» գծեց ամսաթերթի հետաքրքրությունների շրջանակը եւ հետագա տարիներին հավատարիմ մնալով իր թեմաներին՝ խորացրեց, լրացրեց ու կայունացրեց ասելիքը: «Գարունը» դեմ էր մեծագլուխ, նվազ ոտքերի վրա հազիվ կանգնող հանրապետության կայացմանը: Երեւան մայրաքաղաքը, որ ազգաբնակչության անանց սերն ու հպարտությունն էր, մագնիսական հզոր ուժով դեպի իրեն էր ձգում գյուղացիությանը: Վաղուց արդեն քայքայման եզրին հասած գյուղը՝ իր անհեռանկար գոյավիճակով հայացքը հառել էր քաղաքին: Շրջանների խոշորացումը, մի օրից մյուսը քաղաք հայտարարվող բնակավայրերը տանում էին պետական բյուջեի առյուծի բաժինը: Մշակույթի, գիտության կենտրոնները, միջնակարգ եւ բարձրագույն կրթական համակարգերը, բանվորական աշխատատեղերի առատությունը բաժին էին ընկնում գյուղերի հաշվին խոշորացող քաղաքներին, մանավանդ՝ Երեւանին: Միգրացիան իր բնական ու անբնական չափերով նվաճում էր ողջ երկիրը, իսկ դատարկվող լեռնային գյուղերում բնակություն էին հաստատում հարեւան հանրապետությունների խաբնարած ցեղերը:

Բաց երկնի տակ թանգարան հռչակված երկրի ալոյան արոտավայրերը տորվում էին ահռելի չափերի հասած հոտերի կողակների տակ: Այս թեման այնքան հուզեց «Գարունի» անդրանիկ խմբագիր, գրող-հրապարակախոս Վարդգես Պետրոսյանին, որ նա գրեց իր «Մենավոր ընկուզենին» վեպը եւ «Վերջին ռուսցիչը» վիպակը: Հուզումը վարակեց նաեւ հայ կինոյին, թատրոնին: «Գարունը» ահազանգում էր ոռոգման եւ խմելու ջրի պաշարները վատնելու, օդային ավազանի աղտոտվածության, ճանապարհաշինության անբավարար թափի ու որակի մասին: Բայց եւ ամսագիրը չէր զլանում նկատել պետության, այո՛, այո՛, պետության (որքան էլ այն անկատար լիներ) եւ մարդկանց թափած ջանքերը՝ կյանքը բարեփոխելու ուղղությամբ: «Գարունը» փորձում էր երիտասարդների մեջ դաստիարակել պետական մտածողություն, փորձում էր նրանց մեջ վառ պահել երկրի տիրոջ արտացավության գաղափարը, թող որ նրանց մտիկ իսկ չէին թողնում պետական լծակներին: Հրանտ Մաթեւոսյանի՝ տաղանդավոր գրողի «Երկրի ջիղը» կամ «Տերը» հենց այնպես չեն գրվել: «Գարունը» իրեն զգում էր Անտուանը Սենտ Էկզյուպերիի հերոսի դերում, նրա «Փոքրիկ իշխանը» ապրում էր «Մարդկանց երկրում», բայց այլ չափումների մեջ: Եվ սա էր «Գարունի» առաքելությունը. «մարդկանց երկրում»՝ Փոքրիկ իշխանի պես...

Իսկ ո՞րն էր «Գարունի» տոց պորտալարը, նրանց հաջողության գաղտնիքը. -առաջինը՝ մի ուղղությամբ նայող մարդկանց մեկտեղումը, հավաքը, համոզմունքը՝ իրենց կատարած գործի նկատմամբ՝ հավատարմությունը: Մեր բոլորի ծննդյան տարեթիվը 1965-ն էր, աղոթքը՝ Պարույր Սեւակի «Անլռելի զանգակատունը» (մեղմ, «Հայր մերը» չէր), ողբը՝ Հրանտ Մաթեւոսյանի «Տերը, երգը՝ Կոմիտասի երգից հետո՝ Եղգար Հովհաննիսյանի «Երեւան դարձած իմ էրեբունին», նկարը՝ Մարտիրոս Սարյանից հետո Հակոբ Հակոբյանի «Հայաստան» նկարաշարը: Եվ նրանց վառած կրակը մեր մեջ մշտարծարծ էր պահում մեր սերտ շփումը մտավորականության սերունդի հետ: Երբ մեր տղաների «հոդ խմբով» հավաքվում էինք կերուխումի համեստ սեղանի շուրջ, հանդիսությունն ավարտվում էր Մախլուտոյի գերեզմանի մոտ, Էջմիածնի Սուրբ Գայանե եկեղեցու գավթում, որ կողք կողքի արեւի տակ հանգչում են Ռաֆֆու «Խենթի» (Սմբատ Զորավար) եւ մեր մյուս նվիրյալների անմունները: Ամենաանմոռաց հանդիպումը եղել է Ամենայն հայոց կաթողիկոս, Նորին Սուրբ Օծություն երջանկահիշատակ Տ. Տ. Վազգեն Առաջինի հետ: Մեր աբխատակազմի անդամ բանաստեղծ Վաչագան Հովհաննիսյանին խնդրեցի կազմակերպել այդ հանդիպումը Վեհափառի հետ՝ օգտվելով հոգեւոր միջավայրում նրա կարեր ունենալու հանգամանքից: Վեհափառը մեզ սիրով ընդունեց, խոսեց մեր եկեղեցու մասին, ասաց, որ հայոց եկեղեցին լուսավոր եկեղեցի է, ընդունում է գիտության նվաճումները, խոսեց Գրիգոր Նարեկացու, Ներսես Շնորհալու եւ կրոնական այլ գործիչների մասին, «Աստվածաշնչի» նոր, արեւելահայ թարգմանությունը կազմակերպելու դժվարությունների մասին, որը եւ կայացած իրողություն դարձավ մի քանի տարի անց: Վեհափառը մեզ հնարավորություն տվեց ծանոթանալ վեհարանի թանգարանի ցուցադրությանը: Հիացանք հանճարեղ նկարիչ Մինաս Ավետիսյանի (որին ծանոթ լինելու պատիվն եմ ունեցել) «Ռեքվիեմով», հայկական ակնակոց այբուբենով, մեր մշակույթի մնայուն այլ արժեքներով: Մենք Վեհափառից բաժանվեցինք ասես սրբացած, հարուցացած: Հպարտ էինք, որ հոսանքին հակառակ էինք լողացել: Դրանք այն ժամանակներն էին, երբ ողջ սովետական կայսրությունով մեկ երիտասարդական մամուլից պահանջվում էր հակակրոնական քարոզչություն ապահովել:

Վերջերս Հայաստանում նշվեց մայիսյան մեր ազգային հաղթանակների օրը՝ Սարդարապատի հաղթական ելքով ճակատամարտի, Առաջին հանրապետության ստեղծման, Մեծ հայրենականի հաղթական ավարտի եւ Շուշիի ազատագրման օրը: Արագածյան շտաբպարը խորհրդանշեց մեր միակամ լինելը, քարեղեն այբուբենը՝ մեր ինքնությունը, անկախության ապացույցը: ՀԱՄ-ները խոսքերը մեկ արած, ոգեւորված հայտարարում էին, թե քարեղեն այբուբենի պուտակը եզակի հուշարձաններ են: Բան չունեմ ասելու, եզակի են ու խորապես հուզիչ, բայց պետք չէ մոռանալ Վեհարանի ակնակոտ այբուբենը. գաղափարը գալիս է Սուրբ Էջմիածնից, Ամենայն հայոց սուրբ Վեհափառ Վազգեն Առաջինից:

Հաջորդ հանդիպումն այն ժամանակվա Հայաստանի արտգործնախարար, պատմական գիտությունների դոկտոր, միջազգայնագետ Զոն Կիրակոսյանի հետ էր: Երբ ես նրան խմբագրություն հրավիրելիս ասացի, որ «խնդրում եմ տղաներիս լուսավորել Հայ դատի մասին Ձեր շահեկան խոսքով, նա ուրախությամբ հանձն առավ, համաձայնեց մեկ ժամով գալ, բայց խմբագրությունում մնաց երեք ժամ: Նրա նյութը անսպառ էր՝ Հայկական հարց, միջազգային դիվանագիտական խաղեր, սփյուռքահայ պատմաբան Ռիչարդ Հովհաննիսյան (1918-20 թթ. մեծ մասնագետ): Նրա խոսքն ասես վերջ չուներ, գիտական փաստերին հաջորդում էին հուզումնախառն հոգեվիճակները, ի վերջո թե բանախոսը հուզումից արտասվեց, թե մենք՝ ունկնդիրներս: Նման հանդիպումներն ու ցերեկույթները ավանդույթ դարձան խմբագրատանը: Մեզ այցելելն իրենց պարտքն էին համարում նաեւ սփյուռքահայ հասարակական գործիչներ, հայագետներ, գրողներ, նկարիչներ: Այս ամենը «Գարունի» տոցը նախապատրաստում էին հետագա գործունեության համար: Պատահական չէ, որ մեկ տասնյակից մի փոքր ավելի աշխատակազմ ունեցող խմբագրությունը նոր իրավիճակում, անկախության տարիներին, տվեց պետական-հասարակական գործիչներ (Վազգեն Սարգսյան, Լեւոն Անանյան, Հակոբ Մովսես, Ռոլանդ Շառոյան, Էդվարդ Միլիտոնյան, Կարինե Խոդիկյան, Արեւաս Ավագյան, Մերուժան Տեր-Գուլանյան եւ ուրիշներ): Նրանցից ոչ մեկն իր արժանապատվությունից ցած չէր համարում, որ գրող լինելով եւ ունենալով բազում այլ հետաքրքրություններ, լրագրությամբ էր զբաղվում՝ միշտ հիշելով, որ դարիս մեծագույն գրողներից մեկը՝ Էռնեստ Հեմինգուեյը մինչեւ իր կյանքի վերջն իրեն ժուռնալիստ էր համարում: Ինչո՞ւ այս մասին հարկ համարեցի հիշատակել, ասեմ. մի շնորհալի երիտասարդ հեղինակ ունեինք (անունը չեմ ուզում տալ), ամբողջ օրը «Գարունում» էր անցկացնում: Նրա մի վիպակը, որ մենք տպագրել էինք ամսագրի համարներից մեկում (չեմ հիշում ո՞ր համարում), զեկուցողի կողմից խիստ քննադատության ենթարկվեց գրողների հերթական համագումարում, իհարկե՝ հանիրավի (իմ կարծիքով): 90-ական թվականների սկզբներին, երբ հեղափոխության ալիքն անխղճորեն վառում էր թացը չորի հետ, այդ երիտասարդը ելույթ ունեցավ գրողների միության ժողովներից մեկում եւ տարօրինակ մի միտք հայտնեց, որ «Գարունում» իրեն գործողում էին երջաններ՝ ակնարկ գրելու, որ գրականությամբ չզբաղվի, չիշելով, որ ակնարկը նույնպես գրական ժանր է եւ իրեն գործուղել են գրելու համար եւ ոչ թե չգրելու... Երեւի չգիտեր, որ իրեն մինչեւ վերջ կերակրելու է լրագրությունը...

Չեմ կարող չխոսել մի երեւույթի մասին, որ «Գարունի» համար խիստ սկզբունքային էր ու բնորոշ: Մենք գտնում էինք, որ կենտրոնից հեռու երջանները կանգուն են պահում ոչ միայն սոցիալական խնդիրները, ոչ միայն հաղորդակցության միջոցաճանապարհները, այլ նաեւ գյուղական մտավորականությունը՝ գրողները, լրագրողները, ուսուցիչները: Խմբագրությունում մենք պարզապես դողում էինք նրանցից յուրաքանչյուրի տողի վրա եւ նրանց գրվածքների, ստեղծագործությունների առջեւ կանգ էլ լույս էինք վառում: Նրանք գիտեին, որ «Գարունի» խմբագրությունում իրենք սպասված մարդիկ էին, որ մեր հետաքրքրության առարկան ոչ միայն մեծ քաղաքների ստեղծագործողներն էին, այլ նաեւ իրենք: Այս դեպքում չէր աշխատում «աչքից հեռու, սրտից հեռու» ասացվածքը: Այդ «կրակե շաքիկ» հագած տաղանդավոր մտավորականները պարզապես սիրահարված էին իրենց բնաշխարհ սար ու քարին, իրենց տեղացիների յուրահատկություններին, իրենց բառուբանին: Եվ տպագրելով իրենց գործերը մենք ասես ասում էինք լսելի՝ տղանե՛ր, պինդ մնացեք, գյուղը, ազգը պահպանողը նաեւ դուք եք, ձեր գրվածքները յուրահատուկ համ ու հոտ ունեն: Ովքե՞ր էին այդ տղաները, «Գարունի» տղաները. լուսահոգի Ժորա Հակոբյանը՝ Թալինից, Մարգարեն Հարությունյանը՝ Մարտունիից, Նորայրը եւ Սեւանը՝ Ղուկասյանից (Ացոգի), Սամվել Բեգլարյանը՝ Նոյեմբերյանից, Համլետ Նահատակյանը՝ Էջմիածնից, Վարդան Հակոբյանը՝ Արցախից: Այդ կրակե շաքիկ հագած տղաների (բնորոշումը իմը չէ, տաղանդավոր ակնարկագիր-էսսեիստ Սասուն Թորոսյանինն է, նրա՝ մեր ամսագրում տպված հրաշալի ակնարկի վերնագիրն է): Մի մասն արդեն ոչ եւս են, թող լույսի բաժին դառնան մեզնից հեռացածները, բայց պետք զգացի նրանց լուսավոր հետքը հիշելու, ասում են չէ՞ որ ոչինչ չի մոռացվում, ոչ ոք չի մոռացվում, գոնե ես չեմ մոռանում: Կարելի է շարունակել թվարկումը, հիշատակել անձանց, որոնք եղել են մեր հեղինակային կազմում եւ այսօր հայտնի գործիչներ են (մեղք կլինի Ալվարդ Պետրոսյանին եւ Ռուբեն Հովսեփյանին չհիշելը), բայց չեր կարացնեմ: Ուզում եմ խոսքս ավարտել խմբագրության ծանր հրեանի Մարգո Ղուկասյանի «Խնձորենու բժիշկը» հրաշալի ակնարկի հերոս Նիկոլայ Սարգսյանի գնահատականի խոսքով: Նա տարվա մեջ մի քանի անգամ մեզ այցի էր գալիս եւ ամեն անգամ հարկ էր համարում կրկնել.

- «Գարունի» տղաները ուրիշ որակի հայեր են, դրա համար ժամանակ առ ժամանակ ուզում եմ ձեզ տեսնել:

Սիրելի ընթերցողներ, մրցանակակիր կամ շարքային լրագրողներ, գրողներ, ուզում եք հավանեք, ուզում եք՝ ոչ, մենք մեր գործն արել ենք, եւ գոհ եմ մերոնցից եւ ինձնից (համեստությունս տարվում եմ): «Գարունը» մեզ եւ ուրիշներին տվել է ստեղծագործական հնարավորություններ՝ ի սեր մեր ժողովրդի, իմ նարեկացիական բարեգութ դաշտ եղել, մնացածը պատմությանն է պատկանում: ■

Ա էջից

Հայոց գրերի գյուտի...

պառակտվին, օտարանան իրարմե, մինչեւ իսկ հայերեն լեզուն չհասկնան: Ցուզելով անդադարանալ, որ հայ են, բայց հայերեն չեն իմանում: Այս տեսակ ներկայացնել հարցը՝ անհեթեթ է, տկարամտություն է եւ չարամտություն: Անշուշտ, երկպառակություն կամ պառակտվածություն բառը պատահական չէ, որ հայտնվում է հոդվածագիրներու գրիչին ծայրը: Ինչպես որ ֆրանսացիներն ասում են, որ անկարելին (impossible) ֆրանսերեն բառ չէ: Մենք հայերս ալ կրնանք հայտարարել՝ պառակտումը այնքիսի հայկական բառ է, որ մենք հայերս այդ բառեն ոչ մի դեպքում չենք հրաժարվի, ոչ մեկին չենք զիջի, դա մեր ամենամեծ հարստությունն է եւ գոյության հենարանը: Այս բառին մասին կարելի է միլիոնավոր գիրեր գրել: Ըստ այդ նվիրյալ հոդվածագիրներուն, իբր Հայաստանի հայը եւ Սփյուռքի հայը իրենց ճղում են, որ իրար վրա հարձակվին եւ իրար սիրեն, իսկ աբեղյանական ուղղագրությունն իրենց ձեռքերը եւ ոտքերը կապած է եւ թող չի տալիս: Լավ, սիրելը մի կողմ թողնենք, որովհետեւ հասկնում եմ բուն ըսելիքիս: Երկպառակություն բառը՝ պատահական չէ, որ հոլովվում է, բայց սխալ տեղը: Երկպառակություն չկա սփյուռքահայերու եւ Հայաստանի հայերուն միջեւ ուղղագրության հարցին շուրջ: Բայց երկպառակություն կա Հայաստանի մտավորականության մեջ: Նախ, թող ինձի ներեն սփյուռքահայ մեր եղբայրները, եթե խնդրեմ, որ առայժմ մի կողմ քաշվին մի քիչ: Դուք ունիք եւ պահել եք Ս. Մեսրոպին մեզի նվիրած ուղղագրությունը: Մեսրոպյան ուղղագրությունը պղծել, գեսին շրջել եւ կոխկրտել են Հայաստանի մտավորականները: Ուրեմն նախ եւ առաջ իրենց պարտքն է գեսնեն վերցնել այդ ուղղագրությունը, մաքրել, փայլեցնել եւ պահպանել: Եվ ահավասիկ այստեղ իր տեղն է գտավում երկպառակություն բառը: Մեսրոպյան ուղղագրության վերականգնման հարցեն ծագող երկպառակությունը մնալով երկպառակություն, ես հայ մտավորականի չեմ ուզում կոչել. մարդը կրնա համոզված ըլլալ, որ Աբեղյանին ուղղագրության դպչիլը կրնա վնասակար եւ վտանգավոր ըլլալ մեր ժողովուրդին համար, մյուսը կրնա հավատալ, որ Մեսրոպյան ուղղագրության վոնդվիլը հայ գրականութենեն եղած է դավաճանություն եւ մնում է դավաճանություն հայ ժողովուրդին հանդեպ: Ամբողջ աշխարհի մեջ որքան հայ կա, որ հետաքրքրված ըլլա ուղղագրության պատմությամբ: Հայ ժողովուրդը 7 տարեկանից սկսել է սովրիլ դպրոցում այն ուղղագրությունը, որ իրեն սովորեցրել են, դարձել է բժիշկ, նկարիչ, աստղաֆիզիկոս, օլիմպիական չեմպիոն: Ժողովուրդը, այսպես, չի հետաքրքրվում այդ հարցով: Գալով պետության, պետությունը միլիոնավոր հարցեր ունի լուծելու: Գլուխ քերելու ժամանակ չունի: Այստեղ է, որ մտավորականությունը իրեն պիտի ցույց տա: Ս.Մեսրոպ Մաշտոցից սկսած մտավորականն է ստեղծում, ձեւավորում հայու հոգին, նա է, որ պիտի պաշտպանի հայու հոգին եւ հարստացնե: Նրա համար ինքը կա, հայ մտավորականը:

Եզրակացությունը: Այս շատ բարդ հարցին լուծումը կ՚նա սկսիլ, երբ Հայաստանի մտավորականության մտքին տիրող երկպառակությունը վերանա: Շարունակությունը միասնական իրագործելի ծրագիրով ներկայանալն է պետության եւ օգնություն ուզելը: Կառավարությունը չի կարող անտեսել հասակ, համոզիչ ծրագիրը: Որը վերջ ի վերջո մի քանի հոգիի ամահաճույքին բավարարություն տալ չէ, այլ ժողովուրդի մը հոգեւոր կյանքին առողջության եւ պահպանման համար է: Հարցը հայ ժողովուրդին գոյատեւման ամենաազդու «զենքին» մասին է: Իշխանությունները ոչ մի անգամ հաշվի չեն նստելու օդային խոսակցություններու հետ:

Մեր մտավորականությունն ինքնախաբեությամբ է զբաղված եւ ցուցադրում է հեղհեղուկ հոգեվիճակ եւ անսկզբունքայնություն, երբ հրատարակում է մամուլ երկու ուղղագրություններով: Ընդունելի է, եթե գիրքը մեսրոպյան ուղղագրությամբ է գրված, հասկնալի է: Բայց եթե խառնիճաղանջ ուղղագրություններով հույս ունինք, որ մարդկանց հայերեն ենք սովորեցնում, սխալվում ենք: Դա տկարամիտ մարդու պահվածք է, որ հավատամք չունի: Եթե հայ մտավորականները, Հայաստանի մտավորականները նախ եւ առաջ, համաձայնին ուղղագրության հարցի շուրջ որոշումը, հարցը կլուծվի: Կարեւորը համաձայնության գալն է: Որոշում նախ եւ առաջ հայ մտավորականը է պատկանում, ժողովուրդն այստեղ ընելիք չունի: Հայ մտավորականը թե գիտե ինչ է ուզում, ժողովուրդին կրնա բացատրել եւ սովորեցնել:

Ալ ավարտեմ հոդվածս: Կուզեի, Մեսրոպյան ուղղագրությունը վերկանգնվեր իր սկզբնական ձեւին մեջ եւ մնար հավիտյան, քանի որ նյութը այդ Այբուբենը, այլ հոգի (հայու հոգին), ուրեմն անմահ է: Եթե Աստված չանի, հայությունը իբրեւ նյութ վերանա, իր հոգին անեղծ վիճակի մեջ պետք է շարունակե ապրիլ մարդկության պատմության մեջ:

Վերջին խոսքը թողնեմ խոնարհաբար մեր մեծ վարպետին՝ Շահան Շահնուրին. «Կը խորհիմ, որ մեր ներաշխարհը բան մը պիտի չկորսնցնէ, եթէ իր երեսէն Հայը անհետանայ վերջնական չքացումով: Բայց ան բան մը պիտի շահի անկասկած, եթէ Հայը արդիւնաւորէ, անգամ մը եւս, իր հանճարին բարուն ուժերը»: ■

Գրականագիտական

ԱՆԿՀՌԵԼԻԻ ՉԱՓՆ ՈՒ ԿՀԻՌԸ

Վեյցարիայում բնակվող հայ բանաստեղծ Հակոբ Սարգիսյանը իր նոր գրքի՝ «Անկշռելին» ժողովածուի մեջ սկզբից եւեթ մատնանշում է պոեզիայի իր տեսադաշտը՝ մարդկային հոգին, ասելով՝ **«ողջ աշխարհը դուն ֆու ձեւով կ'ընկալես»**: Իրոք, պոեզիան աշխարհը նոր ձեւով ընկալելու ճանապարհ է, որով պետք է անցնի ինքնուրույն դեմք եւ նկարագիր ունեցող բանաստեղծը: Ի՞նչ է «անկշռելին» կամ ու ձեւ ունեցող աշխարհում. պարզ է՝ հոգին, եւ ի՞նչ է պոեզիայի նպատակը՝ եթե ոչ՝ «անկշռելին» դարձնել կշռելի, շոշափելի, տալ նրան նյութական գոյություն, մտցնել իրերի աշխարհ: Դրան հասնելու համար պոեզիան անցնում է հակառակ ուղիով՝ կշռելին (նյութական աշխարհը) դարձնելով անկշռելի, այն վերածելով հոգեւոր արժեքի: Դա պոեզիայի պարադոքսն է, որ այս կամ այն կերպ, հաճախ աննկատ, գործում է բոլոր հաջողված բանաստեղծություններում: Այդպիսի բանաստեղծություններ բավական շատ են հանդիպում Հակոբ Սարգիսյանի գրքում: Ահա դրանցից մեկը՝ «Ուսերուս վրայ».

երկու խնձոր յամառեցան կայմերուն վրայ
նաւաբեկեալ ամպերէն վեր լազուրին մէջ
բիւրեղեայ
վերջալոյսը նաւատորմին մնացորդն էր ա-
րիւնլուայ
երկու զինուոր յայտնուեցան այս աղէտին
որպես վկայ
ռազմի շունչը աղէտէն ետք թէ ներկայ էր թէ
բացակայ
ես միայնակ Քրիստոսն էի
Գեթսեմանի պարտէզին մէջ
անհաշտ կռուին ամբողջ բեռը ուսերուս վրայ

Երկու աշխարհներ միաձուլվել են, ստեղծել մի նոր աշխարհ, որը չի համընկնում նրանցից որեւէ մեկին, այլ իր օրենքներով եւ ընչառությամբ օժտված մի նոր գոյություն է, որը հենց ինքը՝ բանաստեղծական աշխարհն է: Նավաբեկյալ ամպեր, երկու խնձոր (մարդկային գիտակցության մեջ արմատավորված հնագույն սիմվոլներից), երկու զինվոր (իմաստային հարուստ ենթատեքստով, վերջալույսը՝ որպես «նավատորմին մնացորդը արիւնլուայ», գունային ուժեղ համադրություն՝ կազմված վերջալույսի կարմիր գույների հետ), եւ վերջում՝ Քրիստոսի անակնկալ հայտնությունը- այս ամենը մտնում է բանաստեղծի հոգու մեջ որպես իրադարձությունների վայր, ուր, ինչպես գրում է Ֆ. Դոստոեւսկին, «Ստված կռվում է սատանայի հետ»:

Նրա պոեզիային բնորոշ է դրամատիզմը, պատկերները, արտահայտությունները, ռիթմական ներքին զարգացումները ներքաշված են շարժման մեջ, տողերը անցնում են մեկը մյուսին՝ զարգացնելով բանաստեղծական սյուժեն (բանաստեղծության լեզվական զարգացման գիծը, որի առանցքի շուրջը հավաքվում են նրա բոլոր տարրերն ու պատկերները), խորացնելով եւ շոշափելի դարձնելով բանաստեղծության ներքին միտքը, որը ամեն տողի մեջ հարատանում է, կերպափոխվում, ստանում նոր ձեւ եւ նշանակություն: Որպես լավագույն օրինակ կարելի է բերել «Ջիւնը» բանաստեղծությունը.

իմ եւ լերան միջեւ հալող ձիւնը
գագաթին վրայ ձիւնի դէմքով ժամանակը
ձիւնի գոյնին արծաթանգը
արծաթանգին մէջ թափառող իմ միտքը
իմ եւ յաջորդ մտքին միջեւ կոտրած շղթան
յաջորդ մտքին աննպատակ թռիչքը
վերադարձի տոմսակէ զուրկ անցեալը
իմ եւ քու միջեւ երկխօսութեամբ վառուող
լամբը
լամբի լոյսին խորհուրդը
ապակիին զարնուող վայրկեաններու անձրեւը
ժամերու կարկուտը
ըղձանքներու ձիւնասպիտակ մենութիւնը
իմ եւ իմ միջեւ մտքի գոյնին արծաթանգը
արծաթանգին նուազը
ժամանակի գագաթին վրայ հալող ձիւնը

ՀԵՆՐԻԿ ԷԴՈՅԱՆ



Փոխաբերությունների ասոցիատիվ կուտակումը, հնչեղանգի եւ ռիթմի ելեւէջները, երբ հաջորդ տողը, ասես չվստահելով նախորդին, ձգտում է ավելի խորացնել բանաստեղծության իմաստային ոլորտը (այն, ինչը կոչվում է բանաստեղծական ներքին ինֆորմացիա), ստեղծում են մի հարաբարժ կառույց, երբ հեղինակը կարծես բարձրանում է ասոցիացիաներով դեպի վեր, դեպի իր տեսիլքը կամ, իր բառերով ասած, «անկշռելին», եւ կամ՝ իջնում է ասոցիացիաներով ներքեւ, դեպի «կշռելին», առաջացնելով երկուստեք շարժումներ՝ զանգից դեպի եւ զանգից դեպի: Երկու հակադիր շարժումների, երկու աշխարհների ներթափանցումը մեկը մյուսի մեջ, նրանց ներհյուսումը կասարվում է որպես բանաստեղծության ներքին զարգացում, որպես բառերի առանձնահատուկ կերպարանափոխություն: Ես այստեղ ուզում եմ հիշել հռոմեացի բանաստեղծ Հորացիուսին, որի կարծիքով բանաստեղծության մեջ «բառերը պետք է զարմանան իրար հարեւանությունից»: Որքան մեծ է այդ «զարմանքը», այնքան մեծ է խոսքի եւ բանաստեղծության արժեքը: Պետք է ասել, որ Հակոբ Սարգիսյանի գրքում բառերը հաճախ են «զարմանում» իրենց հարեւանությունից:

Սա ոչ թե ձգտում է դեպի արտառոցը, պարադոքսալը, դեպի ինչ-որ ինքնամոլություն, որը խորտակում է յուրաքանչիւր ստեղծագործական ճիգ եւ բանաստեղծական գաղափարը փոխարինում սոսկ կեցվածքով, այլ՝ հոգեկան բնական վիճակ, իրերի ներքին դաշնություն, որը բացահայտվում, ի հայտ է գալիս նրանց արտաքին խայտաբղեսության եւ հակադրությունների մեջ, որպես տեսակետ, որպես բանաստեղծի արթուն աչք՝ բացված աշխարհի վրա: **«Միշտ նոյն կէտին վրայ անշարժ կը թռչիմ // նոյն միջոցին մէջ կը տարուբերիմ»** - սա բանաստեղծի կեցության ձեւն է, տարբեր վիճակների մեջ նույն պահին ներկա լինելու նրա ունակությունը, երբ ներկա է այստեղ, բայց բացակա չէ այնտեղ, նրան պետք է որոնել ամեն տեղ՝ շարժման մեջ եւ անշարժության, ներքին աշխարհում եւ արտաքին աշխարհում, ես-ի մեջ եւ ես-ից դուրս: Յուրաքանչյուր զգացում հնչում է տարբեր ոտղություններով, տարածվում տարբեր վայրերում, ողողում կյանքի տարբեր շերտերն ու վիճակները:

Երբ հեռաձայնդ հնչեց
բոլոր իրերը սենեակին լռեցին...

Իրերի «լռելը» նշանակում է, որ նրանք մինչ այդ «խոսում» էին (լռում է նա, ով խոսում է, ձայն է հանում). բացահայտվում է իրերի գաղտնիքը, նրանց թաքուն գոյությունը, որը «խոսում» է բանաստեղծության մեջ, միակ վայրը, ուր նրանք կարող են խոսել (նրանք «լռեցին»՝ այսինքն տեքստի մեջ նրանք «խոսեցին»): Բանաստեղծությունն, այսպիսով, մի գաղտնի կոդ է, որով բացվում է կեցության «փակ» լեզուն, մարդու եւ իրերի լռությունը: Ինչը բացվում է՝ չունի չափ ու կշիռ, դա «անկշռելին» է, լռությունը, կյանքի նուրբ էությունը, որը ներքուստ շարժում եւ ուժ է հաղորդում նրա բոլոր ձեւերին եւ, առաջին հերթին մարդկային լեզվին, որի բարձրագույն մակարդակը բանաստեղծությունն է:

«Անկշռելին» գրքի մեջ դժվար է որոշել մարդու եւ աշխարհի սահմանները, ես-ը բացված է եւ ներհյուսված աշխարհին, աշխարհը՝ մարդկային ես-ին, որով ես-ը սանում է գոյության առարկայական նկարագիր, աշխարհը՝ մարդու հատկանիշներ, դեմք ու ճակատագիր: Ինչի մասին էլ խոսի բանաստեղծը՝ խոսում է իր մասին, ինչ էլ որ խոսում է իր մասին՝ խոսում է աշխարհի մասին: Նրանք միաձուլված են իբրեւ բանաստեղծական իրականություն՝ իր օրենքներով եւ կանոններով, կազմված տարբեր աշխարհներից, բայց չհավասարվելով նրանցից մեկն ու մեկին:

Ալիքներու թեթեւ մրմունջ
միայն աւազը ունկնդիր
քու վարսերուդ համբոյրը տաք
միայն սարսուռը օրհնութիւն
մենք բացուած ենք զիշերուսն դէմ
տաք լուսինը կռնակիս
մեր շուքերը աւազին վրայ կը հնչեն
երբ իրարու կը դպչին...

Հակոբ Սարգիսյանի բանաստեղծություններում խաղաքային ոճեղաքը եւ բնությունը լրացնում են իրար, բանաստեղծի հայացքը թեթեւ ու աննկատ անցնում է մեկից մյուսին, գտնում նրանց փոխաբերական (մետաֆորային) արժեքներն ու իմաստները, մեկը բացվում է մյուսի միջոցով: Մարդը՝ իր ճակատագրի մերկ դատավճռի առջեւ եւ նրան շրջապատող բնության ներդաշնակությունն ու հավերժությունը - սա է կազմում նրա փոխաբերությունների հիմնական նյութը եւ հարաբերությունների հիմքը: Երբեմն բավական է հոգանցիկ մի ակնարկ, որ բացահայտվի բանաստեղծության կենտրոնական իմաստային գիծը: Օրինակ՝ «Գիմրի» բանաստեղծության մեջ խաղաքի ողբերգությունը տրված է «երկնքի» հակադրության միջոցով. **«Ինչ լաւ է, որ երկինքը դեռ չէ փլած // ճիշդ յուսահատ ուրտի պէս // երկինքը ցած դեռ կանգուն է»**: Երկինքը կանգուն է դեռ՝ խաղաքի համատարած փլուզման մեջ, որը տրված է «յուսահատ ուրտի» համադրությամբ:

Մեր առջեւ ինտելեկտուալ պոեզիայի հաջող նմուշներից մեկն է, ուր բանաստեղծի միտքը վերահսկում է հոգեկան ներքին շարժումները, ձեւ եւ ուղղություն տալիս նրանց, զգայական հում նյութը վերածում գեղարվեստական կառուցվածքի: Ինտելեկտուալ ասելով չպետք է հասկանալ «կեղծ» կամ «հնարովի», զգացմունքներից զուրկ, մտացածին եւ այլն, ինչպես կարծում են որոշ մակերեսային տեսաբաններ եւ հեղինակներ՝ ձգտելով արդարացնել իրենց ցածրակարգ գեղումները, որոնք արագորեն վերածվում են բառակույտերի, այլ ներքին բարդ աշխատանք, ինքնակենտրոնացում, հոգեկան փորձ, որի մեջ լավագույն ձեւով արտացոլվում է ժամանակակից Ոգու բանաստեղծական պատկեր-կառուցվածքը: Այստեղ անհետանում են սահմանները անձնականի եւ անանձնականի միջեւ. մի կողմից դա անանձնավորված է, մյուս կողմից՝ անձնավորված, դրանցից որեւէ մեկի բացակայությունը պոեզիայի մահն է: Այստեղ անհետանում են նաեւ սահմանները ներքինի եւ ոչ-ներքինի: Քնարերգությունն այն իմաստով, ինչպես եղել է ժամանակին, այժմ անհնար է. ռոմանտիզմի, սիմվոլիզմի, սյուրռեալիզմի ժամանակներն անցել են, թեեւ նրանցից որոշ գծեր շարունակում են ապրել, իհարկե, ձեւափոխված եւ վերածուլված նոր կառուցվածքների մեջ՝ արտաքին աչքի համար հասանելի ճախ անճանաչելի: Դասական պոեզիայի ներկայությունը զգացվում է ոչ թե տեքստային, այլ՝ ենթատեքստային մակարդակում, բանաստեղծական ինֆորմացիայի խոր շերտերում՝ պահպանելով ժամանակների կապը եւ բանաստեղծական արիստոկրատիզմը, առանց որի ստեղծագործությունը, ինչպիսին էլ լինի նրա արտաքին գեղարվեստական հարդարանքը, դատապարտված է բարոյական խեղման, քայքայման եւ մահվան: Պոեզիայի (ընդհանրապես՝ արվեստի) պարադոքսներից մեկն այն է, որ լինելով մարդկային գործունեության ամենաազատ ոլորտը եւ կերտելով մարդու ազատ ոգին՝ միաժամանակ պահանջում է պատասխանատվություն եւ բարոյական իսկական արժեքների ստեղծագործական հավատարմություն (հատկապես վերջինի մոռացումը, որը կապված է ազատության կեղծ պատկերացումների հետ, ստեղծագործողի համար ունի ողբերգական նշանակություն՝ նրան հասցնելով ներքին ոչնչապատության եւ ստեղծագործական բացարձակ անպտղության):

«Անկշռելին» ժողովածուն բանաստեղծի ստեղծագործական կյանքի նոր հանգրվանն է, նրա ամենահաջող գիրքը: Կարելի է զարմանալ, որ բանաստեղծը, արդեն իր հասուն տարիքում, երբ շատերը վաղուց արդեն լքած են պոեզիայի «սրբազան դաշտը», իր մեջ այնքան ուժ է գտնում, որ նստում է սպիտակ թղթի առաջ՝ արտահայտելու իր խոհերն ու տեսիլքները մարդու, կյանքի, սիրո, հայրենիքի եւ ընդհանրապես գոյության առեղծվածի մասին: Տարիների ընթացքում կուտակված ինֆորմացիան նրան ազատում է պայմանականություններից, ավելորդ փորձարարություններից: Իր պոեզիայի ենթատեքստային մակարդակում նա այս կամ այն կերպ կապված է հայ դասական բանաստեղծության, մասնավորապես՝ Մեծարենցի ավանդույթների հետ, բայց տեքստային մակարդակում նա ունի արդիական լեզվամտածողություն եւ կապված է նոր ժամանակների հետ: Նա Սփյուռքի բանաստեղծ է, բայց իր բանաստեղծական փորձով կապված է հայաստանյան բանաստեղծական շարժումների հետ, թեեւ նման բաժանումը գուցեեւ տեղին չէ, քանի որ, հատկապես վերջին տասնամյակում, նկատվում է հայ գրականության երկու թեւերի նկատելի մերձեցում մեկը մյուսին, որը հենց այն դրականն է, ինչի մասին կարող է երազել հայ գրողը ոչ միայն Սփյուռքում, այլեւ Հայաստանում: Յուրաքանչյուր նման գրքի հրատարակությունն ավելի է նպաստում մեր գրականության, մտակոյթի եւ լեզվի միասնականությանը: «Անկշռելին» ժողովածուն (չնայած երբեմն առանձին տեղերում հանդիպող լեզվաարտահայտչական որոշ անհարթությունների, որոնք թերեւս անխուսափելի են հայերենի լեզվական միջավայրից համարյա կտրված բանաստեղծի համար) իր գեղարվեստական որոշակի մակարդակով, մտածողության իր եղանակով, պոեզիայի ժամանակակից դիտանկյունով, հենց այն գրքերից է, որոնք ծառայում են այդ նպատակին եւ նպաստում մեր գեղարվեստական մտքի զարգացմանը: ■

Նկարիչը

Մահուան 5-րդ տարելիցին առթիւ

Հինգ տարի առաջ մեզմէ կը բաժնուէր Գառզուն, 93 տարեկանին: Իր պարագային՝ այնքան խաբուսիկ տարիք մը, քանի ինք մնաց միշտ թարմ, գործօն, ստեղծագործող, առանց դադրելու յարակայ ներկայութիւն մը ըլլալէ ֆրանսահայ կեանքին մէջ, իմաստով մը նաեւ՝ հայկական ընդհանուր կեանքին մէջ, առանց սահմաններու: Իր խոնարհ, խիստ համակրելի եւ ընկերային խառնուածքը զինք մօտ կը պահէր ընկերութեան, հայ թէ օտար, բայց մասնաւորաբար հայ: Չէր մերժեր իր հովանաւորութիւնը ընծայել ամէն ձեռնարկի զոր օգտակար կը նկատէր հայ կազմակերպութիւններուն համար:

Իր հինգերորդ տարելիցը նշելու ամէնէն արժանաւոր եւ յարգելի եղանակը կը նկատենք, անգամուան մը համար, բեմը ամբողջութեամբ տրամադրել իրեն, առանց որեւէ միջամտութեան, առանց փորձելու ներկայացնել իր դիմագիծն ու վաստակը: Նոյնպէս՝ իր կեանքը: Անգամուան մը համար թողլ տրուի իր բառերով եւ իր հետ լոտ ճամփորդել իր աշխարհին մէջ, հաղորդուելու համար ներանձնական իր խոհերով, երազով, հոգիի եւ մտքի իր տագնապներով եւ թափառումներով, կեանքի եւ արուեստի իր դատումներով, ու նաեւ՝ Հայու իր զգացումներով: Այս մտածումով ստորեւ կը ներկայացնենք հասկաւոր մը զանազան շրջաններու եւ տարբեր առիթներով իր յայտարարութիւններէն, որոնք լոյս տեսած են մամուլի թէ իրեն նուիրուած հատորներու մէջ:

Առանձին սիւնակով նաեւ կը ներկայացուի իր անտիպ ինքնակենսագրականէն մաս մը, զայն խաղելով այն ձայնագրեալ ընդարձակ գրոյցէն զոր միասին ունեցած էինք գաւառային իր երկրորդ բնակարանին մէջ, Վոդուէ, Փարիզէն ոչ շատ հեռու: Թուականն էր 1973 նոյեմբեր 17:

ԳՐԻԳՈՐ ՔԷՈՍԵԱՆ

Սա մեր անմահներից է, մեր կարեւոր ներդումներից՝ համաշխարհային արվեստի գանձարան: Եվ պատահական չէ, որ 1977 թ.-ին նա իսկական անդամ ընտրվեց Ֆրանսիայի ազգային ակադեմիայի, որին «Անմահների տաճար» մակդիրն է տրվում հաճախ: Դժվար է ասել, թե նրա արվեստում որտեղ է սկսվում ազգայինը եւ որտեղ ավարտվում համամարդկայինը (կատարյալ արվեստում դրանք միեւնույնը չե՞ն միթե): Սակայն անկասկած է նրա դերի եւ դերակատարման ազդեցությունը հատկապես Ֆրանսիայում հայկական կերպարվեստի եւ ընդհանրապես մշակույթի ծանոթացման, մատուցման գործում: Միաժամանակ, նրա ստեղծագործական կյանքը առայսօր կարող է օրինակելի լինել, ներշնչել մեր երիտասարդ արվեստագետներին, թե ինչպես եւ ինչ չափանիշներով է կարելի նվաճել միջազգային ասպարեզները:

Այսօր մեր թերթը մեծ արվեստագետին առնչվելու, նրա կենսագրությանն ու խոհերին հաղորդվելու առիթ է ընձեռում ընթերցողներին, շնորհիվ նրա արվեստի ու կենսագրության գիտակ, նրա ստեղծագործական կյանքին նվիրված մենագրության հեղինակ Գրիգոր Քյոսեյանի: Բեյրութի Modulart արվեստի սալոնի տնօրեն եւ «Զարթօնք» օրաթերթի արվեստի բաժնի խնդադաս, հետագայում «Պայքար» շաբաթաթերթի (Բոստոն, ԱՄՆ) պատասխանատու խմբագիր Գր. Քյոսեյանի գրի առած եւ պատրաստած այս էջերը լույս են տեսել Փարիզի «Յառաջ» օրաթերթի «Միտք եւ արուեստ» հավելվածում (4 սեպտեմբեր, 2005 թ.), որից եւ արտատպում ենք:

▼▼▼

Գառզու

Իր մտածումները կեանքի եւ արուեստի մասին

Կը զմայլիմ մեր ժամանակաշրջանի գիտերով, բայց անոնք երկիւղալի են: Եթէ մարդը կարենար փոխուիլ... Մեքենան չի կրնար փոխել կեանքի ճակատագիրը, եւ կը հաւատամ հաստատէն, որ բնութենէն հեռանալով, մարդ կը հեռանայ ճշմարտութենէն: Համեմատութեան այնպիսի՞ պակաս մը կայ մտքի-հոգիի եւ նիւթի, գիտութեան եւ անոր կիրառկումներուն միջեւ: Ասիկա (գիտութիւնը) մարդը չ'ազատագրեր: Անոր իմացականութիւնն է, որ կը փառատրուի, բայց շատ սակաւօրէն ան կը դառնայ դէպի Բարին: Կը տեսնեմ շատ գերիներ եւ փիչ երջանիկներ (...):

Գառզուն եւ Սալվադորե Դալին՝ ակադեմիկոսի համազգեստով:

Ընկերութիւնը ենթակայ է տարանջատումի: (Վերոյիշեալ համեմատութեան պակասը) արուեստագէտը կը մղէ ինքնապատանութեան, մեկուսացման, անհաղորդականութեան, կամ ճիշդ հակառակը,- ինչպէս Օր եւ Բոբ արտայայտութիւններու պարագային, օրինակ՝ զայն կը մղէ գտնելու ժողովրդային լեզու մը, որ զուտ ներկայական տարրերէն դուրս մուտք գործեն արուեստի այլ բնագաւառներէ միջոցներ, գործնական, գործնական իրեղէններ:

▼▼▼

(Մեծաղեայ մերօրեայ շինարարութիւնը) պողպատեայ վանդակն է, զոր մարդիկ իրենց իսկ ձեռքով կը շինեն... Օդանաւը փիչ մարդկային է, պարարտութիւնն է իր գեղինը... Փարիզի մէջ, մի միայն ինքնաշարժերու եռուն շրջագայութիւնը ինքնի անձկութիւն կը պատճառէ: Միշտ կը խորհիմ, թէ պիտի ճզմուիմ ինքնաշարժէ մը:

▼▼▼

(Հաւատք եւ նախախնամութիւն): Կը հաւատամ ստեղծագործ ուժի մը... սակայն ներեցէք որ չեմ մտածած այդ մեծ հարցերու մասին: Նկարչութեան մէջ շատ կ'պարիմ: «Յայտնութիւն» (Apocalypse) բառը առի շատ տարտամ իմաստով եւ զուտ ենթակայական խորքով մը: Յայտնութիւնը ինքնի համար արդի ժամանակներն են: Անձկութիւնն է ան մարդում՝ դէմ յանդիման մեքենային թեքնիք յառաջադիմութիւններուն, որոնք յաճախ կը սպառնան զինք ոչնչացնել...: Այս անվստահութեան, կորստեան եւ ի վերջոյ վախի մթնոլորտն է, որ փորձեցի թարգմանել նկարներուս մէջ, որպէս նիւթ ունենալով արդի կեանքի մեքենական բոլոր արտայայտութիւնները: (Ու դեռ) Յայտնութեան տեսարանները կու գան մեր առօրեայէն: Անոնք արմատախիլ անտառներն են, գերբնակ քաղաքները, աւերները, թշուառութիւնը եւ, մանաւանդ՝ սա թիւը, սա յոգնատպառ բազմութիւնը մարդոց, գիշերը՝ մեթրոներու ելքին:

▼▼▼

Ո՞ր դարաշրջանին պիտի ուզէի ապրիլ,- Ո՞չ մէկ: Անոնք, իրականչիները, ունեցան իրենց դաժանութիւնը: Վերածնունդը, որ այնքա՜ն գեղեցիկ գործեր տուաւ, ոճիրներով ապրեցաւ: Մարդն է, որ անողոք է:

▼▼▼

Երբեք նկարչական ուսուցիչ չեմ ունեցած: Ես ինքզինքս կազմատրեցի եւ փակուեցայ իմ աշխարհիս մէջ, ինչպէս կ'ըսեն: Առանձինս ներկայացայ, 1930-ին, Անկախներու սալոնին: Անկէ անցայ Գերանկախներուն, ապա՝ Աշնանային սալոնին: 1939-ին սարքեցի առաջին ցուցահանդէսս (1):

Առաջին իտալական շատ լուսատր էին, որոնց մասին ըսին, թէ յեսսպատրապաշ են: 1933-ին վերացական կը նկարէի, նոյնիսկ papier-peint գործեր ըրած եմ (...): Վերացականութիւնը զիս հասցուցած էր փակուղի մը, որ ելք չէի տեսներ (...): Առաւօտները կ'երթայի աշխատանոց: Կլորներ, քառակուսիներ կը գծէի: Ի վերջոյ զզուեցայ: Քիչ-փիչ անկէ դուրս ելայ, ձեւերը սկսան անձեր դառնալ: Մակերես ելայ, ինչպէս որ Ֆրանսան՝ ընկերվարութենէն դուրս... (Վերացականութիւնը) անկասկած անհրաժեշտ փորձառութիւն մըն էր:

▼▼▼

Դէմ չեմ այն փնտռտուքին, զոր կը կոչեն վերացական արուեստ, ամբողջովին ձերբազատ պայմանադրականութենէն, սակայն ան պէտք է ըլլայ ասիճանի մը, որ ձեւերը ներկայանան անխառն զտութեամբ: Եթէ անոնք չհասնին այդ վսեմագոյնին, կը դառնան պատկերազարդումներ: Շատ մը վերացական գործեր գէշ պատկերայիններ են: Պատկերայինը, որ կ'ընդօրինակէ ձեւերը, վերացականը՝ որ կ'ընդօրինակէ բիծերը, կը գտնուին նոյն մակարդակի վրայ: Սակայն վերացականը բանալի եւ չափ չունի, կրնայ պատրանք պատճառել... Նկարչութիւնը պէտք է արտայայտէ անկէ անդինը: Յառաջադիմութիւն չկայ, եթէ մեծ արուեստը մարդկայինին դէմ է: Նիւթը պատրուակ է, պէտք է անկէ անդինը նկարել, երբ առարկայ կը նկարեն:

▼▼▼

- Եթէ նկարիչ չըլլայի, դերասան կ'ուզէի ըլլալ: Դերասանը ինքզինքը կ'ենթադրէ ամբողջ մարդ մը, ինչպէս նաեւ նկարիչը: Դերասանը ինքզինքը կ'ենթադրէ ամբողջ մարդ մը, ինչպէս նաեւ նկարիչը: Երբեմն գրատաւ չէի Մորիս Դենիսի (2) եւ կամ խորանարդաշաչ տեսութիւններով: Երբ կ'աշխատիս բնութեան կամ աշխատանոցի մէջ, իրականութիւններու աշխարհէն կը բաժնուիս տեսակ մը կրօնական թաքստոցութեան համար, ինչպէս ձեռքս կը թուի հնազանդիլ անտեսանելի ուժի մը մղումին: Եթէ պատկերակալին առջեւ նստիս, մտնեմ մերինէն տարբեր աշխարհ մը մէջ, կարծես՝ աղօթքի մէջ:

▼▼▼

Պէտք ունիս բնութեան ճշմարտութեան ներկայութեան եւ այդպէս կը նկարեմ: Առանց ուզելու է, որ բոլորը մ կը տեսնեմ բնական եւ գերբնական: Ճշմարիտ լոյսը զոր տպատրապաշ ները նմանցուցին, անշուշտ իրական լոյսը չէ,- ամբողջովին իրական լոյսը: Անոր (փոխարեն) կը նախընտրեմ ինչ որ հիները կը կոչէին ոդէալ լոյսը: Ես ազատ եմ, լուսաճաճանչ արեւին տակ, այս նոյն տեսարանը իրապէս տեսնել նման լոյսի գիշերին: Եւ իրատւնը ունենալ այդպէս ներկայացնելու (...): Եթէ հիմա ձիւնն իսկ գծեմ, զայն կարող պիտի տեսնեմ:

▼▼▼

Իրականութիւնը ճոխ է: Ինծի համար ամէն ինչ կը թուի թաքնուած արտերկրային լոյսի մը մէջ: Այս երեւոյթի եւ իրականութեան խառնուրդը զիս կը հետաքրքրէ: Պիտի ուզեի արտահանել մոգականութիւնը, որ կը գտնուի ամէն ինչի մէջ:

▼▼▼

Ներշնչո՞ւմը... ան ինքնին գայ, երբ կ'աշխատիս: Ըստ իս, նկարիչը արհեստաւոր մըն է: Կը ջանայ լաւագոյնս աշխատիլ, առանց ուզելու մտազբաղումի, առանց փորձելու պատգամներ փոխանցել:

▼▼▼

Խոնարհամտութի՞ւնը... Շատ խոնարհամտութեամբ պիտի յաջողիս թերեւս փիչ թափանցել աշխարհ խորհուրդին:

▼▼▼

Ամէն գնով ինքնատպութեան ունումը զիս կը սարսափեցնէ. վախնամ որ ամուլ ըլլայ:

Ես ոճ չունիմ: Ան ինքնութեան արտայայտութիւնն է: Ոճս պատկերագրութիւն մըն է, ինքնակենսագրական խորքով, բնական՝ ինչպէս շաղութիւնը, խորապէս զգացումներ եւ բացայայտիչ՝ ներքին իրականութեան մը, եւ հետեւաբար՝ արտաքին իրականութեան մը... Պէտք է այսինքն ամէն ինչը ըլլայ բնական, երբ անձնական է, արդէն անյարիր է (...): Չեմ գիտեր ինչու նախապատրաստութիւնը ունիմ դասերու թէ արուեստներու մէջ երկարող շրջանի, զոր կը ձգեն ծառերը արեւելոյսին եւ վերջալոյսին: Ասիկա ինծի համար խորհրդ խորհուրդ մը կը ներշնչէ:

▼▼▼

Ես նախ գծագրութիւն կը մտածեմ:

▼▼▼

Նկարչութիւնը ամէնէն ազնիւ կանն է, ամէնէն էականը: Եթէ բեմ մէկ բան ընէի (արտայայտութեան միակ ձեւ մը), ան ալ նկարչութիւնն է:

Երեւանի Քոչարի արվեստանոցում. ձախից աջ՝ Տ. Զոհրաբյան, Գ. Քեչիչյան, Ե. Քոչար, Նաթ Գառզու, Ա. Քոչար, Մ. Ղազարյան, Ե. Թեքեյան, Ս. Գալստյան, Ս. Ղազարյան, Ս. Ղազարյան, Ս. Ղազար

Մասնավորեցում

ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆՆ ԱՌԸՆԹԵՐ ՊԵՏԱԿԱՆ ԳՈՒՅՔԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆԸ ՏԵՂԵԿԱՑՆՈՒՄ Է

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆՆ ԱՌԸՆԹԵՐ ՊԵՏԱԿԱՆ ԳՈՒՅՔԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ «ԱՃՈՒՐԴԻ ԿԵՆՏՐՈՆ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆԸ ՀՐԱՎԻՐՈՒՄ Է ԱՃՈՒՐԴԻ, ՈՐԸ ՏԵՂԻ ԿՈՒՆԵՆԱ Ք.ԵՐԵՎԱՆ, ՆՈՐՔԻ 1-ԻՆ ՁԱՆԳՎ. 95/96, ԳԱՅԻ 4 ՀԱՍՑԵՈՒՄ
ՎԱՃԱՌՎՈՒՄ ԵՆ

Համաձայն ՀՀ կառավարության 2005թ. սեպտեմբերի 22-ի թիվ 1534-Ա որոշման «ՀՀ կառավարությանն առընթեր ազգային անվտանգության ծառայության հաշվեկշռում գտնվող օտարման ենթակա ավտոմեքենաները

Հ/Հ	Գույքի անվանումը	Սկզբնական արժեքը /դրամ/	Գնահատված արժեքը /դրամ/	31.10.05թ. աճուրդի մեկնարկային գին /դրամ/	31.10.05թ. աճուրդի նախավճար /դրամ/	15.11.05թ. աճուրդի մեկնարկային գին /դրամ/	15.11.05թ. աճուրդի նախավճար /դրամ/	30.11.05թ. աճուրդի մեկնարկային գին /դրամ/	30.11.05թ. աճուրդի նախավճար /դրամ/	15.12.05թ. աճուրդի մեկնարկային գին /դրամ/	15.12.05թ. աճուրդի նախավճար /դրամ/
1	Ավտոմեքենա «ՎԱԶ-2106» (տեսահամարանիշը՝ 096 SS 02, շարժիչը՝ 4382809, թողարկման/ձեռք.. տ/թ.՝ 1997թ./1999թ.)	2533277	659800	659800	32990	527840	26392	422272	21114	337818	16891
2	Ավտոմեքենա «Մերսեդես C-180» (տեսահամարանիշը՝ 005 SS 02, շարժիչը՝ 119201001093, թողարկման տ/թ.՝ 1994թ./1999թ)	7085824	1842800	2E+06	92140	1E+06	73712	1E+06	58970	943514	47176
3	Ավտոմեքենա «ԳԱԶ-2410» (տեսահամարանիշը՝ 167 SS 02, շարժիչը՝ 136849, թողարկման տ/թ.՝ 1988թ./1988թ.)	244244	262500	262500	13125	210000	10500	168000	8400	134400	6720
4	Ավտոմեքենա «ԳԱԶ-2410» (տեսահամարանիշը՝ 459 SS 02, շարժիչը՝ 0051610, թողարկման տ/թ.՝ 1990թ./1990թ.)	274428	262500	262500	13125	210000	10500	168000	8400	134400	6720
5	Ավտոմեքենա «ՎԱԶ-2121» (տեսահամարանիշը՝ 371 SS 02, շարժիչը՝ 2085742, թողարկման տ/թ.՝ 1992թ./1993թ.)	1809500	596000	596000	29800	476800	23840	381440	19072	305152	15258
6	Ավտոմեքենա «ՈՒԱԶ-33292» (տեսահամարանիշը՝ 345 SS 02, շարժիչը՝ 21110564, թողարկման տ/թ.՝ 1992թ./1993թ.)	1982750	653100	653100	32655	522480	26124	417984	20900	334388	16720
7	Ավտոմեքենա «ՈՒԱԶ-3303» (տեսահամարանիշը՝ 344 SS 02, շարժիչը՝ 30207117, թողարկման տ/թ.՝ 1993թ./1993թ.)	1982750	653100	653100	32655	522480	26124	417984	20900	334388	16720
8	Ավտոմեքենա «ԳԱԶ-2410» (տեսահամարանիշը՝ 203 SS 02, շարժիչը՝ 26361, թողարկման տ/թ.՝ 1991թ./1994թ.)	281820	262500	262500	13125	210000	10500	168000	8400	134400	6720
9	Ավտոմեքենա «ԳԱԶ-31029» (տեսահամարանիշը՝ 003 SS 02, շարժիչը՝ 0058882, թողարկման տ/թ.՝ 1996թ./1996թ.)	3014627	988000	988000	49400	790400	39520	632320	31616	505856	25293
10	Ավտոմեքենա «ԳԱԶ-31029» (տեսահամարանիշը՝ 111 SS 02, շարժիչը՝ Ա/Հ, թողարկման տ/թ.՝ 1996թ./1996թ.)	3022433	995000	995000	49750	796000	39800	636800	31840	509440	25472
11	Ավտոմեքենա «ՎԱԶ-21213» (տեսահամարանիշը՝ 171 SS 02, շարժիչը՝ 4512751, թողարկման տ/թ.՝ 1997թ./1997թ.)	3019880	848100	848100	42405	678480	33924	542784	27140	434228	21712
12	Ավտոմեքենա «ՈՒԱԶ-31514» (տեսահամարանիշը՝ 355 SS 02, շարժիչը՝ 0202071, թողարկման տ/թ.՝ 1997թ.),	2896800	800500	800500	40025	640400	32020	512320	25616	409856	20493
13	Ավտոմեքենա «ՈՒԱԶ-31512» (տեսահամարանիշը՝ 384 SS 02, շարժիչը՝ 0201883, թողարկման տ/թ.՝ 1997թ./1997թ.)	2896800	800500	800500	40025	640400	32020	512320	25616	409856	20493
14	Ավտոմեքենա «ՈՒԱԶ-31512» (տեսահամարանիշը՝ 357 SS 02, շարժիչը՝ 0303763, թողարկման տ/թ.՝ 1997թ./1997թ.)	2154240	569300	569300	28465	455440	22772	364352	18218	291482	14575
15	Ավտոմեքենա «ՈՒԱԶ-31512» (տեսահամարանիշը՝ 368 SS 02, շարժիչը՝ 0604889, թողարկման տ/թ.՝ 1998թ./1998թ.)	2157353	567700	567700	28385	454160	22708	363328	18167	290663	14534
16	Ավտոմեքենա «Հոնդա-լատրիա» (տեսահամարանիշը՝ 138 SS 02, շարժիչը՝ 018570, թողարկման տ/թ.՝ 1994թ./1998թ.)	3528000	916300	916300	45815	733040	36652	586432	29322	469146	23458
17	Ավտոմեքենա «Կամազ 4310» (տեսահամարանիշը՝ 317 SS 02, շարժիչը՝ 820335, թողարկման տ/թ.՝ 1991թ./1991թ.)	2608700	675000	675000	33750	540000	27000	432000	21600	345600	17280

Հ/Հ	Գույքի անվանումը	30.12.05թ. աճուրդի մեկնարկային գին /դրամ/	30.12.05թ. աճուրդի նախավճար /դրամ/	16.01.06թ. աճուրդի մեկնարկային գին /դրամ/	16.01.06թ. աճուրդի նախավճար /դրամ/	31.01.06թ. աճուրդի մեկնարկային գին /դրամ/	31.01.06թ. աճուրդի նախավճար /դրամ/	15.02.06թ. աճուրդի մեկնարկային գին /դրամ/	15.02.06թ. աճուրդի նախավճար /դրամ/	02.03.06թ. աճուրդի մեկնարկային գին /դրամ/	02.03.06թ. աճուրդի նախավճար /դրամ/	17.03.06թ. աճուրդի մեկնարկային գին /դրամ/	17.03.06թ. աճուրդի նախավճար /դրամ/
1	Ավտոմեքենա «ՎԱԶ-2106» (տեսահամարանիշը՝ 096 SS 02, շարժիչը՝ 4382809, թողարկման/ձեռք.. տ/թ.՝ 1997թ./1999թ.)	270255	13513	216204	10811	172964	8649	138372	6919	110698	5535	88559	4428
2	Ավտոմեքենա «Մերսեդես C-180» (տեսահամարանիշը՝ 005 SS 02, շարժիչը՝ 119201001093, թողարկման տ/թ.՝ 1994թ./1999թ)	754812	37741	603850	30193	483080	24154	386464	19324	309172	15459	247338	12367
3	Ավտոմեքենա «ԳԱԶ-2410» (տեսահամարանիշը՝ 167 SS 02, շարժիչը՝ 136849, թողարկման տ/թ.՝ 1988թ./1988թ.)	107520	5376	86016	4301	68813	3441	55051	2753	44041	2203	35233	1762
4	Ավտոմեքենա «ԳԱԶ-2410» (տեսահամարանիշը՝ 459 SS 02, շարժիչը՝ 0051610, թողարկման տ/թ.՝ 1990թ./1990թ.)	107520	5376	86016	4301	68813	3441	55051	2753	44041	2203	35233	1762
5	Ավտոմեքենա «ՎԱԶ-2121» (տեսահամարանիշը՝ 371 SS 02, շարժիչը՝ 2085742, թողարկման տ/թ.՝ 1992թ./1993թ.)	244122	12207	195298	9765	156239	7812	124992	6250	99994	5000	79996	4000
6	Ավտոմեքենա «ՈՒԱԶ-33292» (տեսահամարանիշը՝ 345 SS 02, շարժիչը՝ 21110564, թողարկման տ/թ.՝ 1992թ./1993թ.)	267511	13376	214009	10701	171208	8561	136967	6849	109574	5479	87660	4383
7	Ավտոմեքենա «ՈՒԱԶ-3303» (տեսահամարանիշը՝ 344 SS 02, շարժիչը՝ 30207117, թողարկման տ/թ.՝ 1993թ./1993թ.)	107520	5376	86016	4301	68813	3441	55051	2753	44041	2203	35233	1762
8	Ավտոմեքենա «ԳԱԶ-2410» (տեսահամարանիշը՝ 203 SS 02, շարժիչը՝ 26361, թողարկման տ/թ.՝ 1991թ./1994թ.)	404685	20235	323748	16188	258999	12950	207200	10360	165760	8288	132608	6631
9	Ավտոմեքենա «ԳԱԶ-31029» (տեսահամարանիշը՝ 003 SS 02, շարժիչը՝ 0058882, թողարկման տ/թ.՝ 1996թ./1996թ.)	407552	20378	326042	16303	260834	13042	208668	10434	166935	8347	133548	6678
10	Ավտոմեքենա «ԳԱԶ-31029» (տեսահամարանիշը՝ 111 SS 02, շարժիչը՝ Ա/Հ, թողարկման տ/թ.՝ 1996թ./1996թ.)	347383	17370	277907	13896	222326	11117	177861	8894	142289	7115	113832	5692
11	Ավտոմեքենա «ՎԱԶ-21213» (տեսահամարանիշը՝ 171 SS 02, շարժիչը՝ 4512751, թողարկման տ/թ.՝ 1997թ./1997թ.)	327885	16395	262308	13116	209847	10493	167878	8394	134303	6716	107443	5373
12	Ավտոմեքենա «ՈՒԱԶ-31514» (տեսահամարանիշը՝ 355 SS 02, շարժիչը՝ 0202071, թողարկման տ/թ.՝ 1997թ.),	327885	16395	262308	13116	209847	10493	167878	8394	134303	6716	107443	5373
13	Ավտոմեքենա «ՈՒԱԶ-31512» (տեսահամարանիշը՝ 384 SS 02, շարժիչը՝ 0201883, թողարկման տ/թ.՝ 1997թ./1997թ.)	233186	11660	186549	9328	149240	7462	119392	5970	95514	4776	76412	3821
14	Ավտոմեքենա «ՈՒԱԶ-31512» (տեսահամարանիշը՝ 357 SS 02, շարժիչը՝ 0303763, թողարկման տ/թ.՝ 1997թ./1997թ.)	232531	11627	186025	9302	148820	7441	119056	5953	95245	4763	76196	3810
15	Ավտոմեքենա «ՈՒԱԶ-31512» (տեսահամարանիշը՝ 368 SS 02, շարժիչը՝ 0604889, թողարկման տ/թ.՝ 1998թ./1998թ.)	375317	18766	300254	15013	240204	12011	192164	9609	153732	7687	122986	6150
16	Ավտոմեքենա «Հոնդա-լատրիա» (տեսահամարանիշը՝ 138 SS 02, շարժիչը՝ 018570, թողարկման տ/թ.՝ 1994թ./1998թ.)	276480	13824	221184	11060	176948	8848	141559	7078	113248	5663	90599	4530
17	Ավտոմեքենա «Կամազ 4310» (տեսահամարանիշը՝ 317 SS 02, շարժիչը՝ 820335, թողարկման տ/թ.՝ 1991թ./1991թ.)												

Համաձայն ՀՀ կառավարության 2005թ. սեպտեմբերի 22-ի թիվ 1534-Ա որոշման աճուրդի հաղթողը պարտավոր է .
-աճուրդի արձանագրությունն ստանալու օրվանից 5 աշխատանքային օրվա ընթացքում «Պետական սեփականություն հանդիսացող հիմնական միջոցների (ֆոնդերի) օտարումից մուտքեր» գանձապետական հաշվին վճարել գույքի վաճառքի գումարը,
-իր միջոցների հաշվին վճարել գույքի արժեքի որոշման հետ կապված վճարը, ինչպես նաև գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման հետ կապված Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված վճարները ու տուրքերը:
Բոլոր մեքենաները գտնվում են տեխնիկապես ոչ բավարար վիճակում:
Աճուրդը կանցկացվի դասական (գնի ավելացման) եղանակով:
Բոլոր աճուրդները սկսվում են ժամը 12:00-ին:
Աճուրդով չվաճառված գույքի մեկնարկային գինը յուրաքանչյուր հաջորդ աճուրդի ժամանակ նվազեցվում է վերջին աճուրդի գույքի մեկնարկային գնի 20 տոկոսի չափով: Աճուրդը կայանալու դեպքում հաջորդ աճուրդը (աճուրդները) չի (չեն) անցկացվում:
Աճուրդին կարող են մասնակցել ֆիզիկական եւ իրավաբանական անձինք, ինչպես նաեւ հայաստանյան հանրապետության քաղաքացիներ եւ օտարերկրյա քաղաքացիներ (հասցեն՝ ք. Երեւան, Հրազդան 27) ներկայացրել.
-աճուրդի նախավճարի մուծման անդորագիրը, որի չափն է՝ յուրաքանչյուր աճուրդի համար յուրաքանչյուր գույքի մեկնարկային գնի 3 տոկոսը, մուտքագրման հաշիվն է Հայինայբանկի թիվ 160006651014 դրամային հաշիվը,
-աճուրդի մասնակցության վճարի անդորագիրը, որի չափն է 10000 դրամ (վճարվում է «Աճուրդի կենտրոն» ՊՈԱԿ-ի դրամարկղ), գույքի գնի մեջ չի ներառվում եւ անկախ աճուրդի արդյունքներից չի վերադարձվում,
-անձնագիրը, իսկ իրավաբանական անձինք՝ հիմնադիր փաստաթղթերի պատճենները եւ լիազորությունները հաստատող փաստաթղթերը:
Աճուրդին չեն կարող մասնակցել այն անձինք, որոնք վճռաբեկ լոտի նկատմամբ չեն կարող ունենալ սեփականության իրավունք:
Աճուրդի մասնակիցների անձնագրի առկայությունը պարտադիր է:
Աճուրդին կարող են ներկա գտնվել դիտորդներ՝ աճուրդի մասնակից չհամարվող այն անձինք, ովքեր վճարել են մուտքի վճար՝ 3000 դրամ:
Դիտորդի տոմսերը վաճառվում են մինչեւ աճուրդի սկսվելը:
Աճուրդի մասնակիցները վաճառվող լոտերին կարող են ծանոթանալ սույն ծանուցման հրապարակման պահից մինչեւ աճուրդի բացմանը նախորդող օրը ընկած ժամանակահատվածում՝ յուրաքանչյուր երկուշաբթի, չորեքշաբթի եւ ուրբաթ օրերին, ժամը 9:00-ից մինչեւ 17:00 (բացառությամբ ժամը 13:00-ից մինչեւ 14:00):
Աճուրդի մասնակիցները վաճառվող լոտերին կարող են ծանոթանալ սույն ծանուցման հրապարակման պահից մինչեւ աճուրդի բացմանը նախորդող օրը ընկած ժամանակահատվածում՝ յուրաքանչյուր երկուշաբթի, չորեքշաբթի եւ ուրբաթ օրերին, ժամը 9:00-ից մինչեւ 17:00 (բացառությամբ ժամը 13:00-ից մինչեւ 14:00):
Նախնական աճուրդի սկսվելը աճուրդային հանձնաժողովը գրանցում է մասնակիցներին եւ յուրաքանչյուր մասնակցին, տրամադրում է քարտ:
Աճուրդը վարում է աճուրդավարը:
Աճուրդավարը մասնակիցներին առաջարկում է մեկնարկային գնով գնել լոտը: Տանկացած մասնակից իրավունք ունի, նախնական աճուրդավարի մուրճիկի երրորդ հարվածը, ներկայացնել նոր գնային հայտ, որը պետք է գերազանցի մասնակիցների կողմից նախորդ գնային հայտը՝ նվազագույնը հավելման (քայլի) չափով:
Վերջին ամենաբարձր գնային հայտ ներկայացրած մասնակիցը, աճուրդավարի մուրճիկի երրորդ հարվածից հետո, համարվում է աճուրդի հաղթող:
Աճուրդավարի կողմից աճուրդի հաղթող համարված մասնակիցը պարտավոր է՝ հանձնաժողովի սահմանելուց 30 օրվա ընթացքում վճարել իր առաջարկված գնի առնվազն 3 տոկոսի չափով գումար, որը սահմանված ժամկետում (5 օրվա ընթացքում) հետագա վճարումները կատարելու դեպքում նախավճարի հետ միասին հաշվարկվում է վճարման ենթակա գումարի մեջ, իսկ վճարումներից խուսափելու դեպքում չի վերադարձվում եւ տվյալ մասնակիցը զրկվում է աճուրդին մասնակցելու իրավունքից: Եթե աճուրդավարը հաղթող համարված մասնակիցը սահմանված ժամկետում (հանձնաժողովի սահմանելուց 30 օրվա ընթացքում) վճարում է իր առաջարկած գնի առնվազն 5 տոկոսի չափով գումար, ապա նա ճանաչվում է աճուրդի հաղթող եւ ստորագրում է աճուրդի արդյունքների մասին արձանագրությունը:
Աճուրդում չհաղթող մասնակցին, մուծված նախավճարը վերադարձվում է վերջինիս դիմելուց հետո եռօրյա ժամկետում:
Աճուրդում 5-րդ եւ 13-րդ լոտերի տակ գտնվող ավտոմեքենաները գտնվում են ք.Երեւան, Շահումյան 44, 16-րդ լոտը՝ Ախալ, Աճառյան 2-րդ փ., մնացած բոլոր ավտոմեքենաները՝ Արին-Բերդի 3-րդ նրբ. N5 հասցեներում:
Վաճառվող լոտերին ծանոթանալու (որը տրամադրվում է դիմումի առկայության դեպքում, մեկ օրվա ընթացքում, պատճենահանման ծախսերը վճարելու պայմանով) եւ լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար կարող եք դիմել ք.Երեւան, Հրազդան 27 հասցեով կամ զանգահարել՝ 57-94-79 հեռախոսահամարով:
Աճուրդի կանոնակարգին ծանոթանալու համար զանգահարել՝ 27-65-94, ինտերնետ՝ URL: //www.privatization.am:
Հնարավոր փոփոխություններն ու լրացումները կհրապարակվեն այն ձեւով, ինչպես կատարվել է աճուրդի մասին սույն հրապարակային ծանուցումը:

ՀՀ կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչություն

Մասնավորեցում

ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ

մրցույթով մասնավորեցվող «Արագածոտնառուպաս» ՓԲԸ-ի մասին

Առաջնորդվելով ՀՀ կառավարության 2005թ.-ի հունիսի 29-ի թիվ 956-Ն որոշմամբ, ՀՀ կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչությունը հրավիրում է մասնավորեցման բոլոր սուբյեկտներին մասնակցելու **«Արագածոտնառուպաս» ՓԲԸ-ի** բաժնետոմսերի մասնավորեցման մրցույթին:

1. Ընդհանուր տեղեկություններ

1.1	Մասնավորեցվող օբյեկտի հասցեն	ք.Աբովյան, Երևանյան 47
1.2.	ՀՀ կառավարության որոշման համարը եւ ամսաթիվը	N956-Ն, 29.06.05թ.
1.3.	Ընկերության բենֆերի մակերեսը (հա)	2084
1.4.	Ջրաղեցրած հողային տարածը (հա)	0.2574
	Տեղեկություններ հողհատկացման հիմքերի մասին	Անշարժ գույքի սեփականության (օգտագործման) իրավունքի գրանցման վկայական N1297352, 08.04.04թ.
1.5.	Գործունեության հիմնական տեսակը	մեծածախ եւ մանրածախ առեւտուր
1.6.	Աշխատողների թվաքանակը (2005թ.-ի հունվարի 1-ի դրությամբ)	8
1.7.	Մասնավորեցման ենթակա բաժնետոմսերի գնահատված արժեքը (հազ.դրամ)	43457

2. Ընկերության հաշվեկշռի ցուցանիշներ (01.01.2005թ դրությամբ)

(հզ. դրամ)

Հ/Հ	Ցուցանիշի անվանումը	Հաշվեկշռային արժեքը	Գնահատված արժեքը
2.1.	Ոչ ընթացիկ ակտիվներ , այդ թվում	508**	47829.7
2.1.1.	Հիմնական միջոցներ, այդ թվում՝	508***	47829.7
	մեքենաներ եւ սարքավորումներ /2հաս/	45.4	4005.4
2.1.2.	Անավարտ ոչ ընթացիկ նյութական ակտիվներ	-	-
2.1.3.	Ոչ նյութական ակտիվներ	-	-
2.1.4.	Այլ ոչ ընթացիկ ակտիվներ	-	-
2.2.	Ընթացիկ ակտիվներ	64	64
2.3.	Ոչ ընթացիկ պարտավորություններ	-	-
2.4.	Ընթացիկ պարտավորություններ, այդ թվում	4437	4437
	ՀՀ բյուջեի նկատմամբ	628	628
	տց. աշխատավարձերի գծով	1305	1305
	անձնակազմին աշխատանքի վարձատրության գծով	2504	2504

** Ներկայացված են հիմնական միջոցների սկզբնական արժեքները

*** ՀՀ արդարադատության նախարարության ԴԱՀԿ ծառայության Արագածոտնի մարզային բաժնի որեսի 03.08.05 թ. թիվ 4711-Ա եւ 24.08.05թ գրություններով ՀՀ կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչություն են ուղարկվել «Արագածոտնառուպաս» ՓԲԸ-ին պատկանող ք.Աբովյան. Երևանյան 47 հասցեի չորս հարկանի շենքի առաջին հարկում գտնվող թիվ 16 սենյակի 74,4 ք.մ. տարածքի հարկադիր աճուրդը չկայացած համարելու եւ կրկին հարկադիր աճուրդ նշանակելու մասին» որոշումները:

2.5.Համաձայն ՀՀ կառավարության N956-Ն, 29.06.05թ.որոշման, Ընկերությունը 1999-2004 թվականների տնտեսական գործունեության արդյունքներով վճարման ենթակա շահութաբաժինների գծով պարտավորություններ չունի:

3. Մրցույթին մասնակցելու պայմաններ

3.1 Մրցույթին մասնակցելու իրավունք ունեն մասնավորեցման այն սուբյեկտները (կամ նրանց լիազոր ներկայացուցիչները), որոնք սահմանված կարգով վճարել են մրցույթի նախավճարը /տես 5.1 եւ 5.2 կետերը/ եւ 5.3 կետում նշված ժամկետում ներկայացրել են մրցութային առաջարկ, որը ներառում է հետեւյալ փաստաթղթերը՝

ա/ հայտ (ձեւը կարելի է ստանալ ՀՀ կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչության 406 սենյակում

բ/ մրցույթի հաղթողին որոշելու պայմանների վերաբերյալ գրավոր առաջարկ՝ (տես՝ 3.12 կետը),

գ/ մրցույթի նախավճարի կատարման իսկությունը հաստատող վճարային փաստաթղթերի պատճենները,

դ/ իրավաբանական անձի կարգավիճակ ունեցող մասնակիցների գրանցման եւ հիմնադիր փաստաթղթերի պատճենները,

ե/ լիազորագիր՝ մրցույթի մասնակից ընկերության /հաստատված տվյալ ընկերության կողմից/ կամ ֆիզիկական անձի /հաստատված նոտարական կարգով/ կողմից լիազորված անձի համար,

զ/ գործարար ծրագիր

3.2 Մրցութային առաջարկը փակ ծրարով ներկայացվում է ՀՀ կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչություն, 406 սենյակ՝ մինչեւ 5.3 կետում նշված ժամկետի լրանալը:

3.3 Մրցույթի մասնակիցների՝ մրցութային պայմաններին համապատասխան ներկայացրած առաջարկությունները պետք է արտահայտված լինեն թվային ցուցանիշներով եւ փոքր չլինեն ՀՀ կառավարության կողմից սահմանված նվազագույն արժեքներից, եթե դրանք սահմանված են (տես 3.12 կետը):

3.4 Մրցութային առաջարկները ներկայացվում են հայերեն լեզվով, իսկ օտար լեզուներով գրված փաստաթղթերը կարող են ուղեկցվել թարգմանություններով:

Թարգմանությունների բացակայության դեպքում փաստաթղթերը կթարգմանվեն հանձնաժողովի կողմից:

3.5 Մրցույթին ներկայացվող փաստաթղթերը ներկայացվում են տպագիր կամ պարզ ընթերնելի ձեռագրով:

3.6 Ծրարը պետք է հասցեագրված լինի մրցութային հանձնաժողովին՝ նշելով մասնավորեցվող օբյեկտի անվանումը:

3.7 Մրցութային առաջարկները կարող են ընդունվել նաեւ ֆաքսիմիլային կարով: Ստացված փաստաթղթերը ՀՀ կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչությունում դրվում են ծրարի մեջ եւ փակվում:

3.8 Ներկայացված ծրարները կնքվում եւ մուտագրվում են ՀՀ կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչությունում:

3.9 5.3 կետում նշված ժամկետի լրանալուց հետո ներկայացված առաջարկները չեն ընդունվի:

3.10 Դիմողները մինչեւ 5.5 կետում նշված ժամկետի լրանալը կարող են հանձնաժողովին գրավոր դիմում ներկայացնել՝ մրցույթին չմասնակցելու վերաբերյալ: Սահմանված ժամկետից ուշ ներկայացրած այդպիսի դիմումները ենթակա չեն:

3.11 Մրցույթի պահանջներին մրցութային առաջարկի անհամապատասխանության դեպքում մրցութային առաջարկ ներկայացրած սուբյեկտին մրցույթի մասնակցի կարգավիճակ չի տրվում եւ մրցութային առաջարկը հանվում է հետագա քննարկումից:

3.12 Մրցույթի հաղթողի որոշման համար առաջադրվում են հետեւյալ պայմանները.

մասնավորեցվող բաժնետոմսերի համար առաջարկվող գինը,

/նվազագույն գինը՝ 10864հազ.դրամ/

ներդրումների չափը՝ տարիների կտրվածքով

սոցիալական երաշխիքներ, այդ թվում՝ աշխատատեղերի (ներկայացվում է մարդ/ամսով) եւ միջին աշխատավարձի վերաբերյալ:

՝3.13 Մրցույթի հաղթող է ճանաչվում այն մասնակիցը, որի առաջարկը առավելագույն չափով է բավարարում մրցույթի պայմաններին:

4. Վճարումներ եւ պայմանագրի կնքում

4.1 Մրցույթի հաղթողը 10-օրյա ժամկետում սանում է մրցույթի արդյունքների հաստատված արձանագրության օրինակը: Մրցույթի մյուս մասնակիցները կարող են ստանալ արձանագրության պատճենները:

4.2 Մրցույթի հաղթողը բաժնետոմսերի վաճառքի գումարը պետք է վճարի մրցույթի արձանագրությունը ստանալու օրվանից եռամսյա ժամկետում՝ բաժնետոմսերի վաճառքի գնի 70տոկոսն ուղղելով ՀՀ պետական բյուջե, իսկ 30տոկոսը՝ համապատասխան հաշվային ֆոնդային բյուջե՝ ըստ գույքի գտնվելու վայրի:

4.3 Որպես մրցույթի նախավճար վճարված գումարն ընդգրկվում է օբյեկտի վաճառքի գնի մեջ եւ մրցույթում չհաղթելու կամ մինչեւ 5.5 կետում նշված ժամկետի լրանալը մրցույթին մասնակցելուց հրաժարվելու դեպքում հետ է վերադարձվում:

4.4 Համաձայն ՀՀ կառավարության 29.06.05թ. N 956-Ն որոշման, մրցույթի հաղթողի կողմից առաջարկված գնի վճարումից հետո մեկամսյա ժամկետում ՀՀ կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչությունը գնորդի հետ կնքի մասնավորեցման պայմանագիր՝ դրանում նախատեսելով, որ գնորդը պարտավորվում է իր միջոցների հաշվին վճարել գույքի արժեքի որոշման հետ կապված վճարը՝ 309062.4դրամ, ինչպես նաեւ գույքային իրավունքների պետական գրանցման հետ կապված վճարները ու տուրքը՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

4.5 Սահմանված ժամկետում վճարումները չկատարելու եւ պայմանագիրը չկնքելու դեպքում մրցույթի հաղթողի վճարած նախավճարի գումարը նրան հետ չի վերադարձվում, եւ մրցույթը համարվում է չկայացած:

4.6 Մրցույթով մասնավորեցման արդյունքում գնորդը հանդիսանում է նաեւ գնահատման պատճառով հետո առաջացած իրավունքների եւ պարտավորությունների իրավահաջորդը:

4.7 Վճարումները կատարվում են Հայաստանի Հանրապետության արժույթով:

5. Մրցույթի անցկացման այլ պայմաններ

5.1	Մրցույթի նախավճարի չափը	2 172 850դրամ
5.2	Մրցույթի նախավճարի մուտագրման հաշվի հաշիվը	Թիվ1 տեղական գանձապետական բաժանմունք դրամային - 900013145017
5.3	Մրցութային առաջարկի ներկայացման վերջին ժամկետը	28-ը նոյեմբերի 2005թ. , ժամը՝14:00
5.4	Մրցութային առաջարկի ներկայացման վայրը	ք. Երեւան, Հանրապետության հրապ. Կառավարական 2-րդ տներ ՀՀ կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչություն,406սենյակ
5.5	Մրցույթի անցկացման օրը, ժամը եւ վայրը	28-ը նոյեմբերի 2005թ. , ժամը՝15:30 ք.Երեւան, Հանրապետության հրապարակ, ՀՀ Կառավարական 2-րդ տներ, ՀՀ կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչություն
5.6	Ֆաքսիմիլային կարգ	*(3741) 27-65-94*
5.7	Ինտերնետ	*URL: //www.privatization.am*

Լրացուցիչ տեղեկությունների համար զանգահարել հետեւյալ հեռախոսահամարով: ՀՀ կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչություն 58-14-41

ՀՀ կառավարությանն առընթեր
պետական գույքի կառավարման վարչություն

ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆՆ ԱՌԸՆԹԵՐ ՊԵՏԱԿԱՆ ԳՈՒՅՔԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ «ԱՃՈՒՐԴԻ ԿԵՆՏՐՈՆ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆԸ ՀՐԱՎԻՐՈՒՄ Է ԱՃՈՒՐԴԻ, ՈՐԸ ՏԵՂԻ ԿՈՒՆԵՆԱ՝ 2005Թ. ՆՈՅԵՄԲԵՐԻ 17- ԻՆ, ԺԱՄԸ 11:00-ԻՆ, ՀԱՍՑԵՆ՝ Ք.ԵՐԵՎԱՆ, ՆՈՐՔԻ 1-ԻՆ ԶԱՆԳՎ. 95/96, ԳԱՅԻ 4 ՎԱՃԱՌՎՈՒՄ Է

Համաձայն ՀՀ կառավարության 2004թ. դեկտեմբերի 30-ի թիվ 1937-Ա եւ 2005թ. սեպտեմբերի 1-ի թիվ 1470-Ա որոշումների, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր ջրային տնտեսության պետական կոմիտեի **«Որոտան-Արփա-Սեւան» թունելների շահագործման վարչություն»** պետական հիմնարկին ամրացված օտարման ենթակա գույքը

Հ/Հ	Գույքի անվանումը	Թողարկման տարեթիվը	Ձեռքբերման տարեթիվը	Մաշվածության %-ը	Հաշվեկշռային (մնացորդային) արժեքը /դրամ/	Գնահատված արժեքը /դրամ/	Մեկնարկային գինը /դրամ/
1	ՀՀ կառավարությանն առընթեր ջրային տնտեսության պետական կոմիտեի «Որոտան-Արփա-Սեւան» թունելների շահագործման վարչություն» պետական հիմնարկին ամրացված գույքը որպես մեկ ամբողջական լոտ այդ թվում՝					18424800	18424800
1	Ավտոմեքենա «ՈՒԱԶ-3303»	1991	1991	100	0		
2	Տրակտոր «ՍՏԶ-82»	1991	1991	100	0		
3	Էքսկավատոր «ԷՕ-2621»	1992	1992	100	0		
4	Ավտոմեքենա «ԿԱԶ-685»	1984	1984	100	0		
5	Ավտոմեքենա «ԿԱԶ-2121»	1989	1989	100	0		
6	Ավտոմեքենա «ՈՒԱԶ-3303»	1991	1991	100	0		
7	Ավտոմեքենա «ԿԱԶ-3270»	1986	1986	100	0		
8	Ավտոմեքենա «ՄՄԶ-45021»	1988	1988	100	0		
9	Ավտոմեքենա «ՄՄԶ-45021»	1989	1989	100	0		
10	Էլ.ենթակայան	1991	1999	100	0		
11	Քար ջարդող ագրեգատ	1992	1998	83.8	434400		
12	Վագոն-տնակ 36 մ2	1991	1999	68	162500		
13	Տրի ոլոմ՝ խողովակաբարով	1991	1999	100	0		
14	Ավտոմեքենա «ԿամԱԶ-5410»	1983	1999	55	1856300		
15	Բենզատար «ԳԱԶ-53»	1983	1984	100	0		
16	Ավտոմեքենա «ԵրԱԶ-762Վ»	1991	1991	100	0		
17	Մեծաղական տարա՝ 435s.	1999	1999	27.5	427700		
18	Սոման հատոց	1984	1984	100	0		
19	Սոման հատոց	1984	1984	100	0		
20	Էլ.կառամիկ՝ 3.5 s.	1984	1984	100	0		
21	Էլ.կառամիկ՝ 1 s.	1984	1984	100	0		
22	Խառատային հատոց	1984	1984	100	0		
23	Մեծաղական տարա	1990	1990	72.5	6500		
24	Մեծաղական տարա	1990	1990	72.5	6300		
25	Մեծաղական տարա	1990	1990	72.5	4000		
26	Մեծաղական տարա	1990	1990	72.5	3200		
27	Մեծաղական տարա	1990	1990	72.5	13900		
28	Մեծաղական տարա	1990	1990	72.5	17300		
29	Մեծաղական տարա	1990	1990	72.5	22600		
30	Ավտոմեքենա «ԳԱԶ-66»	1991	1992	100	0		
31	Ունիվերսալ լիցքավորման սարք	1999	1999	55	99900		
32	Ավտոմեքենա «ՈՒԱԶ-3307»	1991	1991	100	0		
33	Ավտոմեքենա «ՄՄԶ-45021»	1989	1989	100	0		
34	Տրակտոր «Տ-16»	1994	1994	100	0		
35	Շարժական էլ.կայան «ԱԴՈ-400»	1999	1999	68.8	431300		
36	Էլ.եռակցման սարք	2001	2001	35	191800		
37	Ավտոմեքենա «ՌԱՖ-2203»	1991	1991	100	0		
38	Բեռնախտանիշ շարժ.	1997	1997	60	600000		
39	Շարժական ճնշակ «Զ/Ֆ-55»	1991	1998	72.9	205000		
40	Լիցքավորման սարք՝ ունիվերսալ	1999	1999	55	99900		
41	Տրակտոր «Տ-16 Մ»	2001	2001	43.8	871900		
42	Շարժական եռակցման սարք	1991	1991	100	0		
43	Ջողման սարք	1993	1993	100	0		
44	Շարժական էլ.կայան	1991	1991	100	0		
45	Շաղախախառնիչ ՌՄ-350	1990	1990	100	0		
46	Շաղախախառնիչ ՍՕ-50	1985	1985	100	0		
47	Վագոն-տնակ 32 մ2	1992	1992	62.5	336400		
48	Վագոն-տնակ 18մ2	1990	1990	72.5	112200		
49	Վագոն-տնակ 3x12 մ2	1999	1999	27.5	471300		
50	Ավտոկցորդ ՕԴԱԶ	1983	1999	55	618800		
51	Էքսկավատոր «ԷՕ-2621»	2001	2001	43.5	911300		
52	Եռակցման սարք «ԱՌՏ 3122»	1995	1995	95	64500		
53	Վառելանյութի տարա	1986	1986	92.5	20200		
54	Ցրահեռացման ոլոմ	2001	2001	27	328700		
55	Բույդոզեր «ԴԶ-171»	1989	1989	100	0		
56	Բենզակտրիչ	1991	1991	100	0		
57	Շարժական էլ.կայան	1987	1987	100	0		
58	Թունելի օդափոխիչ	2001	2001	30	210000		
59	Ավտոմեքենա «ԿՈԱԶ-2565»	1991	1999	100	0		
60	Ունիվերսալ լիցքավորման սարք	1999	1999	55	99900		

Համաձայն ՀՀ կառավարության 2004թ. դեկտեմբերի 30-ի թիվ 1937-Ա որոշման՝

աճուրդի հաղթողը պարտավոր է աճուրդի արձանագրությունն ստանալու օրվանից 5 աշխատանքային օրվա ընթացքում «Պետական սեփականություն հանդիսացող հիմնական միջոցների (ֆոնդերի) օտարումից մուտքեր» գանձապետական հաշվին վճարել գույքի վաճառքի գումարը.

-աճուրդի հաղթողը պարտավոր է իր միջոցների հաշվին վճարել գույքի վաճառքից ծագող գույքային իրավունքների փոխանցման հետ կապված վճարները ու տուրքերը:

Աճուրդը կանցկացվի դասական (գնի ավելացման) եղանակով:

Աճուրդին կարող են մասնակցել ֆիզիկական եւ իրավաբանական անձինք, ինչպես նաեւ համայնքները, որոնք յուրաքանչյուր աճուրդի համար աճուրդի նախորդող աշխատանքային օրը, ժամը 17:00 աճուրդային հանձնաժողովին են (հասցեն՝ ք. Երեւան Հոպյա Քոչարի 27) ներկայացրել.

-աճուրդի նախավճարի մուծման անդորագիրը, որի չափն է՝ 921240 դրամ, մուտագրման հաշիվն է Հայինայբանկի թիվ 160006651014 դրամային հաշիվը:

-աճուրդի մասնակցության վճարի անդորագիրը, որի չափն է 10000 դրամ (վճարվում է «Աճուրդի կենտրոն» ՊՈԱԿ-ի դրամարկղ), գույքի գնի մեջ չի ներառվում եւ անկախ աճուրդի արդյունքներից չի վերադարձվում.

-անձնագիրը, իսկ իրավաբանական անձինք հիմնադիր փաստաթղթերի պատճենները եւ լիազորությունները հաստատող փաստաթղթերը:

Աճուրդին չեն կարող մասնակցել այն անձինք, որոնք վաճառվող լոտի նկատմամբ չեն կարող ունենալ սեփականության իրավունք:

Աճուրդի մասնակիցների անձնագրի առկայությունը պարտադիր է:

Աճուրդին կարող են ներկա գտնվել դիտորդներ՝ աճուրդի մասնակից չհամարվող այն անձինք, ովքեր վճարել են մուտքի վճար՝ 3000 դրամ:

Դիտորդի տոմսերը վաճառվում են մինչեւ աճուրդի սկսվելը:

Աճուրդի մասնակիցները վաճառվող լոտին կարող են ծանոթանալ սույն ծանուցման հրապարակման պահից մինչեւ աճուրդի բացմանը նախորդող օրն ընկած ժամանակահատվածում՝ յուրաքանչյուր երկուշաբթի, չորեքշաբթի եւ ուրբաթ օրերին, ժամը 9:00-ից մինչեւ 17:00 (բացառությամբ ժամը 13:00-ից մինչեւ 14:00):

Նախքան աճուրդի սկսվելը աճուրդային հանձնաժողովը գրանցում է մասնակիցներին եւ յուրաքանչյուր մասնակցին, տրամադրում է քարտ:

Աճուրդը վարում է աճուրդավարը:

Աճուրդավարը մասնակիցներին առաջարկում է մեկնարկային գնով գնել լոտը: Ցանկացած մասնակից իրավունք ունի, նախքան աճուրդավարի մուտքինի երրորդ հարվածը, ներկայացնել նոր գնային հայտ, որը պետք է գերազանցի մասնակիցների կատարած նախորդ գնային հայտը՝ նվազագույնը հավելման (քայլի) չափով:

Վերջին ամենաբարձր գնային հայտ ներկայացրած մասնակիցը, աճուրդավարի մուտքինի երրորդ հարվածից հետո, համարվում է աճուրդի հաղթած մասնակից:

Աճուրդավարի կողմից աճուրդի հաղթող հռչակված մասնակիցը պարտավոր է՝ հանձնարարագիր ստանալուց 30 րոպեի ընթացքում, վճարել իր առաջարկած գնի առնվազն 3 տոկոսի չափով գումար, որը սահմանված ժամկետում (5 օրվա ընթացքում) հետագա վճարումները կատարելու դեպքում նախավճարի հետ միասին հաշվարկվում է վճարման ենթակա գումարի մեջ, իսկ վճարումներից խուսափելու դեպքում չի վերադարձվում եւ տվյալ մասնակիցը զրկվում է աճուրդին մասնակցելու իրավունքից: Եթե աճուրդում հաղթող հռչակված մասնակիցը սահմանված ժամկետում (հանձնարարագիր ստանալուց 30 րոպեի ընթացքում) վճարում է իր առաջարկած գնի առնվազն 3 տոկոսի չափով գումար, ապա նա ճանաչվում է աճուրդի հաղթող եւ ստորագրում է աճուրդի արդյունքների մասին արձանագրությունը:

Աճուրդում չհաղթող մասնակցին, մուծված նախավճարը վերադարձվում է վերջինիս դիմելուց հետո եռօրյա ժամկետում:

Աճուրդի կանոնակարգին ծանոթանալու (որը տրամադրվում է դիմումի առկայության դեպքում, ակտի պատճենահանման ծախսերը վճարելու պայմանով) եւ լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար կարող եք դիմել ք.Երեւան, Հոպյա Քոչարի 27 հասցեով կամ զանգահարել աճուրդային հանձնաժողովին՝ հեռախոս՝ 27-65-94, ինտերնետ՝ URL: //www.privatization.am:

Հնարավոր փոփոխություններն ու լրացումները կհրապարակվեն այն ձեւով, ինչպես կատարվել է աճուրդի մասին սույն հրապարակային ծանուցումը:

ՀՀ կառավարությանն առընթեր
պետական գույքի կառավարման վարչություն

Նկարիչը

խորապէս կարտայայտուիմ, նկատի առնելով անոր կարելիութիւնները:

▼▼▼

Բախին հետ կարդինի անսահման ախարհի մը մէջ, ուր ամբողջ մարդկութիւնը կը տրոփէ ու ձետվ մը կատարելութեան կը մատչի: Կը զգացուի մարդուն վերածնիլը՝ իր հայրենեաց: Բարձր խաղաղականութեան արուեստն է ան:

▼▼▼

Ներկայիս արուեստը կը զարգանայ անանձնական ուղղութեամբ (...) շատ կաղապար-մարդիկ, մեքենայ մարդիկ ունինք, որոնց ճաշակը կազմուած է ձայնասփիւռէն, շարժանկարէն: Մեր օրերուն արուեստը ընչահեղձ է, զրկուած՝ իր երանաշնորհ առանձնութենէն: Այլեւ չի կրնար իր մէջ պարփակուիլ, արտայայտելու համար ինչ որ Մոնթէրլան կը կոչէ «իր անհրաժեշտ բաժինը»: Կը տարուի խաղաղական կամ այլ հրահանգումներէ, եւ կարելի չէ հանդիպիլ անհատական արժէքներու: Փոխանակ կենալու լուսանցքին վրայ եւ իր ուրին լռութեան մէջ փնտռելու, ժամանակակից նկարիչը խումբի մը մաս կը կազմէ: Մինչդեռ կը խորհիմ, թէ ճշմարիտ ստեղծագործութիւնը առանձնակեաց կ'ըլլայ:

▼▼▼

«Իտալական» ձեւով հեռանկարը զիս կը պարատրեցնէ եւ կը գրաւէ: Սիրելով գիծը եւ անոր արտաբերեալները՝ ամբողջովին ազատ կը զգամ այդ գիծերուն ճշգրիտ շրջանակին մէջ: Ինչ կը վերաբերի մնացեալին, իրականութիւնը իմ բնական ընչաւորութիւնս չէ. նիւթերս, անձերս, տեսարաններս միայն երեւակայութեանս մէջ գոյութիւն ունին: Վենետիկը ներկայացնեմ թէ գնացքներու կայարանները եւ երկաթուղիները, կամ թէ երկրագործական գործիքները, ինչ որ յաճախ կը պատահի, երբեմ «ըստ բնութեան» չէ, այլ՝ ամբողջովին ներքին շարժանկարի մը, զոր բնանկարը մէջս գործի կը մղէ: Երբոր ձեռ առնեմ վրձինս, շատ աւելի թաթաւուն եմ Բոդլերէն, Էդգար Փոյէն կամ Ժերար տը Ներվալէ, քան իմ շօշափելի շրջանակէս:

▼▼▼

Նկարելու «ձեւեր» գոյութիւն չունին: Բաղադրագիր չկայ: Արուեստագէտը մարդ մըն է, որուն փնտռտուքը վերջ չունի, ի յառաջագունէ լաւագիտակ՝ թէ երբեմ պիտի չգտնէ, թէ իր հետախուզութիւնը եզր չունի, օրէնք չունի կամ թէ վարդապետութիւն՝ կառչելու համար: Եւ ի դժբախտութիւն իրեն, եթէ անոնցմէ մէկը գտնէ եւ անով տարուի, ու չյաջողի զայն ջնջել՝ մօտը կենալու համար անմեղութեան, այն ատեն իր վերջն է:

▼▼▼

(Պալմիրայի մասին): Միշտ կը տեսնեմ երկրային դրախտը, որ մեռած է: Իր մէջ կը զգայի յանկարծ,թէ բնակիչն էի այդ վայրերուն. ան իմ միջոցս էր, վեհ, մաքուր: Պալմիրայի մարդիկը իմ ընկերներս էին:

▼▼▼

(Վենետիկի մասին): Անցեալը որ հոն էր, գտայ ինչ որ ինձի կը պակսէր... Ես իտալացի եմ առանց իտալացի ըլլալու:

▼▼▼

Կը հաւատամ արուեստի հին առաքինութիւններու վերածնունդին եւ վերադարձին՝ կենսունակ ակերու, վերջին յիսուն տարիներու կեղծ յառաջադիմութեան հետ խզումէ մը ետք...:

... Հակառակ մեր խաղաղութեան մեքենայացումին, ես պատրանքներ ունեցող անձ մըն եմ: Կը հաւատամ, թէ մարդը միշտ մինչ մնայ մարդկային: Ու միշտ պիտի գտնուին անհատներ, որոնք ծովին անծայրածիր տարածութեան դիմաց կամ ծաղիկի մը առջեւ պիտի զգացուին եւ իրենց զգացումը պիտի վերածեն գիծերու: Ու նաեւ պիտի գտնուին ուրիշ մարդեր, որոնք պիտի ունենան յուզումներ այդ գիծերը դիտելով:

▼▼▼

Խորապէս տպաւորուած նկարներէն մին է «Մայր Հայաստանը» (3) զոր ամէն անգամ տեսնելուս կը վերյիշեմ մանկութիւնս:

▼▼▼

Գործիս հետ ունեցած իմ ցեղային աղերսներուն անդրադարձայ Հայաստանի մէջ, ուր գտայ գիծերու վխտում, զարդանկարչութիւն եւ ճարտարապետութիւնը՝ տաճարներուն:

▼▼▼

Եթէ դեռ աւելի հեռու երթամ, պատանեկան տարիներս, Պալմիրայի եւ Բուրգերուն (Սուրիա եւ Եգիպտոս) միջեւ կը տեսնեմ նախնիս, հայ ժողովուրդը, որ կ'օգնէ խաչակիրներուն Սուրբ Երկիրը վերագրաւելու: Եւ կը մտածեմ այս ժողովուրդին, որ գիտցաւ հնարել Ռոման ոճը, հաստատելէ ետք ախարհի առաջին քրիստոնեայ պետութիւնը, այս ժողովուրդին՝ որուն վերջին թագաւորը՝ Լեւոն Զ. Լուսինեան, ֆրանսացի իշխան, կը հանգչի Սէն-Դընիի մայր տաճարը, Ֆրանսայի արքաներուն կողքին, այս ժողովուրդը, որմէ միայն վսեմ յիշատակարաններ կը մնան հողին վրայ, զոր իմ խաղաղութեան առաջ դարուս առաջին ցեղասպանութեան... եւ որ վերագտաւ իր հայրենիքէն մասնիկ մը Խորհրդային Միութեան մէջ:

(Գառզուի Ակադեմական ճառէն, 1979 Ապրիլ)

1. Գառզուն առաջին անգամ հրաւարակ ելած է 1927-ին, մասնակցելով հայ նկարիչներու հաւաքական ցուցահանդէսին, ուր գործեր ունէին Երուանդ Քոչար, Մարտիրոս Սարեան, Վարդան Մախոխեան, Ժան Ալխազեան, Ռաֆայէլ Շիշմանեան եւ ուրիշներ:

2. Մորիս Դընի (1870-1943), նկարիչ եւ գրող, հեղինակ՝ Ժամանակակից արուեստի տեսութեանց: Տեսաբանը եղաւ Նաբիականներուն («Մարգարէ») խումբին, որուն մաս կը կազմէին անուանի նկարիչներ.- Սերիւզիէ, Բոնար, Վիյար եւ ուրիշներ:

3. Կը վերաբերի Ճանիկ Արամեանի (1820-1879) գործին, որ առաջին անգամ լոյս տեսած է 1861-ին: Պատկերը, որ վերջինումն էր հեղինակին նախորդ նմանօրինակ երկու գործերուն, խորագրուած էր «Հայաստան», եւ կը ներկայացնէր աւերակներու վրայ նստած հերարձակ Հայուհի մը: Արամեան, Փարիզի մէջ ունեցած է տպարան մը: Իմ կերտած-ձուլած է իր անունով ծանօթ տառատեսակները, որոնք մինչեւ այսօր կը գործածուին: ■



Հաւված «Պատերազմ եւ խաղաղություն» նկարից. 1950 թ.

Ինքնակենսագրութիւն

Ծնողիս պատմութիւնը բաւական ռոմանտիկ պատմութիւն մըն է: Ծնած եմ Հալէպ, 1907 Յունուար 1-ին, զոնէ այդպէս կը կարծէի մինչեւ վերջին անգամ, երբ քեզի հետ Հալէպ գացինք եւ այցելեցինք հայկական եկեղեցին: Հոն հաստատեցի, թէ ծննդեանս թուականը արձանագրուած է հին տոմարով: Ուրեմն ծնած եմ Յունուար 14-ին:

Հայրս՝ Յարութիւն Զուլումեան, առեւանգած է մայրս՝ Հայկանոյշ Թաշճեանը: Այս պատճառով է, որ անոնք խոյս տուած են Տիգրանակերտէն եւ ապաստանած Հալէպ: Այս է պատճառը Հալէպ ծնելուս: Ծնողիս այս փախուստը այնքա՜ն մեծ զայրակղութիւն յառաջացուցած է, որ տիգրանակերտցիները իրենց վրայ երգ յօրինած են: Մարդիկ զայն կ'երգէին նոյնիսկ ծնելէս ետք, մինչեւ իսկ 1919-ին Եգիպտոս մեր մեկնումէն ետք (*), ուր մօրս ընտանիքը փոխադրուած էր Յեղասպանութենէն առաջ: Ասոնց համար, ներառեալ ես եւ քոյրս, ժանտահարներ էինք: Մեծ մայրս խեթ աչքով մեզի կը նայէր: Իրեն համար մայրս գէշ բարքերու տէր մէկն էր, տեսակ մը թեթեւաբարոյ կին:

Կը թուի թէ մեծ հայրս՝ Թաշճեան, ծանօթ ճարտարապետ մը եղած է, ուրեմն որոշ դասու պատկանող... Այո՛, իմ ալ ճարտարապետ դառնալս կրնայ ժառանգական ըլլայ: Յամենայն դէպս, մօրս ընտանեկան բարձր դիրքը անհամապատասխան ըլլալու էր հօրս ընկերային մակարդակին, որ արգելք եղած ըլլան անոնց ամուսնութեան... Լուսանկարիչ մը տարբե՜ր բան է յարգելի նկատուած վաճառականէ մը:

Հօրս լուսանկարչատունը կը գտնուէր քաղաքին կեդրոնական հրապարակին՝ Բապ-էլ-Ֆարաժի վրայ, մեր տան տանիքը: Հայրս կենսասէր մէկն էր եւ, առանց ունեւոր ըլլալու, լաւ կ'ապրեցնէր իր ընտանիքը: Կը յիշեմ շաբաթավերջի սովորութիւնները, երբ քառանիւ կառքերու ձիերուն սնգսնգոցով կ'երթայինք դաշտերը խորոված ուտելու. կ'երգէինք, մարդիկ կը պարէին, կը նուագէին: Կը յիշեմ նոյնիսկ, համաշխարհային պատերազմէն առաջ, անգամ մը հայրս այցելեց Եգիպտոս զիս ալ հետը տանելով, ուր արդէն հաստատուած էին մօրեղբայրներս եւ մեծ մայրս: Հակառակ տարիամոզումի փորձերու, ինք չուզեց Եգիպտոս հաստատուիլ, Հալէպի կեանքը գտնելով աւելի հեշտ:

Հալէպի մէջ աշակերտած եմ ֆրանսական Ֆրէր Մարիստներու վարժարանը: Վարդապետները ուզեցին, որ կաթոլիկ դառնամ, ու ասոր համար ըրին զանազան խոստումներ- ձրի ուսում եւ այլ առաւելութիւններ: Մայրս մերժեց եւ զիս բաշեց դպրոցէն.- «Ինչ որ էինք, այդպէս կը մնայինք»...:

Հօրս մահուան ճիշտ թուականը չեմ յիշեր (մահացած է 1916-ին, Գ. Ք.): Այս այն շրջանն էր, երբ Հայոց մահուան կարաւանները Հալէպէն կ'ուղղուէին դէպի Տէր Զօր: Նոյն ատեն Հալէպի մէջ կը տիրէր թիֆիւսի համաճարակ. եւ մահերը համատարած էին: Անկէ նաեւ մեռաւ հայրս, որ կը թուէր ըլլալ մեծ մարդ մը, զօրաւոր, գեղադէմ. ունիմ իր լուսանկարը, ես իր կողքին՝ այնքան փոքրիկ, նիհարիկ: Մայրս վերապրեցաւ նոյն հիւանդութենէն, եւ քաջաբար շարունակեց հօրս գործը՝ լուսանկարչութիւնը: Ամբողջովին անհաւատալի էր- ա՛յդ շրջանին եւ Հալէպի պէս տեղ մը-, որ կին մը նման արհեստ մը կիրարկէր: Այդ ատեն է որ օգնեցի մօրս ամէն ձեւով, նոյնիսկ երբեմն լուսանկարելով: Անձրեւոտ օրերուն, հովանոցը կը բռնէի լուսանկարչատան մեքենային վրայ կամ յարճախորդներու գլխուն վերեւ, որ չբրջուին հողածածկ տանիքէն իջնող անձրեւէն: Մարդիկ կու գային ընդհանրապէս անձնագիրներու կամ անցագիրներու համար լուսանկարուելու: Կը յիշեմ, նոյնիսկ գործով կ'երթայինք շրջակայ գիւղերը: Խնայողութեան համար մայրս կ'առնէր հաւաքական լուսանկար մը, յետոյ մէկ մէկ կը կտրէինք գլուխները՝ անջատ լուսանկարներ ընելու:



«Լքված նավը», 1981 թ.

Մանկութենէս կը յիշեմ զբօսանքներս. կը խաղայի մեր բակը, նոյնիսկ մեր տանիքին վրայ: Ունէինք հրեայ դրացիներ, որոնք մեր ծառայութեան պէտք ունէին ամէն շաբաթամուտին. կ'երթայի իրենց տան լոյսը, կրակը վառելու, եւ այլապէս օգնելու: Տանիքէն կը դիտէի հրապարակի արեւելեան բազմութիւնը, ուղտերու կարաւանները, որոնք կը մտնէին դիմացի կարաւանսերայը:

Մտքիս մէջ դրոշմուած կը մնան հրապարակի կախաղանները: Խուռներամ բազմութեան մը ներկայութեան, թրքական իշխանութիւնները հոն կը կախէին իրենց յանցաւոր նկատածները, որոնց սպիտակ հագուածին վրայ գրուած կ'ըլլար անոնց յանցագործութիւնը: Չեմ գիտեր, անոնց շարքին կը գտնուէ՞ն նաեւ հայեր: Հայոց ջարդերու օրերուն կ'ամրափակուէինք տան մէջ, սոսկումով լսելով փողոցէն անցնող ջարդարար խուժանին ձայնը: Բացառութիւն էր մայրս, որ քաջաբար կը նստէր պատուհանին առջեւ, տեսնելու համար դուրսը անցած-դարձածը: Մեր տունը կը պատսպարուէին նաեւ բարեկամներ, որոնց մէջ կը գտնուէր երիտասարդ մը, որ չէր հեռանար: Յիշողութեանս մէջ վառ կը մնայ ճիչս. «Պէտք է որ երթայ, չէ թէ պիտի գան մեզ բոլորս ջարդելու»:

Մայրս զիս փրկելու համար յանձնեց Պէյրութ մեկնող բարեկամներու: Ատեն մը ետք եկան, կը խորհիմ երբ թուրքերը քաշուեցան Հալէպէն, եկան ինծի միանալու ինք եւ քոյրս՝ Տիգրանուհին: Բէյրութէն նաւով անցանք Աղեքսանդրիա, եւ ապա՝ գացինք Գահիրէ, մօրեղբօրս մօտ: Ան է որ զիս արձանագրեց տեղւոյն Գալուստեան վարժարանը: Փայլուն աշակերտ էի, միշտ առաջինը, եւ այդպէսով ընտրուեցայ որպէս Եղիայեան սան՝ չորս տարուան կրթաթոշակով, ու 1924-ին մեկնեցայ Ֆրանսա:

(Մնտիպ հատուած)
1973 Նոյեմբեր 17

(*) Գաղթականութենէն ետք Հալէպ հաստատուած տիգրանակերտցիները «Հայկոյին» (Հայկանոյշ) սխրագործութեան նուիրուած երգը կը շարունակէին երգել նոյնիսկ վաթսունական թուականներուն, որպէս իրենց ֆոլքլորին մաս կազմող երգիծախառն պատմութիւն:

«Նրա նման հերոսները պիտի ուղենիշ դառնան մեզ»

Հարցազրույց Ալեքսանդր ԹՈՓՉՅԱՆԻ հետ՝ վերջերս լույս տեսած նրա «Եվ անգամ մահից հետո» վեպի առիթով

- Ինչո՞ւ որոշեցիք վեպ գրել Ռուբեն Սեւակի մասին:

- Հասկանում եմ ձեր հարցը, հավանաբար սպասում էիք, որ պիտի մենագրություն գրեմ:

- Իսկ ինչո՞ւ ոչ մենագրություն: Չէ՞ որ այդ նյութը՝ ձեզ համար որպես գրականագետի, հիմնավորապես մշակված է:

- Ինչ վերաբերում է մենագրությանը, ապա չի բացառվում... գուցե գրեմ ապագայում, քանզի Ռ. Սեւակի ժառանգությունը լրջ վերագնահատման պահանջ է դնում: Քսաներորդ դարասկզբի արեւմտահայ պոեզիան Հ. Օշականի եւ հետագա գրականագետների ջանքերով ներկայացվում է որպես վարազկոտ մասանիով կնքված մի գահնամակ, ավատատիրական մի նվիրապետություն, որտեղ յուրաքանչյուրը վերջնականորեն դրված է իր տեղում, եւ որեւէ խախտում կարող է սկանդալներ հարուցել, ասես գործ ունենք սրբազան տոտեմների հետ եւ ոչ թե գրական դեմքերի:

- Կուզեի՞ք ձեր ասելիքը հստակեցնել:

- Հստակեցնելու հարց չկա: Մեզը հայրիշխանական ինքնադատություն է, որի տարածքներում մշտապես սրբազան կովեր են արածում, որտեղ մեռելներն իշխում են ողջերին, որտեղ նորը շարունակ պիտի արդարանա հնի առջեւ: Գրականագիտությունն էլ վերածել ենք կռապաշտական միստերիայի՝ իր անխախտ ծիսակարգով, պատվո պատվանդաններով, ամենա-ամենամեծով, ամենամեծով, մեծով, մի փոքր պակաս, բայց դարձյալ մեծով, ավելի պակաս, բայց դարձյալ մեծով, իսկապես պակաս մեծով եւ այլն... Գրողներին էլ դարձրել ենք արձաններ եւ արմատուայով ու ցեմենտբետոնով ամրացրել այդ պատվանդաններին՝ թող փորձի մեկը տեղից շարժել... Ռ. Սեւակն այդ նվիրապետության մեջ գրավում է «Ամենա-ամենամեծի» կրտսեր եղբոր կամ նրանց ուշիմ աշակերտի տեղը: Ինչե՞ր ասես, որ չի գրվել Ռ. Սեւակի ժառանգության մասին: Քսան տարի առաջ Փարիզում լրջմիտ համարվող մի գրականագետ հայտարարեց, որ նրա պոեզիան ընդամենը խոստում էր, մեկ ուրիշն այստեղ՝ ավելի տիտղոսավոր, ջանաց ապացուցել, որ նա ընդամենը ամենա-ամենամեծերի հերթվածների արժանավայել ընդօրինակողն էր, իսկ մի երրորդն էլ նրան դարձրեց բոդդայականության անխոնջ պրոպագանդիստ, ես դեռ չեմ խոսում մի շարք գրչակների տխմար հոդվածների մասին, որ վերջին ժամանակներս հայտնվեցին այստեղ եւ սփյուռքում:

- Եվ դուք գտնում եք, որ այդ նվիրապետությունը պետք է անպայման խախտվի՞, եւ Ռ. Սեւակն էլ ավելի մեծ համարվի՞:

- Ես չեմ ուզում, որ Ռ. Սեւակն ավելի մեծ համարվի կամ ավելի փոքր, ես պահանջում եմ, որ նա գնահատվի իր բուն արժեքով, մարդու եւ բանաստեղծի իր անկրկնելի ճակատագրով, իր առնչություններով ժամանակի եվրոպական մշակույթի հետ, իր մարգարեական կանխատեսումներով՝ մեր ողբերգական ճակատագրի վերաբերյալ... Ես ուզում եմ նրան տեսնել իր տեղում, ոչ թե կռապաշտ գրականագետների ստեղծած չեմպիոնական համակարգում: Մեր գրականագիտությունը եւ մանավանդ ինքնադատությունը շատ հաճախ նմանվում է Մարկոս աղա Ալիմյանի հանրահայտ օղակին... Սակայն, դուք գրված եւ լույս տեսած վեպը մի կողմ դրեցիք ու անցաք չգրված եւ չտպված մենագրությանը:

- Գուցե պատահական չէր այդ անցումը, քանզի Ռ. Սեւակ մարդու եւ բանաստեղծի վերագնահատման փորձերն արդեն նկատվում են ձեր վեպում:

- Հորինվածքի օրենքներո՛վ: Այսպիսի վեպ գրելու համար բավարար չէ միայն գրողի երեւակայությունը, պետք է՝ նաեւ գրականագետի, արվեստաբանի հմտություն ունենալ:

- Գուցե նաեւ վավերագրողի պատասխանատվությո՞ւն:

- Համաձայն եմ: Ի դեպ, փաստական որոշ խախտումներ կան իմ վեպում, եւ դրանք հիմնականում գիտակցված են: Մի մոռացել, որ գործ ունենք գեղարվեստական երկի հետ, եւ ոչ թե գիտական ուսումնասիրության, ուստի պետք է հարցն ուրիշ կերպ դնել. համոզի՞չ են այդ խախտումները, արդյոք չե՞ն հակասում գեղարվեստական ընդհանուր խնդրին: Օրինակ՝ ես գիտեմ, որ նա Լոզանից Պոլիս է վերադարձել 1914թ. ապրիլին, սակայն գիտակցաբար եմ նրան օգոստոսին բերել, որովհետեւ ուզում էի, որ նա իր աչքերով տեսներ նախապատերազմյան եւ արդեն սկսված նախշիրը: Նա արյունից անցնում է արյուն, մի գնացքից անցնում է մյուս գնացքը, եւ երկուսն էլ տանում են դեպի ախոր, դեպի մահ: Իմ նպատակն էր ցույց տալ համաշխարհային ողբերգության ահագնացումը, եւ ես ուզում էի, որ նա՝ իմ հերոսն ականատեսը դառնա այդ ամենի: Նույնը եւ ձերբակալության հասվածը: Ստույգ վկայություններ կան, որ քաղաքացիական հագած երկու ոստիկան եկել եւ խաբեությամբ տնից դուրս են հանել, սակայն ձերբակալման տեսարանը ես պատկերացրի այլ կերպ. սվինները մերկացրած, համազգեստավոր ժանդարմների ներկայությամբ, թուրքական ամբողջ անսրող վայրագությամբ: Հիշենք՝ նրան ապրիլի 24-ին չեն տարել, այլ մոտ երկու ամսվա ուշացումով, եւ այդ ընթացքում, Ռ. Սեւակն ամեն գիշեր սպասել է ոստիկաններին, զարմացել, վիրավորվել, ամաչել, թե ինչո՞ւ ինքը մյուսների հետ չէ: Սա հիշեցնում է Բրեխտի հանճարեղ գործն այն բանաստեղծի մասին, որը պետության կողմից

«վտանգավոր գրքերն» այրելու օրը խելագարված վազում էր քաղաքով մեկ եւ պահանջում, որ իր գրքերը նույնպես այրվեն:

- Կարո՞ղ եք, գոնե մոտավոր, փաստի եւ հորինվածքի տոկոսային հարաբերությունը տալ:

- Դժվար է հստակ պատասխանել ձեր հարցին, քանի որ բազմաթիվ փաստեր կան, որ շաղախված են հորինվածքին, եւ այն ասածն, որ երբեմն ինքս եմ մոռանում, թե որն էր փաստը եւ որն էր հորինվածքը: Եվ արդեն մի անգամ, հեռատեսային հաղորդումներից մեկի ժամանակ, ինձնից աննկատ, իմ երեւակայության արդյունքը (մեղա) մատուցեցի որպես իրողություն: Եվ դա այնքան հավաստի էր, որ առայժմ ոչ ոք չի նկատել, չնայած հաղորդումը բազմիցս կրկնվել է: Սակայն կարող եմ ասել, որ վեպի մոտ մեկ քառորդը գրեթե ծայրեծայր հորինվածք է: Խոսքը վերաբերում է առաջին մասին՝ «Էրոսի եւ Թանատոսի միջեւ», որտեղ ընդամենը մեկ վավերական փաստ կա. 1905 թ. հոկտեմբերին Ռուբեն Չիլինկիրյանը Պոլսից մեկնում է Լոզան ուսանելու: Այսինքն՝ առաջին էջի մի քանի տողը: Այդ հատորի մնացած բոլոր էջերը հորինվածք են:

- Շատ չէ՞:

- Ո՛չ շատ է, ո՛չ փոքր: Դարձյալ պիտի ասեմ. կարելի է տառացիորեն հավատարիմ մնալ գրողի կենսագրական մանրամասներին, սակայն վիպական նկարագրությունը հավաստի չլինի, եւ հակառակը:

- Դուք հավանաբար գիտեք, որ Ռ. Սեւակին նվիրված գեղարվեստական ուրիշ գործեր են լույս տեսել ձեր վեպից առաջ, արդյոք կարդացե՞լ եք եւ ի՞նչ կարծիքի եք:

- Գիտեմ, որ հինգ գործ է լույս տեսել, երեք վեպ եւ երկու պիես : Պիեսներից միայն մեկն է ինձ ծանոթ, այն էլ՝ բեմից: Վեպերը (դրանցից մեկն Անդրանիկ Ծառուկյանի «Սերը եղեռնի մեջ» վեպն է) ինձ անծանոթ են:

- Ինչպե՞ս բացատրել...

- Մասնագիտական զգուշավորություն... 1988թ. հունվարին ես եւ Անահիտը Անդրանիկ Ծառուկյանի հյուրն էինք՝ Փարիզի իր բնակարանում: Նոր լույս տեսած վեպը նվիրեց, խնդրեց, որ առաջիկա օրերում կարդամ եւ զրուցենք: «Չեմ խոստանում, վարպետ», - ասացի նրան: «Այո, կհասկնամ, Փարիզի հրապույրները չպիտի ձգեն, որ հոս վեպեր կարդաս, ուրեմն, Երեւանում կկարդաս»: «Երեւանում էլ չեմ կարող կարդալ, որովհետեւ ինքս եմ մտադիր վեպ գրել Սեւակի մասին, ուստի ուզում եմ ոտքերս զերծ պահել բոլոր տպավորություններից եւ ազդեցություններից»:

- Դուք գտնում եք, որ ճի՞շտ եք վարվել:

- Չեմ կարող ասել, սակայն ինձ թվում էր, որ այդ գործերը (լավ, թե վատ, ոչինչ չգիտեմ, մինչեւ հիմա դեռ չեմ կարդացել) գեղարվեստական իրենց կառույցով կարող է իմ մեջ իսպառ փակեին սեփականի ակունքը: Չէի ուզում, որ իմս բանավեճի մեջ ծնվի...

- Վերջին ժամանակները կարծիքներ են հնչում այն մասին, թե եղեռնի թեմայով անկարելի է վեպ գրել, որ պատմությունը չի կարող գեղարվեստական արտացոլման նյութ լինել, որ նման աղետին պիտի անպայման հաջորդի համրացումը եւ այլն, եւ այլն: Ի՞նչ կասեիք այդ մասին դուք, որ ձեր վեպում արտացոլել եք ցեղասպանությունը:

- Իսկապես, վերջին քառորդ դարի ընթացքում նման կարծիքներ հնչեցին, եւ կարելի էր դրանք անտեսել, եթե ասողները մեր գրականության եւ գիտության երկրորդական դեմքերը լինեին: Եթե գրողը խոսում է իր մասին, իր ստեղծագործական ծրագրերի մասին, ապա արտաքոց ոչինչ չկա դրանում, սակայն եթե այդ «անկարելիությունն» ուզում է փաթաթել ամբողջ գրականության վզին, ապա դա, մեղմ ասած, գեղագիտական-գաղափարական տոտալիտարիզմ է: Այդ ինչո՞ւ հրեաները (եւ այլազգի) կարողացան անցած վաթսուն տարվա ընթացքում հայոտավոր վեպեր, պիեսներ, բանաստեղծություններ, ֆիլմեր ու ներկայացումներ ստեղծել «Ողջակիզումի» վերաբերյալ, իսկ մենք անցած իննսուն տարում աղետի արտացոլումը հիմնականում օտար մշակույթների մեջ տեսանք, եթե նույնիսկ հեղինակները երբեմն հայազգի էին, ինչպես Վահե Քաչայի կամ Ատոմ Էգոյանի պարագայում: Քիչ է մնում նաեւ ասեն, թե հետագա սերունդներն այլեւս իրավունք չունեն այդ նյութին անդրադառնալու: Սա ինչ տարօրինակ արգելք է, ինչո՞ւ ենք ինքներս մեր բերանը փակում...

- Դուք կարծում եք, որ այդ մտքերի եռելը միայն ստեղծագործական մտահոգություններ ե՞ն:

- Ես չեմ ուզում գրականությունից զատ ուրիշ որեւէ բան փնտրել այդ կարծիքների տակ, չնայած դրանք, կամա թե ակամա, ջուր են լցնում քաղաքական այն գործիչների ջրաղացին, որոնք համառորեն առաջարկում են մոռանալ անցյալը կամ պատմաբաններին թողնել այդ հարցերի ճշտումը: Նման բաներ փնտրելու ցանկություն չունեմ, քանզի ինձ հետաքրքրում է նախեւառաջ այդ մտքերի գրական հյեցակետը: Ինչո՞ւ: Հարցն արդեն դուրս է եկել միջազգային ասպարեզ, դրանով իսկ մեզ ազատել քաղաքական որեւէ հանձնառությունից: Ընդունենք, որ մինչեւ վերջերս, ցեղասպանությանն անդրադարձող որեւէ գրող հույս ուներ նաեւ այդ կերպ իր լուման դնել Հայ դատի սրբազան պայքարում: Այս առումով այժմ նա ազատ է եւ նրան մնում է միայն գեղագիտական-բարոյական խնդիրներ հետաքննել:

- Ուրեմն, գրողներն այդ պայքարում այլեւս անելիք չունե՞ն եւ այստեղ քաղաքականությունից իսպառ զե՞րծ պիտի մնան:

- Անշուշտ, անելիք ունեն եւ եթե ուզեն էլ չեն կարող զերծ մնալ: Ցեղասպանությանն անդրադարձողն, ուզի-չուզի, պիտի առնչվի քաղաքականության: Պարզապես, գրողի առաքելությունն այդ պայքարում, ինձ թվում է, պիտի որոշակի փոփոխություններ կրի: Ես կուզեի, որ այստեղ այդ նյութին անդրադարձող գրողն ավելի շատ գեղարվեստական, համամարդկային խնդիրներ շոշափի: Ես կուզեի, որ քաղաքականությունը լինի ոչ թե նպատակ, այլ հետեւանք: Շիրազի հայրենասիրական պոեզիան ինձ համար ավելի շատ քաղաքական, քան արվեստի երեւույթ էր, եւ նա ուրիշ ելք չուներ, նա սնուցված էր քաղաքագետ-բանաստեղծի առաքելություն ստանձնել: Նա պիտի համրացած բերաններ բացեր, մինչդեռ, հիմա, բերաններն արդեն բացված են, եւ պետք է լրջորեն մտածել, թե դրանք հույզից զատ, ուրիշ ինչ պետք է ասեն:

- Չե՞ք վախենո՞ւմ, որ արվեստն ու գրականությունը քաղաքական նպատակներից թոթափելով, մենք կկատարենք անցած օրերի կրթության նախարարի պատվերը, որ պահանջում էր դասագրքերից հանել Մեծ Եղեռնին առնչվող տողերը:

- Քաղաքական նպատակներից թոթափվել չի նշանակում հետագա սերունդների հիշողությունն ամորձատել եւ ձերբազատվել բարոյական պարտավորություններից: Գրողն, ի վերջո, քաղաքացիական կեցվածք պիտի ունենա եւ ընդվզի ամեն տեսակի բռնության եւ անարդարության դեմ: Ինչ վերաբերում է նախարարին, ապա նրա (եւ ո՛չ միայն նրա) ասածը պարզապես երեսպաշտություն էր: Ուրեմն, երեխան կարող էր էկրանին, կյանքում, վերջապես ընտանիքում ամեն օր բռնություն եւ խաբեություն տեսնել, բայց չպիտի լսեր, թե ինչպիսի ողբերգություն են ապրել իր նախնիները: Ի դեպ, իմ սերունդը դասագրքերից չի իմացել ցեղասպանության մասին, այլ ծնողներից, հայրենադարձ եղբայրներից, արգելված գրքերից եւ օտար աղբյուրներից:

- Իսկ համրացո՞ւմը:

- Դա նորություն չէ: Ժամանակին ասվեց, որ Օսվենցիմից հետո արվեստն այլեւս ասելիք չունի: Թերեւ, բայց ինչո՞ւ միայն Օսվենցիմից... Իսկ ի՞նչ է, Տեր Զորից հետո արվեստն ասելիք ունե՞ր... Սա ինչ յոտաեսակ անբարոյություն է, եթե չասենք գեղագիտական ցինիզմ:

- Որքանո՞վ է Ռ. Սեւակի կերպարն այսօր արդիական, երբ բարոյական արժեքները ոտնահարվում են, երբ կեղծիքը շատ հաճախ ճշմարտի դիմակն է հագնում, երբ ներսից, մանավանդ դրսից բազմաթիվ վտանգներ սպառնում են խաթարել մեր ազգային նկարագիրը:

- Վա՜յ այն հասարակությանը, որտեղ նվիրվածությունը սեփական ժողովրդին, հերոսականությունը, ազնվությունը, մաքրությունը եւ այլ առաքինություններ, որոնցով լի էր Ռ. Սեւակը, համարվում են միամիտ, ժամանակավրեպ, հնացած կամ ռոմանտիկ: Այո, մեր օրերի համար նա «անախրոնիկ» է: Բայց եթե իսկապես ուզում ենք ազգային վերելք արել, ապա նրա նման հերոսները պիտի ուղենիշ դառնան մեզ:

Զրույցը վարեց
ՄԵՐԳԵՑ ԳԱԼՈՅԵՆԸ

Առաջին ամբողջական հայերեն

ՄԵԼԱՆՅԱ ԲԱՂԱԼՅԱՆ

Անայգաբաց ամռան տպագնաները ածխարհին

Հակոբ Խաչիկյան, Ժան-Իվ Սուսի «Ամառ առանց այգաբացի», Երեւան, 2005, ՀԳՄ հրատարակչություն, «Սարգիս Խաչենց» տպագրատուն: Ֆրանսերեն բնագրից հայերեն թարգմանությունը Ամալյա Շահումյանի:

Երբ 1991 թ. Մոնրեալում ֆրանսերենով լույս տեսավ Հակոբ Խաչիկյանի «Ամառ առանց այգաբացի» վեպը, օտար մամուլը հեղեղվեց արձագանքներով, իսկ «British Empire and Royal Academy»-ի անդամ Մորիս Ֆարհին գրեց. *«Վերջապես լույս տեսավ մի վեպ, որ գեղագանցում է Ֆրանց Վերֆելի հանրաճանաչ «Մուսա լեռան 40 օրը» գործը: Հակոբ Խաչիկյանի եւ Ժան-Իվ Սուսի վեպը՝ «Ամառ առանց այգաբացի», հոմերական հղացում է, առարեւ Հոմերոսի «Ոդիսականի» նման անխուսափելի սիրո կրքոտ պատմություն, որ նաեւ արտահայտում է ահավոր տառապանքի հանդեպ ցուցաբերած տոկունության այդչափ ուժը»:*

Վեպն առագորեն գրավեց հրատարակիչների ուշադրությունը. երկրորդ հրատարակությունը կատարեց Փարիզի «Presses de la Cite'»-ն: Գիրքը թարգմանվեց գերմաներենով, անգլերենով, իսպաներենով: Գերմանիայում լույս տեսավ երկու անգամ (1995, 1997), առա Իսպանիայում, Լոնդոնում, Տորոնտոյում եւ կրկին՝ Մոնրեալում: Գիրքը համարվեց բեստսելլեր, ունեցավ աննախադեպ ընթերցողական հաջողություն, սպառվեց ավելի քան քառորդ միլիոն տպաքանակով: Այժմ պատրաստվում է գրքի նաեւ թուրքերեն թարգմանությունը: Հայերեն թարգմանությունը Կարոիս Մուշիկյանի եւ Նազարյան ընտանիքի մեկենասությամբ լույս տեսավ օրերս:

Գեղարվեստական արձակ մեծածավալ կտավի վրա կառուցված վեպն առաջին աշխարհամարտի տարիներին Անատոլիայում՝ Սեբաստիայում ապրող մի հայ ընտանիքի տարագիր ճակատագրի մասին է: Վեպի հենքը պատմական իրողություններ են եւ ստուգաբես վավերական: Այն սկսվում է Առաջին աշխարհամարտի գործողությունների՝ Փարիզի մերձակա Նեվիլ Սենտ-Վաստի մոտ՝ գերմանացիների հակահարձակման նկարագրությամբ. «Այս պատերազմը մարդիկ սկսել էին երգը շտաբերին: Սակայն ցեխոտ խրամատներում անցկացրած մեկ ձմեռը ոգեշնչումը ընդարմացման էր վերածել: Սա անհնար մի բան էր, երբեւէ եղած ամենաանմարդային պատերազմը»: Այդ պատերազմն էր, որ «հնարավորություն» տվեց թուրքական կառավարությանն իրագործելու մարդկության պատմության մեջ առաջին ամենասոսկալի ոճիրը՝ 1,5 մլն հայերի ցեղասպանությունը: 1915-ի ողբերգական իրողությունները վիպական միջավայրում այնպես են ներհյուսվում մարդային կյանքի ընթացքին ու եղելություններին, որ այդ պատմական ճշմարտությունները, շնորհիվ գեղարվեստական խոսքի վարպետության, բնավ սոսկական նկարագրության չեն վերածվում. դա կյանք է՝ ապրող ճակատագրերի մարդկային տրփյունով ու բաբախով:

Սվասում բնակվող Վարդան եւ Սաթ Պալյանների եւ նրանց վեցամյա որդու՝ Թովմասի տարագիր ճակատագրերի միջոցով 1915-ի պատմական իրողությունները սոսկալի տեսարանների ու մարդկային ավերած հոգեբանությունների աշխարհագրությամբ նոր արտահայտություն են ստանում՝ գեղարվեստական միջավայրում՝ շատ ավելի ազդեցիկ ու ներգործուն:

Ընթերցանության գայթակղությունը (գրքի 250.000 տպաքանակի սպառումը) պայմանավորված է ոչ միայն վիպական սյուժեթիվ զարգացման խիստ հետաքրքրությամբ, այլեւ նախեւառաջ լեզվաոճական առանձնահատկություններով, որով պատումին հաղորդված է դինամիզմ ու դրամատիզմ՝ ստեղծված հոգեբանական իրական միջավայրի շնորհիվ:

Վիպական գործողությունների կենտրոնում նախկին պատգամավոր, օսմանյան բանակի սպա Վարդանն է: Երբ իթթիհատականների Թալեաթ-Էնվեր-Ջեմալ եռապետության քաղաքականությանը հետեւում են հայերի ջարդերն ու տեղահանությունները, կախաղանի դատապարտված Վարդանը մի թուրք բարեկամի օգնությամբ կարողանում է խույս տալ եւ ընտանիքի հետ ախոռվում է Այնթաբ, որտեղից սկսվում է նրանց կյանքի մռայլ ոդիսականը: Հայկական այս ջերմ ընտանիքը դեռերի բերումով բաժանվում է, կինը երեխայի հետ թուրք գավառապետ Ոզգա բեյի միջամտությամբ մահից փրկվելով՝ պատսպարվում-պատանդվում է իր մոտ: Պարտադրված հարաբերությունները կյանքի օրենքների հունի մեջ մտնելով՝ հոգեբանորեն համոզիչ ընթացք են ստանում:

Օրերի բնականոն ռիթմի խախտված իրականության մեջ կյանքն ու մահը, սերն ու ատելությունը, չարն ու բարին խաչաձեւվում-ագուցվում են միմյանց՝ իրական ապրում հաղորդելով ընթերցումին, նաեւ վիպական գործողությունների հանդեպ անմիջական մասնակցի զգացողություններ արթնացնում: Հայերի զանգվածային տեղահանությունների ու ջարդերի նկարագրությունների մեջ զգայացունց տարրերի բացակայությամբ սակայն, ստեղծված է ողբերգական այնպիսի վիճակներ, որոնցում մարդը շփոթված է կյանքի շրջադարձից, իրերի անտրամաբանելի ընթացքից: Ազդեցիկ է հայերի զանգվածային տեղահանության պատկերումը 6-ամյա երեխայի՝ Թովմասի աչքերով: «...Իրենից առաջ մինչեւ հորիզոն ձգվում էր մի շարասյուն, որի երկայնքով գնում եւ գալիս էին ձիավորները: Երեխան երբեք այդքան մարդ չէր տեսել: Նրանք բազում էին եւ նրանց սայլերը փոշի էին բարձրացնում, որը կախված էր մնում անշարժ օդում: Նա հետ նայեց եւ տեսավ, թե ինչպես էր խաղաղից դուրս հոսում մարդկային անտրտունջ գետը»:

Դրամատիկ ու հուզիչ են կառափնարանի դատապարտված հայերի հոգեբանական վիճակները, Ոզգա բեյի հետ Սաթի պարտադրված հարաբերությունների նկարագրությունները. թուրք գավառապետից հղիացած Սաթի հոգեկան տվայտանքները՝ երեխայից ազատվելու անհաջող ձիգերով, ապա ծնված երեխայից բաժանման պարտադրանքով:

Ծավալվող իրադարձությունները հանգում են անտրտունջ ընթացքների. Սաթից տարիների բաժանումից հետո, Ոզգա բեյին առեւանգած Վարդանը պատանդների փոխանակում է կատարում՝ թուրք գավառապետին իր կնոջ հետ: Շիտակի գերեզմանատանը Սաթի եւ Վարդանի հանդիպումը կին-տղամարդ հոգեբանական երեւույթների շատ հետաքրքրական ու նուրբ ասպեկտներ է ի հայտ բերում...

Պատերազմական տագնապների, թալանների ու տեղահանությունների, ջարդերի անլուր տառապանքների իրականությունը հոգեբանության, մարդկանց հարաբերությունների, աշխարհընկալման նոր եզրեր է ծնում: Հայ մարդու ներքին աշխարհում նոր ձեղքեր են գոյանում, անդունդներ: Սակայն հենց այդ անդունդի պոռկին է, որ կյանքը հասնում է գերագույն արժեքի, ֆիզիկական մաքառումը, արդելու ամեն ճիգը հավասարվում է հերոսականության:

Ֆիզիկական գոյամարտը ցեղաջատության իմաստավորում է ստանում, որպիսեսեւ իր մեջ կրում է ապագա կյանքի ավիշը, որ հետագայում վերածվելու էր հայի լինելիության՝ այս անգամ արդեն ի սիրտս աշխարհի: Ու սա գուցե մեկ այլ խորհուրդ էր ունենալու: Այդ փրկյալները, որ ընդամենը ֆիզիկական գոյություններ էին, վերափոխումի պոռթկումով վերածվելու էին հորդ նոր օրգանիզմի՝ հայկական ոգու տարբեր գետեր նոր արտահայտություններով: ... Դա եղավ, որ հեռավոր ամերիկյան մայր ցավոտ մի հանձարեղ Արշիլ Գորկի ասեր. «Ես իմ վրձնով կվերակենդանացնեմ Հայաստանն ամբողջ աշխարհի համար»: Ու շարունակվեց այդ ոգին:

20-դ դարասկզբի պատերազմական, ազգային ու հեղափոխական շարժումների տենդով բռնկված, այլազան գաղափարական ու գեղագիտական հոսանքներից շիկացած ժամանակի մարդը, որքան ստեղծարար ու նորարար, նույնքան անողորմ ու թույլ էր՝ խճճված իր իսկ ձեռքով սարքած դավերի ու որոգայթների մեջ: Այս պատմական իրողությունների ֆոնին մարդկային կյանքի դրման վավերական արժեքի ուժ է տացել Հ. Խաչիկյանի պատումի առարկայական մոտեցմամբ, առանց սեփական ցավի ֆետիշացման եւ ավելորդ զգայականության: Այս հանգամանքի վրա իր դրական ազդեցությունն է ունեցել նաեւ ֆրանսիացի հեղինակ Ժան-Իվ Սուսիի ստեղծագործական մասնակցությունը: Ցեղասպանության երեւույթը հայկական, ազգային շրջանակներից դուրս բերելը եւ այն իբրեւ համամարդկային ողբերգություն ներկայացնելն է նաեւ վեպին հաղորդել ազդեցիկության ուժ, արտահոլել գրքի բազմալեզվյան հրատարակությունները եւ ընթերցողական լայն հետաքրքրությունները:

Հակոբ Խաչիկյանի վեպը գեղարվեստական իր աներկբա արժեքով անկասկած ազդեցիկ նշանակություն է ունեցել եւ ունենալու է Հայոց ցեղասպանությունը միջազգայնորեն ճանաչելի դարձնելու մեր համազգային ձիգերում. սա ասվում է՝ մարդկային գիտակցության վրա արվեստի եւ գրականության հզոր ներազդեցությունների հազարամյակների փորձը նկատի առնելով:

• *«Ամառ առանց այգաբացի» վեպը լայն ու բովանդակալից ստեղծագործություն է, ինչպես նաեւ ուժգին սասում ցեղային ատելությունը խաչաքերող հավիտենական տխմարության» (Ամբել Լայոն «National Post»):*

• *«Հակոբ Խաչիկյանի ուշագրավ վեպը՝ «Ամառ առանց այգաբացի»-ն հայկական մի դրուցազներգություն է, ոչ միայն հետաքրքրական կարդալու համար, այլ նաեւ արթնանալու կոչ է՝ ճանաչելու համար ճշմարտությունը՝ 20-դ դարի առաջին ցեղային մահագործման մասին» (Մերիլին Վանդերպել, «The Examiner»):*

▼▼▼

Օտարագիր հայ գրողների առաջին հավաքին հրավիրված կանադահայ անգլիագիր հեղինակի՝ Հակոբ Խաչիկյանի հետ «Ազգի» խմբագրատանն ունեցանք հանդիպում: Շնորհավորելով վեպի հայերեն թարգմանության, ինչպես նաեւ Մոնրեալում վերջերս լույս տեսած «Հայ գրականության ժառանգությունը» անգլերենով սպվարածավալ անգրությունը՝ անգլերենով սպվարածավալ անթոլոգիայի 3-րդ հատորի առիթով, խնդրեցինք նրան ներկայացնել իր մոտեցումներն եւ զգացումները:

- Եթե հայ գրող մը՝ ես, միշտ կուզես, որ գիրդ հայերենի թարգմանվի: Այդ 4-5 լեզուներեն եսը ինձի համար շատ հուզիչ է տեսնել հայերեն գիրքը: Երբ կկարդամ, կզարմանամ, թե ես գրած եմ: Եվ ես ուզեցի, որ արեւելահայերեն թարգմանվի, քանի որ հոս կգտնվի հայերեն ընթերցողը:

- Ինչպե՞ս եք վերաբերում օտարագիր մեր գրողների՝ հայ գրականության պատկանելության խնդրին:

- Եթե հայ գրող է եւ օտար լեզու կօգտագործե, որքանո՞վ ան կկազմե հայ գրականության մաս: Հարց մը՝ է: Կան անձինք, որ հայ են, սակայն բառ մը հայերեն չեն գրեր, գրածնին կարակցություն չունի որեւէ տեսակետով հայ դատի, ոգիի կամ հայ պատմության հետ: Այդ անձը որքանո՞ հայ գրող է: Ռ. Հատտեմյանը կրնա՞ «եթե հայ գրողը հայերեն չի գրեր, հայ գրող չէ» տեսակետին վրա, որ շատ ընդունելի չէ: Կան անձեր, ինչպես Մկրտիչ Մարկոսյան, որ թուրքերեն կգրե, սակայն ամբողջ հայ կյանքն է Անատոլիոն մեջ, Սարոյանը ինչ որ կգրեր, մեջը հայ ոգի կար, իր տիպարները հայեր ալ չըլլալով հանդերձ, մոտեցումը հայկական է: Ուրիշ մոտեցում ալ կա: Այն գրողը, որ հայկական ծագում ունի, սակայն հայերեն չի գիտեր, Հայաստան գալով եւ իր գործերը հայերենի թարգմանելով, թերեւս օր մը հայկական թեմայով գրե:

Սակայն կկարծեմ անդրայման հայկական թեմա գրելը պայման չէ: Հայկական տիպարներ չըլլալով հանդերձ կրնաս մեկ-երկու տողով հայտնել հայկականությունդ, եթե այդ ոգին հոն է: Ինչ ալ որ կգրե գրողը ինքնակենսագրական է, անցյալը մեջն է, եւ այդ հայկականությունը ձեւով մը կարտահայտվի:

- «Ամառ առանց այգաբացի» վեպի օտարազգի ընթերցողների մեջ արդյոք եղա՞ն գրքի տպավորությամբ 1915-ի պատմական եղելություններով հետաքրքրվողներ:

- Այո, այո, շատ հեռաձայններ կստանայի, որ գիս կիրավիրեին զույցի ու բոլորն ալ օտարներ: Իհարկե, հարցը ինչպես կներկայացնես, ասկե կախում ունի: Վեպին մեջ ներկայացվածը միայն ողբերգություն չէ: Մեջը սիրային պատմություն ալ կա եւ ատիկա շատ մը է կյանքին: Ցեղասպանության թեման տիեզերական, համամարդկային պիտի ըլլա, որուն մեջ օտարն ալ բան գտնե: Հայ պատմությունը պիտի ներկայացնել համամարդկային ձեւի տակ, որ հասկնան, հետաքրքրե ուրիշը: Պատմության բերմամբ մարդը կսիրվի կարդալ մինչեւ վերջին էջը գիրքին: Եթե իրարու կհետաքրքրվի, անկե ետը կսկսի փնտրել դոկումանները: Այդ է առավելությունը գեղարվեստական վեպին:

Վեպին շարունակությունը՝ առանձին գիրքով՝ «Ճակատագրի ափերը», սփյուռքի պատմությունն է, նոր տիպարներ կան: Կուզեի գրել, որ տարբերությունը ցույց տամ՝ ինչ էր կացությունը իրենց երկրին մեջ եւ ինչ եղավ, երբ գացին նոր ափեր: «Ճակատագրի ափերը» սփյուռքյան վեպ է: Հիմա կաշխատիմ «Թովմասի օրագրություններուն» վրա, որ քոնիկի ձեւով կգրվի: Հայ գաղութը, որ ունեցած ենք 1940-70-ականներուն Պոլսո մեջ, որեւէ մեկը չէ ներկայացուցած: Պոլսո հայ գաղութը (ունետության տարը, մեծ սեպտեմբերը) կներկայացնեմ այդ տղուն հուշերուն ընդմեջեն եւ մեջն ալ բավականին հումոր կա...

Հ. Խաչիկյանի գրեթե բոլոր գործերում հանդիպում է Թովմաս անունով հերոսը: Թերեւս դա պայմանավորված է իր առաջին՝ «Թովմաս» վեպի նույնանուն հերոսի նկարագրի հարազատությամբ. օտար միջավայրում նրա հայկական ինքնության գիտակցությունը ներքին երկվության դրամա է ապրում: Հ. Խաչիկյանի անդրանիկ վեպի առաջաբանը հեղինակել է Ու. Սարոյանը: Ահա թե ինչ է նա գրում.

«Նախ՝ դա մի օրիգինալ անգլերեն գրվածք է: Երկրորդ՝ այն ազդարարում է, որ ատարեզ է իջել մի նոր իրական գրող: Երրորդ, ցուցադրում է ներկայիս նոր գրողի մեջ նստած ավելի հին գրողին՝ իր մտահորիզոնով, որակով, բազմազանությամբ եւ ոճով: «Թովմասը» թույլ է տալիս կռահել երիտասարդ Խաչիկյանի հաջորդ ստեղծագործությունը: Նախ, լեզուն հիանալի կլինի, գրեթե ամենալավ իմաստով բանաստեղծական, այն իմաստով, որ բառերը պատահականորեն չեն օգտագործվի, այլ զգուշորեն ընտրված կամ ընդունված, որպիսեսեւ դրանք ճիշտ են եւ գոհացուցիչ: Լեզվից անդին հայտնաբերվող ստեղծագործության «հոգու կամ գլխավոր հերոսի» մարդկային փորձը ներկայացվում է որպես զգայական ջերմության եւ որակյալ մտքի նոր համաձուլվածք: Հերոսը սիրում է մարդկային ցեղը ոչ թե անօգնական վիճակից դրդված, այլ իր ընտությամբ: Հակոբ Խաչիկյանը հին ցեղի, հին աշխարհի ներկայացուցիչ է եւ հենց դա է պատճառը, թե ինչու են նրա ստեղծագործությունները այդքան կենտրոնակ, հարաս, համակրանքով եւ հումորով լի, գթառաս եւ վերջապես այդքան լի իրական ինքնությամբ, կամ իրական խորհրդավորությամբ, այն իմաստով, որ երբեմ վերջնական հարիվ չի տվող որեւէ մարդու ով լինելու համար կամ որեւէ գրվածքի ինչ լինելու համար: «Թովմասը» առաջին հարաս եւ գեղեցիկ վեպն է: Հետեւաբար Խաչիկյանը գրիչներ առաջացնող նոր գրող է, որին պետք է ողջունել ջերմությամբ եւ մեծ հարգանքով»: ■

Վարդան Պետրոսյանի ամեն մի թատերական աշխատանք համարձակ քայլ է արվեստի մեջ եւ իրադարձություն Հայաստանի մշակութային կյանքում: Բացառություն չէ նաեւ «Վերելքը»: Մի քանի ամիս շարունակ լեփ-լեցուն դահլիճներ: Նման հաջողության մասին կերազեր որեւէ արվեստագետ: «Վերելքի» հաջողությունը լավագույն պատասխանն է բոլոր այն արվեստագետներին, ովքեր փորձում են համոզել, թե մարդիկ այսօր թատրոն չեն գնում, երիտասարդներին էլ դիսկոտեկներից եւ սրճարաններից բացի ոչինչ չի հետաքրքրում. բոլոր ներկայացումներին դահլիճում հավաքվածների կեսից ավելին երիտասարդներ են: Լավ աշխատանքին միշտ էլ տրվում է լավ գնահատական, անկասկած: Թեեւ, պետք է շեշտել, «Վերելքն» անթերի չէ: Հատկապես 2-րդ գործողության մեջ շատ է հրապարակախոսությունը, որը տեղ-տեղ վերածվում է դասախոսության: Այնուամենայնիվ, նկատի առնելով ներկայացման թեման, հատկապես թեմայի անսովոր մատուցումը, համարձակ եւ անսպասելի լուծումները, «Վերելքը» երեւույթ է մեր թատերական կյանքում:

Խմբ.

- Ինչո՞ւ «Վերելք»: Ներկայացումը դիտելուց հետո ավելի շատ ազգովին անդունդը գլորվելու ցանկություն է առաջանում:

- Ցեղասպանության թեման շոշափելով՝ ուզում եմ մարդկանց միավորել մի գաղափարի շուրջը: Ցեղասպանությունը մեր ժողովրդի աորած մեծագույն վիշտն է, իսկ վիշտն ազնվացնում է մարդուն: Արվեստը մեծագույն խնդիր ունի իր առջեւ դրած. հանդիսատեսին, մարդուն մի քայլ տանել դեպի ազնվացում: «Վերելք» բառը պատահական չէ ընտրված. ցեղասպանության գաղափարը վերաիմաստավորելով՝ մենք կարող ենք վերելքի ուղիով գնալ առաջ: Վերելքի ուղի կարող է լինել նաեւ Կոմիտասը՝ իր թողած ժառանգությամբ եւ աորած կյանքով: Ընդհանրապես մտածում եմ, որ ժամանակն է ինքներս մեզ ասենք ճշմարտությունը, մենք չպետք է մեր աչքերին թոզ փչելով աորենք: Եթե ուզում ես առաջ գնալ, պետք է համարձակորեն նայես հայելու մեջ, ուրիշ աչքով նայես ինքդ քեզ, քո պատմությանը եւ դասեր քաղես նրանից, հասկանաս՝ որտեղից ես գալիս եւ ուր ես գնում:

Մեր ժողովուրդը ցեղասպանությունից անտեղյակ է: Ես, համենայն դեպս, մտածել եմ, թե ինչ-որ բան գիտեմ ցեղասպանության մասին, բայց երբ սկսեցի նյութեր հավաքել, պատրաստվել ներկայացմանը, ցավով հասկացա, որ մի կարգին բան չգիտեմ: Մեր պատկերացումները ցեղասպանության մասին շատ մշուշոտ են, ընդհանուր. 1,5 միլիոնը զոհ գնաց թուրքական յաթաղանին, սրանով սկսվում եւ ավարտվում են մեր գիտելիքները: Ժամանակն է, որ լրջորեն ուսումնասիրենք ցեղասպանությունը: Եթե ամոթ չլինի ասելը, մենք ինքներս չենք ճանաչում ցեղասպանությունը, բայց ուզում ենք՝ օտարները ճանաչեն: Դուրս եկեք փողոց եւ հարցրեք մարդկանց. սահմռկեցուցիչ պատասխաններ կլսեք, որոնք նախ եւ առաջ գալիս են անտեղյակությունից: Հարցը պետք է բարձրացնել պետական մակարդակով: Ցեղասպանությունն այսօր միակ գաղափարն է, որ միավորում է հայությանը, եւ այն պետք է ոչ թե շահարկել, այլ ճիշտ օգտագործել:

- Ազգային ինքնագիտակցությո՞ւնն է ցածր, որ չենք ինքնամաքրվում:

- Իմիջիայլոց, ազգային գիտակցությունը մեզ պակասել է ամբողջ պատմության ընթացքում: Վառ օրինակ.18-19-րդ դարերում Թուրքիայում հայերը շատ հզոր են եղել: Հայերն այնպիսի հարստություն են ունեցել, որով ինչպես Նժդեհն է ասել, կարելի կլիներ մի մեծ Հայաստան գնել: Ի՞նչն է պակասել, որ հայերը նպատակային չեն կարողացել օգտագործել իրենց ֆինանսները: Չի եղել ազգային ինքնագիտակցությունը:

Այսօր էլ մեր մեծահարուստները կուտակում են նյութական արժեքներ, ունե՞ն արդյոք ազգային ինքնագիտակցություն, հասկանո՞ւմ են, որ այդ ամենը պետք է ուղղորդել որոշակի նպատակների: Պետք է, օրինակ, ֆինանսավորեն մեր գիտահետազոտական ինստիտուտները, պատմագիտությունը, հայագիտությունը: Ո՛չ, մեզ մոտ կուտակված ֆինանսներով կառուցում են հերթական սրճարանը, ձեռք են բերում հերթական ավտոմեքենան: Պատմությունը ցույց է տալիս, որ որքան մենք նյութապաշտ ենք լինում, ներքին մղումները, ստեղծագործական էներգիան ուղղորդում ենք դեպի նյութական արժեքներ, այնքան շատ ենք կորցնում: 60-ական թվականներին բոլորը վաստակ էին ստանում, բայց գիտության, արվեստի մեջ ստեղծվում էին մեծ արժեքներ: Այն ժամանակ այլ էր բարոյահոգեբանական մթնոլորտը: Իմ ներկայացումը մի ճիչ է, արթնացման կոչ, որ մարդիկ գնան բարձր բարոյական արժեքների ճանապարհով: Ներկայացումը կարող է մարդուն խոցել, այո՛, ճշմարտությունն ասելու համար պետք է շոշափել վերքերը, այդպես է սկսվում բուժումը:

- Ձեր ներկայացումների ժանրը քաղաքական սատիրան է, որն ունի խորը արմատներ: Ձեր կարծիքով, հանդիսատեսը ներկայացումներից տանո՞ւմ է այդ խորը իմաստը: Ի վերջո, ինչո՞ւ է հանդիսատեսը գալիս Վարդան Պետրոսյանի ներկայացումներին:

- Իմ հանդիսատեսը բազմաշերտ է՝ տարիքային, ինտելեկտուալ եւ այլ առումներով: Յուրաքանչյուր հանդիսատես ներկայացումն ընկալում է ըստ իր զարգացածության աստիճանի. մի բան կարող է զվարճացնել մեկին, մյուսի մոտ արցունքներ առաջացնել: Փորձել եմ այնպես անել, որ յուրաքանչյուր հանդիսատեսի գոհացնեմ: Ներկայացման մեջ դրվագներ կան, որոնք առաջին հայացքից նույնիսկ պարզունակ կարող են թվալ. օրինակ, Կոմիտասի մասին ոչինչ չգիտենք, նա մեզ համար, ցավոք, դարձել է ցեղասպանության խորհրդանիշ եւ վերջ: Բայց հանձին Կոմիտասի՝ ունենք հանճարեղ մարդու, որը բացառիկ աշխատանք է կատարել համաշխարհային մշակույթի համար: Այս մասին գիտեն միայն մասնագետները: Ես ուզում եմ, որ դահլիճից դուրս եկող երիտասարդը թեկուզ փոքր գիտելիքներ տանի իր հետ:

Ցեղասպանության թեման շատ բարդ է, ոչ մի սցենար այսպիսի դժվարությամբ չեմ գրել: Առաջին 17-18 ներկայացումներն անընդհատ փոփոխել եմ. ինչ-որ բան պակաս էր մնում, այնքան բաց հարցեր կան, որ պետք էր արծարծել... Մյուս կողմից գնացել եմ փոքրիկ խորամանկության. շատ էի ուզում հատկապես երիտասարդների տեսնել ներկայացման ժամանակ եւ պատրաստեցի շոուի նման բեմադրություն: Վառ գույներով եւ աշխույժ երաժշտությամբ եմ կանչել երիտասարդներին: Սցենարը գրելիս նյութերը կարդում էի մեծագույն դժվարությամբ, 10 րոպեն մեկ սփռված էի լինում փակել գիրքը: Մտածում էի՝ հանդիսատեսը նույնպես կարող է չդիմանալ: Այդ պատճառով որոշեցի ժամանակ առ ժամանակ թեթեւացնել ներկայացումը, միաժամանակ ե՛ւ տխրեցնել, ե՛ւ ուրախացնել:

- «Վերելքում» դուք արծարծում եք մեկ ցավոտ խնդիր եւս. այսօր հայաստանցիները համատարած լսում են թուրքական երաժշտություն: Բոլորս ասում ենք, որ դա վատ է, բայց շարունակում ենք անել նույնը: Ինչո՞ւ:

- Կոմիտասը սիրում էր ասել՝ երգը ժողովրդի հոգու հայելին է: Նա մեզ փրկեց թուրքացումից: Կոմիտասը մեր մշակույթի խորքերից վերածնեց հայկական երգը եւ մաքրեց օտար ազդեցություններից: Երգը հոգու տատանումն է եւ շատ կոնկրետ ներկայացնում է մարդու հոգեվիճակը: Այսօր շուկայական հարաբերությունների պայմաններում երաժշտությունը վառ արտահայտում է մեր ժողովրդի հոգեկան մղումները: Կոմիտասի երաժշտությունը մեզ տանում է ոգեղեն մի աշխարհ, կտրում է կենցաղից, ցածր կենդանական մղումներից: Այսօրվա ձգտումներն ամբողջությամբ ուղղված են դեպի նյութականը, դեպի վաստակած մի փշուր հացը երկուս դարձնելը: Այդ հոգեվիճակին, հավատացնում եմ, համապատասխանում է թուրքական եւ արաբական երաժշտությունը: Երաժշտական ճաշակը փոխելու համար պետք է փոխենք մեր գիտակցությունը: Եթե գնանք դեպի հոգեւոր վերելք, շատ հարցեր կլուծվեն, այդ թվում՝ այս խնդիրը:

- Ներկայացման մեջ Չինաստանին միանալու կոչը կատա՞կ է, թե՞ լուրջ:

- Ընդհանրապես իմ ներկայացումներում ես շատ հաճախ ասում եմ այն, ինչ հատկապես չեմ մտածում, բայց ասում եմ՝ ինչ մարդիկ են մտածում: Ներկայացումը սկսվում է սադրիչ խոսքերով. լավ են արել, կոտրել են: Հայերը հաճախ զայրացած ասում են այսպես: Ներկայացումը հենց այն մասին է, որ նույնիսկ ամենազայրացած պահին նման բան չի կարելի ասել: Մենք ինքներս պետք է ճանաչենք ցեղասպանությունը եւ բանականությամբ զինված քայլենք առաջ:

- «Վերելքը» կարելի՞ է Ձեր ստեղծագործական կյանքի վերելքը համարել:

- Ընդհանրապես ասում են՝ յուրաքանչյուր մարդ կրում է իր անունը, կարծում եմ՝ այդպես է նաեւ ներկայացումների դեպքում: Անվանումը կանխորոշում է ներկայացման ճակատագիրը: Ոչինչ պատահական չի լինում: Չգիտեմ, շատերն ասում են, որ սա իմ կարիերայի վերելքն է՝ համարձակության, նյութի մեկնաբանման, ազդեցության իմաստով: Սակայն ես չէ, որ պետք է դատեմ: Դուք ինքներդ եք դատելու: Ինքս ինձ գնահատական տամ: Ես կարող եմ խոսել ներկայացման մասին, որն այսօր շատ մեծ հաջողություն ունի: Խաղում ենք մի քաղաքում, որտեղ վերջին 10 տարիների ընթացքում բնակչությունը կիսով չափ նվազել է, բայց անընդհատ ունենք լեփ-լեցուն դահլիճներ... որոշել եմ դեռ խաղալ, խաղալ ողջ հոկտեմբերը:

- «Վերելքը» արտասահմանում բեմադրելու մտադրություն ունե՞ք:

- Այո՛, սակայն մի շատ կարեւոր խոչընդոտ կա. ֆինանսական ներդրումներ անող չկա: Ներկայացումը շատ թանկ է՝ մեծաթիվ արտիստներ, սպասարկող անձնակազմ, դեկոր, լույսեր: Այս ներկայացումը հնարավոր չէ խաղալ սփյուռքի համայնքային, ճաշարանային կամ պարահանդեսային բեմերում, հնարավոր է խաղալ միայն մեծ բեմերում, որտեղ շատ թանկ արժեն: Պետք են հովանավորներ:

Սփյուռքում բեմադրելու համար պետք է նաեւ սցենարում որոշակի փոփոխություններ կատարել՝ սփյուռքահայը դեռ պատրաստ չէ այս ներկայացումը դիտելուն: Ամեն դեպքում, հնարավոր է 2006-2007 թվականներին «Վերելքը» ներկայացվի Ֆրանսիայի մեծ դահլիճներում՝ ֆրանսիացի հանդիսատեսին:

- Ի՞նչ զգացողություն ունի դերասանը, որին լեփ-լեցուն դահլիճը հոսանքայս ծափահարում է:

- Տարբեր տարիքներում՝ տարբեր: Մինչեւ 30 տարեկան երջանկությունից կարող էի խելքս կորցնել, մինչեւ 40 տարեկան դա տալիս է վստահության, ուրախության, հոգեկան բավարարվածության զգացողություն, հիմա մի փոքր այլ կերպ եմ հուզվում ծափահարություններից, հատկապես այս ներկայացման ժամանակ: Տեղի է ունենում մի բան, որ դժվարանում եմ բացատրել. կարծես կորած որդին գտնում է իր ծնողին: Սա գուցե նաեւ տարիքիս հետ է կապված: Տպավորություն կա, որ մեր մեջ ճնած ցեղասպանության թեման արթնանում է, եւ այլ կերպ ենք սկսում իրար վերաբերվել ու սիրել: Մենք՝ հայերս, մեղմ ասած, չենք սիրում իրար, օտարանալ ենք, բայց ընդհանուր վիշտը միավորում է մեզ: Ծափահարությունները ապացուցում են, որ հանդիսատեսը համամիտ է ինձ հետ, մենք ամեն ներկայացումից հետո կարծես արթնանում ենք՝ մեր կյանքը նորից սկսելու համար:

Զրույցը վարեց
ՍՈՒՍԱՆՆԱ ՀՈՎՍԵՓՅԱՆԸ

ԻՆՔՆԱՄԱՔՐՄԱՆ ՃԱՆԱՊԱՐՀՈՎ ԴԵՊԻ ՎԵՐԵԼՔ

Հարցազրույց Վարդան Պետրոսյանի հետ

Վարդան Պետրոսյանը ծնվել է Երեւանում, 1959 թվականին: 1983-ին ավարտել է Երեւանի Գեղարվեստա-թատերական ինստիտուտի դիզայնի բաժինը:1985-ին ընկերների հետ ստեղծել է «Երիտասարդ ոգնիներ» երգիծական թատերախումբը՝ «Ոգնի» երգիծական հանդեսին կից: Այն տեսակով առաջին թատերախումբն էր, որն իր մեջ կրում էր երկու ոճ՝ քաղաքական սուր հումոր եւ ամերիկյան շոու: 1988-ին թատերախումբը ստանում է պաշտոնական կարգավիճակ եւ «Ոգնիներ» անունը գործում է Երեւանի քաղաքապետարանին կից: 1990-ին Վարդան Պետրոսյանը եւ «Ոգնիներ» թատերախումբը հրավիրվում են Փարիզ հյուրախաղերի՝ ներկայացնելու «Ծիծաղում են ոգնիները» աշխատանքը: Հյուրախաղերի փայլուն հաջողությունից հետո հաջորդ տարի հրավերը կրկնվում է:

1993-ից Վարդան Պետրոսյանը արտասահմանում հանդես է գալիս իր սեփական ներկայացումներով, ինչպես նաեւ մասնակցում ֆրանսիացի հանրահայտ դերասան եւ ռեժիսոր Ռոբեր Օսեյնի բեմադրություններին:

Վարդան Պետրոսյանը բացառիկ օժտվածություն ունի երաժշտության մեջ. նվագում է բազմաթիվ գործիքներ՝ դաշնամուր, կիթառ, բաս, շեփոր, տրթհարմոն, ջութակ: 2000 թվին ստեղծված «1000 ու մի ելք» ներկայացումով Վարդան Պետրոսյանը հաստատեց իր նոր թատերական ժանրը, որն իր մեջ կրում էր քաղաքական սուր հումոր, երգիծանք, խոր փիլիսոփայություն, հոգեբանական ստրեսային իրավիճակներ, եւ այս ամենը ծռված շոուի մեջ, ուր անպակաս է երգը, պարոդիան, պարը, զվարճությունը...

2001-ին ստեղծված «Խաղում ենք 1700» ներկայացմամբ Վարդան Պետրոսյանն անում է իր ամենահամարձակ քայլերից մեկը՝ բեմադրելով «one man show»ի սկզբունքով: Խառնելով այն Նոր կտակարանին, ստեղծում է զուգահեռ Հիսուսի կյանքի երկու պատմություն, որ դառնում է մեկ:

Փորձը հաջողվեց եւ դրա ապացույցը երկու ամսվա լեփ-լեցուն դահլիճներն էին եւ թատերական աշխուժությունը, որն առաջացել էր քաղաքում այս ներկայացման շուրջը:

2002 թ. Միացյալ Նահանգներում անգլերենով բեմադրվել է «Between Two Mountains» ներկայացումը, նույն թվականին Փարիզում Վարդան Պետրոսյանը խաղացել է «One Vartan Show» բեմադրությունը:

2003 թվականին արդեն Երեւանում հանդիսատեսի դատին է ներկայացվել «Կրակի մեջ» ներկայացումը, 2004 թ.՝ «Ցմահ բանտարկյալները»:

Քարձրացում

Նաեւ Գերմանիայի՞ համար

Գերմանիայում սեպտեմբերի 18-ին կայացած ընտրություններից 3 շաբաթ անց միայն հայտնի դարձավ, որ պոկերում հաղթել է ՔԴՄ նախագահ Անգելա Մերկելը:

«Պատմական իրադարձություն, նախադեպը չունեցող կարիերա Մերկելի համար լավ օրը արդյոք Գերմանիայի համար էլ լավը կլինի, դեռ պարզ չէ», գրել էր «Լայպցիգեր ֆոլկսցայթունգը» հոկտեմբերի 11-ի իր անդրադարձում:

Վերջապես ճանապարհը բաց է Մերկելի համար, այսպես ձեւակերպեցին շաբերը եթերից, տպագիր մամուլում: Պարտություն չսիրող քաղաքական փորձառու գործչի դիպուկ ռազմավարությո՞ւն, թե՞ ֆիզիկոսի անսխալ հաշվարկ ...

Նրա կենսագիրները վկայում են, թե նա՝ Անգելա Մերկելը երբեք չի հանձնվում, իր առջեւ նպատակ է դնում, կարգուկանոնից չշեղվելով ձգտում է հասնել դրան: Ուշեմն եւ զարմանալի չէ, որ արեւելյից եկած այս 51-ամյա առաջնորդին է տրված (ամենայն հավանականությամբ) Գերմանիայի առաջին կին կանցլերը լինելու պատի՞վը ասենք, թե՞ պատասխանատվությունը՝ որը կուզեք:

«Դուք առաջին կին կանցլերն եք, Ձեզ ինչպե՞ս եք զգում, ֆրաու Մերկել» լրագրողներից մեկի՝ հոկտեմբերի 10-ի մամուլի ասուլիսում տված հարցին Անգելա Մերկելը դեմքի լրջությունը մի փոքր «կոտրեց», ժպտաց ու ասաց. «Ինձ լավ եմ զգում: Գիտեմ՝ շատ աշխատանք կա անելու, պատասխանատվությունը մեծ է»:

Բոննի համալսարանի քաղաքագիտության պրոֆեսոր Լանգգութը, որ Մերկելի կենսագիրներից է, նրա զուսպ պատասխանը միանգամայն բնական համարեց՝ նա իր զգացմունքները ցույց տալ չի սիրում, շատ զգույշ է: Կարծր մետաղ, ինչպես ասում են: Տղամարդկանց շրջապատում ոչ միայն չի ճկվում, այլեւ միշտ տիրապետող դիրք ունի: Այդ է պատճառը միգուցե, որ Շրյոդերը բացառել է Մերկելի կաբինետում իր պաշտոնավարումը, նաեւ փոխվարչապետի պաշտոնում. «Կյանքիս ծրագրերում նման կետ չկա», ասել է նա: Առայժմ օգնում է կոալիցիա ձեւավորելուն: Հերթն ուրիշներինն է. պիտի աշխատեն, որ գնացքը ճիշտ ուղով ընթանա, երեքշաբթի օրը հայտարարեց Շրյոդերը Բեռլինում՝ մեքենաշինարարների համաժողովում: Հետո ի՞նչ պիտի անի մինչեւ Բունդեսթագի նոր նստաշրջանը կանցլերի իրավասություններ ունեցող, բայց արդեն խաղից հեռացած սոցիալ-դեմոկրատ Գերհարդ Շրյոդերը, առայժմ հսկայ պատասխան չկա. միգուցե անսա ՔԴՄի՝ ընտրությունների ժամանակ ծածանվող ցուցապաստառի խորհրդին՝ «Առավել ժամանակ կնոջը՝ Դորիսին»:

«Շատ բնական է՝ արտաքին փոխարքա չի լինում», հեռուստաեթերից մեկնաբանում է գերմանացի ժամանակակից կին գրողներից մեկը հավելելով՝ Շրյոդերն արեց իր գործը, հենց նա կանաչ լույս վառեց Մերկելի համար:

Իսկ «փոխարքայի» ու նաեւ մյուս նախարարական պաշտոնների համար շահարկվող անունների կարուսելն առայժմ, գոնե մինչեւ երկուշաբթի, պտտում է Գերմանիայի աշնան քաղաքական տերեւաթափը. գունատները՝ պաշտության քամուն, պիտի տերեւներ, վառ երանգներ՝ կոալիցիոն ծառին: Նախարարական 8 ծյուղ՝ սոցիալ-դեմոկրատներին (արտաքին գործերի, ֆինանսների, արդարադատության, աշխատանքի եւ սոցիալական հարցերի, տրանսպորտի, առողջապահության, բնապահպանության, զարգացման), 6 ծյուղ՝ ՔԴՄ- ՔՍՄ-ին (ներքին գործերի, տնտեսության, կրթության եւ գիտության, պաշտպանության, ընտանիքի, տարեցների պաշտպանության), սրան հավելած վարչապետի ու կառավարության ղեկավարի պաշտոնները: Անունների տեղատարափից մի քանի պատկեր՝ Բավարիայի վարչապետ ՔՍՄ նախագահ Էդմունդ Շտոյբերը՝ տնտեսության եւ տեխնոլոգիայի նախարար, Շրյոդերի թիմակից կառավարության ղեկավար Ֆրանկ Վալտեր Շթայնմայերը՝ հնարավոր արտգործնախարար, պաշտպանության նախարար սոցդեմոկրատ Պետեր Շտրուկը՝ խմբակցության ղեկավար, փոխվարչապետ եւ աշխատանքի ու սոցիալական հարցերի, առողջապահության, բնապահպանության, զարգացման, տրանսպորտի, արդյունաբերության եւ բանկային ոլորտների համագործակցության հարցեր: Լրագրողները նշում են, որ խոսքը չճանաչված հանրապետության հետ հատուկ տնտեսական հարաբերություններ հաստատելու մասին է: Մերձդնեստրը Կալինինգրադի մարզից հետո փաստորեն դառնում է ռուսական երկրորդ միջնատարածը:

ռությունների մի լավ մաս», կարծիք է հայտնում Ազատ դեմոկրատական կուսակցությունը:

«Ընդամենը սանրվածքի փոփոխություն», վարչապետի կաբինետի մասին ասում են դեմոկրատական սոցիալիզմի կուսակցության ներկայացուցիչները կամ ինչպես ընդունված է կարճ անվանել՝ Ձախերը:

«Խնդիրն այն չէ՝ որքա՞ն կդիմանա նոր կառավարությունը, այլ թե ինչպիսի քաղաքականություն կվարի: Իսկական բարեփոխականություն նրանից դժբախտաբար դժվար է ակնկալել, որովհետեւ ընդդիմությունը ներկայացնում են ոչ միայն 3 փոքր կուսակցություններ Բունդեսթագում, այլեւ կառավարության անդամները: Ով հարավային քաղաքականության կամ աշխատաուկայի հարցում իրական փոփոխություն է ակնկալում, հուսախաբ է լինելու», փոխանցում է «Վեսթդոյչե ցայթունգը»:

«Ոչ ոք չի կարող քայլ անել առանց մյուսների համաձայնության: Ամեն որոշում փոխզիջումներով պիտի կայանա: Վտանգը մեծ է, որ այս կոալիցիան ոչինչ տեղից չի շարժի: Եվ եթե անի էլ, ապա փոխզիջմամբ՝ ընդհանուրին վնասելու գնով», գրում է «Բեռլիներ ցայթունգը»:

«Երկու կուսակցություններն էլ պատասխանատվության առջեւ են կանգնած: Նրանց հաջողությունն անիծված է», կարծիք է հայտնում «Դի վելթը»:

Շաբաթասկզբին կայացած հարցման արդյունքը ցույց է տալիս, որ գերմանացիների 53 տոկոսը կարծում է, թե Մերկելը լավ գործ կանի: Բնական գիտությունների մասնագետի կարիք Գերմանիան շատ ունի, համոզված են ոմանք: Ընտրությունների շոուի կանոնները պարտադրեցին, որ իր արտահայտությունն հանդես գրեթե անփույթ Մերկելը կանացիությունն ընդգծի: Այսպես թե այնպես կանացիությունն ընդգծի: Այսպես թե այնպես խնամված, գեղեցկացրած չի մնա, ներքին խստությունը իրական նոր սկիզբ է բերելու Գերմանիայի համար, սկիզբ է բերելու եթե այնքան ընդդիմախոսները, որքան նրա կենսակերպին ակնդետ հետեւողները:

Մինչ սակարկումներն ու շահարկումները քաղաքական խոհանոցում Մեծ կոալիցիա պատրաստ են խառնում, Գերմանիայի Դաշնային Հանրապետության հիմնական օրենքը հիշեցնում է՝ կանցլերն ընտրվում է Բունդեսթագի կողմից ձայների բացարձակ մեծամասնությամբ, այնուհետեւ ընտրյալ կանցլերին նշանակում է դաշնային նախագահը: Եթե ներկայացված թեկնածուն անհրաժեշտ ձայներ չհավաքի, նախագահը կարող է լուծարել խորհրդարանը, նշանակել նոր ընտրություններ: Նոր ընտրություններ գերմանացիների մեծ մասը չի ուզում, թեպետ «եղածից էլ գոհ են» որակելը ճիշտ չի լինի: Բայց, ինչպես ասում են, դեմքերից առաջ չընկնելով, մի հպանցիկ հայացք ուղղենք Գերմանիայի առաջին լեդիի անցած ճանապարհին:

Ասպվածաբանի ընտանիքում արեւմուտքում՝ Համբուրգում ծնված, այնուհետեւ Բրանդենբուրգ՝ Թեմպլին տեղափոխված Անգելա Դորոթեա Կասները, որ առաջին ամուսնու Մերկել ազգանունը 1990-ից տեղափոխել է Գերմանիայի քաղաքական ամֆիթատրոնի առաջին շարքեր, իսկ 2005-ի սեպտեմբերից՝ աշխարհի լրատվամիջոցների կարետրագույն լուսերի բանալին նախագահը: Եթե ներկայացված թեկնածուն անհրաժեշտ ձայներ չհավաքի, նախագահը կարող է լուծարել խորհրդարանը, նշանակել նոր ընտրություններ: Նոր ընտրություններ գերմանացիների մեծ մասը չի ուզում, թեպետ «եղածից էլ գոհ են» որակելը ճիշտ չի լինի: Բայց, ինչպես ասում են, դեմքերից առաջ չընկնելով, մի հպանցիկ հայացք ուղղենք Գերմանիայի առաջին լեդիի անցած ճանապարհին:

Ասպվածաբանի ընտանիքում արեւմուտքում՝ Համբուրգում ծնված, այնուհետեւ Բրանդենբուրգ՝ Թեմպլին տեղափոխված Անգելա Դորոթեա Կասները, որ առաջին ամուսնու Մերկել ազգանունը 1990-ից տեղափոխել է Գերմանիայի քաղաքական ամֆիթատրոնի առաջին շարքեր, իսկ 2005-ի սեպտեմբերից՝ աշխարհի լրատվամիջոցների կարետրագույն լուսերի բանալին նախագահը: Եթե ներկայացված թեկնածուն անհրաժեշտ ձայներ չհավաքի, նախագահը կարող է լուծարել խորհրդարանը, նշանակել նոր ընտրություններ: Նոր ընտրություններ գերմանացիների մեծ մասը չի ուզում, թեպետ «եղածից էլ գոհ են» որակելը ճիշտ չի լինի: Բայց, ինչպես ասում են, դեմքերից առաջ չընկնելով, մի հպանցիկ հայացք ուղղենք Գերմանիայի առաջին լեդիի անցած ճանապարհին:

«Իմ աղջիկը»: Հելմուտ Քոլը նրան հենց այսպես էր դիմում, հայրական հոգատարությունը չուշացավ՝ 1991-ին իր կաբինետում նշանակեց կանանց ու երիտասարդության, 94-ին՝ ընդերքի ու բնապահպանության նախարար: Կենսագիրներն ասում են՝ սկզբում Մերկելը խաղի օրենքներին լավ չէր տիրապետում, բայց քաղաքական բնազդը ուժեղ գտնվեց, եւ 2000 թ.-ի ապրիլին Էսսենում կայացած կուսակցական օրվա լավագույն հիշողությունը Մերկելի ՔԴՄ նախագահ ընտրվելն էր: Էդմունդ Շտոյբեր, Վոլֆգանգ Շոյբլե, Նորբերտ Բլյում, Հորստ Զեհոֆեր, Ֆրիդրիխ Մերց ասում են ՔԴՄ-ՔՍՄ ներկայացնող այս ամենահեղինակավոր անուններն էլ որոշիչ ձայն չունեն՝ Մերկելը տիրապետում է բոլորին, դա նրան հաջողվում է:

«Քոլի աղջիկը» political animal դարձավ, նկատել են տալիս նրա ոտին խիստ վերլուծության ենթարկողները՝ ենթադրելով ոչ միայն արտաքին տեսքը՝ ընտրագովազդի պարտադրանքով հարդարվածությունն էլ օպորտունիզմի նշան որակելով, այլեւ այն հանգամանքը, որ ամենուր մենակ է գնում, ամուսնուն նրա կողքին երբեւէ չեն տեսնում:

«Միայն քաղաքում ապրել չեմ կարող, շաբաթ երեկոյան ձգտում եմ ազատ լինել, զբոսնել բնության գրկում, այգում աշխատել, ասում է Մերկելը վիրտուալ աշխարհի իր այցելուներին: Ժամանակ է գտնում նաեւ ամենասիրած ճաշերը՝ կարտոֆիլով ապուր, շնիցել կամ ֆորել եփել երկրորդ ամուսնու՝ ֆիզիկայի պրոֆեսոր Յոախիմ Զաուերի համար:

Եվ մի բան էլ՝ ինչ եք կարծում, ինչ երազանք ունի. «Մի անգամ անդրսիբիրյան երկաթուղով Մոսկվայից Վլադիվոստոկ ճամփորդել»: Ըստ կայքէջի, անգլերենից բացի ռուսերեն էլ գիտի, ուշեմն երազանքից իրականություն ճանապարհին էլ կանաչ լույս է վառվում:

ԼՈՒԻՍ ՀՈՎՍԵՓՅԱՆ
Գերմանիա

ՌՈՒՍԱՍՏԱՆ-ՄՈԼԴՈՎԱ ԷՍԿԱԼԱՑԻՈՒԹՅՈՒՆ

Մոսկվան Մերձդնեստրի հետ հաստատում է հատուկ տնտեսական հարաբերություններ

Օրերս հույժ գաղտնի պայմաններում Մոլդովա է այցելել ռուսաստանյան պատվիրակություն, որը բանակցությունների ընթացքում չի կարողացել նախագահ Վլադիմիր Վորոնինին համոզել փոխելու դիրքորոշումը ինքնահռչակ Մերձդնեստրի նկատմամբ: «Կոմերսանտ» թերթին հայտնի է դարձել, որ պատվիրակության կազմում եղել են ՌԴ անվտանգության խորհրդի փոխքարտուղար Յուրի Զուբակովը, առեւտրաարդյունաբերական պալատի փոխնախագահ Բորիս Պաստուխովը, հատուկ հանձնարարությունների դեսպան Իգոր Սավոլսկին եւ այլ պաշտոնատարներ, «Գազպրոմի», ԿԲ-ի, ԱԴԾ-ի, տրանսպորտի նախարարության ներկայացուցիչներ:

Թերթի տեղեկությունների համաձայն, Մոլդովայի ղեկավարությանը ներկայացվել է վերջնագիր. կամ Քիշնեւը կհամաձայնի Մերձդնեստրի խնդիրը լուծել Ռուսաստանին ձեռնտու պայմաններով, կամ էլ Մոսկվան կխստացնի Մոլդովայի տնտեսական շրջափակումը:

Մերձդնեստրում ռուսաստանյան պատվիրակության անդամները բանակցել են ինքնահռչակ հանրապետության նախագահ Իգոր Սմիռնովի եւ կարեւոր գերատեսչությունների ղեկավարների հետ: Ստորագրվել է համաձայնագիր «Ռուսաստանյան եւ մերձդնեստրյան բիզնես-ընկերակցությունների համագործակցության հեռանկարների մասին»:

Մերձդնեստրի արտգործնախարար Վալերի Լիցկայի խոսքերով, ենթարկվել են ռուսական գազի մատակարարման, էներգետիկայի, տրանսպորտի, արդյունաբերության եւ բանկային ոլորտների համագործակցության հարցեր: Լրագրողները նշում են, որ խոսքը չճանաչված հանրապետության հետ հատուկ տնտեսական հարաբերություններ հաստատելու մասին է: Մերձդնեստրը Կալինինգրադի մարզից հետո փաստորեն դառնում է ռուսական երկրորդ միջնատարածը:

Հուսեյնի բաց դատավարությունը հոկտեմբերի 19-ից

Անվտանգության խիստ միջոցներ հանրախմբերից առաջ



Իրաքի նախկին ղեկավար Սադդամ Հուսեյնի դատավարությունն սկսվելու է հոկտեմբերի 19-ին եւ ցուցադրվելու է հեռուստատեսությամբ: Դատական լսումները շարունակվելու են մի քանի ամիս: Այդ մասին հայտարարել է Հուսեյնին եւ նրա զինակիցներին դատող հատուկ տribունալի պաշտոնական ներկայացուցիչ Ռաիդ Զուխին:

Դատարան կներկայանան Սադդամ Հուսեյնը եւ նրա կառավարության 7 նախկին անդամներ: Հուսեյնին եւ նրա զինակիցներին մեղադրում են հակամարդկային ոճիրների, մասնավորապես 1982 թ. Դուջալ գյուղի 143 շիա մահմեդականների սպանության մեջ: BBC-ն հիշեցնում է, որ մահապատիժներն ու բանտարկությունները իրականացվել են այնտեղ Հուսեյնի շախմբի գնդակոծումից հետո:

Հուսեյնն ամբաստանվում է նաեւ իրաքցի քրդերի զանգվածային սպանությունների եւ 1991 թ. Իրաքի հարավում ապստամբության դաժան ճնշման համար: Դատավոր Ռաիդ Զուխիի խոսքերով, լսումների առաջին օրվա ընթացքում կընթերցվեն պաշտոնական մեղադրանքները եւ պաշտպանության համառոտ հայտարարությունը:

Անվտանգության նկատառումներով դատավորների ազգանունները չեն հրապարակվում: Բացառված չէ, որ դրանք հրապարակվեն դատի ժամանակ: Վկաները նույնպես չեն ցուցադրվի հեռուստաէկրաններին:

Ներկայացվող մեղադրանքները ենթադրում են մահապատիժ: Սակայն մեղադրող կողմը դեռ չի որոշել, թե ամբաստանյալների համար պահանջելո՞ւ է արդյոք մահապատիժ: Զուխիի խոսքերով, դա որոշվելու է վերջին պահին:

Ներկայիս իշխանությունները գրեթե չեն կասկածում, որ Հուսեյնը կդատապարտվի մահապատժի: Նրանց կարծիքով, դա կարտահայտեր տարիներ շարունակ Հուսեյնի բռնություններին ենթարկված բնակչության ցանկությունը:

Հուսեյնի փաստաբանները կասկածի տակ են առել դատարանի օրինականությունը՝ հայտարարելով, թե դատավորները բավարար ժամանակ չեն ունեցել դատին պատրաստվելու համար: 2003 թ. դեկտեմբերին Տիկրիտ քաղաքի մոտակայքում ձերբակալված Սադդամ Հուսեյնին ամերիկացի զինվորները պահում են մինչեւ օրս անհայտ վայրում:

Դատավարությունը հաջորդելու է Իրաքի սահմանադրության առթիվ այսօր նախատեսված հանրաքվեին: Ֆրանսպրեսը նշում է, որ արդեն հինգշաբթի օրվանից իշխանություններն անվտանգության արտակարգ միջոցներ են ձեռնարկում հանրաքվեի ձախողում թույլ չտալու նպատակով:

Հիշեցնենք, որ հունվարի 31-ին օրենսդրական ընտրությունների տապալմանը միտված ահաբեկչություններից զոհվեցին 30 անձինք: Բայց ընտրություններն, այնուամենայնիվ, կայացան:

Հոկտեմբերի 13-ին Բաղդադի հարավային արվարձաններում ոստիկանությունը ձերբակալեց «Ալ Ղաիդայի» 65 անդամների: Հայտնաբերվեցին 17 ականված ավտոմեքենաներ, որոնք պայթեցվելու էին հանրաքվեի օրը: Իշխանությունները եւ ամերիկյան զորքերը որոշել են հանրաքվեի օրն արգելել ավտոմեքենաների երթեւեկությունը:

Իրաքի սահմանները, Բաղդադի օդանավակայանը արդեն իսկ փակ են, միջնահանգային տեղաշարժերն արգելված են: Քաղաքներում գ[illegible] կրելը նույնպես արգելված է: Ֆրանսպրեսի տվյալներով, հո[illegible] 13-16-ը հայտարարված են տոնական օրեր: Դպրոցներ[illegible] շենքերը եւ մեծ խանութները փակ են:

Հայաստանն ի հայտ է գալիս

ՊԱՏԱՐԱԳԻՑ, ԴԻՎԱՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆԻՑ ԵՎ ԻՆՔՆԱՀԱՍՏԱՏՈՒՄԻՑ ՀԵՏՈ՝ ԱՐՎԵՍՏ

«Կայե դյու սինեմա» տարեց եւ հեղինակավոր ֆրանսիական հանդեսն իր սեպտեմբերյան համարում հոդված է հրապարակել «Ոսկե ծիրան» երեւանյան 2-րդ միջազգային կինոփառատոնի մասին, մի արձագանք, որ ինքնին ուշագրավ է՝ որպես դրսեցու հայացք: Հոդվածի հեղինակը՝ ճանաչված կինոքննադատ եւ արվեստաբան Ժան-Պիեռ Ռեմը, «Կայե դյու սինեմա»-ի խմբագրակազմից է եւ Մարսելի վավերագրական կինոնկարների փառատոնի տնօրենը: «Ոսկե ծիրանին» նա մասնակցում էր որպես վավերագրական ֆիլմերի ժյուրիի անդամ:

Քրիստոֆ Զանուսսի

«Ոսկե ծիրան» 2-րդ միջազգային կինոփառատոնի բացումը անսովոր էր, Երեւանի Զորավոր փոքրիկ եկեղեցու հարկի տակ, քահանայի շուրջբոլորը սեղմված, որը բուրվառն այնքան էլ բարձր չէր պահել՝ ոսկեգույն ընտիր ծիրանն օրհնելու համար: Իրիկնային պաշտոնական արարողությունն ընդունված կարգին ավելի համաղասախան էր եւ հովանավորի՝ ամենաթափանց հեռուստատեսության, պահանջների թելադրանքով: Օդերայի բեմում, արարողությանը տոն տալու համար, երկու կասկածելի էստրադային համարների միջեւ, մեկմեկու հետեւից ելույթ ունեցան նշանակալից անձինք:

«Արարատով» անդրանիկ փառատոնի դափնեկիր դարձած եւ այս անգամ խաղարկային կինոնկարների միջազգային ժյուրին նախագահելու հրավիրված Ատոմ Եգոյանը, որ եկել էր Արսինե Խանջյանի ընկերակցությամբ, չթաքցրեց այն հոգի հետ վերստին հանդիպելու հուզմունքը, որի լեզվին ավելի լավ է տիրապետում իր ֆիլմերում: Առա արտահայտվեց արտաքին գործերի նախարար Վարդան Օսկանյանը, առանց գրառումների, Միացյալ Նահանգներում յուրացրած անգլերենով եւ պարզորոշ նշեց կառավարության հետաքրքրությունը նորելուկ միջոցառման հանդեպ, հետաքրքրություն, ինչը հաստատեց երկու օր անց կազմակերպված մեծալուրջ ընդունելությունը հանրապետության նախագահի մոտ, որին ներկա էին մի շարք վարպետներ, փառատոնի օտարերկրացի հյուրեր: Եվ վերջապես, բեմ բարձրացավ Նիկիտա Միխալկովը, որը մեծարվեց ստեղծագործական վաստակի համար տրված մրցանակով: Նրա ներկայությունը նկատել տվեց այն սերտ կապերը, որոնք Հայաստանը շարունակում է պահպանել իր անցյալի եւ Ռուսաստանի, ցեղասպանությունը կատեգրած խորհրդային բանակի եւ ռուսական բանակի հետ, որն այսօր էլ աննկատ տեղակայված է Թուրքիայի եւ Հայաստանի սահմանին: Հաղթական, մարտաշունչ տեսով կինոգործիչը, որի ոտաբոբոն ելույթը հանդիսատարահում ընկալվեց եւ ջերմ ծափահարությունների արժանացավ, ինչպես հայտնի է, քաղաքական այր դառնալու նկրտումներ ունի Պուտինի օրոք (որի ներ մոր դիմանկարն է ստեղծել Ինեկե Սմիթսն իր «Պուտինի մայրը» ֆիլմում): Նա հենց սկզբից, առանց թարգմանության կարիք զգալու, ընդգծեց իրադարձության նշանակությունը՝ որքան կինեմատոգրաֆիական, այնքան էլ՝ դիվանագիտական:

Յոս Ստելինգի հոբելյանը Փարաջանովի թանգարանում

ՍԱՀՄԱՆՆԵՐԻ ԲԱՑՈՒՄ

Ակնհայտորեն գիտակցելով այն դժվարությունները, որոնք խորտակում են, այսպես կոչված, ի հայտ եկող երկրների կինոփառատոնները, Հարություն Խաչատրյանի ղեկավարած անձնակազմը կարողացել է արիաբար ու արդյունավետորեն խուսանավել: Ի լրումն՝ 2003-ին ստեղծված հոյակապ «Վավերագրողի» հեղինակին (նրա ֆիլմը, որ ժամանակակից Հայաստանի արտասովոր, տեսլային ու մռայլ նկարագիրն է, 2004-ին մրցանակի է արժանացել Կառլովի Վարիում եւ ներկայացված էր այստեղ) հաջողվել է խույս տալ կեղծ այլընտրանքից: Նա հրաժարվել է ընտրություն կատարել շուկայի պարտադրած էժանագին ինտերնացիոնալիզմի եւ ազգայնական կղզիացման միջեւ՝ հնտորեն ապարեզ հանելով սփյուռքի գոյությամբ արդարացված մի այլ խաղախաղ՝ մշակույթների խաչաձեւումը, սահմանների բացումը՝ որակի ուղղությամբ: Եթե ֆիլմերի մի մասը հայկական էր, հրավիրվածներից ոմանք՝ հայեր կամ Կեսիկյանի նման՝ ծագումով հայեր, որոնց պատվին փառատոնը հետահայաց ցուցադրություն էր կազմակերպել՝ մինչեւ Հենրիկ Մալյանի ֆիլմերը, հայ նախնիներից սերող ամերիկացի Գարի Քոնլինի վավերագրական գործերը կամ «Քար, ժամանակ, հոլում» ֆիլմ-ուղեւորության համաշխարհային պրեմիերան, հայկական անցյալի մի վարանոս փնտրտուք Կարինե Թորոսյանի եւ Արսինե Խանջյանի ներկայի կցկտուր պատկերներում, ապա այդ ամենը միախառնված էր պակաս բացահայտ հավակնությունների հետ:

Ինչպես, օրինակ, վարպետության դասերը՝ հոլանդացի անդադրում ֆնանդաս Պետեր Վան Բուտենի, «սինեմա վերիտեն» ներկայացրած կանադացի ռեժիսոր Փիթեր Վինսոնիկի, Զանուսիի մասնակցությամբ: Ինչպես նաեւ Յոս Ստելինգի ծննդյան 60-ամյակի առթիվ նրա գործերից կազմված հետահայաց ծրագիրը: Եվ հատկապես Աբաս Քիառոստամիի ֆիլմերի մարդաշաս ցուցադրությունը, որին նա անձամբ ներկա էր եւ ուշադիր՝ ամբողջ փառատոնի ընթացքում: Միջազգային մրցույթում անծանոթ անունները սակավաթիվ էին, բայց խստապահանջությունը վճռորոշ էր, մի բան, որ արժանացավ տարբեր ժյուրիների դրվատանքին: Մրցանակներ վաստակած մի շարք ֆիլմերի թվում առանձնացան Սոկուրովի «Արեւը», Լիսանդրո Ալոնսոյի «Մեռյալները», Զանիկյանների «Օ՜ մարդ»-ը, Անես Շյուցեի եւ Ալեխանդր Գրեբենեւի առաջնեկը՝ «Մոսկաչկան», գերմանա-լատվիական համատեղ արտադրության մի շաս զուտ ֆիլմ՝ Ռիգայի քանդվող ռուսական թաղամասի մասին:



Աբաս Քիառոստամի

Եթե «Մոսկվա» կինոթատրոնի՝ գրեթե միշտ տեղացի հանդիսատեսներով լի մեծ դահլիճում ցուցադրության պայմանները անթերի էին, ենթագրերի բացակայությունը կամ բարձրագոչ եւ միաձայն կրկնօրինակումը խաթարում էին ֆիլմերի ընկալումը, ինչպես Բահման Քիառոստամիի կարճամետրաժ եւ միջին մետրաժի խոստումնալից գործերի պարագայում: Փառատոնի փակման արարողությունը, որ դարձյալ ամբողջովին ցուցադրվում էր հեռուստատեսությամբ, ցնցեց բազմազանությունը՝ տասնութ մրցանակ շնորհելու հետ մեկտեղ ստեղծագործական վաստակի համար մրցանակներ պարգեւելով նաեւ Զանուսիին եւ Աբաս Քիառոստամիին: Փարաջանովի վերջին ֆիլմի օդերատորի անսպառ ու ոգեշունչ պերճախոսությունից եւ ողջագուրանքից սեւ ակնոցի տակ հուզված, բայց էշախոս իրանցի կինոգործիչը դարձավ մի փառատոնի խորհրդանիշը, որի ճանաչումը տեղում եւ այլուր մնում է անկայուն՝ այն հանգամանքի բերումով, որ միջազգային ընտրախավը ամեն ինչ շաս շուտ է մոռացության տալիս:

Վոչ դիպուկ

✔ 17 հոկտեմբերի, 22.45 Դ1

«Բարեւ, թախիծ»* *Ռեժիսոր՝ Փիթեր Կասովից: Դերերում. Քրիստին Բուասոն, Ֆրանսուա Մարթուրե, Մարի Բարիյե, Սառա Բերտրան: Ֆրանսիա:*

Հասունացման դրամա, որի երիտասարդ հերոսուհին մեծ համբավ բերեց վիպասանության ասպարեզ նոր-նոր ոտ դրած Ֆրանսուազ Սագանին:

✔ 17 հոկտեմբերի, 11.00, 21.00 Премьера
18 հոկտեմբերի, 09.00, 19.00
22 հոկտեմբերի, 17.00
23 հոկտեմբերի, 15.00, 01.00

«Մանդերլեյ»** *Ռեժիսոր՝ Լարս ֆոն Թրիեր: Դերերում. Բրայս Դալաս Հաուարդ, Իսահակ Դե Բանկոլե, Ուիլեմ Դեֆո, Դենի Գլովեր: Դանիա - Շվեդիա - Նիդեռլանդներ - Ֆրանսիա - Գերմանիա - ԱՄՆ, 2005:*

Դանիացի ականավոր ռեժիսորի ձեռնարկած ամերիկյան եռերգության երկրորդ մասում «Դոգվիլի»՝ առաջին ֆիլմի հերոսուհի Գրեյսը հայտնվում է Մանդերլեյ քաղաքում, որտեղ ստրկության վերացումից այսքան տարի անց սեւամորթները դեռ շարունակում են ծառայել սպիտակներին եւ չեն էլ պատկերացնում, թե այլ կերպ կարող է լինել:

✔ 19 հոկտեմբերի, 22.40 Դ1

«Ավիատորը»* *Ռեժիսոր՝ Մարտին Սկորսեզե: Դերերում. Լեոնարդո Դի Կապրիո, Քեյթ Բլանշեթ, Ալեք Բոլդուին, Յան Հոլմ, Քեյթ Բեքինսեյլ, Ջոն Սի Ռայլի, Ջուդ Լո: ԱՄՆ, 2004:*

5 «Օսկարի» արժանացած կենսագրական կինոկտավ հոլիվուդյան մագնատ Հաուարդ Հյուզի մասին, որը պատշաճ էր օդագնացությունը, կինոն ու գեղեցիկ կանանց եւ սարսափում էր մանրէներից:

✔ 20 հոկտեմբերի, 21.20 Культура

«Առանց վկաների»** *Ռեժիսոր՝ Նիկիտա Միխալկով: Դերերում. Իրինա Կուտչենկո, Միխայիլ Ուլյանով: ԽՍՀՄ, 1983:*

Հոգեբանական դրամա նախկին ամուսինների մասին, հոգեբանական նախկին ամուսինների մասին, որոնց անցյալը խանգարում է ներկային:

✔ 20 հոկտեմբերի, 23.30 Դ1

«Ավեսարան ըստ Մատթեոսի»*** *Ռեժիսոր՝ Պիեռ Պաոլո Պազոլինի: Դերերում. Էնրիկե Իրասոկի, Սուզաննա Պազոլինի, Մարգերիտա Կարուզո, Մարչելլո Մորանտե, Մարիո Սոկրատե, Սեսսիմո Դի Պորտո: Իտալիա, 1964:*

Սուրբ գրքի լավագույն էկրանացումներից մեկը, որտեղ Հիսուսի երկրային ողիսականը ներկայացված է խստաշունչ վավերական ոճով, արժանացել է Վենետիկի կինոփառատոնի Հատուկ մրցանակին:

✔ 20 հոկտեմբերի, 01.20 НТВ

«Քրիստինա»* *Ռեժիսոր՝ Պիեռ-Գասպար Յուի: Դերերում. Ռոմի Շնայդեր, Ալեն Դելոն: Ֆրանսիա, 1958:*

Ռոմանտիկ սիրո տխուր պատմություն՝ ըստ Արթուր Շնիցլերի «Սիրախաղ» պիեսի:

✔ 21 հոկտեմբերի, 20.40 Мир

«Առաջին սեր»* *Ռեժիսոր՝ Վասիլի Օդինսկի: Դերերում. Ինոկենտի Սմոկտունովսկի, Իրինա Պեչյոռնիկովա: ԽՍՀՄ:*

Տուրգենեւի համանուն ստեղծագործության էկրանավորումն է:

✔ 21 հոկտեմբերի, 00.45 НТВ

«Դեպի հյուսիս՝ հյուսիս-արեւմուտքով»* *Ռեժիսոր՝ Ալֆրեդ Հիչքոք: Դերերում. Քերի Գրանթ, Էվա Մարի Սեյնթ, Ջեյմս Մեյսոն: ԱՄՆ, 1959:*

Թրիլեր սխալմամբ լրտեսական հետապնդման զոհ դարձած ծառայողի մասին:

✔ 22 հոկտեմբերի. 23.20 Культура

«Համլետ»* *Ռեժիսոր՝ Ֆրանկո Զեֆիրելլի: Դերերում. Մել Գիբսոն, Գլեն Քլոուզ, Հելենա Բոնեմ Քարթեր, Յան Հոլմ, Ալան Բեյթս, Փոլ Սքոֆիլդ: ԱՄՆ, 1990:*

Շեքսպիրյան ողբերգության հանրամատչելի կինոտարբերակն է:

✔ 22 հոկտեմբերի, 23.45 Կենտրոն

«Բնավորություն»** *Ռեժիսոր՝ Միհ Վան Դիմ: Նիդեռլանդներ, 1996:*

«Օսկարի» արժանացած հոգեմաշ դրամա հոր եւ որդու խճճված հարաբերությունների մասին:

✔ 23 հոկտեմբերի, 22.45 1-ый канал

«Բոսոր գեստր»* *Ռեժիսոր՝ Մաթյո Կասովից: Դերերում. Ժան Ռենո, Վենսան Կասել, Դոմինիկ Սանդա: Ֆրանսիա, 2002:*

Մռայլ սյուժեով թրիլեր, որտեղ ոստիկանների զույգը գալիս է համալսարանական մեկուսի ավանում կատարված խորհրդավոր դեպքերը հետաքննելու:

✔ 23 հոկտեմբերի, 23.55 Հողակաթ

«Մարգարտե ականջօղով աղջիկը»** *Ռեժիսոր՝ Փիթեր Ուեբեր: Դերերում. Մարլեթ Յոհանսոն, Քոլին Ֆըրթ, Թոմ Ուիլքինսոն, Սիլիան Մըրֆի, Զուդի Փարֆիթ: Մեծ Բրիտանիա - Լյուքսեմբուրգ, 2003:*

Հոլանդացի նշանավոր նկարիչ Յան Վերմերի տանը սպասուհի վարձված դեռատի Գրիթը դառնում է նրա հռչակավոր կտավներից մեկի բնորդուհին:

✔ 23 հոկտեմբերի. 00.25 Культура

«Շիկահեր աղջկա սիրային արկածները»** *Ռեժիսոր՝ Միլոշ Ֆորման: Դերերում. Յանա Բրեյխովա, Վլադիմիր Պուխոլտ, Վլադիմիր Մենշիկ: Չեխոսլովակիա, 1965:*

Գավառական քաղաքի կոշիկի ֆաբրիկայում աշխատող Անդուլան սիրահարվում է Պրահայից եկած ջազային նվագախմբի երիտասարդ դաշնակահարին:

Եջը պատրաստեց ՀԱՍԿԱՆ ՊՈՅԱՋՅԱՆԸ

Աշխարհի 18-րդ չեմպիոնը Վեսելին Թոփալովն է

Բուլղարացի գրոսմայստեր Վեսելին Թոփալովն արգենտինական Սան Լուիս քաղաքում ընթացող շախմատի աշխարհի առաջնության նախավերջին տուրում ոչ-ոքի ավարտելով պարտիան ՖԻԴԵ-ի վարկածով աշխարհի ներկայիս չեմպիոն Ռուսլան Կասիմջանովի հետ, վաստակեց 9,5 միավոր եւ դարձավ մրցաշարի հաղթող: Այսպիսով, Թոփալովը նվաճեց աշխարհի չեմպիոնի տիտղոսը՝ դառնալով շախմատի պատմության մեջ 18-րդ չեմպիոնը: Ընդ որում, Թոփալովն առաջին բուլղարացին է, որ ուժեղագույնն է ճանաչվում աշխարհում: Նրա հաջողությունն իրոք օրինաչափ է: Մրցաշարի մեկնարկում մեկը մյուսի հետեւից հաղթելով մրցակիցներին, բուլղարացի շախմատիստը միավորների զգալի պաշար կուտակեց եւ 2-րդ շրջանում պարտիաներն ավարտելով ոչ-ոքի, ժամկետից շուտ նվաճեց ուժեղագույնի կոչումը:

Բացի աշխարհի չեմպիոնի տիտղոսից, Թոփալովը որպես պարգեւ կստանա 300 հազար դոլար: 2-րդ տեղը զբաղեցրած մասնակցին կտրվի 200 հազար դոլար, 3-րդին՝ 140 հազար եւ այսպես շարունակ: Այլուսակը եզրափակող շախմատիստը կստանա 50 հազար դոլար:

30-ամյա Թոփալովը 1999 թ. համարվում է Բուլղարիայի լավագույն շախմատիստը: 1996 թ. հունվարից սկսած նա ընդամենը երեք անգամ, այն էլ կարճ ժամանակով դուրս է մնացել ՖԻԴԵ-ի վարկանիշային ցուցակի լավագույն տասնյակից:

13-րդ տուրի մյուս երեք պարտիաներում էլ գրանցվեց ոչ-ոքի: Խաղաղ դաշն կնքեցին Ադամսն ու Լեկոն, Անանդն ու Մորոզեւիչը, Պոլգարն ու Սվիդլերը: Չեմպիոնն արդեն հայտնի է, մնում է որոշել 2-3-րդ տեղերը զբաղեցրած շախմատիստներին: Դրանց հավակնում են 8-ական միավոր ունեցող Վիշվանաթան Անանդն ու Պյոտր Սվիդլերը: Հենց նրանց միջեւ ավարտական տուրում կայանալիք պարտիան էլ կորոշի 2-րդ մրցանակակրին: Չորրորդ տեղում Մորոզեւիչն է (6,5 միավոր), որը խաղալու է Ադամսի հետ: 5,5-ական միավոր են վաստակել Լեկոն ու Կասիմջանովը, որոնց կես միավորով է զիջում Ադամսը: Այլուսակը 4 միավորով եզրափակում է Հուդիթ Պոլգարը:

Աշխարհի բոլոր չեմպիոնները

1. Վիլհելմ Ստեյնից	1886-1894 թթ.
2. Էմանուել Լասկեր	1894-1921 թթ.
3. Խոսե Ռաուլ Կապաբլանկա	1921-27 թթ.
4. Ալեքսանդր Ալյոխին	1927-35, 1937-46 թթ.
5. Մաքս Էյվե	1935-37 թթ.
6. Միխայիլ Բոտվիննիկ	1948-57, 1958-60, 1961-63 թթ.
7. Վասիլի Սմիսլով	1957 թ.
8. Միխայիլ Տալ	1960 թ.
9. Տիգրան Պետրոսյան	1963-69 թթ.
10. Բորիս Սպասկի	1969-72 թթ.
11. Ռոբերտ Ֆիշեր	1972-75 թթ.
12. Անատոլի Կարպով	1975-85, 1996-99 թթ.
13. Գարի Կասպարով	1985-96 թթ.
14. Ալեքսանդր Խալիֆման	1999-2000 թթ.
15. Վիշվանաթան Անանդ	2000-02 թթ.
16. Ռուսլան Պոնոմարյով	2002-03 թթ.
17. Ռուսլան Կասիմջանով	2003-05 թթ.
18. Վեսելին Թոփալով	2005 թ.-ից

Հավաքականին՝ հայ մարզիչ...

Ամեն անգամ, երբ եվրոպական երկրների առաջնությունների մասնակից երրորդական կամ չորրորդական ակումբների ձախողված մարզիչներին հրավիրում են Հայաստան, մեզ՝ յուրաքանչյուր հայ ֆուտբոլասերի, պատում է անկեղծ զարմանքն ու հետագայում նաեւ զայրույթը. ինչի՞ համար է արվում այս ամենը, մի՞թե ավելի հարմար չէ հավաքականը մնա առանց գլխավոր մարզչի, քան թե տեղի ունենա սույն խեղկատակությունը: Իսկ առավել ճշմարիտ, խելացի եւ արդարացի կլինի, եթե կաշվե գնդակի հայ վարպետների ընտրանու ղեկը սանձներ հայաստանցի կամ գոնե հայազգի մարզիչը: Եթե օտարազգի մարզիչները խայտառակ ձախողումից հետո մեկընդմիշտ հեռանում են մեր հանրապետությունից եւ կորում մեր հոգեւոր տեսադաշտից նույնպես, ապա հայ մարզչի պարագայում խնդիրը բոլորովին այլ հարթության վրա է դրվելու: Օտարականին խորթ են մեր բարոյական բարքերն ու ավանդույթները: Մինչդեռ հայ մասնագետը չի կարող անտարբեր լինել մեր ֆուտբոլասերների հայրենասիրական պոռթկուն զգացմունքների հանդեպ:

Եթե արգենտինացի Օսկար Լոպեսն ու ռումինացի Միխայ Ստոյկիցան (ի դեպ, վերջինս օտարերկրացիներից միակն էր, որը ոչ տիաճ հիշողություն է թողել) երեւանից հեռանալով, այլեւս երբեք առիթ չեն ունենում ծփվելու հայաստանցի երկրպագուների հետ, ապա նույնը չի կարող լինել հայազգի կամ հայաստանցի մարզչի պարագայում:

Ի վերջո, մեր մեծանուն բանաստեղծի խոսքերով ասած, մեզ չի հասկանա (կամ չի՞ կարողանում հասկանալ) օտարերկրացին, ինչը վկայում է Հայաստանի ֆուտբոլի հավաքականի վերջին տասնամյակի տարեգրությունը:

Զարմանալի է, որ մեզանում խորշում են հայ մասնագետների ծառայություններից եւ օտար ափերում են մշտապես որոնում ազգային հավաքականի «փրկչին»: Մինչդեռ վաղուց ժամանակն է, որ աղավինենք մեր ուժերին, վստահենք մեր լավագույն մասնագետներին:

Հիշենք, որ հայկական ֆուտբոլի աստեղային պահերին, երբ մեր գլխավոր թիմը նվաճեց համամիութենական գավաթն ու չեմպիոնի ոսկե մեդալները, հայազգի լավագույն մասնագետն էր (լեգենդար Ն. Սիմոնյանը) կանգնած վերոնշյալ փառահեղ հաղթանակների ակունքներում:

Ուստի, կրկին պետք է աղավինել ավանդույթի ուժին եւ հայոց հավաքականի ղեկը վստահել մեր մասնագետներին, որոնց համար Հայաստան-երկրի պատիվն ու արժանապատվությունը թանկ են ամեն ինչից:

Ժամանակն է նաեւ վերանայելու Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիայի կազմն իր նախագահով: Ձախողությունների այս երկար շարքը վաղուց պետք է սթափեցներ հանրապետության ղեկավարությանը:

ԱՐՄԵՆ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ,

Զույգերը որոշվեցին

Երեկ Ցյուրիխում կայացած վիճակահանությունը որոշեց եվրոպական ընտրական գոտուց անցումային խաղերին մասնակցող զույգերին: Նոյեմբերի 12-ին եւ 16-ին սեփական ու մրցակցի դաշտերում անցկացվելիք հանդիպումներում աշխարհի առաջնության 3 ուղեգրերը կվիճարկեն Իսպանիան ու Սլովակիան, Թուրքիան ու Շվեյցարիան, Չեխիան ու Նորվեգիան: Մինչ վիճակահանությունը, ՖԻՖԱ-ի վարկանիշային ցուցակում թիմերի զբաղեցրած դիրքից ելնելով, 6 հավաքականները բաշխվել էին երկու զամբյուղներում:

Առաջինում ընդգրկվել էին Չեխիայի, Թուրքիայի եւ Իսպանիայի, երկրորդում՝ Սլովակիայի, Շվեյցարիայի եւ Նորվեգիայի ընտրանիները:

Շահած գումարը կծախսվի Իբրահիմովիչի գնման համար

Շվեդական «Գուտե» թիմի մոլեռանդ երկրպագուներից մեկը յուրօրինակ ձեւով է որոշել ծախսել վիճակախաղով շահած 122,8 միլիոն շվեդական կրոնը (16 միլիոն դոլար): Նա որոշել է այդ գումարով թիմ հրավիրել Շվեդիայի հավաքականի եւ իտալական «Յուվենթուսի» հարձակվող Զլատան Իբրահիմովիչին: Նշենք, որ 36-ամյա երկրպագուն, որի անունը չի նշվում, բնակվում է Վիսբյու ամառանոցային քաղաքում եւ ներկայումս գործազուրկ է: Առայժմ «Յուվենթուսը» նորընծա շվեդ միլիոնատերին պատասխան չի տվել: Հիշեցնենք, որ Զլատան Իբրահիմովիչը «Յուվենթուս» էր տեղափոխվել «Այաքսից» 2004 թ. օգոստոսին: Շվեդ ֆուտբոլիստի համար թուրինցիները վճարել էին 19,5 մլն դոլար:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՍՈՍՅԵՆՈՒԹՅՈՒՆ

Մարմնամարզիկներն ավարտեցին մրցավեճը

Ալբերտ Ազարյանի անվան մարմնամարզության մարզադպրոցում ավարտվեց մարզաձեւի Հայաստանի առաջնությունը: Կրկին իրեն գերազանց դրսեւորեց հայ մարմնամարզիկների անվիճելի առաջատար Վահագն Ստեփանյանը: Նա արժանացավ հանրապետության բացարձակ չեմպիոնի տիտղոսին՝ լավագույն արդյունքը ցույց տալով բազմամարտում: Առանձին գործիքների վրա վարժություններում էլ Ստեփանյանն իրեն լավագույն կողմերով դրսեւորեց՝ ուժեղագույնը ճանաչվելով ազաս վարժություններում եւ օղակների վրա: Նժույգի վրա վարժություններում իր հավասարը չունեցավ Հարություն Մերդինյանը, հենացատկում լավագույնն Արտակ Սարգսյանն էր, իսկ պտտաձողում հաղթող ճանաչվեց Սերոբ Սողոմոնյանը:

Մեր երկու մարմնամարզիկները՝ Վահագն Ստեփանյանն ու Հարություն Մերդինյանը հոկտեմբերի 20-ին կմեկնեն Շտուտգարտ՝ մասնակցելու սպորտային մարմնամարզության աշխարհի գավաթի խաղարկությանը:

Հրանտ Շահինյանի անվան մարզադպրոցում էլ իրենց մրցավեճն ավարտեցին կանայք: Հայաստանի բացարձակ չեմպիոնուհու կոչմանն արժանացավ Աստղիկ Գյուլնազարյանը:

ՀՀ հավաքականը նախավերջին զամբյուղում է

2006 թ. հունվարի 27-ին կկայանա ֆուտբոլի Եվրոպայի 2008 թ. առաջնության ընտրական մրցաշարի մասնակիցների վիճակահանությունը: Հիշեցնենք, որ եզրափակիչ մրցումները համատեղ կազմակերպելու են Ավստրիան ու Շվեյցարիան, ուստի այդ երկրների հավաքականներն առանց ընտրական մրցաշարի իրավունք են ստացել հանդես գալու առաջնությունում: Մյուս 14 մասնակիցները հայտնի կդառնան ընտրական մրցաշարի արդյունքներով: Վիճակահանությամբ եվրոպական 50 երկրների հավաքականները կբաժանվեն 7 խմբի (6 խմբերում՝ յոթական, մեկում՝ ութ թիմ): Խմբերում առաջին երկու տեղերը զբաղեցրած հավաքականները եզրափակիչի ուղեգիր կնվաճեն:

Մինչ վիճակահանությունը, մասնակիցները, հաշվի առնելով ընտրական նախորդ մրցաշարի արդյունքները, բաշխվել են 7 զամբյուղներում: Հայաստանի ազգային հավաքականը տեղ է զբաղեցրել նախավերջին՝ 6-րդ զամբյուղում Վրաստանի, Մակեդոնիայի, Բելառուսի, Հս. Իռլանդիայի, Կիպրոսի եւ Մոլդովայի ընտրանիների հետ: Այսինքն, այս հավաքականները չեն կարող մեր հավաքականի մրցակիցները լինել: Առաջին զամբյուղում ուժեղագույններն են, որոնք գլխավորելու են ընտրական խմբերը: Այստեղ են Եվրոպայի չեմպիոն Հունաստանի, Հոլանդիայի, Անգլիայի, Պորտուգալիայի, Չեխիայի, Ֆրանսիայի եւ Շվեդիայի հավաքականները, որոնցից մեկը կլինի մեր հավաքականի մրցակիցը: Ամենաթույլ հավաքականների կազմում են Լիխտենշտեյնը, Ադրբեջանը, Անդորրան, Մալթան, Ֆարերները, Ղազախստանը, Լյուքսեմբուրգը:

«Թալ Գրիգը» երրորդն է

Բուդապեշտում ավարտվեց ֆուտզալի չեմպիոնների լիգայի որակավորման 1-ին փուլի ընտրական մրցաշարը: Ավարտական տուրում Հայաստանի չեմպիոն ու գավաթակիր «Թալ Գրիգը» ոչ-ոքի ավարտեց հանդիպումը Կիպրոսի չեմպիոն «Արարատի» հետ: Ինչպես եւ նախորդ երկու հանդիպումներում, այս անգամ էլ Հայաստանի ֆուտբոլիստները խաղասկզբում գոլ բաց թողեցին: 24-րդ րոպեին Կիպրոսի թիմում հանդես եկող հայազգի Ալեքսանդր Սարգսյանը կրկնապատկեց հաշիվը: Ի դեպ, վերջինս այդ խաղում դարձավ 3 գոլի հեղինակ:

«Թալ Գրիգին» հաջողվեց բեկում մտցնել խաղում եւ խաղավարից 4 րոպե առաջ նույնիսկ հաշվի մեջ առաջ անցնել (4-3): Մեր թիմից աչքի ընկան Արմեն Գուլամբարյանը, Զոհրաբ Նիազյանն ու Էմիլ Մեսրոպյանը, մեկ գնդակ էլ սեփական դարպասը խփեց հյուրերի խաղացողը: «Արարատը» պարտությունից խուսափեց վերջին րոպեին Սարգսյանի խփած գոլի շնորհիվ:

Այսպիսով, գրանցվեց ոչ-ոքի (4-4): «Թալ Գրիգը» 3 խաղում այդպես էլ հաղթանակ չտոնեց եւ 2 միավորով գրավեց 3-րդ տեղը՝ դուրս մնալով հետագա պայքարից: Իսկ խմբի հաղթող ճանաչվեց փորձառու «Բենֆիկան», որը 3-րդ խաղում էլ հաղթանակ տոնեց հունգարացիների նկատմամբ (8-0):

Ընտրական 2-րդ խմբում հաջող հանդես եկան եւ հաջորդ փուլի ուղեգիր նվաճեցին Մոսկվայի դինամոյականները, որոնք հաղթանակով ավարտեցին բոլոր 3 խաղերը:

Թեկնածուների ցանկը հայտնի է

ՖԻՖԱ-ն հրապարակել է այն 30 լավագույն ֆուտբոլիստների ցանկը, որոնք հավակնում են 2005 թ. աշխարհի ուժեղագույն ֆուտբոլիստի կոչմանը: Աշխարհի լավագույն ֆուտբոլիստը հայտնի կդառնա դեկտեմբերի 19-ին, Ցյուրիխում:

Հիշեցնենք, որ անցյալ տարեվերջին այդ պատվին էր արժանացել իսպանական «Բարսելոնի» բրազիլացի խաղացող Ռոնալդինյոն: Անցյալ տարվա համեմատ ցուցակում ընդամենը 5 փոփոխություն է կատարվել: Թեկնածուների ցանկում բոլորից շատ (6) ֆուտբոլիստ է ներկայացված Մադրիդի «Ռեալից»՝ Ռոբինյոն, Ռոբերտո Կարլոսը, Բեքհեմը, Զիդանը, Ռաուլը, Ռոնալդոն: «Միլանը» ներկայացնում են Կական, Կաֆուն, Մալդինին, Նեստան, Շեւչենկոն: Չորս ներկայացուցիչ ունի «Չելսին»՝ Դրոգբան, Լեմփարդը, Ռոբենը, Էսիենը: Ցուցակում տեղ են զբաղեցրել նաեւ Դեկուն, Ռոնալդինյոն, Էտոն («Բարսելոն»), Ձերարդը («Լիվերպուլ»), Անրին («Արսենալ»), Օկոչան («Բոլտոն»), Ռիկելմեն («Վիլլառեալ»), Ադրիանոն («Ինտեր»), Բալակը («Բավարիա»), Բուֆոնը, Իբրահիմովիչը, Նեդվեդը («Յուվենտուս»), վան Նիստելոոյը, Ռոնալդուն, Ռունին («Մանչեսթր Յունայթեդ»):

Էջը պատրաստեց ԱՇՈՏ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆԸ

Աշխարհում սրվում է պայքարը հանուն էներգառեսուրսների

Թեւակոխել ենք «հեռանավթային դարաշրջան»

Հանուն էներգառեսուրսների աշխարհում ծավալված պայքարը հեռզհեռե կասաղի բնույթ է սանում: Եվրոպացի էներգետիկներից մեկի կարծիքով, իրավիճակը դրամատիկ է դառնում: Ռուսասանում գազարդյունաբերության մենաստր «Գազպրոմը» ձեռք է բերում Աբրամովիչի բաժնետոմսերը «Սիբնեֆ» նավթային կոնցեռնում: Պետությունն ինքը «Գազպրոմում» իր բաժինը հասցնում է 50 տոկոսի, փաստորեն վերահսկողության տակ առնելով աշխարհում գազի արդյունահանման 1/5-ը եւ գազի համաշխարհային պաշարների 16 տոկոսը:

Ամենուրեք ստեղծվում են ազգային, հաճախ պետական էներգետիկ կոնցեռններ, որոնք այլեւս չեն սահմանափակվում իրենց երկրների բնապաշարների մակարդակ եւ պայքարում են ամբողջ աշխարհում հանքավայրերի, էներգառեսուրսների եւ ձեռնարկությունների արտոնագրեր ստանալու համար: Վենեսուելայի նախագահ Ուգո Չավեսն, օրինակ, ուզում է հարեւան երկրների քաղաքական գործիչներին համոզել ստեղծելու ամբողջ Հարավային Ամերիկան ընդգրկող նավթային կոնցեռն, որպեսզի հնարավոր լինի զսպել «հյուսիսային կոնցեռններին»: Բոլիվիայում ընդդիմությունը պայքարում է հանուն նավթային ընկերությունների ազգայնացման:

Սակայն համաշխարհային շուկան իր վերելքի համար պարտական է գլխավորապես Հնդկաստանին եւ մանավանդ Չինաստանին: 70 տոկոսով ՉԺՀ պետական հոլդինգին պատկանող China National Offshore Oil Corporation (CNOOC) կորպորացիան ամբողջ աշխարհում համառորեն փնտրում է նավթի ու գազի հանքավայրեր կամ դրանց հետ կապված ձեռնարկություններ: Երբ CNOOC-ը փորձեց ձեռք բերել Ամերիկայում եւ Ասիայում նավթ ու գազ արդյունահանող կալիֆորնիական «Յունոկալ» ընկերությունը, բախվեց ամերիկացի քաղաքական գործիչների անհախադեմ դիմադրությանը եւ սիրված եղավ նահանջել: Մինչդեռ ամերիկյան «Շեւրոն» նավթային կոնցեռնը հիշյալ ընկերությունը ձեռք բերեց անհամեմատաբար ցածր գնով:

Էներգառեսուրսների հայթայթման ոլորտում անհաշտ պայքար է ծավալվել մանավանդ Չինաստանի եւ ԱՄՆ-ի միջեւ: Չինաստանը փորձում է միջոցներ գտնել արագորեն զարգացող իր արդյունաբերության համար: Երկրում էներգիայի սպառումը երեք տարին մեկ ավելանում է այնքանով, որքան ընդհանուր առմամբ անհրաժեշտ է տնտեսապես զարգացած Ճապոնիային: CNOOC նավթային կոնցեռնի ղեկավար Ֆու Չենգույն ասում է. «Տեխնոլոգիաներ կարելի է գնել, բայց երբ ռեսուրսներ չկան, քեզ ոչ ոք չի օգնի»:

Մասնագետները այսօր պնդում են, որ նավթը եւ գազը թերեւս ավելի շուտ սպառվեն, քան ենթադրվում էր անցյալում: Պաշտոն էներգակիրների Ռուսաստանի, Չինաստանի, Հնդկաստանի եւ Բրազիլիայի հարաճուն պահանջարկն է, ինչպես նաեւ բնակչության արագ աճը: Մինչեւ 21-րդ դարի կեսերը մոլորակի բնակչությունը կավելանա եւ 2,5 միլիարդով: Բացի դրանից, արդեն այսօր մոտ 2 մլրդ մարդ էներգառեսուրսներ չի գնում: Եթե ուզում ենք հաջողությամբ պայքարել չքավորության դեմ, ապա այդ մարդիկ պետք է ստանան էներգիայից օգտվելու իրավունք:

Ներկա իրավիճակը բնութագրվում է հետեւյալ կերպ. չնայած բարձր գներին, էներգիա արդյունահանող երկրները չեն կարողանում շուկա դուրս բերել հումքի հավելյալ ծավալներ: Համաշխարհային էներգետիկ խորհրդի գնահատականների համաձայն, OPEC-ում չընդգրկված երկրներում, ինչպես նաեւ OPEC-ի անդամ որոշ երկրներում 1990-ական թթ. վերջերին նավթահանույթը նվազել է, չնայած նոր հետազոտություններին եւ խոր հորատման նոր տեխնոլոգիաներին: Պատճառն այն է, որ հումքի պաշարները նվազել են:

«Մենք թեւակոխել ենք հեռանավթային դարաշրջան», այս կապակցությամբ ասում է Ֆրանսիայի վարչապետ Դոմինիկ դը Վիլպենը: Իսկ ԱՄՆ նախագահ Ջորջ Բուշը վերջերս ամերիկացիներին խորհուրդ տվեց քիչ երթեւեկել անձնական ավտոմեքենաներով: Իրավիճակը հետզհետե բարդանում է:

Հետզհետե կարետրվում է բնական գազը, որի պաշարները նավթի պաշարների սպառումից հետո կբավականացնեն եւս մի քանի տասնամյակ: Ընդսմին այրվելիս գազն արտազատում է ավելի քիչ վնասակար նյութեր: Բայց գազի պաշարները եւս կարող են սպառվել: Հյուսիսային Ամերիկայի երկրները ներկայումս սպիտված են գազ ներկրել Եվրոպայից, Աֆրիկայից եւ Ասիայից: Հարկ է լինում գազը հեղուկացնել եւ հատուկ նավերով տեղափոխել: Անհնար է գազատարներ կառուցել Ատլանտյան կամ Խաղաղ օվկիանոսների վրայով: Գազ արդյունահանող երկրների ծովափնյա շրջաններում կառուցվում են գազի հեղուկացման կայաններ, եւ դրա շնորհիվ հնարավոր է դառնում գազի առեւտուրն ամբողջ աշխարհում:

Էներգամատակարարումը հետզհետե սանում է քաղաքական-ռազմավարական նշանակություն: «Աճում է կախվածությունը քաղաքականապես եւ տնտեսապես անկայուն երկրներից: Մատակարարմանն առնչվող վտանգը մեծանում է», նշվում է «Պրոգնոս» խորհրդատվական ընկերության հետազոտության մեջ: Աշխարհում «մերժված» այնպիսի երկրներ, ինչպիսիք են Սուդանը եւ Բիրման, իրենց էներգետիկ պաշարների շնորհիվ վերսին արժանանում են ոմանց բարեհաճ վերաբերմունքին: Այսպես, կասկածներ կան, թե Չինաստանը Սուդանին զենք է խոստացել հումքի մատակարարումների դիմաց:

Պատրաստեց Պ. ՔԵՇԻՇՅԱՆԸ

Մակարոնեղենի հայրենիքը Չինաստանն է

Հուանհեի գեսաբերանում կատարված հնագիտական պեղումների ժամանակ հայտնաբերվել է 4000 տարի առաջ պատրաստված լապշա (արիշտա): Դրա քարացած մնացորդները պարունակող կավե անոթը հայտնաբերվել է Նոր քարի դարի մի բնակատեղիում անցկացված պեղումների ընթացքում:

Լակիա կոչվող այդ հնավայրը հաճախ համեմատում են հոչակավոր Պոմպեյի հետ: Հնագետները պարզել են, որ մոտ 4000 տարի առաջ Լակիան հայտնվել է սաստիկ հեղեղման գոտում: Գիտնականների կարծիքով, ջուրն այնքան արագ է բարձրացել, որ մարդիկ չեն հասցրել թողնել իրենց կացարանները եւ հասնել ապահով վայր: Մարդկանց ոչնչացրած տարերքը, սակայն, անգնահատելի ծառայություն է մատուցել հնագետներին. կացարանների ամբողջ կահավորանքը պահպանվել է մինչեւ օրս: Տներից մեկում հայտնաբերվել է լապշայով լի անոթը:

Հետազոտությունից պարզվել է, որ չինական արիշտայի պատրաստման տեխնոլոգիան 4000 տարվա ընթացքում փաստորեն չի փոխվել: Հնագետներին վկայակոչելով, BBC-ն նշում է, որ հնում խոհարարները լապշայի խմորը մի քանի անգամ շաղախել եւ ոլորել են, ինչպես առ այսօր անում են աշխարհի չինական ռեստորանների խոհարարները: Սակայն, ի տարբերություն համապատասխանաբար բրնձի եւ ցորենի ալյուրից պատրաստվող չինական արիշտայի կամ իտալական մակարոնի, հնում խմորը պատրաստել են կորեկի զանազան տեսակներից:

Հնագետների հայտնագործությունը հաստատում է այն վարկածը, որ մակարոնեղենի հայրենիքը Չինաստանն է, որտեղից ասիճանաբար տարածվել է ամբողջ աշխարհում:

Պ. Ք.

Կենտրոնական բանկի խորհրդի հանդիպումը Վերակառուցման եւ զարգացման եվրոպական բանկի տնօրենների պատվիրակության հետ

Կենտրոնական բանկի նախագահի տեղակալ Արթուր Ջավադյանը եւ ԿԲ խորհրդի անդամները հանդիպեցին Վերակառուցման եւ զարգացման եվրոպական բանկի տնօրենների պատվիրակության հետ, որը գլխավորում էր տնօրենների խորհրդի անդամ Միխայել Նյումեյերը:

ԿԲ նախագահի տեղակալ Արթուր Ջավադյանը ներկայացրեց այն բարեփոխումները, որոնք առաջիկա տարիներին իրականացնելու է ԿԲ-ն. մասնավորապես՝ սղաճի նպատակադրման, ֆինանսական համակարգի միասնական կարգավորման եւ վերահսկողության համակարգի ներդրման, կորպորատիվ կառավարման, հիփոթեքային վարկավորման, ֆինանսական դիտարկումների կենտրոնի եւ այլ հայեցակարգերը:

ԿԲ խորհրդի անդամները եւ ստորաբաժանումների ղեկավարները մանրամասն ներկայացրեցին այդ հայեցակարգերը եւ պատասխանեցին Վերակառուցման եւ զարգացման եվրոպական բանկի տնօրենների պատվիրակության անդամների հարցերին:

Պարոն Նյումեյերը շնորհակալություն հայտնելով մանակրկիս ներկայացման համար, նշեց, որ Վերակառուցման եւ զարգացման եվրոպական բանկն աջակցելու է ՀՀ ԿԲ-ին այդ բարեփոխումների իրականացման գործում:

ՀՀ ԿԲ մամուլի ծառայություն

Կենտրոնական բանկը տեղեկացնում է

ՀՀ կենտրոնական բանկի նախագահի հոկտեմբերի 12-ի որոշմամբ գրանցվել է «Հայգյուղփոխբանկ» կոոպերատիվի «Վեդի» մասնաճյուղը՝ ք. Վեդի, Արարատյան 61 հասցեում:

ՀՀ ԿԲ մամուլի ծառայություն

Կորել է

Կամո Ալեքսանդրի Պողոսյանի դիպլոմը, N 001444, տրված 02.07.1984 թ. Երեւանի ժողովրդական տնտեսության ինստիտուտի կողմից, գրանցման համար 597:
Համարել անվավեր

ԾԱՆՈՒՑՈՒՄ

ԱՃՈՒՐԴ ԱՄԵՐԻԿՅԱՆ ԴԵՍՊԱՆԱՏԱՆԸ

Աճուրդի են հանվում գրասենյակային ու բնակարանային կահույք, համակարգիչներ, մեքենաներ եւ այլ ապրանքներ: Աճուրդային վաճառքը կկայանա 2005 թ. հոկտեմբերի 22-ին եւ 23-ին, ժամը 10:00-19:00 ԱՄՆ դեսպանատան պահեստում, որի հասցեն է Չարբախ, Արարատյան 90: Ապրանքները կարող եք զննել ուրբաթ օրը, հոկտեմբերի 21-ին, ժամը 10:00-19:00 եւ շաբաթ օրը՝ հոկտեմբերի 22-ին ժամը 9:00-10:00: Զննումն անվճար է:

Լոտերը վաճառվելու են այնպես, ինչպես կան (ԱՄՆ դեսպանատունը վաճառքի հանված ապրանքների որակի վերաբերյալ երաշխիքներ չի ապահովում): Կիրառվող աճուրդային վաճառքի նոր ձեւը թույլ է տալիս գնել լոտի առանձին իրեր. եթե ուզում եք մահճակալ, ապա կարող եք գնել միայն մահճակալը:

Պահեստ մուտք գործելու համար օգտվեք Շահուրի փողոցի կողմի մուտքից:

Այն ֆիզիկական/իրավաբանական անձինք, ովքեր մաքսային վճարումներից զերծ գնումներ կատարելու իրավունք չունեն, պարտավոր են ապրանքը գնելուց հետո ՀՀ համապատասխան մարմինների հետ կարգավորել հարկային եւ մաքսային վճարումների հետ կապված հարցերը:

Մանրամասն տեղեկությունների համար կարող եք այցելել www.usa.am էջի հայտարարությունների բաժին:

• ՋՐՄՈՒՂ-ԿՈՅՈՒՂԻ •
ԵՐԵՎԱՆԻ ԷԶԿ

ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՄՐՑՈՒՅԹ

Երեւանի «Ջրմուղ-կոյուղի» ՓԲԸ-ն հայտարարում է մրցույթ հետեւյալ աշխատանքների կատարման նպատակով

- «ԵՋԿ ՓԲԸ մասնաճյուղերում ծախսաչափերի էլեկտրասնուցման իրականացում եւ տվիչների միացում»,
- «ԵՋԿ ՓԲԸ էլեկտրոնային չափիչ սարքավորումների անխափան աշխատանքն ապահովող պահեստային սնուցման աղբյուրների եւ ավտոմատիկայի սարքերի գնում ու տեղադրում»:

Շահագրգիռ կազմակերպություններն անհրաժեշտ տեղեկություններ կարող են ստանալ Երեւանի «Ջրմուղ-կոյուղի» ՓԲԸ Արտադրատեխնիկական բաժնից, հեռախոս՝ 56-13-26, 56-93-49:

Գնային առաջարկների ներկայացման վերջնաժամկետն է.

- սույն հայտարարության թիվ 1 կետով նախատեսված աշխատանքի մասով՝ 2005 թ. հոկտեմբերի 25-ը, ժամը 15.00: Գնային առաջարկներով փակ ծրարները կբացվեն 2005 թ. հոկտեմբերի 25-ին, ժամը 15.00.
- սույն հայտարարության թիվ 2 կետով նախատեսված աշխատանքի մասով՝ 2005 թ. նոյեմբերի 14-ը, ժամը 15.00: Գնային առաջարկներով փակ ծրարները կբացվեն 2005 թ. նոյեմբերի 14-ին, ժամը 15.00:

Հասցեն՝ ք. Երեւան, Աբովյան 66 ա, 1-ին հարկ:

Մրցութային հանձնաժողով

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ ՄՐՑԱԿՑԱՅԻՆ ԲԱՆԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

«Պետական գնումների գործակալություն» ՊՈԱԿ-ն (պատվիրատու) ՊԳԳ - ՄԲԱՊՁԲ - 05/21 ծածկագրով կազմակերպում է մրցակցային բանակցություններ՝ **ՀՀ ոստիկանության կարիքների համար հանդերձանքի եւ փափուկ գույքի ձեռքբերման նպատակով:** Հրավեր ստանալու համար անհրաժեշտ է 750 ՀՀ դրամ փոխանցել «ԲՏԱինվեստբանկ» Հ/Հ 175004670790 «ԳՈՀԱԿ» ՍՊԸ-ին եւ սույն հայտարարության հրապարակման օրվան հաջորդող 8 աշխատանքային օրվա ընթացքում դիմել պատվիրատուին հետեւյալ հասցեով՝ ք. Երեւան, Կոմիտասի պ., 54/բ, հեռ.՝ 28-93-25, Հ. Այունցին:

Հրավերը անձին տրվում է անձը հաստատող փաստաթղթի, իսկ կազմակերպության անունից հանդես գալու դեպքում՝ նաեւ անձի լիազորությունները հավաստող համապատասխան փաստաթղթի հիման վրա: Հայտերը պետք է ներկայացնել մինչեւ դրանց բացման պահը՝ սույն հայտարարության հրապարակման օրվան հաջորդող 10-րդ աշխատանքային օրվա ժամը 12:00:

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Հրապարակվել է ՀՀ ֆինանսների եւ էկոնոմիկայի նախարարության «Գնումների պաշտոնական տեղեկագիր» 2005 թվականի N 12(77) համարը, որում հրապարակվել են հետեւյալ նյութերը՝

- ՀՀ ֆինանսների եւ էկոնոմիկայի նախարարի հրամաններ
- 28 քաղ մրցույթների մասին հայտարարություններ
- 51 կնքված գնման պայմանագրերի մասին հայտարարություններ
- 1 հայտարարություն:

ՀՀ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ԵՎ ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ԳՈՎԱԶԴԻ ՀԱՄԱՐ ԶԱՆԳԱՀԱՐԵԼ՝ 58-24-83

Լրատուական գործունեություն իրականացնող՝ «Ազգ օրաթերթ» ՍՊԸ, Երեւան, Հանրապետության 47: Պետական գրանցման վկայականի համարը՝ 02 Ա N 047261, տրված՝ 17.02.00 թ.:
Թողարկման պատասխանատու, գլխ. խմբ. Յակոբ Աւետիսեան: Տպաքանակ՝ 3000, ստորագրված է տպագրության՝ 14.10.2005, գինը՝ 100 դրամ, տպագրում է «Գինդ» տպագրատանը:

Azg
Ազգ
18 ՀՈԿՏԵՄԲԵՐ 2005 ԵՐԵՔՇԱԲԹԻ 187 (3353)

Ռասուլ Գուլիեւին ձերբակալել են Ուկրաինայում

Ինտերֆաքսը հաղորդում է, որ Ադրբեջանի խորհրդարանի նախկին նախագահ Ռասուլ Գուլիեւը Լոնդոնից Բաքու ճանապարհին ձերբակալվել է Սիմֆերոպոլի օդանավակայանում: Դեմկուսի ներկայացուցիչները, ըստ BBC-ի, ասել են, որ ադրբեջանական իշխանությունները թույլ չեն տվել Բաքվում վայրէջք կատարել այն ինքնաթիռին, որում գտնվում էր Ռասուլ Գուլիեւը: Ցարտերային թռիչք իրականացնող լոնդոնյան ընկերությունը հաղորդել է, որ Գուլիեւը «հրաժարվում է թռիչքը շարունակել Բաքու»:

Ուկրաինայի ՆԳ մամուլի խոսնակն ասել է, որ Գուլիեւի նկատմամբ հայտարարված է միջազգային հետախուզում, եւ նա ձերբակալվել է ադրբեջանական կողմի խնդրանքով: Ինտերֆաքսի եւ BBC-ի տեղեկությունից պարզ չի դառնում՝ Սիմֆերոպոլից Լոնդոն հետ վերադարձած օդանավում եղել է Գուլիեւը, թե՞ նա պահվել է Ուկրաինայում:

Տես նաեւ էջ 5

Ոչ թե տեղական, այլ՝ ցեղական

ՏԻՄ ընտրությունները հաճախ համայնքները բաժանում են երկու կամ ավելի թշնամի ճամբարների

ԹԱԹՈՒԼ ՀԱԿՈԲՅԱՆ

Հոկտեմբերի 23-ին Արագածոտնի, Գեղարքունիքի եւ Շիրակի մարզերում կայանալիք ընտրություններով կավարտվեն Հայաստանի 2005 թ. տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունները: Այդ օրը Աղարան խաղաղ ընտրություն չի լինի, որովհետեւ խաղաղության բոլոր երեք թեկնածուները ինքնաբացարկ են հայտնել: Հայկական ընտրական մշակույթում, սա, անկասկած, անախադեմ է: Ոչ պակաս ուշագրավ է Շիրակի մարզի Սալուս գյուղի դեպքը. այստեղ ընդհանրապես ոչ մեկը ցանկություն չի հայտնել դառնալու համայնքապետ: Իսկ ՏԻՄ-2005-ի գագաթնակետը Նոր Հաճնը խաղաղ եր, որտեղ համայնքապետ ընտրվեց մադասպան Արմեն Քեչիշյանը:

Անցնող կիրակի ընտրություններ անցկացվեցին Լոռու, Տավուշի եւ Արմավիրի մարզերի համայնքներում: Ընդհանրապես, ի տարբերություն նախագահական եւ խորհրդարանական ընտրությունների, որոնք Հայաստանում սովորաբար կեղծվում են, ՏԻՄ ընտրությունները ունեն իրենց յուրահատկությունները: Ասել, թե ՏԻՄ ընտրությունները չեն կեղծվում կամ համայնքներում ընտրակաշառք չեն բաժանում, մարդկանց չեն ծեծում եւ ահաբեկում, արդարացված չի լինի:

Տես էջ 3

Չին տիեզերագնացները վայրէջք կատարեցին

Չինական «Շենչժոու-6» տիեզերանավը երկու տիեզերագնացներով երեկ առավոտյան վայրէջք է կատարել ՉԺՀ հյուսիսում՝ Ներքին Մոնղոլիայի շրջանում: Սինհուա գործակալությունը հաղորդում է, որ տիեզերագնացներ Ֆեյ Ցզյունլունը եւ Նե Հայշենը տիեզերքում մնացել են 5 օր: Նրանք թռիչքն իրականացրել են Չինաստանի արձակած երկրորդ օդաչուավոր տիեզերանավով: Չինաստանն աշխարհում երրորդ երկիրն է, որը կարողացել է մարդ ուղարկել տիեզերք ԽՍՀՄ-ից եւ ԱՄՆ-ից հետո:

Նախորդ վայրէջքի վայր էին ուղարկվել ուղղաթիռներ, փրկարարներ եւ բժիշկներ: Սինհուա գործակալության տվյալներով՝ անձնակազմն իրեն լավ է զգում: Երկրի շուրջը կատարած 30-րդ պտույտի ժամանակ տիեզերանավը հաջվարկային հետագծից փոքր-ինչ շեղվել եր Երկրի ձգողական ուժի հետեւանքով: Տիեզերանավի առագացուցիչների միջոցով իրականացված ուղեծրի ճշգրտումը «Շենչժոուին» թույլ եր տվել բարձրանալ 800 մետրով: Մասնագետներն ասում են, որ նման գործողություններ ուղեծրում բավական հաճախ են իրականացվում:

«Շենչժոու-6» տիեզերանավն ուղեծիր արձակվեց ՉԺՀ-ում առաջին օդաչուավոր թռիչքի իրականացումից ճիշտ 2 տարի անց: Պեկինը հուսալի կայական կարետրություն է տալիս իր տիեզերական ծրագրին՝ այն համարելով ազգային հպարտության եւ միջազգային ճանաչման աղբյուր: BBC-ի տեղեկությունների համաձայն, առաջիկա 5 տարում Չինաստանը մտադիր է երկրաբուրջ ուղեծրում սկսել սեփական տիեզերակայանի կառուցումը, իսկ ժամանակի ընթացքում տիեզերագնացներ ուղարկել Լուսին:

Պ. Ք.

Հոկտեմբերի 18-27-ը ԼՂՀ-ում կանցկացվի մարդահամար

ՍՏԵՓԱՆԱԿԵՐՏ, 17 ՀՈԿՏԵՄԲԵՐ, ՆՈՅՅԱՆ ՏԱՊԱՆ: ԼՂՀ հոչակումից ի վեր առաջին մարդահամարին վերաբերող հարցեր են քննարկվել ԼՂՀ նախագահ Արկադի Ղուկասյանի եւ Հայաստանի ազգային վիճակագրական ծառայության ղեկավար Ստեփան Մնացականյանի Ստեփանակերտում կայացած հանդիպմանը: Ինչպես տեղեկացրեցին ԼՂՀ նախագահին առընթեր տեղեկատվության գլխավոր վարչությունից, ԼՂՀ-ում մարդահամարը կանցկացվի հոկտեմբերի 18-ից 27-ը: ԼՂՀ ղեկավար Արկադի Ղուկասյանը համոզմունք է հայտնել, որ այդ կարեւորագույն պետական միջոցառումը կանցնի բոլոր անհրաժեշտ պահանջներին համապատասխան: Միաժամանակ նախագահը նշել է, որ մարդահամարի արդյունքում ստացված տվյալները կօգտագործվեն երկրի սոցիալ-տնտեսական զարգացման հեռանկարների համար, ինչպես նաեւ հանրապետության կենսագործունեության տարբեր բնագավառներում:

Համանախագահները կհանդիպեն Վաշինգտոնում

ԲԱՔՈՒ, 17 ՀՈԿՏԵՄԲԵՐ, ԱՐՄԵՆՊՐԵՍ: Ընթացիկ շաբաթվա վերջին-եկող շաբաթվա սկզբին սպասվում է ԵԱՀԿ-ի Մինսկի խմբի համանախագահների հանդիպումը Վաշինգտոնում: Այդ մասին «Թրենդ» գործակալությանը տված բացառիկ հարցազրույցում հայտնել է Մինսկի խմբի ռուսաստանցի համանախագահ Յուրի Մերզլյակովը: Նա նշել է, որ ԱՄՆ-ի, Ֆրանսիայի, եւ Ռուսաստանի միջնորդներին անհրաժեշտ է խորհրդավորություններ անցկացնել եւ քննարկել դարաբաղյան հակամարտության խաղաղ կարգավորման գործընթացի ներկա փուլը: Մերզլյակովը ժխտել է հոկտեմբեր ամսվա ընթացքում համանախագահների՝ տարածաշրջան այցի հնարավորությունը: Նա ասել է, թե առայժմ վերջնականորեն համաձայնեցված չէ այն տեղեկատվությունը, որ Լյուբլյանայում ծրագրվում է Մինսկի խմբի համանախագահների հանդիպումը Ադրբեջանի եւ Հայաստանի արտաքին գործերի նախարարների հետ: Միայն Լյուբլյանայում դիվանագետների հանդիպումից հետո հնարավոր կլինի ավելի կոնկրետ խոսել ԵԱՀԿ-ի Մինսկի խմբի առաջիկա ոլանների ու գործունեության մասին, ավելացրել է ռուսաստանցի համանախագահը:

ԲՅՈՒՋԵ 2006

Համարյա բոլոր բյուջետային աշխատողների աշխատավարձի բարձրացում

Եկող տարի առաջնային բուժօգնությունն անվճար կլինի

ՆԱՆԱ ՊԵՏՐՈՍՅԱՆ

Առողջապահության ոլորտին եկող տարվա բյուջեից հատկացվելու է 39,1 մլրդ դրամ՝ 22 տոկոսով ավելի, քան այս տարի ոլորտին տրվածը: Այս աճը հնարավոր է դարձրել 2006-ին ողջ առաջնային բուժօգնությունը, բացառությամբ ատամնաբուժական ծառայության, անվճար իրականացնելը: Արտոնյալ պայմաններով եւ անվճար տրամադրելիք շուրջ 250 անուն դեղորայք եւ անհրաժեշտ բժշկական պարագաներ ձեռք բերելու համար տրամադրվել է 1,4 մլրդ դրամ: Անվճար դեղեր ստանալու իրավունքը վերապահված է 8 տարեկան երեխաներին, 65 տարեկանից բարձր մարդկանց՝ անկախ սոցիալական վիճակից, եւ 18-65 տարեկան սոցիալապես անապահով անձանց: Շտապօգնության ծառայությանը հատկացվել է 1 մլրդ դրամ: Եվ առաջին անգամ բյուջեից 343 մլն դրամ գումար է տրամադրվելու բուժհիմնարկների նորոգման համար: Նախատեսված է նաեւ ոլորտի աշխատողների աշխատավարձի բարձրացում:

Առողջապահության նախարար Նորայր Դավիդյանի հավաստմամբ տրամադրելիք գումարը հնարավորություն կտա վերջին տարիներին առողջապահության ոլորտում առկա զարգացման մակարդակը պահպանել:

Բազային կենսաթոշակը կավելանա 250 դրամով

Սոցիալական ապահովության պետական հիմնադրամի եկող տարվա բյուջեն աճել է 10,9 տոկոսով եւ կազմում է 94 մլրդ 590 մլն 952 հազար դրամ: Միջին ապահովագրական կենսաթոշակը լինելու է 11 հազար 508 դրամ: Բազային կենսաթոշակը 4250 դրամ կկազմի: Միջին ապահովագրական սաժի համար տրվող հատուցումը մեկ տարվա համար այս տարվանից ավել կլինի 20 դրամով եւ կկազմի 180 դրամ:

Ակտիվ սոցիալական վճար կատարողների թիվը՝ 430 հազար, չի ավելացել, բայց եւ չի պակասել: Նրանց կատարած վճարները բաժանվում է 540 հազար կենսաթոշակառուների:

Սոցիալական վճարների հավաքումն այս տարվանից կատարում են հարկային մարմինները, եւ 9 ամիսների տվյալների հիման վրա կարելի է փաստել արդյունավետությունը՝ այս տարի հավաքվել է 46 մլրդ 101 մլն դրամ, ինչը նախորդ տարվա ցուցանիշից 12 միլիարդով ավելի է: Սոցիալական ապահովության պետական հիմնադրամի նախագահ Վազգեն Խաչիկյանի տեղեկացմամբ հիմնադրամի մուտքերի 60 տոկոսը ստացվում է բյուջետնիկներից, մինչդեռ տնտեսության 75 տոկոսը մասնավոր հատվածն է: Խաչիկյանի կարծիքով խնդիրը ոչ այնքան սվերային աշխատատեղերի բացահայտումը, որքան աշխատավարձի չափի բացահայտումն է:

Տես էջ 2

Թռչնագրիպի հավանականությունը Հայաստանում քիչ է

Մինչ օրս վարակի դեպք չի գրանցվել



Եղանակն ի շահ մեզ է աշխատում: Թռչունները տարվա այս ժամանակահատվածում մեր երկրից չվում են եւ ոչ թե գալիս: Այս պարագան թռչնագրիպից ապահովագրվելու կարեւոր միջոց է: Բայց որեւէ վայրի թռչնի երթուղի պարտադրել չես կարող: Իսկ մեզ մոտ որսով տարված ու այդ գործը բիզնես դարձրած մարդիկ քիչ չեն, եւ անհրաժեշտ է առժամանակ հրաժարվել վայրի թռչնի մսից: Բնապահպանության նախարար Վարդան Այվազյանը պատգամավորի անհանգստությանն այսքիսի պատասխան տվեց:

Առողջապահության նախարար Նորայր Դավիդյանը տեղեկացրեց, որ ամեն շաբաթ տարածաշրջանի կտրվածքով տեղեկություններ են ստացվում թռչնագրիպի մասին եւ ամեն ինչ արվում է Հայաստանում թռչնագրիպի դեպքերը կանխարգելելու համար: Արդեն փորձում են ձեռք բերել համապատասխան պատվաստանյութ:

Նախարարի տեղեկացմամբ թռչնագրիպի դեպք արձանագրվել է նաեւ 1918 թվականին, որը խլել է 50 միլիոնից ավելի կյանք:

Ն.Պ.

ԱԶԳ

ԸՆԹԱՑԻԿ

Ամեն ինչ առավել քան լուրջ է

Մեծահոգի ենք. թուրքական բիզնեսը խրախուսում ենք սեփական առողջության հաշվին

Այն, որ հայերս առաջադեռն ենք, սիրում ենք հարեւաններին լավություն անել, որ «վերջին շաքիկն» էլ կսանք դիմացինին, ասում ենք ոչ միայն մենք: Սրա մասին խոսում են մեզ ճանաչող տարբեր ազգեր: Սակայն նոր ենք իմանում, որ սեփական առողջության գնով պատրաստ ենք հարուստացնել հարեւան եւ այն էլ անբարյացակամ պետությանը: Խոսակցություններ են պտտվում, թե թուրքական «Թադիմ» արեւաձաղիկը վնասակար է առողջությանը: Մասնավորապես երեկ խմբագրությունն ահազանգ ստացավ, որ Նորքի ինֆեկցիոն հիվանդանոցում թուրքական «Թադիմ» արեւաձաղկից ստամոքսային պրոբլեմներով հիվանդներ կան: Ահազանգողը նշեց, որ բարեկամուհուն բուժող բուժքույրերն ասել են, որ չնայած չեն կարող հստակ ասել՝ հիվանդի թունավորումը ջրի՞ց է, թե՞ թուրքական արեւաձաղկից, բայց հիվանդանոցում շատ են թունավորված երեխաները, որոնց ընդհանուր հատկանիշը «Թադիմ» արեւաձաղիկ օգտագործելն է:

Երեւանի հիգիենիկ հակահամաճարակային տեսչության պետ Արսյոմ Վանյանը **«Ազգի»** հետ զրույցում հավաստիացրեց, որ անձամբ խոսել է հիվանդանոցի տնօրենի հետ եւ վերջինս հերքել է, որ իրենց մոտ «Թադիմ»-ից թունավորվածներ կան: Չնայած թուրքական արտադրությանը սեփական երկրում խրախուսող հայրենակիցների հանդեպ բացասական վերաբերմունքին, ուրախ կլինեինք, որ հիվանդանոցի տնօրենի հերքումը պայմանավորված չլիներ արտրանքիոը ներկրող ընկերության ֆինանսական շահին չվնասելու ցանկությամբ: Պարզապես ավելացնենք, որ ահազանգողը նշեց, թե իրենց հիվանդը երկու շաբաթ առաջ մահամերձ վիճակում տեղափոխվել էր հիվանդանոց, իսկ երկու օր առաջ, հիվանդանոցից դուրս գրվելով, խորհուրդ տացել հանգստանալ համեմատաբար մաքուր օդում: Հիվանդն արդեն Դիլիջանում է, ինչի պատճառով չկարողացանք զրուցել նրա հետ: Բուժման ընթացքում երկու անգամ ստուգել են հիվանդի բնակարանի խմելու ջուրը, սակայն ոչ հերքել, ոչ էլ հաստատել են ջրի աղտոտվածության փաստը:

«Ազգի» հետ զրույցում թուրքական «Թադիմ» արեւաձաղիկ, «Ֆրիսո լեյ» չիպս եւ «Դիմես» մրգահյութ ներմուծող ընկերության տնօրեն Մանյա Հայրապետյանը հավաստիացրեց, որ իրենց ներկրած բոլոր ապրանքները համապատասխանում են անվտանգության բոլոր չափանիշներին: Նա նշեց, որ ամսական մոտ 16 տոննա «Թադիմ» է պտառվում տեղական շուկայում: Պտառվող այլ արեւաձաղիկների համեմատ գնային մեծ տարբերություն չունեցող «Թադիմը», չգիտես ինչու, մեծ պահանջարկ ունի: Գուցե պատճառը թուրքական ծագո՞ւմն է: Շատ կուզենայինք հավատալ, որ պտառողները արեւաձաղկի ծագման մասին ոչինչ չգիտեն, հակառակ դեպքում խնդիրն առավել քան լուրջ է: Թուրքական հագուստ, կենցաղային իրեր օգտագործող ամեն մի հայ, ցավոք սրտի, իր վարմունքը պատճառաբանում է գնի մատչելիությամբ, սակայն մոռանում, որ այն ի վերջո թուրքացված մշակույթ ունենալու հիմնական նախապայմաններից է:

ԹԱՄԱՐ ՄԻՆԱՍՅԱՆ

Հ. Գ. Խմբագրություն գնալու ճանապարհին, երբ մտածում էի նյութիս մասին, հանկարծ կենտրոնացա եւ հասկացա, որ նստած երթուղային տաքսու բոլոր ուղեւորները թուրքական երաժշտություն են լսում: Գուցե բոլորն անխիղճ ինձ նման՝ իրենց այդ օրվա գրելիք նյութի մասի՞ն էին մտածում: Հակառակ դեպքում ամեն ինչ առավել քան լուրջ է:

Օծվեց Սուրբ Երրորդություն եկեղեցին

2003 թ. Ամենայն հայոց հայրապետ Գարեգին Բ կաթողիկոսը նախաձեռնեց Սբ. Երրորդություն եկեղեցու կառուցում Մալաթիա-Սեբաստիայում: Այսօր համայնքի կենտրոնում վեր է խոյացել երջանկահիշատակ ճարտարապետ Բաղդիկ Արզումանյանի նախագծով կառուցված մի շքեղ եկեղեցի: Եկեղեցու բարերարն է Լուիզ Մանուկյանը: Շաբաթ շուտով Սբ. Երրորդություն եկեղեցին ամբողջությամբ կօծվի Վեհափառ հայրապետի ձեռամբ:

Իսկ շաբաթ օրն օծվեց եկեղեցու փոքր ավազանը ձեռամբ Արարատյան թեմի առաջնորդական փոխանորդ Նավասարդ եպս. Կճոյանի: Արդեն մի քանի հարյուր հավատացյալներ ցուցակագրվել էին մկրտվելու համար:

Մ. Մ.



Համարյա բոլոր բյուջետային աշխատողների աշխատավարձի բարձրացում

1-ին էջից

Հանրակրթության զարգացում՝ ոլորտի մյուս ուղղություններում պահպանման հնարավորություն

68,1 միլիարդի շրջանակներում է գործելու եկող տարի ողջ կրթական համակարգը: Նախորդ տարվանից 10,7 միլիարդով ավելի կազմող բյուջեից 6,4 միլիարդը տրամադրվելու է ոլորտի աշխատակիցների աշխատավարձերի բարձրացմանը: Հանրակրթական դպրոցի ուսուցչի աշխատավարձը լինելու է 58 հազար 305 դրամ:

Բարձրացվելու է նաեւ հատուկ դպրոցների ուսուցիչների աշխատավարձը՝ 17 հազարից դառնալու է 30 հազար դրամ: Ասպիրանտների կրթաթոշակը ավելացել է կրկնակի՝ կազմել 10 հազար, հայագիտության ոլորտի ասպիրանտներինը եռակի՝ 15 հազար: Գիտնականի աշխատավարձը 22-ի փոխարեն կազմելու է 27 հազար դրամ:

Նախարար Սերգո Երիցյանի հավաստմամբ այսօր 139 ուսուցչի կարիք կա սահմանամերձ եւ բարձր լեռնային բնակավայրերում: Նախարարի գնահատականով այս բյուջեն իհարկե ավելին է քան ընթացիկ տարվանը, բայց փիչ է մրցունակ ոլորտ ունենալու համար:

Գիտության զարգացման համար՝ հայեցակարգ

Գիտությանը տրամադրելիք գումարը աճել է 1 միլիարդ դրամով, բայց դեռեւս չի նպաստում ոլորտի զարգացմանը, անգամ միջազգային ասպարեզում եղած արժեքավոր վարկի պահպանմանը: Եկող տարի գիտությանը տրվելու է 5,1 միլիարդ դրամ: Նախատեսվել է Գիտությունների ազգային ակադեմիայի մի քանի ինստիտուտների նորոգում:

Հայկական մշակույթը ներկայացվելու է Ֆրանսիայում եւ Ռուսաստանում

Մշակույթի ոլորտի հատկացումն ավելացվել է 2,5 միլիարդով եւ կազմելու է 8,4 միլիարդ դրամ: Եկող տարի կայանալիք մշակութային կարեւոր իրադարձություններից երկուսը լինելու են Հայաստանից դուրս՝ Ֆրանսիայում եւ Ռուսաստանում ներկայացվելու է հայկական մշակույթը: Երկու ծրագրերի համար ծախսվելու է 702 միլիոն դրամ: Մշակույթի ոլորտի աշխատակիցների աշխատավարձի բարձրացում էլ է նախատեսված:

Սպորտի ոլորտին տրվելու է 1 միլիարդ 175 միլիոն դրամ: Այս գումարն աճել է 86 միլիոնով: Սպորտի ոլորտում իրականացվելու է ֆեդերացիաների ուղղակի ֆինանսավորում եւ 5 նոր ծրագիր՝ այդ թվում եւ ձմեռային սպորտաձեւերի ուղղությամբ:

Նոր, բայց կրկնօրինակվող շուններ Հանրայինի նոր եթերաշրջանում

Հանրային հեռուստատեսության, ռադիոյի, «Երեւան» կինոստուդիայի համար 2006 թվականի բյուջեում նախատեսված է 3, 1 միլիարդ դրամ: Հանրային ռադիոյին տրվելիք գումարը հնարավորություն է ընձեռելու տեխնիկապես լիովին վերազինելու ռադիոն: Ոչ լիովին, բայց տեխնիկապես վերազինվելու է նաեւ Հանրային հեռուստատեսությունը, որի նոր հաղորդակն արդեն փորձարկվում է: Բյուջեից սպասված գումարները տեխնիկական վերազինման ծրագրից բացի ծախսվելու են նաեւ նոր հեռուստահաղորդումների ստեղծման համար: Եկող տարի նոր եթերաշրջանում հանրային հեռուստատեսության եթերում լինելու են ռուսական հանրահայտ «Տիկնիկներ» եւ «Սով» շուների հայկական տարբերակները: Դրանց ստեղծմանը մասնակցելու են Ռուսաստանից հրավիրված մասնագետներ:

100 ՏԱՐԻ ԱՌԱՋ

Ալաշկերտին՝ եւս մի խարան ադրբեջանցիների խղճին

Դեռեւս սեպտեմբերին «Ալաշկերտ» հայրենակցական միությունը դիմում էր հղել ԼՂՀ իշխանություններին՝ կոչ անելով պետականորեն նշել 1905-1906 թվականների իրադարձությունների 100-ամյակը: Կոչին ի պատասխան՝ ստեղծվել է կառավարական հանձնաժողով, մշակվել համապատասխան ծրագիր: Մեկ շաբաթ առաջ Ալաշկերտի գյուղում տեղի ունեցավ հանրահավաք, տեղադրվեց հուշարձան, որի տեղում պետք է կառուցվի ջարդին զոհ գնացած ալաշկերտցիների հիշատակը հավերժացնող կոթող:

Իբրեւ միջոցառումների ընդհանուր ծրագրի շարունակություն՝ հոկտեմբերի 15-ին Բերձորում տեղի ունեցավ գիտաժողով, որին մասնակցում էին ճանաչված գիտնականներ, պատմաբաններ, նախկին քաղաքաղաքացիների սերունդներ:

Գիտաժողովում հնչած զեկուցումները բովանդակում էին երեք թեմատիկ ուղղություններ: Առաջինը ներկայացնում էր Քաջաքաղի պատմական անցյալը միջնադարից մինչեւ 1900-ականների սկիզբը: Զեկուցումների մյուս մասը նվիրված էր 1905-1920 թվականների իրադարձություններին, դրանց դրդապատճառներին ու հետեւանքներին, այսինքն այն ժամանակահատվածին, երբ տեղի ունեցավ տարածքի վերջնական հայաթափումը: Զեկուցումների, այսպես կոչված, երրորդ խումբը նվիրված էր Քաջաքաղից հայերի բնաջնջմանն ուղղված քաղաքականությանը:

Գիտաժողովի մասնակիցները փորձեցին պատասխան գտնել մի շարք հարցերի՝ կապված Քաջաքաղ-Աղահեճի պատմության տարբեր շրջափուլերի: Անուշադրության չմատնվեցին բոլոր ժամանակների քաղաքականության դրսեւորումները: Մեջբերվեցին հայկական, վրացական եւ ռուսական տարբեր աղբյուրների վկայությունները, որ Քաջաքաղը եղել է հայկական տարածք, եւ որի էթնիկ բնակչությունը՝ հայությունը, ստիպված է եղել տարագրվել՝ գոյատեւելու համար:

Զեկուցողների պնդմամբ՝ Քաջաքաղի տարածքը յուրացնելու նպատակով տարվել է հուշարձանների ոչնչացման, տեղանունների փոփոխման քաղաքականություն: Օրինակ, հնչեց այսպիսի վարկած, համաձայն որի՝ ադրբեջանցիները հայկական Աղահեճ-Լահեճը անվանել են Լաչին:

1992-ին ազատագրված տարածքների վերադարձ լինել չի կարող, բանզի դա նշանակում է թուլացնել Հայաստանի եւ Արցախի անվտանգությունը. սա գիտաժողովի մասնակիցների միասնական կարծիքն էր:

Գիտաժողովի ավարտից հետո մասնակիցներն այցելեցին Բերձորի հուշահամալիր, որտեղ տեղի ունեցավ հանրահավաք: Նրանք մեկ անգամ եւս ոչ ասացին դարասկզբին տեղի ունեցած ոճրագործությանը եւ կոչ արեցին դատապարտել մարդկության դեմ ուղղված բոլոր հանցագործությունները:

ԿԻՄ ԳԱԲՐԻԵԼՅԱՆ
Ստեփանակերտ

Հակամրցակցային համաձայնության դե՞մ

Ամենայն հավանականությամբ, Հայաստանում առաջին անգամ կհայտնաբերվի հակամրցակցային համաձայնության դեմ: Հավաստի աղբյուրներից հայտնի դարձավ, որ դա տեղի է ունեցել Երեւան-Սամբուլ-Երեւան չվերթի տոմսերի վաճառքի ժամանակ: Այդ չվերթը հայկական կողմից իրականացնում է «Արմավիան», թուրքական կողմից՝ «Ֆլայ էյրը»: Տոմսերի վաճառքն իրականացնում է «Թաուեր թրեվլ» ընկերությունը, որն էլ վերջերս «Բագրաս տուր» ընկերության հետ պայմանագիր է կնքել, որ հիշյալ չվերթի համար տոմսեր չի վաճառի «Ֆլայ էյրին», իսկ «Արմավիային» վաճառված տոմսերից յուրաքանչյուրից 50 դոլարը տրամադրել վերոնշյալ ընկերությանը: Հիշեցնենք, որ հակամրցակցային համաձայնության համար նախատեսված պատիժը կազմում է տվյալ խախտումը թույլ տված ընկերության շրջանառության 1 տոկոսի չափով տուգանք: Տնտեսական մրցակցության պաշտպանության հանձնաժողովը շուտով պետք է ճնշի այդ դեմքը:

Ա. Մ.

«ԱԶԳ» ՕՐԱԹԵՐԹ
Հրատարակության ԺԲ տարի

Հիմնադիր եւ հրատարակիչ
«ԱԶԳ ՕՐԱԹԵՐԹ» ՍՊԸ
Երեւան 375010 Հանրապետության 47
ֆաքս 374 1 562863
e-mail: azg2@arminco.com
www.azg.am

Գլխավոր խմբագիր
ՅԱԿՈԲ ԱՐԵՏԻՔԵԱՆ / հեռ. 521635

Խմբագիր
ՊԱՐՈՅՐ ՅԱԿՈԲԵԱՆ / հեռ. 529221

Լրագրողների սենյակ / հեռ. 581841

Համակարգչ. ծառայություն / հեռ. 582483

Շուրջօրյա լրահավաք ծառայություն
/ հեռ. 529353

Համակարգչային շարուածքը «Ազգ» թերթի

Թերթի նիւթերի ամբողջական թէ մասնակի արտատպումները տպագիր մամուլի միջոցով կամ ռադիոհեռուստատեսութեամբ առանց խմբագրութեան գրաւոր համաձայնութեան խստիւ արգելւում են համաձայն ՀՀ հեղինակային իրաւունքի մասին օրէնքի

Նիւթերը չեն գրախօսւում ու չեն վերադարձւում

"AZG" Daily NEWSPAPER
Editor-in-chief
H.AVEDIKIAN / phone: 521635
47 Hanrapetoutian st.,
Yerevan, Armenia, 375010

ԸՆԹԱՑԻԿ

Ծառայողական մեքենաներին տրվող 4 լիտր բենզինը բավարար չէ նախարարների, փոխնախարարների եւ նրանց հարազատների համար

Այդ «խեղճուկրակների» անշնական կարիքներն ավելին են պահանջում

2006 թ. պետական պաշտոնյաների ծառայողական մեքենաների համար օրական նախատեսվում է հատկացնել 10 լիտր բենզին մինչ այժմ հատկացվող 4 լիտրի փոխարեն: Ֆինանսների ու էկոնոմիկայի նախարարության կողմից պետական բյուջեի նախագծով սահմանված այս փոփոխությունն ակնհայտորեն պետական պաշտոնյաների զորեղ թելադրանքով է կատարված: Վերոնշյալ «խեղճուկրակները» այնքան դժվար վիճակում են, որ 4 լիտր բենզինի պատճառով «կախվածության մեջ են» ընկնում, քանի որ դա նրանց «չի բավարարում»: Ֆինանսների եւ էկոնոմիկայի նախարար Վարդան Խաչատրյանի՝ այս որոշման նման մեկնաբանությունը զարմացնում է պետական պաշտոնյաների ցինիզմից վաղուց արդեն չզարմացողներին անգամ:

Անտեղյակները գուցե այդքան էլ չպատկերացնեն, թե օրական 4 լիտր բենզինով որքան ճանապարհ կարելի է գնալ: Պարզաբանենք՝ օրական մոտ 40 կմ: Շա՞տ է դա, թե՞ քիչ: Դրա քիչ լինելուն դեռեւս հավատացողներին հայտնենք, որ ծառայողական մեքենաները մեր նախարարներին եւ փոխնախարարներին անհրաժեշտ են աշխատանքի գնալու, այնտեղից տուն վերադառնալու, կառավարություն կամ Ազգային ժողով գնալու համար: Եթե նկատի ունենանք, որ նախարարությունները, կառավարության եւ խորհրդարանի շենքերը գտնվում են մայրաքաղաքի կենտրոնում, ապա անհասկանալի է դառնում, թե մինչ այժմ հատկացվող օրական 4 լիտր բենզինը նրանք ինչպես էին կարողանում տպառել: Այսինքն, օրական քանի անգամ էին նրանց մեքենաները պտտվում վերոհիշյալ շենքերի շուրջը, որպեսզի 40 կմ-ը լրանար: Չխոսենք այն մասին, որ, օրինակ, թ. 3 կառավարական շենքը կառավարության շենքից մի քանի տասնյակ մետրի վրա է գտնվում, իսկ ֆինանսների եւ էկոնոմիկայի նախարարությունը՝ հենց կառավարության շենքում: Գուցե այս նախարարության նախարարն ու փոխնախարարները նույն շենքի միջանցքներո՞վ են մեքենաներով երթեւեկում:

Ժամանակին, երբ կառուցվում էր թ. 3 կառավարական շենքը, հանրապետության նախագահը կարծիք հայտնեց, որ այդ շենքին կառավարության շենքի մոտիկ գտնվելը կնվազեցնի անընդհատ չեն պտտվում իրենց նախարարության եւ կառավարության շենքերի միջեւ, ապա հարց է առաջանում, թե ինչ են անում իրենց հատկացված վառելիքը: Պատասխանը հավանաբար շարքային քաղաքացիներն ավելի լավ գիտեն: Նախարարներն ու փոխնախարարներն աշխատանքից հետո եւ շաբաթ հաճախ աշխատանքի ժամին ծառայողական մեքենաներով մեկնում են իրենց աշխատանքային «գերհոգնածությունը» թոթափելու խաղատներում, ռեստորաններում, գիշերային ակումբներում եւ զվարճանքի այլ վայրերում: Սրան էլ հավելենք, որ նույն ծառայողական մեքենաներով նրանց կանայք մեկնում են գնումներ կատարելու, իսկ երեխաները՝ դպրոց: Բնական է, որ պետական բյուջեով նախատեսված 4 լիտր բենզինն այս ամենի համար արդեն անբավարար կլինի: Հարկ է նաեւ նկատի ունենալ, որ շաբաթ հաճախ հատկապես նախարարներն ու գերատեսչությունների առաջին դեմքերը երթեւեկում են առավել վառելիքատար «մերսեդեսներով», ջիպորտային կարիքները: Դրա համար էլ, ինչպես նշում է Վարդան Խաչատրյանը, որոշվեց, որ բենզինով ապահովելու տարբերակը պետությունը գտնի: Եվ ոմանց անձնական կարիքների բավարարումը պետբյուջեի, այսինքն բոլորիս համար արժենում է 459 մլն դրամ կամ ավելի քան 1 մլն դոլար:

Երեկ քաղաքապետարանում տեղի ունեցած մամուլի ասուլիսի ժամանակ Երեւանի փոխքաղաքապետը հայտնեց, որ երրորդ կարգի 9 վթարային շենքերի ամրացման համար տրամադրվել է 658 մլն դրամ, իսկ այնպիսի շենքերը, որտեղ մարդիկ ապրում են ամեն օր շենքի փլվելուն սպասելով՝ 70-ն են: Սակայն պետությունը գտնում է, որ նախարարների կազմին, նրանց կանանց՝ խանութներ եւ երեխաներին՝ դպրոց պետական միջոցներով գնալը նախընտրելի է, քան եւ, ենթադրենք, 8 վթարային շենքեր ամրացնելն ու մարդկանց ամենօրյա վտանգից փրկելը: Իսկապես որ մեկնաբանություններն ավելորդ են:

ԱԲՈՒ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ



Ոչ թե տեղական, այլ՝ ցեղական

1-ին էջից

Պարզապես տեղերում գործում են նաեւ այլ տեխնոլոգիաներ, ընդ որում՝ մեծ տարբերություններ կան անգամ երկու հարեւան մարզերի միջեւ: Եթե, օրինակ, մարզպետը մարդասպան է կամ ոտղակի շարքային հանցագործ եւ «կասկածում», այդ մարզի համայնքներում աշխատում է ահաբեկչությամբ մարդկանց սարսափեցնելու տարբերակը:

Գյուղական եւ փոքր քաղաքային համայնքներում Հայաստանին բնորոշ ընտրական կեղտոտ տեխնոլոգիաները դեռեւ լիարժեք չեն գործում: Սովորաբար գյուղերում հատկապես է ընտրվում այն թեկնածուն, որն ունի ամենաշատ ազգականները: Ավելի պարզ՝ գյուղերում ոչ թե գյուղապետ են ընտրում, այլ՝ ցեղապետ: Վերջնական հաշվով, գյուղերը բաժանվում են թշնամի բանակների: Երբեմն թշնամիների են բաժանվում նույն ազգի երկու հաստվածները, երբ համայնքապետի աթոռի համար պայքարում են, օրինակ, երկու Պողոսյաններ: Այս ամենով՝ փոքր համայնքներում ընտրություններն անցնում են համեմատաբար ազնիվ ու արդար, քանի որ ե՛ւ դժվար է կեղծելը, ե՛ւ ամոթալի:

Արմավիրի մարզում ուշադրության կենտրոնում էջմիածինն էր: Ինչպես եւ սպասվում էր, հաղթեց այն թեկնածուն, որի պաշտպանում էր գեներալիտետը: Այս ընտրություններում գեներալիտետը պաշտպանում էր Գագիկ Ավագյանին, որն ստացավ մոտ 18 հազար քվե: Ըստ մեր աղբյուրների՝ այս ընտրություններում ամենաշատ ընտրակաշառքը բաժանվել է Վանաձորում (այս մասին կարդալ էջ 4), որտեղ հաղթել է գործող քաղաքապետ, հանրապետական Սամվել Դարբինյանը՝ ավելի քան 25 հազար ձայն: Անկուսակցական Գագիկ Հովսեփյանը, որին սատարում էին կոալիցիայի մյուս երկու կուսակցությունները՝ «Օրինաց երկիրը» եւ ՀՅԴ-ն, ստացել է մոտ 20 հազար: Լոռու մարզի Ստեփանավան եւ Տաշիր քաղաքներում գործող քաղաքապետներ Սարգիս Ղարաբեքիանը եւ Նշան Սողոյանը վերընտրվել են:

Տավուշի մարզի Բերդ քաղաքում համայնքապետ է ընտրվել Անդրանիկ Շառյանը՝ 2129 ձայն, մյուս երեք թեկնածուներից Հրաչիկ Աթոյանն ստացել է 792, Դավիթ Մելիքյանը՝ 610, Ազնիվ Մաթեւոսյանը՝ 111: Կենտրոնական ընտրական հանձնաժողովը երեկ նախնական տվյալներ չուներ մարզի Դիլիջան եւ Նոյեմբերյան քաղաքներից: «Ազգի» տեղեկություններով՝ Դիլիջանում Արմեն Սանթրոսյանը մոտ 150 ձայնի առավելությամբ հաղթել է գործող քաղաքապետ Ժորա Սահաքյանին, իսկ Նոյեմբերյանում նախկին քաղաքապետ Սերյոժա Ամիրաղյանը մոտ 60 ձայնի առավելությամբ հաղթել է գործող համայնքապետ Վանուշ Ամիրաղյանին:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ

Թաղապետների գրությունը «կատարված» աշխատանքի գրավական

Ինչին հավատում է Երեւանի փոխքաղաքապետը

Կիեւյան կամրջի վերանորոգման աշխատանքները վերջնականապես կավարտվեն նոյեմբերին: Այդ նպատակով հատկացված գումարը կազմել է մոտ 370 մլն դրամ: Ճոպանուղուն հատկացվել է 15 մլն դրամ, այստեղ էլ աշխատանքները կավարտվեն մինչեւ հոկտեմբերի վերջը: Այս մասին երեկ քաղաքապետարանում տեղի ունեցած մամուլի ասուլիսի ժամանակ հայտնեց փոխքաղաքապետ Վանո Վարդանյանը: Փոխքաղաքապետն այնուհետեւ ավելացրեց, որ Կարաքի լճի վերականգնման աշխատանքները նույնպես կավարտվեն հոկտեմբերի վերջին, եւ այդ ժամանակ նրա մի հատվածում կսկսի գործել սահադաշտը: Վերանորոգման եւ բարեկարգման աշխատանքներ են ընթանում նաեւ Հրազդանի կիրճում:

Վթարային 3-րդ կարգի 9 շենքերի նորոգման համար հատկացվել է 638 մլն դրամ: Արդեն նորոգվել են 3-ը: Իսկ ընդհանուր առմամբ Երեւանում 70 վթարային շենքեր կան: Վանո Վարդանյանի հավաստմամբ, քաղաքապետարանները ձմռան նախապատրաստման աշխատանքներ են տանում՝ նորոգում են շենքերի տանիքներ, մուտքերի ջրագծեր եւ կոյուղագծեր, տեղադրում մուտքերի դռներ, աղակեպատում մուտքեր: Երբ այդ կազմակերպությամբ մեր հարցն ուղղեցինք փոխքաղաքապետին, թե քաղաքապետարանը վստահ է, որ քաղաքապետարանները նման միջոցառումներ են իրականացնում, նա դրական պատասխանեց, իր ասածը հիմնավորելով, որ քաղաքապետարանը թաղապետներից սանում է... գրություններ կատարված աշխատանքի վերաբերյալ: Քաղաքապետարանն էլ ոչ թե սուգում է՝ դրանք կատարվել են, թե՞ ոչ, այլ միայն «ուսումնասիրում է»: Ցանկալի կլիներ, իհարկե, հավատալ Վանո Վարդանյանի ասածներին, բայց որ համաշխարհային ներդրումներ դարձած նախկին ԺԷԿ-երն, ըստ էության, միայն անվանումն են փոխել եւ բացի սպասարկման վճար հավաքելուց որեւէ աշխատանք չեն կատարում, անառարկելի իրողություն է: Անառարկելի իրողություն է նաեւ, որ թաղապետներին էլ այդ հանգամանքն առանձնապես չի հուզում:

Ջեռուցման առնչությամբ տեղեկացվեց, որ 40 լոկալ կաթսայատներ են ստեղծվել, որոնք կջեռուցեն 60 շենքեր: Նախորդ տարի ջեռուցվել են 20 շենքեր:

Ա. Մ.

Արեւաշող գյուղում ընտրվեց նոր գյուղապետ

Ավարտին են մոտենում ՏԻՄ ընտրությունները, որոնք յուրօրինակ քննություն են հանրապետությունից առաջ: Հոկտեմբերի 16-ին Լոռու մարզի Արեւաշող գյուղում տեղի ունեցան գյուղապետի եւ ավագանու ընտրություններ: Ինչպես տեղեկացանք թիվ 29/1 տեղամասի հանձնաժողովի նախագահ Գագիկ Մակարյանից, 3170 ծխամատյանով, իսկ փաստացի 2800 բնակչություն ունեցող Արեւաշող գյուղից ընտրելու իրավունք ունեն 1868-ը: Համայնքապետի աթոռին հավակնում էին գործող (9 տարի) գյուղապետ Ֆելիքս Ափաջանյանը եւ համագյուղացի Վարուժան Խաչատրյանը: Իսկ ավագանու 7 անդամների համար միայն 5 թեկնածու էր գրանցվել: Ընդհանուր առմամբ ընտրությունները անցան խաղաղ ու հանգիստ, գրանցվեց աննախադեպ մասնակցություն՝ 70-75 տոկոս: Հետաքրքրական էր, որ գյուղի գրեթե բոլոր տարեցները գալիս էին տեղամաս եւ իրենց քաղաքացիական պարտքը կատարում՝ որեւէ երիտասարդի կամ բարեկամի օգնությամբ: Կեսգիշերին ավարտվեց քվեաթերթիկների հաշվառումը եւ պարզ դարձավ, որ 1197 առկա քվեաթերթիկներից գործող գյուղապետը հավաքել էր 325 ձայն, իսկ մրցակիցը՝ 790, անվավեր էր ճանաչվել 82 քվեաթերթիկ: Շնորհավորելով նորընտիր գյուղապետ Վարուժան Խաչատրյանին, փորձեցի ճշտել, թե ի՞նչ ծրագրեր ունի:

Պրն Խաչատրյանը խոստացավ առաջիկա երեք տարիներին լուծել գյուղի ճանապարհի, գյուղապետարանի, ակումբի, սպորտային դահլիճի չլուծված հարցերը, երկրաշարժի եւ պատերազմի զոհերի հուշարձանների նորոգումը, լճի մաքրման աշխատանքները եւ այլն: Նախկին գյուղապետ Ֆելիքս Ափաջանյանը շնորհավորելով նորընտիր գյուղապետին, պատրաստ է օգնելու ու խորհուրդներ տալու, որպեսզի չլուծված հարցերը, որոնք ինքը չհասցրեց լուծել, համատեղ լուծեն:

ՄԱՔԻԹԵՏ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ
Լոռու մարզ-Երեւան

Ավտովթարից մահացել է ՀՀ նախագահի աշխատակազմի արարողակարգի բաժնի վարիչը

ԵՐԵՎԱՆ, 17 ՀՈԿՏԵՄԲԵՐ, ԱՐՄԻՆՖՈ: Զոհվել է Հայաստանի նախագահի աշխատակազմի արարողակարգի բաժնի վարիչ Մամիկոն Տոնոյանը:

Ինչպես հաղորդեցին Արտակարգ իրավիճակների վարչության մամլո ծառայությունում, ողբերգությունը տեղի է ունեցել հոկտեմբերի 15-ին, ժամը 21:55-ին մոտ՝ Երեւանի «Բելաջիո» ռեստորանից ոչ հեռու: «Ռենո» մակնիշի 30 ՍՍ 100 պետհամարանիշով ավտոմեքենան, որը վարել է Մամիկոն Տոնոյանը, շրջվել է եւ, մտնելով հանդիպակաց գիծ, բախվել է 65 LO 737 պետհամարանիշով «ԳԱԶ-3102» ավտոմեքենային: Մ. Տոնոյանը տեղում մահացել է: Նրա կինը՝ Հասմիկ Գալստյանը, որ նույնպես մեքենայում է եղել, տարբեր աստիճանի մարմնական վնասվածքներով տեղափոխվել է Գրիգոր Լուսավորիչի անվան բժշկական կենտրոն: Ներկայումս բժիշկները նրա վիճակը համարում են կայուն: Վթարի պատճառները պարզվում են:

Մամիկոն Տոնոյանի հուղարկավորությունը տեղի կունենա հոկտեմբերի 20-ին, ժամը 14:00-ին՝ Պուշկինի փողոցի 44 հասցեից: Նա ընդամենը 32 տարեկան էր:

Այս կապակցությամբ «Ազգը» խորապես ցավակցում է զոհվածի հարազատներին եւ ՀՀ նախագահի աշխատակազմին:

Ուղղում

«Ազգի» հոկտեմբերի 15-ի մշակութային ներդիրում, նկարիչ Հ. Հակոբյանի «Հայոց գրերի գյուտի 1600-ամյակին...» հոդվածի վերջաբանում ցավալի սխալ է սորդել. Շ. Շահնուրի՝ «Կը խորհիմ, որ մեր աշխարհը բան մը պիտի չկորսնէ, եթէ իր երեսէն հայը անհետանայ վերջնական չքացումով» խոսքերը մեր թերթում վերածվել են՝ **«մեր ներաշխարհը»**-ի:

Մենք ենք, մեր ... ձորերը

Վանաձորում, ինչպես Կիրովականում

Կիրակի օրը Վանաձորում քաղաքապետի եւ ավագանու ընտրություններ են տեղի ունեցել: Ըստ ԿԸՀ մամուլի քարտուղար Տովինար Խաչատրյանի՝ նախնական տվյալներով այստեղ քաղաքապետ է ընտրվել Սամվել Դարբինյանը՝ ստանալով 25014 ձայն, մյուս թեկնածուին՝ Գագիկ Հովսեփյանին ձայն է տվել 19800 մարդ, իսկ երրորդ թեկնածուի՝ Անդրանիկ Ղուկասյանի օգտին քվեարկել է 1283 ընտրող: Ընտրողների թիվը եղել է 104205, քվեարկությանը մասնակցել է 47790-ը, անվավեր է համարվել 1697 քվեաթերթիկ, անձեռնությունների թիվը 101 է: Լոռու մարզում դաշտական կարգով իր ընտրական իրավունքը վերականգնած 579 քաղաքացիների մի զգալի մասը հենց վանաձորցիներ են:

Երեւանից Վանաձոր մեկնող երթուղայիններին վրա գրված է՝«Կիրովական», սա մի վկայություն է առ այն, ինչն ամեն քայլափոխում Վանաձորում էլ էր տեսանելի՝ մարդիկ դեռ իրենց վանաձորցի չեն զգում, կիրովականցի են ու վերջ: Հասարակ վանաձորցիներից շատերն իրենց երկրի քաղաքացի չեն զգում, պատրաստ չեն պայքարելու իրենց իրավունքների համար, խեղճացած, կված են ու նրանց հետ կարող են վարվել ինչպես ուզում են: Վկան կիրակի օրն անցկացված Վանաձորի քաղաքապետի ընտրություններն են:

Վանաձորի ավտոկայանից դեպի մարզպետարան ճանապարհի խաչմերուկներից մեկի ցուցափեղկին փակցված 10-12 ընտրագովազդային պաստառներում գործող քաղաքապետ, քաղաքապետի թեկնածու Սամվել Դարբինյանի եւ հավանաբար նրա թիմակից ավագանու թեկնածուների պաստառներն էին, մի ուրիշ խաչմերուկի ցուցափեղկին՝ մյուս թեկնածու Գագիկ Հովսեփյանի եւ ենթադրաբար նրան մոտ կանգնած մի տասնյակի չափ ավագանու այլ թեկնածուների պաստառները: Օրը շաբաթ է, փողոցները՝ խաղաղ. ինձ հետ ընտրագովազդային պլակատներն ուսումնասիրող տարեց մի կնոջ հարցրի, թե արդյոք մտքում ծանրութեթեւ է անում, որ հաջորդ օրը ճիշտ ընտրություն կատարի, վերջինս շշմեց. «Ո՞ւմ են մի լավ բան արել էս «կիրոչկի» դեմքերը, որ ընտրության գնամ...»: Երկար փնտրեցինք նաեւ քաղաքապետի երրորդ թեկնածուի՝ Անդրանիկ Ղուկասյանի գովազդը, եվ վերջապես մի անկյունում նրան էլ գտանք. նախապես գիտեինք, եւ վանաձորցիներն էլ հաստատեցին, որ հիմնական մրցակցությունը Սամվել Դարբինյանի եվ Գագիկ Հովսեփյանի միջեւ է: Հաջորդ բանը, որ արեցինք՝ համար հյուրանոցային համար որոնելն էր. հենց այստեղ էլ պարզվեց, որ ինչ թե շատ տանելի երկու հյուրանոց կա՝ «Գուգարք», որը պատկանում է Գագիկ Հովսեփյանին, եւ գործող քաղաքապետին պատկանող «Արգիշտի»: Առաջինում համարների գինն սկսվում էր 8 հազար դրամից, երկրորդում գներն ավելի բարձր էին: Երկու օր հյուրանոցում ապրելու գաղափարից հրաժարվեցինք:

Միանգամից արձանագրենք այդ պահից ձեւավորված եւ երկու օրվա ընթացքում ամրապնդված մեր այն համոզմունքը, ինչն ամեն քայլափոխի վանաձորցիներն էլ էին հաստատում՝ կարեւոր չէ բոլորովին, թե որ կուսակցություններն էին պաշտպանում (կամ պաշտպանո՞ւմ էին արդյոք) երկու հիմնական թեկնածուներին. մրցակցությունն այստեղ բավական հզոր տնտեսական լծակների տիրապետող երկու անձերի միջեւ էր, մնացած ամեն ինչ սորոսաս էր երկու հարուստների լծակները պահելու կամ ավելացնելու մրցակցությանը: Այնպես որ անձամբ ես տեղական մասշտաբների այս մեծահարուստների հետեւում կուսակցական ենթատեքստը շատ չնչին եմ համարում եւ այդ մասին չեմ խոսելու: Վանաձորցիներն անգամ չգիտեին, թե նրանցից որն է կուսակցական կամ անկուսակցական (գիտեին միայն Ա. Ղուկասյանի կոմունիստ լինելու մասին): Մնացածն՝ ըստ հերթականության:

Շաբաթ օրը ոչ մեկին պաշտոնապես չներկայացա. պտտվեցի երկու հիմնական թեկնածուների նախընտրական շտաբների մերձակայքում, շատ բան տեսա եւ լսեցի, խոսեցի հարյուրավոր մարդկանց հետ, փորձեցի երկու օրով վանաձորցի դառնալ: Իմացա, որ շատերը գործազուրկ են, որ ով էլ ընտրվի՝ առանձնապես փոփոխություններ չեն սպասում. իշխանությունը մարմնավորող մարդիկ Վանաձորում պարզապես հզորներ են, որոնցից կարելի է միայն մի բան ուզել, տալն էլ՝ իրենց խղճին: Մի հետաքրքրական պատմություն ընկավ ականջս, որն ըստ վանաձորցիների, այստեղ սովորական եւ ընդունված բան է. վարձատրության ժամանակը, մարզպետը շատ քաղաքավարի շնորհակալություն է հայտնում՝ ասելով, թե հետո մի լավություն կանի:

Քաղաքը խղճուկ տպավորություն թողեց, բացառությամբ մեծահարուստներին պատկանող մի քանի նորակառույց օբյեկտների, մնացած ամեն ինչ հնաբոյր էր, չնորոգված ու հոգատար ձեռքի կարոտ, նախկին կանաչ քաղաքի պուրակները կրճատվել էին կիսով չափ. միակ մխիթարողը կիրովականցիների հումորն էր, որ անցածի նման իր տեղում էր: Իմացանք պետք եղավ կիրակի, Վանաձորի քաղաքապետի եւ ավագանու ընտրության օրը:

Ինչպես են վանաձորցիները քաղաքապետ ընտրում

Կիրակի առավոտյան առաջինը մտա մարզպետարանում տեղակայված թիվ 30 ընտրատարածքային հանձնաժողով, որի նախագահ Մինաս Սայադյանը նշեց, որ ընտրությունների նախապատրաստական աշխատանքն ըստ կարգի կատարված է եղել, ընտրացուցակները լիազոր մարմնի կողմից ճշգրտվել են, որից հետո նախապես հայտնի ընտրացուցակային անձեռնություններն էապես նվազել են՝ ամեն ինչ կարգին է: Իսկ նախապես մամուլի եւ հեռուստատեսության մակարդակով երկու հիմնական թեկնածուների փոխադարձ մեղադրանքների մասին էլ ասվեց, որ դա ՁԼՄ-ների արհեստականորեն ստեղծած հակասություն էր, իսկ իրավիճակն այլ է: Ըստ այդ իրավիճակի՝ երկու շտաբներից էլ միմյանց դեմ մեկական բողոք է ստացված եղել քարոզչական խախտումների վերաբերյալ, երկուսն էլ քննարկվել է եւ կողմերին պատասխան տվել:

Եղա Տիգրան Մեծի կենտրոնական փողոցում եւ նրա մերձակայքում տեղակայված տասնյակ ընտրական տեղամասերում՝ ընդ որում մեկ անգամ ժամը 11-12-ի միջակայքում, երկրորդ անգամ՝ երեկոյան 5-ից հետո: Առավոտյան վանաձորցիները հերթեր էին գոյացրել ընտրելու համար: Կարելի է ասել՝ այստեղ կար մի ընտրազանգված, որը կարծես շտապում էր քաղաքացիական պարտքն առագ կատարել ու գնալ իր գործին: Ընդհանուր առմամբ բուն տեղամասերում ամեն ինչ խաղաղ էր, հանձնաժողովի անդամները փորձում էին այնպես անել, որ կուսակումներ չստեղծվեն, դիտորդներն ու վստահված անձինք առանձնապես մեծ անհարմարություններ չէին նկատում, որին էլ հարցնում էինք ասում էին՝ մեկ-մեկ ծերերին ուղեկցում եւ օգնում են քվեարկելու նրանց ազգականները՝ սա է: Մի քիչ խանգարող էր այն հանրահայտ, ընտրական օրենսգրքից եկող բացը, երբ քվեարկելուց հետո պետք էր մոտենալ կնիք դնողին, հետո քվեաթերթիկը գցել քվեատուփերի մեջ: Իմ դիտած տասնյակից ավելի ընտրատարածքներից մեկ-երկուսն էին ընդարձակ, մյուսներում այնքան խիտ էր, որ հանձնաժողովի՝ ընթացքին հետեւող ավելի շարժուն անդամները կարող էին համարյա բաց ընտրախցիկում նկատել՝ ում օգտին քվեարկեց ընտրողը: Կարող էին՝ բայց ես այդպիսի բան չնկատեցի: Մի պահ կար, որ շատ էր վրդովվեցնում ընտրողներին. համարյա բոլոր ընտրատեղամասերում շատ էին այն մարդիկ, ովքեր իրենց անունը չէին գտնում: Նրանց ոտքակոխ էին բնակության վայրից տեղեկանք վերցնելու, ապա դատարան: Այդպիսի մարդկանց մի զգալի մասն այլեւս չէր վերադառնում, գնացողներից շատերն էլ պարզում էին, որ իրենք պետք է քվեարկեն քաղաքի մյուս ծայրում: Ըստ Լոռու մարզի առաջին ատյանի դատարանի աշխատակազմի ղեկավար Հնազանդ Հարությունյանի՝ դարձյալ «մեղավորը» համակարգիչն է, որ մի մասի ընտրատեղամասը փոխվել է, ընդ որում դատարան դիմածների մի զգալի մասը հենց տեղում պարզում էր, որ իր անունը մի ուրիշ ընտրատարածքում է: Ժամը 19.15-ի դրությամբ 269 վանաձորցի (10 տոկոս՝ Գուգարքից) էր դատական կարգով իր ընտրական իրավունքը հաստատել: Ի դեմ՝ ժամը 18.10, ըստ թիվ 30 ընտրական հանձնաժողովի Ստելլայի՝ Վանաձորում ընտրության էր մասնակցել 32230 ընտրող: Այսինքն՝ ստացվում է, որ հետագա ժամուկեսից ավելիի ընթացքում ընտրության է եկել 15 հազարից ավելի մարդ:

Բազմաթիվ օրինակներից նշենք մի քանի հատկանշական դեպք, որոնց դեպքում մարդիկ դուրս էին մնացել ցուցակներից: 30/33 տեղամասից ընտրելու ծանուցագիր ստացած կենսաթոշակառու Հասմիկ Սաֆարյանը, իր անունը ցուցակներում չգտնելով՝ զարմացավ. «Թուրքիայում, Ռուսաստանում գտնվող իմ հարեւանները կան, ես չէ՞»: Նրա ձեռքից վերցրել էին ծանուցագիրը, տվյալները գրել, իսկ նա ասում էր, որ դատարան ի վիճակի չէ, չի կարող գնալ: (Դժվար չէ ստուգել՝ նրա տեղը քվեարկվա՞ծ է, թե ոչ): Ներսիսյան նրբանցքի բնակիչ Ամալյա Հովսեփյանն իր ընտանիքի անդամների անունը գտել էր, իրենը՝ ոչ: Լոփզա Հակոբյանը 30/44 տեղամասում անունը չգտնելով՝ միտում էր տեսնում դրա մեջ. «Գործող քաղաքապետի ընտրողը չեմ՝ դրա համար»: Գագիկ Հովսեփյանի վստահված անձ Անուշ Մխիթարյանը (նույն ընտրատարածքից) 5 օր առաջ իր անունը ցուցակներում տեսել էր, ընտրության օրը՝ ոչ. նա գնաց դատարան: Քնարիկ Մաշինյանը դատարանում պարզելով, որ քվեարկելու է ոչ իր ընտրատարածքում, պատմեց իր եւ տնակային ավանից վտարված մյուս բնակիչների մասին, որոնք այսօր բոմժի կարգավիճակում լինելով՝ ընտրության մասնակցելիս էլ բարդություններ են հանդիպում:

Այսքանը բուն ընտրատարածքներում ընտրությունների մասին: Ավելացնեմ, որ երբ ընտրատեղամասում «Ընտրությունը ոնն է» կազմակերպության դիտորդները իմ հարցումներին ի պատասխան՝ ընտրությունները հանգիստ էին գնահատում:

Ինչ էր կատարվում ընտրատեղամասերից դուրս

Քաղաքում դրսից (Երեւանից) այլ լրագրողների չհանդիպեցի: Այստեղ իրենք իրենցով էին: Տեղամասերում էին նաեւ եվրոպացի դիտորդները, որոնք նույնպես, չիմանալով տեղական առանձնահատկությունները, հանդարտ կգնահատեն իրողությունը: Մինչդեռ իրական ընտրագործընթացները դրսում էին՝ նախընտրական շտաբներում եւ դրանց մերձակա տարածքներում: Ամբողջ շաբաթ օրը եւ կիրակի առավոտյան փողոցներում հանդիպում էի մարդկանց, ովքեր պատմում էին երկու կողմի էլ եւ հատկապես գործող քաղաքապետի շտաբների կողմից 2 հազար, երբեմն էլ՝ ավելի դրամ ընտրակաշառք, դեղորայք, կարտոֆիլ, օճի, նույնիսկ բաճկոն բաժանելու մասին, սակայն բուն փաստի ականատեսը չէի դառնում: Կիրակի, կեսօրից հետո ըմբռնեցի վանաձորյան ընտրակաշառքային տեխնոլոգիաների տրամաբանությունը եւ հետտրեն ընկա հետքին: Նախապես ասեմ, որ այն, ինչ պատմելու եմ, հատուկ է մեծ մասամբ բոլոր վայրերում անցկացված տեղական ընտրություններին եւ միայն Վանաձորի առանձնահատկությունը չէ, ուղղակի երբ մեկն իրականում ուզենա տեսնել դրանք՝ կտեսնի:

Նկատեցի, որ ընտրական շտաբների մոտ կուտակվում են անձնագրերը ձեռքերին մարդիկ, որոնց ներս են թողնում, մի քանի ոռոքից բաց թողնում: Անձնագիրը ձեռքիս, տպավորություն թողնելով, որ ես էլ իրենցից մեկն եմ՝ հարցնում էի, թե որքան ստացան. «2 հազար դրամ», լինում էր պատասխանը: Տիգրան Մեծի պողոտայի գրադարանում եւ ինը հարկանի (որտեղ նամականիշների, օծանելիքի խանութ կա առաջին հարկում) շենքի առաջին հարկում տեղակայված գործող քաղաքապետի շտաբներում, ինչպես նաեւ երկաթուղայինների այգու դիմաց կուտակված հերթում անձամբ տեսել եմ դրամ տալու գործընթաց: Գրադարանի շտաբում («Օրխիդեա» խանութի դիմաց) ես անձնագիրը ձեռքիս հերթ կանգնեցի, տեսա թե ինչպես նստած կին շտաբականը մի սպիտակ քառակուսի թղթի վրա անձնագրից գրում է անուն-ազգանուն, մի ակնոցավոր մարդ մակագրում էր այդ թղթի վրա եւ նշան անում իր մոտի ձեռագիր ցուցակներում, հետո մարդիկ մոտենում էին գրի ցուցասախտակին, որի հետեւից էլ 2 հազարական դրամ էին բաց թողնում: Այդ շտաբը մոտ էր մարզպետարանին, այդ բոլորը տեսնելուց հետո գնացի այնտեղ եւ թիվ 30 ընտրատարածքային հանձնաժողովի նախագահ Մ. Սայադյանին, երկու ոստիկանի եւ երկու ուրիշ հանձնաժողովականի ներկայությամբ հրավիրեցի տեսնելու ընտրակաշառքի փաստը, սակայն Մ. Սայադյանն ինձ խորհուրդ տվեց դիմել դատախազություն:

Գ.Հովսեփյանի շտաբի մոտ էլ կանգնած էին տարեց կանայք եւ պատասխանում էին, թե երբ կբացվեն դռները, որ իրենցից վերցնեն դեղորայք ստանալու վերաբերյալ դիմումները, իսկ երկու կանայք իմ ներկայությամբ շտաբի դռանը կանգնած կնոջից (շաբաթ օր) հարցնում էին՝ կարտոլ չեն տալո՞ւ: Հենց այդ օրն էի տեսել, թե ինչպես են առավոտյան տարեց մարդիկ, ինչ-որ ստորագրված թղթեր ցույց տալով՝ ներս մտնում եւ առանց այդ թղթերի դուրս են գալիս:

Կիրակի Գ. Հովսեփյանի շտաբի մոտ Ֆելիքս Մովսիսյանն ինձ հարցազրույց տալով՝ պատմեց արդեն երկու օր իրենց մրցակցի կողմից համատարած բաժանվող ընտրակաշառքի եւ այլ խախտումների մասին: Քանի որ ընտրակաշառք բաժանելուն ականատես էի եղել անձամբ՝ այդ մասին հարցրի Ս. Դարբինյանի կենտրոնական շտաբի ղեկավար Տիգրան Քոչարյանին (այնտեղ, ի դեպ, բարձրացա մի կնոջ հետ, որին մի քիչ ավելի հեռու գտնվող շտաբում դրամ չէին տվել, եւ նա եկել էր կենտրոնական). «Ես միայն քաղաքական կողմն եմ ապահովում՝ ընտրական օրենսգիրք, հանձնաժողովի անդամների ուսուցում, նորմալ ընտրական ընթացակարգի կազմակերպում», ասաց, իսկ ընտրակաշառքի մասին նա ոչինչ չգիտեր. «Եթե այդպիսի բան կա՝ պիտի ապացուցվի»: «Իմ աչքերով եմ տեսել» խոսքիս այսպես արձագանքեց. «Ձեր աչքերը մյուս շտաբում էլ պետք է տեսնեին»: «Տեսել եմ, բայց ձերն ամեն քայլափոխի է», պատասխանեցի:

Ընտրությունները խաղաղ էին

Այդ բոլորից հետո եթե կարծում եք, թե Վանաձորում ընտրությունները կայացած չեն համարի՝ խորապես սխալվում եք: Շատ հանգիստ էլ կայացել են, դեռ եվրոպացի դիտորդներն էլ նորմալ են համարել դրանք: «Ազատություն» ռադիոկայանով էլ թիվ 30 ընտրատարածքի նախագահ Մ. Սայադյանը դրանք «մնացածներից տարբեր ու հարթ ընթացքով» գնահատեց: Խեղճ եվրոպացիք, խեղճերին տարել, օրինակելի ընտրատարածքներում մաս են տվել, որտեղ իսկի ամեն ինչի սովոր մեր տեղական դիտորդները խախտում չեն արձանագրել, ոչ էլ տեղացի լրագրողները: Ուզում ենք ենք, որ համարձակվել ենք սեփական աչքերով տեսնել եւ այդ մասին բարձրաձայն ասել:

Տխուրն այստեղ այլ բան է. որ սրանք են այսօր տեղական իշխանությունը, սրանք են երկրի բարձրագույն իշխանություն ներկայացնում, սրանց են վստահում երկրի առաջին դեմքերը: Որ սրանք պետք է վաղը հանրապետի տեղական կառույց լինեն ու հանրապետի քարոզչություն տանեն, հետո կգան խորհրդարանական, ապա նախագահական ընտրությունները:

ՄԱՐԻԵՏԱ ԽԱՉԱՏՐՅԱՆ

Արտերկիր

Ցա մեղադրվում է ավելի քան 100 մլն դոլար յուրացնելու, ղարաբաղյան պատերազմի տարիներին հայերին բենզին վաճառելու, հայամետ ուժերի հետ համագործակցելու մեջ

Երեկ կեսգիշերին Լոնդոն-Բաքու չվերթով Մ. Նահանգներից հայրենիք պետք է վերադառնար նախիջևանյան կլանի երեւելի ներկայացուցիչներից Ադրբեջանի խորհրդարանի նախկին նախագահ Ռասուլ Գուլիեւը: Մինչեւ 1995 թ. Գուլիեւը եւ հանգուցյալ Հեյդար Ալիեւը ունեին լավ, այսինքն՝ «կլանային» հարաբերություններ, քանի դեռ խորհրդարանի նախագահը կլանի ներսում ձեռնամուխ չէր եղել իր թիմի ձեւավորմանը եւ դարձել լուրջ այլընտրանք Ալիեւների դինաստիային նախագահի պաշտոնում:

Նախօրեին Գուլիեւը, որը ղեկավարում է Ադրբեջանի ընդդիմադիր կուսակցություններից Դեմկուսը, ադրբեջանական հասարակությանը հղած ուղերձում նշել է, որ չի ցանկանում իր վերադարձը վերածել արյունահեղության: «Հոկտեմբերի 17-ին օդակայանում հնարավոր են անկարգություններ: Մենք ունենք օրերասիվ տեղեկություններ սպասվող սադրանքների, այդ թվում՝ օդանավակայանի վրա գրոհի մասին», ասել է Ադրբեջանի ներքին գործոնախարար Ռամիլ Ասուբովը, հավելելով, թե ընդդիմությունը կարող է զինված լինել եւ Ռասուլ Գուլիեւին դիմավորելու պատրվակով զավթել օդանավակայանը: Ասուբովը կոչ է արել դիվանագիտական առաքելությունների ներկայացուցիչներին եւ լրագրողներին չմեկնել օդանավակայան, քանի որ «բախումները չեն բացառվում»:

Բաքվի ոստիկանապետի տեղակալ Յաշար Ալիեւը, համաձայն ադրբեջանական լրատվամիջոցների, ասել է, որ Ռասուլ Գուլիեւին դիմավորելու գնացողներից ոչ ոքի թույլ չի տրվելու մոտ գործել ռազմավարական օբյեկտ համարվող Հեյդար Ալիեւի անվան միջազգային օդանավակայանի տարածք: Ալիեւը հավաստիացրել է, որ Ադրբեջան ժամանելուն պես Գուլիեւը կձերբակալվի: Ադրբեջանի գլխավոր դատախազ Զահիր Գարալովը հայտարարել է, որ Գուլիեւի համար արդեն պատրաստվել է հատուկ բանտախուց, որը համապատասխանում է ... եվրոպական չափանիշներին:

Երեկ «Ազատություն» ռադիոկայանի ադրբեջանական ծառայությանը տված հարցազրույցում Գուլիեւն ասել է, որ հայրենիք վերադառնալու գլխավոր նպատակը նոյեմբերի 6-ին սպասվող խորհրդարանական ընտրությունների ժողովրդավարական չափանիշներին համապատասխան անցկացումն ապահովելն է: Ավելի վաղ նա նշել էր, որ Բաքու է վերադառնալու ԱՄՆ կոնգրեսականների եւ արտասահմանցի լրագրողների խմբի հետ: Հիշեցնենք, որ Գուլիեւը մեղադրվում է պետական ունեցվածքից «ավելի քան հարյուր միլիոն դոլար յուրացնելու, ղարաբաղյան պատերազմի տարիներին հայերին բենզին վաճառելու, իսկ ԱՄՆ-ում բնակվելու ինը տարիներին հայամետ ուժերի հետ համագործակցելու մեջ»:

Ադրբեջանի այս ընտրություններում, ի տարբերություն նախորդների, ղարաբաղյան գործոնը շահարկման առումով առաջնայինը չէ: Հատկապես իշխանություններն առաջնությունը տալիս են ոչ թե Ղարաբաղն ու հարակից տարածքներն ազատագրելու նախընտրական խոսքում, այլ շեշտադրում են ընդդիմության՝ հայկական հատուկ ծառայությունների հետ համագործակցության «փաստը»: Դեռ օգոստոսի 3-ին Բաքվում ձերբակալվել էր Ադրբեջանի երիտասարդական ընդդիմադիր «Ենի Ֆիկիր» (Նոր մտածելակերպ) կուսակցության առաջնորդ Ռուսլան Բաշիրլին՝ ամերիկյան ոչ կառավարական կազմակերպության եւ Հայաստանի հատուկ ծառայությունների աջակցությամբ Ադրբեջանի կառավարությանը տապալելու փորձի մեղադրանքով: Վերջին շաբաթների ընթացքում նույնանման մեղադրանքով ձերբակալվել են ընդդիմադիր «Ազադլըղ» կուսակցության երիտասարդական թեւը համարվող «Ենի Ֆիկիր»-ի երկու այլ ղեկավարներ՝ Ռամին Թաղիեւը եւ Սայիդ Նուրին:

Ընդհանուր առմամբ, Ադրբեջանում ստեղծված նախընտրական իրավիճակին Իլհամ Ալիեւը տալիս է հետեւյալ գնահատականը. «Ընտրությունների համար ստեղծված են հոյակապ պայմաններ»: Միջազգային կառույցներն այլ կարծիքի են: Այսպես, «Հյուսիսային դարպաս» միջազգային իրավապաշտպան կազմակերպությունը նախընտրական Ադրբեջանի իրավիճակին վերաբերող հրապարակած զեկույցում արեւմտյան կառավարություններին հորդորել է ավելի կոշտ դիրքորոշում որդեգրել Ադրբեջանում տեղի ունեցող բռնությունների նկատմամբ: Զեկույցում նշվում է նաեւ, որ ընդդիմության ակտիվիստների նկատմամբ իրավապահների ավելի ու ավելի հաճախ կիրառվող բռնությունները «լուրջ կասկածի տակ են առնում ազատ եւ արդար խորհրդարանական ընտրություններ անցկացնելու կառավարության հանձնառությունը»: Զեկույցում ասվում է, որ Մ. Նահանգները եւ ԵՄ-ը պետք է «դատապարտեն նախընտրական պայքարի ընթացքում տեղ գտած բռնությունները՝ չսպասելով իրավիճակի էլ ավելի վատթարացմանը»:

Ինչպես հայտնի է, ոստիկանությունը ցրել էր «Ազադլըղ» դաշինքի վերջին երեք հանրահավաքները, դրանց մասնակիցներից տասնյակ քաղաքացիներ ծեծի էին ենթարկվել եւ ձերբակալվել: Անցնող շաբաթավերջին ԵԽԽՎ դիտորդական առաքելության ղեկավարը Բաքվում հայտարարել է, որ Ադրբեջանի իշխանությունները չեն կատարել ազատ եւ արդար ընտրություններ անցկացնելու ԵԽԽՎ առաջարկները:

ԹԱԹՈՒԼ ՀԱԿՈԲՅԱՆ

Ռասուլ Գուլիեւը փորձում է վերադառնալ Բաքու...

ԱՄՆ-ն ուժեղացնում է ճնշումն Իրանի վրա

Կիրակի օրը պաշտոնական Թեհրանը վերահաստատեց միջուկային ծրագիրը շարունակելու իր վճռականությունը: Իրանի արտգործնախարարը «վստահություն» հայտնեց, որ երկրի միջուկային ծրագրի հարցը չի քննարկվի ՄԱԿ-ի ԱԽ-ում: Ֆրանսդրեսը նշում է, որ այս լավատեսության հիմքը Մոսկվայի աջակցությունն է:

Շաբաթավերջին Մոսկվա այցելած ԱՄՆ պետքարտուղար Կոնդոլիզա Ռայսին Կրեմլում հաղորդավարությամբ, բայց հաստատակամորեն ասել էին, որ Ռուսաստանի ղեկավարությունը դեմ է ՄԱԿ-ի ԱԽ-ում իրանական միջուկային ծրագրի հարցի քննարկմանը:

Թերեւս ռուսների դիրքերը սասանելու նպատակով Արեւմուտքի «հեռախուզական աղբյուրները» լուրեր տարածեցին, թե ռուս զինվորականներն անցյալում իրանցիներին գաղտնաբար օգնել են ձեռք բերելու հրթիռների արտադրության տեխնոլոգիա: «Ֆիգարո» թերթը մեջբերում է բրիտանական մամուլի այն պնդումները, թե ռուսները մասնավորապես միջնորդի դեր են կատարել ԿԺԴՀ-ի եւ Իրանի հարաբերություններում:

Լոնդոնում կիրակի օրը Կոնդոլիզա Ռայսը վերոհիշյալ խոսեց «մոլլաների վարչակարգի "վտանգավորության մասին: Նրա խոսքերով, Իրանի միջուկային ծրագրի հարցը ՄԱԿ-ի ԱԽ ներկայացնելուն կողմ է ոչ միայն Մեծ Բրիտանիան, այլեւ Ֆրանսիան:

Վերջինիս դիրքորոշման մեջ թերեւս ինչ-որ փոփոխություն է տեղի ունեցել հոկտեմբերի 14-ին Ռայսի Փարիզ կատարած այցելությունից հետո: Ելիսեյան պալատի մեկնաբանության մեջ նշվում է. «Միջուկային զենքով օժտված Իրանի հեռանկարն անընդունելի է»:

ՄԱԳԱՏԷ-ի կառավարիչների խորհրդի սեպտեմբերի 24-ին ընդունած բանաձեւը չի պահանջում ներկայացնել ՄԱԿ-ի փոխում հարցը ներկայացնել ՄԱԿ-ի ԱԽ-ին, բայց սահմանում է ապագայում դրա հնարավորության պայմանները: Ֆրանսդրեսի տվյալներով, ՄԱԳԱՏԷ-ի հաջորդ նիստն անցկացվելու է նոյեմբերի 24-ին: Ֆրանսիայի ԱԳՆ-ում ընդգծում են, որ դա վերջնաժամկետ չէ. սպասվում է, որ մինչ այդ իրանցիները հանդես կգան նոր առաջարկություններով:

Իսկ առայժմ ՄԱԿ-ում ԱՄՆ դեսպան Ջոն Բոլտոնը եւ պետքարտուղար Կոնդոլիզա Ռայսը հանդես են գալիս Իրանին ուղղված սպառնալիքներով: Բրիտանացի հետախույզներին վկայակոչելով Ռայսը պնդում է, թե իրանցիներն իբր օգնում են իրաքցի ահաբեկիչներին: Սա զանգվածային բնաջնջման զենքը եւ ահաբեկչությունը շաղկապելու անթաքույց փորձ է, որը հիշեցնում է տխրահռչակ հակաիրաքյան պատերազմը:

Հունաստանը զենքի գնումների գծով 3-րդ տեղում է

Աշխարհում սպառազինությունների գնման ծախսերի գծով Հունաստանն զբաղեցնում է 3-րդ տեղը: Հունական «Կաթիմերինի» հեղինակավոր թերթի տվյալներով, 2000-2004 թթ. երկիրը զենքի ձեռքբերման նպատակով ծախսել է 5,3 մլրդ դոլար, որը զիջում է միայն Չինաստանի եւ Հնդկաստանի համանման ծախսերին:

10 միլիոնանոց Հունաստանը 2004 թ. զենքի վրա ծախսել է 1,4 մլրդ դոլար, մինչդեռ միլիարդանոց Չինաստանն ու Հնդկաստանը ծախսել են 2,3-ական միլիարդ: Վերջին 5 տարում Մեծ Բրիտանիան նույն նպատակով ծախսել է 3,4 մլրդ, Թուրքիան՝ 3,3 մլրդ դոլար:

Զենքի խոշոր գնորդների տասնյակում են նաեւ Եգիպտոսը, Հարավային Կորեան, ԱՄԷ-ն, Ավստրալիան եւ Պակիստանը, նշում է ՌԻԱ գործակալությունը:

Հունաստանի այս ծախսերը բացատրվում են երկու գործոններով: Առաջին՝ հույներն իրենք զենք փիչ են արտադրում: Երկրորդ՝ նրանք փորձում են ռազմական զուգակշռություն պահպանել հարեւան Թուրքիայի հետ, որն ունի խոշոր եւ լավ հանդերձավորված բանակ:

Օգոստոսին կնքված հույն-գերմանական պայմանագրին համապատասխան Գերմանիան Աթենք կառքի 270 մլն եվրո ընդհանուր արժողությամբ 300 «Լեոպարդ» տանկեր: Հուլիսին Հունաստանը հայտարարեց, որ 1,1 մլրդ եվրոյի դիմաց ԱՄՆ-ից գնելու է F-16 տիպի 40 ռազմօդանավ:

Պ. Ք.

Հանրաքվեի նախնական ոչ պաշտոնական տվյալները դեռ չեն հրապարակվել: Շարունակվում են քվեների հաշվառումը եւ քվեաթերթիկների առաքումը Բաղդադի ԿԸՀ: Վերջնական պաշտոնական տվյալները կհրապարակվեն մի քանի օրից: Բայց ամեն ինչ վկայում է, որ հանրաքվեն կայացած է եւ հիմնական օրենքի նախագիծը՝ ընդունված: Այդ մասին կիրակի երեկոյան Լոնդոնում հայտարարեց ԱՄՆ պետքարտուղար Կոնդոլիզա Ռայսը:

Նա ողջունեց ընտրողների ակտիվությունը՝ հայտնելով, որ հանրաքվեին մասնակցել է ձայնի իրավունք ունեցող իրաքցիների 63-64 տոկոսը: Դա զգալիորեն գերազանցում է հունվարյան համընդհանուր ընտրությունների համապատասխան ցուցանիշը:

ՄԱՍՆԱԿՑԵԼ Է ԸՆՏՐՈՂՆԵՐԻ 64 ՏՈԿՈՍԸ

Իրաքի սահմանադրության հանրաքվեն կայացած է

Իրաքի նոր սահմանադրության նախագծի առթիվ հոկտեմբերի 15-ին նշանակված հանրաքվեն ճանաչվում է կայացած: Ամենայն հավանականությամբ նախագիծն ընդունված է: Սա առայժմ ոչ պաշտոնական տեղեկատվություն է, որը հաստատել են Իրաքի շրջանային ընտրական հանձնաժողովները եւ ԱՄՆ պետքարտուղար Կոնդոլիզա Ռայսը:

Իրաքի ԿԸՀ ներկայացուցիչներից մեկը, իր անունը չհրապարակելու պայմանով, «Ասոշիեյթեդ պրես» գործակալության թղթակցին ասել է, որ հանրաքվեն կայացած է: Սակայն հրաժարվել է կանխագուշակել քվեարկության արդյունքը՝ նշելով, որ քվեների հաշվառումը շարունակվում է:

Այդուհանդերձ, գործակալությունը սեփական միջոցներով պարզել է գլխավորը՝ սունիի փոքրամասնությանը չի հաջողվել ձախողել սահմանադրության հանրաքվեի անցկացումը: Սա հույս է ներշնչում, թե իրաքցի գրոհայինները որոշ չափով կսահմանափակեն ահաբեկչական գործողությունների ծավալները:

Իրաքի 4 նահանգներում սունիները սպառնացել էին շրջափակել սահմանադրության նախագիծը: Սակայն լրատվամիջոցներին ընտրական հանձնաժողովներում հայտնի է դարձել, որ սունիների քվեները չեն բավականացրել հիմնական օրենքի ընդունումը ձախողելու համար:

Հանրաքվեի հաջորդ օրը՝ հոկտեմբերի 16-ին Իրաքի Ռամադի քաղաքում ահաբեկչությունից զոհվել է ամերիկացի 5 զինծառայող: Պայթուցիկ սարքը գործի է դրվել զինվորական ավտոմեքենայի անցման պահին:

Նալչիկի գրոհի պատասխանատվությունն ստանձնել է Շամիլ Բասաեւը

Անցյալ շաբաթ Կաբարդա-Բալկարիայի մայրաքաղաք Նալչիկի վրա գրոհայինների ձեռնարկած հարձակման պատասխանատվությունն ստանձնել է չեչեն հայտնի դաշտային հրամանատար Շամիլ Բասաեւը: Ռուսաստանի իշխանությունները նրան վաղուց մեղադրում են ահաբեկչության եւ զանգվածային սպանությունների մեջ:

Արմատականների «Կավկազցենտր» ինտերնետային կայքէջում հրապարակված հայտարարության մեջ Բասաեւը պնդում է, թե Նալչիկում զոհվել են 41 գրոհայիններ եւ ռուսաստանյան ուժային կառույցների 140 աշխատակիցներ:

Մինչդեռ ռուսաստանցի պաշտոնական անձինք հայտարարում են, որ Նալչիկում զոհվել են 12 խաղաղ բնակիչ, իրավապահ մարմինների 24 ներկայացուցիչ եւ 92 գրոհային:

Ըստ Բասաեւի, քաղաքի մեկուկես տասնյակ օբյեկտների վրա հարձակվել են 217 գրոհայիններ: Ռուսաստանի իշխանությունները խոսում են 100-300 գրոհայինների հարձակման մասին: Բասաեւի հայտարարության հավաստիությունն անհնար է ստուգել, բայց «Կավկազ-ցենտր»-ն անցյալում հաճախ է հրապարակել Բասաեւի, Ասլան Մասխադովի եւ չեչեն անջատականների մյուս առաջնորդների հայտարարությունները:

Շամիլ Բասաեւն անցյալում արդեն պատասխանատվություն էր ստանձնել Բուդյոնովսկի 1995 թ., Մոսկվայի 2002 թ., Բեսլանի 2004 թ. դեպքերի եւ այլ ահաբեկչությունների համար: ԱՄՆ Պետդեպարտամենտը եւ ՄԱԿ-ը նրա անունն ընդգրկել են միջազգային ահաբեկիչների ցանկում:

Պաղեստինյան հրթիռ Շարոնի ագարակում

Իսրայելի գաղտնի ծառայության աշխատակիցները վարչապետ Արիել Շարոնի ագարակում հայտնաբերել են պաղեստինյան «Քասամ» չպայթած հրթիռ: «Հարեց» թերթը տեղեկացնում է, որ Շարոնը հողամաս ունի երկրի հարավում՝ Նեգեւ անապատում: Թեեւ Պաղեստինի տարածքից Իսրայելը վերջին անգամ հրթիռակոծվել էր 3 շաբաթ առաջ, չպայթած «Քասամը» հայտնաբերվել է միայն կիրակի օրը:

Գաղտնի ծառայության աղբյուրներ վկայակոչելով թերթը գրում է, որ պաղեստինյան հրթիռները Շարոնի ագարակ են հասնում արդեն 3-րդ անգամ: Բարեբախտաբար, դրանցից ոչ մեկը վարչապետի հողամասում որեւէ վնաս չի պատճառել մարդկանց եւ շինություններին:

Շարոնի ագարակն ընդամենը 9 կմ է հեռու Գազայի հատվածում գտնվող Բեյթ Հանուն քաղաքից: Պաղեստինյան արմատական խմբավորումները քանիցս հայտարարել են, որ Իսրայելի վարչապետի կալվածքն իրենց գլխավոր թիրախներից մեկն է:

Իսրայելցիների բախտը բերել է, որ «Քասամ» հրթիռներն աչքի են ընկնում անչափ ցածր որակով: Արձակումից հետո դրանք թռչում են միանգամայն պատահական հետագծով:

Պ. Ք.

ԱԶԳ

Մշակույթ

Բոլոր ժամանակների Հայաստանի իր սերը

Ի առիթով իր մասին գրել է. «Ծնվել եմ, մեծացել եմ, սովորել եմ, աշխատել: Գրել եմ ողբերգություններ, որոնցից բեմադրվել են 16-ը, հրատարակել եմ 13 գիրք»:

Ավելացնեմ՝ ավարտել է Երեւանի գեղարվեստաթատերական ինստիտուտը: Երեւանի դրամատիկական թատրոնում խաղացել է Մեդեա, Եփեմիրյան կերտարներ, խաղացել է իր իսկ գրած պիեսներում ու ողբերգություններում:

Բայց մինչ թատրոն գալը հասցրեց աշխատել Հայաստանի հեռուստատեսության եւ ռադիոհաղորդումների պետական կոմիտեում որպես հաղորդավար:

Թերեւս Հայոց բառի հանդեպ պատասխանատու էր, որ մղեց գրիչ վերցնել եւ գրել՝ սկզբում ժամանակակից կյանքի թեմաներով, պիեսներից երեքը բեմադրվեցին հեռուստատեսությամբ, հրատարակվեց երկու վեպ, մեկը՝ «Արեւը քայլում է ինձ հետ»՝ առանձին գրքով: Այնուհետեւ գրեց պատմական թեմաներով՝ «Աբգար դպիր Թոխատեցի», «Եկա, որ մնամ», «Շիդհարայի քրիջը», «Երկար վերադարձ», «Ամազոններ» ողբերգությունները, ի դեպ, վերջինս բեմադրվեց դրամատիկական թատրոնում, ուր խաղում էր գլխավոր դերը:

Մյուս գործերը, բացառությամբ «Շիդհարայի քրիջը», բեմադրվեցին հեռուստատեսությամբ:

Աննա Պետրոսյանը չի գոհանում վեպեր, պիեսներ գրելով: Թերթերում ու ամսագրերում տպագրվում են նրա ակնարկները ու հրապարակախոսական հոդվածները: Գրել է նաեւ արվեստաբանական ակնարկներ, որոնցից մեկը Արշիլ Գորկու մասին գեղարվեստական ակնարկն է, նկարիչ, որն ապրելով հայրենիքից հեռու՝ էության բոլոր զգացողություններով կապված էր նրան: Այդ կապոցի ոգին էր որսացել Աննան ամերիկյան ցուցահանդեսներից մեկում՝ Ռեմբրանդի ու մյուս երեւելի նկարիչների մեծադիր կտավների կողքին ցուցադրվող փոքրիկ նկարից, որն իր հզոր ու հարազատ գույն ու գծով «սիրել» էր հետ դառնալ ու հայենադարձել հայ նկարչի՝ էությամբ ազգային նաեւ համամարդկային ու վերերկրային արտացոլումների խորհրդապատ աշխարհը:

Վերջերս «Զանգակ-97» հրատարակչությունը տպագրեց Արշիլ Գորկու մասին «Կարոտների իր աշխարհը» գիրքը՝ Գորկու նկարներով:

Աննա Պետրոսյան արվեստագետն իր կյանքի կարեւոր նպատակն էր համարում մեր հնագույն հայրենիքի մասին հայ մանուկներին ու երիտասարդներին պատմելը, եւ 1984 թ. Լենինականում հիմնադրեց իր գեղագիտական խնդիրներով նախօրինակը չունեցող Առաստելի դպրաբարոնը, որի գեղարվեստական ղեկավարն ու տնօրենն էր մինչեւ 1992 թ.:

Առաստելի դպրաբարոնում դասավանդում էին թատերական արվեստին առնչվող առարկաներ եւ հայ ժողովրդի պատմություն, համեմատական առասպելաբանություն, հայոց լեզու եւ բանաստեղծություն, հին եւ նոր մշակույթ:

Դպրաբարոնի խաղացանկում ընդգրկված էին Աննա Պետրոսյանի «Մենուա», «Ինչպես Շարան եկավ Շիրակ» ծիսաներկայացումը, «Երբ մահն է մրցակից» հերոսապատումը: Այս ամենը՝ մինչ երկրաշարժը: Թվում էր, թե հայրենի քաղաքի ու սիրելի դպրաբարոնի փլուզումից հետո (զոհվեցին նաեւ դպրաբարոնի սաներից) լռություն պիտի տիրեր: Սակայն ամիսներ անց՝ 1989 թ. մայիսի 28-ին, Երեւանի Երիտասարդության պալատում, ուր ապաստանել էր թատրոնը, բեմադրվեց Աննա Պետրոսյանի «Տիրամոր ծիչը» ողբերգությունը, որին հետեւեց նրա «Կաղանդ է, կաղանդ» ծիսաներկայացումը, այսինքն՝ կյանքը շարունակվում է, պիտի ապրենք, ստեղծագործենք եւ

ուրախությամբ ու ծնունդներով ամոքենք կարոտի ցավը: Այս ոգով շարունակեց գործել դպրաբարոնը՝ բեմադրվեցին Էսքիլեսի «Պրոմեթեւսը շղթայված», ողբերգությունը, Անտուան դը Սենթ Էքզյուպերիի «Փոքրիկ իշխանը մարդկանց երկրում» հեքիաթը, Վիլյամ Սարոյանի «Հե՞յ, ով կա այդտեղ» դրաման: Ինքնատիպ էր «Զվարթնոց» հերոսապատում-ողբերգության՝ առաջին անգամ բացօթյա, մեծամասնաբար բեմականացումը, որ խաղացվեց 1990 թ. մայիսի 28-ի գիշերը՝ հենց Զվարթնոց տաճարում՝ լույսերի ներքո: Այդ օրերին Երեւանը շրջապատված էր խորհրդային զորքով, իսկ հայ ֆիդայիները հսկում էին քաղաքի մուտքերը...

2001 թ. փետրվարից «Վասն Հայության» ինտերնետային շաբաթաթերթի համարներում շարունակաբար տպագրվեց Աննա Պետրոսյանի «Բոլոր ժամանակների Հայաստանը» մեծածավալ աշխատությունը:

ՀՀ գիտությունների ազգային ակադեմիան եւ Հայոց ցեղասպանության թանգարան ինստիտուտը 2002 թ. հրատարակեցին նրա «Եղեռապատում» փաստագրությունը: Այն Հայոց մեծ ողբերգության եւ Հայոց հառնումի մասին է՝ հասցեագրված մոլորակի բոլոր ծայրերում ապրող հայ պատանիներին:

- Ես ուզում եմ, - ասում է Աննա Պետրոսյանը, որ այս սերունդը լավ իմանա նախորդ դարասկզբի եւ ընդհանուր հայոց պատմությունը, եւ, որքան էլ այն դաժան լինի՝ ճիշտ դասեր քաղի: Ամենածանր, ողբերգական պահերին անգամ կարողանա ապրել եւ ստեղծագործել: Շատ հաճախ, ազնիվ ապրելն ու ինչ-որ բան ստեղծելն արդեն իսկ սխրանք է:

Այս տարվա ապրիլին Արցախի Վ. Փափազյանի անվան դրամատիկական թատրոնում բեմադրվեց Աննա Պետրոսյանի Եղեռնին նվիրված երրորդ՝ «Արտոնված եղեռն» ներկայացումը, որի նյութը վերցված էր «Եղեռնապատում» փաստագրությունից: Ինչո՞ւ Ստեփանակերտի թատրոնում հարցին՝ հեղինակը պատասխանեց.

- «Արտոնված եղեռնը» արցախյան հաղթանակն ապրած, արժանապատվության դիրքերից պատմվող ծանր հիշողություն է: Ոչ թե մարդիկ բեմում պարզապես խաղում են ողբերգությունը, այլ իրական կյանքում՝ 20-րդ դարավերջին անցել են այդ ողբերգության միջով ու խաղում են պարտադրված պատերազմում հաղթողի լավատեսությամբ:

Վերջին տարիներին Աննա Պետրոսյանի լույս ընծայած գրքերից են «Մոզ քաղաքի կործանումը» ժամանակակից վեպը 8-րդ դարի մասին եւ «Սերն աշխարհեն խռովել՝ կերթա» վեպը, որի հերոսը՝ Նահապետ Քուչակ բանաստեղծը, օտարների լծի տակ բզկտված Հայրենիքի ճանապարհներով թափառելով՝ փորձում է հասնել Սիրո հետեւից:

- Ինչ օր է Ձեզ համար ապրիլի 24-ը:

- Միասնության օր: Ապրիլի 24-ն այն օրն է, երբ հայերը որտեղ էլ լինեն՝ հայրենիքում, թե սփյուռքում, բոլորն անխտիր միավորված են մի կամքով ու գաղափարով: Այդ օրը չկան կուսակցություններ, հակասություններ, միմյանցից ինչ-որ բան պահանջելու խնդիրներ: Կա հիշատակի օր, որն ի մի է բերում ահելին ու ջահելին, ամբողջ հայությանը՝ ոչ թե սգալու, այլ ինքն իրեն լավագույնս հաստատելու կամքով, որի պսակը եղավ արցախյան հաղթանակը:

- Դում ապրում եք բոլոր ժամանակների Հայաստանի հանդեպ անմնացորդ սիրով, որի խոսուն վկաներն են Ձեր պատմավեպերը, բեմադրությունները, խաղացած դերերը: Գող եւ դերասանուհի՝ այս երկուքը ձեր կյանքում զուգընթաց են եղել: Վերջին անգամ ե՞րբ եք խաղացել:

- 1999 թ.՝ «Բանտախուց 7160» ներկայացման մեջ խաղում էի խելագար կին:

- Ձե՞ր կարոտում բեմին:

- Հոսով եմ, որ դեռ կխաղամ:

Ինչով, եթե ոչ հոգսով է գեղեցիկ մեր կյանքը:

ԱՍՊԱՐԱՄ ՇԱՌՈՒԿՅԱՆ

«Գրելու ցանկությունը սկսվում է կռվով»

«Հայ ժողովրդի ազգային նկարագրի մեջ Համաստեղը ընդգծում է մեր արարող հատկանիշը: Նա մեր ժողովրդի սիրտն ու հոգին բացող գրող է», ասաց բանասիրական գիտությունների դոկտոր Մարգարիտա Խաչատրյանը երեկ հայ դասական գրողներից մեկի՝ Համաստեղի ծննդյան 110-ամյակի առթիվ, որը նշվեց ազգային գրադարանում:

Ծնունդով խարբերդցի, հայտնի սափրիչի եւ բուժակի տոհմից՝ Կելենյաններից սերված Համաստեղը (Համբարձում Կելենյան) 20 տարին չբոլորած հայտնվել է Ամերիկայում: Խորհրդային Հայաստանում արգելված հեղինակը, ապրելով օտար հողում, իր ստեղծագործությունները նվիրել է հայրենիքին, հայրենի գյուղին: «Անձրեւ», «Գյուղը», «Սպիտակ ձիավորը» եւ մյուս ժողովածուների հեղինակը, Մարգարիտա Խաչատրյանի ներկայացմամբ, հաջողություն է ունեցել նաեւ բանաստեղծությունների ասպարեզում: «Նրա թվով փիչ բանաստեղծությունները իմպրեսիոնիստական ուղղությունից անցում են կատարում դեպի ազգային գրականություն», նշեց գիտությունների դոկտորը:

Մարգարիտա Խաչատրյանը մոտ 15 տարի զբաղվել է Համաստեղի ստեղծագործությունների ուսումնասիրմամբ եւ երեկ գրադարանում հեղինակի ժողովածուների, մամուլին առնչվող նրա հրապարակումների կողքին ներկայացված էր նաեւ ուսումնասիրողի «Նամակների» գիրքը: Այն հեղինակի թվով 500 նամակների հավաքածու է, որ ներկայացված են Համաստեղի նամակագրական կաղը 12 նամակագիրների՝ Սիմոն Վրացյանի, Նիկոլ Աղբալյանի եւ այլոց հետ: Մարգարիտա Խաչատրյանը հոբելյանի առիթով ներկայացրեց նաեւ իր նոր «Մոռացված էջեր» եռահատորյակը, որ ընդգրկված են Համաստեղի որեւէ ժողովածուում չընդգրկված նյութերը, պատմվածքները, բանաստեղծությունները, դրամատիկական գործերը, հոդվածները եւ հուշերը: Գիտությունների դոկտորը նկատեց, որ Համաստեղ այսօր էլ փիչ են կարդում, որովհետեւ նրա ստեղծագործություններից փիչ են հրատարակվում: «Իսկ «Մոռացված էջեր» գիրքը ընթերցողին կարող է ծանոթացնել թե՛ Համաստեղ գրողին, թե՛ Համաստեղ բանաստեղծին եւ առհասարակ նրա ստեղծագործություններին, մանավանդ, որ գրքում տեղ են գտել Համաստեղի՝ հանրությանը փիչ ծանոթ գործեր» հավելեց նա:

ԱՌՏԱՐ ԳԵՎՈՐԳՅԱՆ

ՄԵՆՔ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄ ԵՆՔ ԱՇԽԱՐՀԻՆ

Դուդուկի ելեւէջները Լեհաստանում

Վարշավայում վերջերս տեղի ունեցավ միջազգային փառատոն, որին մասնակցեցին աշխարհի 7-8 երկրների մշակույթը ներկայացնող խմբեր՝ Ամերիկայից, Ֆրանսիայից, Հայաստանից, Վրաստանից, Անգլիայից, Հնդկաստանից: Յուրաքանչյուր պետության ներկայացուցիչ հանդիսությանը ներկայացավ իր ազգին բնորոշ մշակույթով:

Սեպտեմբերի 11-ին ելույթ ունեցան Վրաստանի եւ Հայաստանի ներկայացուցիչները: Համերգի հիմնական մենակատարը եղել է Գեւորգ Դաբաղյանը՝ իր խմբով: Համույթում ընդգրկված էին քամանչահար Նորայր Դավթյանը, քանոնահար Շուշանիկ Սաղաթելյանը, դափահար Կամո Խաչատրյանը, երկրորդ դուդուկ՝ էմանուել Հովհաննիսյանը եւ երգչուհի Արուս Գուլանյանը: Համերգի ծրագիրը կազմված էր դուդուկի մենանվագներից, որին նվագակցել են քամանչան, քանոնը, դհոլը:

«Արդյոք ազգային արժեքները կպահպանվե՞ն մատաղ սերնդի համար: Ինչպե՞ս արթնացնել երեխայի մեջ հետաքրքրություն դուդուկի եւ ընդհանրապես ժողովրդական երաժշտության հանդեպ», հարցրինք երաժշտին: «Ինչպես հայ անհատի կերպարն է բնույթով յուրահատուկ՝ իր մտածողությամբ, այնպես էլ ժողովրդական երաժշտությունը, եղավ պատասխանը:

Ազգային ասելով դեռ չի նշանակում դուդուկ կամ Սայաթ-Նովա լսել միայն: Յուրաքանչյուր ոք ազատ է իր նախասիրություններում: Մեզնից է կախված երեխայի ընտրությունը: Յուրաքանչյուր մարդ, յուրաքանչյուր ոլորտի աշխատող պիտի այնպես անի, որ նոր սերունդը գեղեցիկով դաստիարակվի: Դուդուկը մեր ազգային գիտակցությունն է, մեր հոգին է: Տասնյակ ազգերտներ եւ հարյուրների հասնող մարդիկ հետեւում են իմ օրինակին: Դա ուրախալի է»:

ՀԵՂԻՆԵ ՎԱՅԹԻՆՅԱՆ

ՀԹՄՄ կենտրոնական վարչության որոշումը

«Արա եւ Մարալ» ամենամյա մրցանակ հատկացնելու մասին

Սահմանել Հայաստանի Թեթեյան մշակութային միության «Արա եւ Մարալ» մրցանակ՝ մանուկների եւ դպրոցականների համար ստեղծված լավագույն աշխատանքների համար:

* Մրցանակը շնորհվում է գրականության, երաժշտության, կինոյի, թատրոնի, հեռուստատեսության եւ կերպարվեստի բնագավառներում:
* Մրցանակին հավակնելու իրավունք ունեն ստեղծագործողներ Հայաստանից:
* Մրցանակի կարող են ներկայացվել 2004 եւ 2005 թվականներին ստեղծված աշխատանքները:
* Մրցույթին իրավունք ունեն գործեր ներկայացնելու Հայաստանի ստեղծագործական միությունները, ՀՀ նախարարությունները, հասարակական կազմակերպությունները, հրատարակչությունները, զանգվածային լրատվական միջոցները:
* Մրցույթին չեն կարող աշխատանքներ ներկայացնել ՀԹՄՄ կենտրոնական վարչության եւ մրցանակներ շնորհող հանձնաժողովի անդամները:
* Գործերն ընդունվում են ներկայացող կազմակերպության պաշտոնական երաշխավորությամբ՝ հատկացված կնիքով:
* Մրցանակի արժանացած անհատը կամ խումբը կստանա համապատասխան դիպլոմ եւ դրամական պարգեւ (1000 դոլարին համարժեք դրամ):
* Գործերն ընդունվում են հետեւյալ հասցեով՝ Երեւան, Խանջյան 50, Թեթեյան մշակութային միություն, «Արա եւ Մարալ» մրցանակ շնորհող հանձնաժողովին:
* Գործերի ընդունման ժամկետը՝ 2005 թ. նոյեմբերի 1-ից մինչեւ դեկտեմբերի 30-ը:

ՀԹՄՄ «Արա եւ Մարալ» մրցանակներ շնորհող հանձնաժողովի կանոնադրություն

«Արա եւ Մարալ» մրցանակ շնորհող հանձնաժողովը կազմվում է ՀԹՄՄ կենտրոնական վարչության որոշմամբ եւ գործում է ըստ հաստատված կանոնակարգի

* Հայ մշակույթի զարգացմանը նպաստելու եւ արվեստագետներին խրախուսելու նպատակով սահմանված մրցանակը շնորհվում է այն ստեղծագործությանը, որը հայրենական կյանքի գեղարվեստական պատկերների միջոցով նախադպրոցական եւ դպրոցական տարիքի երեխաների մոտ զարգացնում է մայրենին եւ դաստիարակում հայեցի մտածողություն:
* Հանձնաժողովը գործում է հասարակական հիմունքներով:
* Հանձնաժողովն ինքն է սահմանում իր ներքին աշխատանքային կարգը, նիստերի գումարման հաջորդականությունը:
* Հանձնաժողովի նիստերն օրինական են, եթե նրա աշխատանքներին մասնակցում է հանձնաժողովի կազմի 2/3-ը:
* Հանձնաժողովի որոշումը վավերական է, եթե հեղինակի (ստեղծագործության) օգտին քվեարկել է հանձնաժողովի նիստին մասնակցողների պարզ մեծամասնությունը:
* Հանձնաժողովի որոշումը կհաստատվի ՀԹՄՄ կենտրոնական վարչության կողմից եւ կհրապարակվի մամուլում 2006 թվականին:

Չեմպիոնության գրանցումը հետաձգվեց

Ֆուտբոլի Հայաստանի բարձրագույն խմբի առաջնության հերթական տուրում վերջին չորս տարիների անփոփոխ չեմպիոն «Փյունիկը» հնարավորություն էր ստացել պաշտոնապես գրանցելու չեմպիոնությունը: «Միկայի» հետ խաղում «Փյունիկի» հաղթանակի դեպքում առաջնության ավարտից երեք տուր առաջ փյունիկցիները տեսականորեն անհասանելի կդառնային մրցակիցների համար եւ 5-րդ անգամ անընդմեջ կնվաճեին երկրի չեմպիոնի կոչումը: Սակայն մրցանակային տեղերի համար պայքարող «Միկայի» ֆուտբոլիստները համառ դիմադրություն ցույց տվեցին մրցակցին՝ խաղն ավարտելով ոչ-ոքի արդյունքով:

Ընդհանրապես առաջատար թիմերի մրցավեճն աչքի ընկավ պայքարի լարվածությամբ: Այս խաղում կարող էր հաղթել կողմերից յուրաքանչյուրը: Երկու թիմերն էլ գոլային մի շարք հնարավորություններ ունեցան, սակայն օգտագործեցին միայն մեկական պահ: Առաջին խաղակեսում հաջողությունն ուղեկցեց փյունիկցիներին: 43-րդ րոպեին հերթական գրոհի ժամանակ «Միկայի» պաշտպան Պետիկյանը սայթաքեց եւ կորցրեց գնդակը: Տիրելով գնդակին, փյունիկցի Տիգրան Դավթյանը ներխուժեց տուգանային հրապարակ եւ բացեց հաշիվը:

Ընդմիջումից հետո «Միկայի» ֆուտբոլիստները բավական ակտիվ հարձակողական գործողություններ ծավալեցին: Իր տարերքի մեջ էր «Միկայի» առաջատար Արմեն Շահգելդյանը, որն անընդհատ պայքարի բովում էր եւ մրցակցի դարպասը գրավելու ուղիներ էր փնտրում: Ի վերջո, Շահգելդյանի ջանքերը պսակվեցին հաջողությամբ: 66-րդ րոպեին խաբս տալով մրցակցի մի քանի պաշտպանների, Շահգելդյանը դիպուկ հարվածով վերականգնեց հավասարակշռությունը: Խաղավերջում երկու թիմերն էլ ձեռքից բաց թողեցին հաշվի մեջ առաջ անցնելու հիանալի հնարավորությունները: Նախ՝ Արտաշես Ադամյանի հարվածից հետո դեպի դարպասն ընթացող գնդակի ճանապարհը փակեց Ռոբերտ Արզումանյանը, ապա՝ պատասխան գրոհից հետո Լեւոն Փաչաջյանի

հարվածից հետո գնդակը հետ մղվեց դարպասի հորիզոնական ձողից: Երկու անգամ վտանգավոր հարված կատարեց Արմեն Շահգելդյանը, սակայն հիանալի խաղաց դարպասապահ Կասպարովը՝ հետ մղելով գնդակը:

Այսպիսով, գրանցվեց մարտական ոչ-ոքի, ինչը հնարավորություն չտվեց «Փյունիկին» արդեն այս տուրում պաշտոնապես գրանցել չեմպիոնությունը: Ճիշտ է, փյունիկցիները գործնականում նվաճել են երկրի չեմպիոնի տիտղոսը, եւ ամենայն հավանականությամբ արդեն հաջորդ տուրում կարելի կլինի նրանց շնորհավորել հերթական հաջողության համար:

Առաջնությունում շարունակվում է պայքարը արծաթե եւ բրոնզե մեդալների համար: Մրցանակային տեղերի համար պայքարում հերթական կարետոր հաղթանակը տոնեց «Բանանցը»: «Հրազդան» մարզադաշտում «Բանանցը» հյուրընկալվել էր «Կիլիկիային»: Վերջինս, որ սովորաբար աչքի է ընկնում ագրեսիվ խաղով, այս անգամ մի տեսակ կաշկանդված էր գործում: «Բանանցը» զգալի առավելություն ուներ եւ մեկ անգամ չէ, որ կարող էր գրավել մրցակցի դարպասը: Սակայն, ինչպես շատ հանդիպումներում, այս անգամ էլ «Բանանցը» չկարողացավ օգտագործել գոլային մի շարք պահեր: Երկու անգամ՝ Զենեբյանի եւ Թադեւոսյանի հարվածներից հետո գնդակը դիպավ ձողին: Գոլային մի քանի լավ հնարավորություն չօգտագործեց «Բանանցի» ռմբարկու Արամ Հակոբյանը: Նրա խաղընկերներից Թադեւոսյանը, Արա Խաչատրյանն ու Տիգրան Ղարաբաղցյանն էլ հարմար դիրքերից վրիպեցին: Ի վերջո, «Բանանցին» հաջողվեց գրավել մրցակցի դարպասը: 68-րդ րոպեին տուգանայինի խաղարկումից հետո Մայիս Ազիզյանը չկարողացավ իր մոտ պահել գնդակը, եւ վրա հասած Արարատ Առաքելյանը գրավեց դարպասը: Այդ միակ գոլն էլ վճռեց հանդիպման ելքը:

«Կիլիկիան» իր հերթին մի քանի անգամ լրջորեն սպառնաց «Բանանցի» դարպասին: Մասնավորապես Վահան Բաբայանը կարող էր գրավել դարպասը, երբ մեն-մենակ դուրս եկավ դարպասապահի դիմաց, սակայն փոխանակ հարվածելու փոխանցում կատարեց: Մեկ անգամ եւս նրան կանգնեցրեց դուրս գալ հարվածային դիրք, սակայն այս անգամ նրա հարվածը հետ մղեց դարպասապահը:

«Էսթեղլալ-Կոտայքն» էլ Աբովյանում մեծ դժվարությամբ կարողացավ հաղթել «Դինամո-Զենիթին»: Խաղը հարուստ չէր գոլային պահերով եւ աչքի չընկավ դիտարժանությամբ: Փոխարենը խաղավերջում կրքերը բորբոքվեցին, երբ մրցավար Արման Հակոբյանը 11 մ հարված նշանակեց «Դինամո-Զենիթի» դարպասին՝ միաժամանակ դաշտից հեռացնելով թիմի պաշտպան Գետրգ Միրիջանյանին: «Էսթեղլալ-Կոտայքի» ավագ Կարեն Բարսեղյանը հստակ իրացրեց հարվածը եւ կարետոր հաղթանակ պարգեւեց կոտայքցիներին:

Մրցաշարային աղյուսակ

	Խ	Հ	Ո	Պ	Գ	Մ
1. Փյունիկ	17	10	6	1	30-11	36
2. Բանանց	17	7	6	4	24-21	27
3. Միկա	17	6	8	3	21-15	26
4. Էսթ.-Կոտայք	17	6	7	4	19-17	25
5. Կիլիկիա	17	3	5	9	16-25	14
6. Դին.-Զենիթ	17	2	2	13	10-31	8

Ռմբարկուները

Նշան Էրզրումյան	«Կիլիկիա»	15
Արայոմ Ադամյան	«Միկա»	11
Սամվել Պետրոսյան	«Է.-Կոտայք»	9
Արամ Հակոբյան	«Բանանց»	9
Տիգրան Դավթյան	«Փյունիկ»	9
Աղվան Մկրտչյան	«Փյունիկ»	8

Հակոբ Ալավերդյանը նվաճեց չեմպիոնի տիտղոսը

Հանգստյան օրերին շախմատիստի պաշտոնական տանը նարդիստները վիճարկեցին կարճ մրցաձեւից Հայաստանի չեմպիոնի կոչումը: Անհատական մրցումներում մրցասպարեզ էին դուրս եկել 54 մասնակիցներ: Բոլորից հաջող հանդես եկավ եւ առաջին անգամ Հայաստանի չեմպիոնի տիտղոսին արժանացավ երեւանցի Հակոբ Ալավերդյանը: 2-րդ տեղը զբաղեցրեց Խաչիկ Առաքելյանը, 3-րդը Կոլյա Մոսոյանն էր:

Թիմային մրցումներին մասնակցեց 12 թիմ: Ուժեղագույն ճանաչվեց «Կոմիտասը», որի կազմում հանդես եկան Գագիկ Մակարյանը, Բագրատ Աբրահամյանն ու Սամվել Պետրոսյանը: Անցկացվեցին նաեւ զույգերի մրցումներ: Մրցավեճի բոնված 22 զույգերից լավագույն արդյունքի հասան Արթուր Մուրադյանն ու Դավիթ Կարաթորոսյանը: Մրցանակակիրներն արժանացան պատվոգրերի եւ դրամական մրցանակների, որոնք սահմանել էր մրցաշարի հովանավորությունը ստանձնած «Սիգարոն» ընկերությունը:

Առաջիկա հանգստյան օրերին հանրապետության չեմպիոնի կոչումը կվիճարկեն նաեւ երկար մրցաձեւի մասնակիցները: Իսկ հոկտեմբերի վերջին մեր մի խումբ ուժեղագույն նարդիստներ կմասնակցեն Փարիզում կայանալիք միջազգային մրցաշարին:

«Կրեմլի գավաթի» դափնեկիրները հայտնի են

Մոսկվայում ավարտվեց թենիսի «Կրեմլի գավաթի» հերթական խաղարկությունը: Տղամարդկանց մրցաշարում առաջին անգամ պատվավոր մրցանակը նվաճեց ռուսաստանցի Իգոր Անդրեեւը՝ որպես պարգեւ ստանալով 142 հազար դոլար: Եզրափակիչում Անդրեեւը պարտության մատնեց գերմանացի թենիսիստ Նիկոլաս Կիֆերին (5-7, 7-6, 6-2): Վճռորոշ հանդիպումից հետո Անդրեեւը խոստովանել է, որ եզրափակիչ խաղը թենիսիստի իր գործունեության ողջ ընթացքում ամենադժվարագույնն էր: Առաջին խաղափուլում Անդրեեւը մրցակցին զիջեց թայ-բրեյքում, 2-րդում նույնպիսի իրավիճակում, չափազանց դժվարին մրցապայքարում հավասարեցրեց հաշիվը: Իսկ ահա 3-րդ խաղափուլում արդեն ռուսաստանցի թենիսիստը վստահ հաղթանակ տոնեց:

Նշենք, որ Կիֆերը 2001 թ. «Կրեմլի գավաթի» եզրափակիչում զիջել էր Եվգենի Կաֆելնիկովին: Վերջինս այդ մրցաշարերի յուրօրինակ ռեկորդակիր է՝ հաղթող ճանաչվելով 5 անգամ: Բացի նրանից, ռուսերից Մոսկվայում մեկական անգամ հաջողությունն ուղեկցել է Անդրեյ Չերկասովին, Ալեքսանդր Վոլկովին եւ Նիկոլայ Դավիդենկոյին:

Հետաքրքրական է, որ անցյալ տարի էլ Անդրեեւ-Դավիդենկո զույգը հասել էր եզրափակիչ: Սակայն եթե անցյալ տարի նրանք հաղթող էին ճանաչվել, ապա այս անգամ եզրափակիչում զիջեցին Յուժնի-Միրնի երկյակին (1-5,1-5):

Կանանց մրցաշարում հաղթող ճանաչվեց ֆրանսուհի Մարի Պիերսը, որը պարտության մատնեց Ֆրանչեսկո Սկյավոնեին (6-4, 6-3): Զուգախաղում հաջողության հասավ Ռայմոնդ-Ստոսուր զույգը, որը հաղթեց Ստաբս-Բլեք երկյակին (6-2, 6-4):

Սարգիս Աղաբաբյանը Չեխիայի պատանիների չեմպիոն

Չեխական Հավլիչկով Բրոդ քաղաքում անցկացված հունահռոմեական ոճի ըմբշամարտի երկրի առաջնությունում 66 կգ քաշային-ների մրցավեճում 15-ամյա Սարգիս Աղաբաբյանը նվաճեց Չեխիայի չեմպիոնի կոչումը՝ արժանանալով ոսկե մեդալի: Սա Սարգսի երկրորդ մեծ նվաճումն է, եթե նկատի ունենանք, որ 2002 թ. Չեխիայում անցկացված Ֆրանտիշեկի անվան 15-րդ միջազգային մրցաշարում 59 կգ քաշային կարգում նա արդեն նվաճել էր գավաթը: Ինչպես մեզ հետ զրույցում հայտնեց չեմպիոնի հայրը՝ Մանվել Աղաբաբյանը, նրանց ընտանիքը Չեխիա է տեղափոխվել 1995 թ., երբ Սարգիսն ընդամենը 5 տարեկան էր: 6 տարեկանում նա արդեն մարզվել է եւ աչքի ընկել քաղաքային մրցումներում: Տարբեր մրցաշարերում նա գրավել է առաջինից երրորդ տեղերը՝ արժանանալով

բազմաթիվ մեդալների ու պատվոգրերի:

Մաղթենք, որ ապագայում մեր շնորհալի հայրենակիցը նոր հաղթանակներ գրանցի ոչ միայն Չեխիայում, այլեւ նրա սահմաններից դուրս:

Հ. Ա.

Պրահա

Շախմատային աշխարհն արժանի չեմպիոն ունեցավ

Արգենտինական Սան Լուիս քաղաքում վերջնագիծը հասավ շախմատի աշխարհի առաջնության եզրափակիչ մրցաշարն ութ ուժեղագույն շախմատիստների մասնակցությամբ, որն ավարտվեց բուլղարացի գրոսմայստեր Վեսելին Թոփալովի փայլուն հաղթանակով: Նա դեռեւ նախավերջին տուրում էր անհասանելի դարձել մրցակիցների համար: Ավարտական տուրում արդեն աշխարհի չեմպիոնի կարգավիճակով Թոփալովը կարճաստեղ պայքարից հետո արդեն 18-րդ քայլում խաղաղ դաշն կնքեց Հոտիթ Պոլգարի հետ: Այսպիսով, Թոփալովը 14 պարտիաներում վաստակեց 10 միավոր՝ տանելով 6 հաղթանակ, 8-ն ավարտելով ոչ-ոքի: Իրոք որ փայլուն արդյունք նման ուժեղ կազմ ունեցող մրցաշարում:

Ավարտական տուրը պետք է որոշեր 2-րդ տեղը զբաղեցրած շախմատիստին: 2-րդ հորիզոնականին հավակնում էին 8-ական միավոր ունեցող Սվիդլերն ու Անանդը, որոնք խաղացանկի խմահաճույքով միմյանց հետ ուժերը չափեցին վերջին տուրում: Այս մրցախաղում էլ գրանցվեց ոչ-ոքի: Մրցակարգի համաձայն, 2-րդ տեղը գրավեց Անանդը, որն ավելի շատ հաղթանակ էր տարել, քան Սվիդլերը:

Ոչ-ոքի ավարտվեց նաեւ Մորոզեւիչ-Ադամս մրցախաղը, իսկ Լեկոն հաղթեց Կասիմջանովին: Այսպիսով, 4-րդ տեղը 7 միավորով զբաղեցրեց Մորոզեւիչը, որին հաջորդում են Լեկոն՝ 6,5 միավոր, Ադամսն ու Կասիմջանովը՝ 5,5-ական: Աղյուսակը եզրափակեց Հոտիթ Պոլգարը (4,5 միավոր):

Հարկ է նշել, որ շատերը թերահավատորեն էին վերաբերում Սան Լուիսի մրցաշարին: Սակայն Թոփալովի գերազանց ելույթն այլեւս կասկածանքի ոչ մի նշույլ չթողեց. աշխարհն իրոք արժանի չեմպիոն ունեցավ: Մրցաշարի ընթացքում Թոփալովին համեմատում էին Բոբի Ֆիշերի եւ Գարի Կասպարովի հետ: Այժմ բուլղարացիներին են պատկանում շախմատային գրեթե բոլոր տիտղոսները: Բուլղարտիի Անտուանետա Ստեֆանովան կանանց աշխարհի չեմպիոնուհին է: Վերջերս էլ Կյուբեն Սպասովը նվաճեց վետերանների միջեւ աշխարհի չեմպիոնի տիտղոսը: Այնպես որ, Բուլղարիան շախմատային գերհզոր պետությունների շարքում է:

Թոփալովի հաջողությունը մեծ խանդավառություն է առաջացրել Բուլղարիայում: Աշխարհի նորընծա չեմպիոնին շնորհավորական հեռագրեր են հղել Բուլղարիայի նախագահ Գեորգի Պիրվանովը, վարչապետ Սերգեյ Ստանիշեւը, Ազգային ժողովի նախագահ Գեորգի Պիրինսկին, քաղաքական եւ հասարակական մի շարք գործիչներ: Իսկ Բուլղարիայի բոլոր ժամանակների լավագույն ֆուտբոլիստ Քրիստո Ստոիչկովը գտնում է, որ Թոփալովը մեծ նվաճման է հասել եւ փառքի ծառուղում հաջորդ աստը պետք է տեղադրվի նրա պատվին:

Թոփալովը հոկտեմբերի 13-ը համարում է իր կյանքի ամենաերջանիկ օրը: Նա նշել է, որ աշխարհի առաջնությանը նախապատրաստվում էր ողջ տարին, հոգեբանորեն գերազանց էր պատրաստվել եւ այժմ պատրաստ է ցանկացած շախմատիստի հետ մրցել, որպեսզի ապացուցի, որ իրոք ուժեղագույնն է աշխարհում: Փաստորեն, Թոփալովը նվաճեց աշխարհի բացարձակ չեմպիոնի տիտղոսը: Ճիշտ է, դեռեւ մինչ Սան Լուիսի մրցաշարի մեկնարկը շատերն այն կարծիքին էին, որ ուժեղագույնին որոշելու համար լավ կլիներ մրցախաղ անցկացնել Վլադիմիր Կրամնիկի եւ արգենտինյան մրցաշարի հաղթողի միջեւ: Եվ եթե նախկինում ՖԻԴԵ-ի նախագահ Կիրսան Իլյումժինովը կտրականապես դեմ էր այդ գաղափարին, ապա այժմ չի բացառում Կրամնիկ-Թոփալով մրցախաղի անցկացման հնարավորությունը: Սակայն անկախ այն բանից, կկայանա՞ այդ մրցախաղը, թե՞ ոչ, ՖԻԴԵ-ն մշադիր չէ փոխել աշխարհի հաջորդ չեմպիոնին որոշելու կարգը: Արգենտինյան մրցաշարի, աշխարհի գավաթի, փնջային մրցաշարերի արդյունքներով կորոշվեն աշխարհի հաջորդ առաջնության առաջին փուլի 10 մասնակիցները: Հինգ հաղթողներին կմիանա աշխարհի փոխչեմպիոն Անանդը, իսկ կիսաեզրափակիչում 3 ուժեղագույններին կմիանա աշխարհի չեմպիոն Թոփալովը: Կարծում ենք, նման բազմափուլ մրցաշարում ուժեղագույնին որոշելուց հետո այլեւս ոչ մի կասկած չի կարող լինել, որ չեմպիոնն իրոք լավագույնն է աշխարհում:

«Ալոնսոն» «Ռենոյին» հաղթանակ պարգեւեց

«Ֆորմուլա-1» դասի ավտոմրցավազքի աշխարհի ներկայիս չեմպիոն Ֆեռնանդո Ալոնսոն հաղթանակով ավարտեց մրցաշրջան-2005-ը՝ դառնալով Չինաստանում անցկացված վերջին փուլի հաղթող: Այդ հաղթանակը հնարավորություն ընձեռեց նրա թիմին՝ «Ռենոյին» առաջին տեղը զբաղեցնել «Կոնստրուկտորների գավաթի» խաղարկությունում: Անհատական հաշվարկով 2-րդ տեղը զբաղեցրեց ֆինն Կիմի Ռայյկոնենը: Երրորդ տեղին հավակնում էին կոլումբացի Խուան Պաբլո Մոնտոյան եւ աշխարհի յոթակի չեմպիոն Միխայիլ Շումախերը: Երկուսին էլ չհաջողվեց Չինաստանում հասնել վերջնագիծ: Շումախերը մինչ այդ 2 միավորով գերազանցում էր Մոնտոյային, ուստի ի վերջո գրավեց 3-րդ տեղը: Չինաստանի Գրան պրիի նախորդ խաղարկության հաղթող Ռուբենս Բարիկելոն այս անգամ վերջինն էր «Ֆերարիի» կազմում: Այդ թիմում բրազիլացի մարզիկը հանդես եկավ 6 տարի: Հաջորդ տարի նա հանդես կգա «ԲԱՐ-Հոնդա» թիմում, որտեղ նրա թիմակիցը կլինի Զեկսոն Բատոնը: «ԲԱՐ-Հոնդան» Բարիկելոյի չորրորդ թիմը կլինի: 1993 թ. նա «Ֆորմուլա-1»-ում նորամուծը նշել էր «Զորդանի» կազմում: Չորս տարի անց Բարիկելոն հայտնվեց «Ստեմարտում», իսկ եւս 3 տարի հետո տեղափոխվեց «Ֆերարի»: «Կոնստրուկտորների գավաթի» խաղարկությունում «Ռենոյից» բացի մրցանակային տեղերի արժանացան «Մակլարենը» եւ «Ֆերարին»:

Էջը պատրաստեց ԱՇՈՏ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆԸ

ԱԶԳ **Օրվա հեռքերով**

«Ես կպայքարեմ օրինականացնելու էֆտանազիան»

Ասում է Ջեկ Գեորգյանը

Միչիգանից «Ասոշիեյթեդ պրես» լրատվական գործակալությունն «Արմինյն միրոր սփեթեյթր» շաբաթաթերթի հոկտեմբերի 8-ի համարում տեղեկացնում է, որ MSNBC-ի լրագրող Ռիթա Քոզբիի հետ հեռուստատեսային հարցազրույցի ժամանակ «մահվան բժիշկ» հորջորջված Ջեկ Գեորգյանը նշել է, որ բանտից դուրս գալուց հետո ծրագրում է պայքար ծավալել օրինականացնելու միջնորդված ինքնասպանությունները:

«Ես հրապարակայնորեն հայտարարել եմ եւ այսօր էլ կրկնում եմ, որ ազաս արձակվելու դեպքում չեմ շարունակելու զբաղվել միջնորդավորված ինքնասպանությամբ, մինչեւ այդ հարցի շուրջ օրենքը չբարեփոխվի եւ պաշտոնապես չօրինականացվի», նշել է 77-ամյա հայազգի բժիշկը, որը 1998-ին Լու Գեհրիգով տառապող իր հիվանդներից մեկի ինքնասպանությանն աջակցելու պատճառով 10-25 տարվա բանտարկության է դատապարտված եւ ներկայումս գտնվում է Լաֆիրի (Միչիգան) «Թամ» ուղղիչ տանը: Նրա ազաս արձակման ամենահավանական թվականը 2007-ն է: Բայց արդեն իսկ նրա կենսագրությամբ հետաքրքրվողների թիվը փիչ չէ: Նրա մասին գիրք է գրվում եւ ֆիլմ նկարահանվում: Հավանական է, որ դերասան Բեն Քինգզլին մարմնավորի Գեորգյանի դերը:

«Նա մեծ դերասան է, հավանում եմ նրան», ասել է Գեորգյանը, որն այն հարցին, թե արդյոք զղջո՞ւմ է իր արարքների համար, պատասխանել է. «Մի փոքր: Բայց ես վաղուց պետք է զբաղվեի այդ հարցի օրինականացմամբ, շարունակել է նա, ափսոս, որ դա չեմ արել ժամանակին»:

Հ. Ծ.

Հայաստանում առաջիկա օրերին օդի ջերմաստիճանը կնվազի 3-4 աստիճանով

ԵՐԵՎԱՆ, 17 ՀՈԿՏԵՄԲԵՐ, ՆՈՅԱՆ ՏԱՊԱՆ: Հայաստանի տարածքում հոկտեմբերի 17-ին եւ 19-21-ին սպասվում է անձրեւ եւ ամպրոպ, իսկ հոկտեմբերի 18-ին եւ 22-23-ին՝ առավելապես առանց տեղումների եղանակ: Ինչպես հայտնեցին «Հայդրոհիդրոմետ» վարչության օդերեւութաբանական կանխատեսումներից բաժնից, օդի ջերմաստիճանը հոկտեմբերի 17-19-ին կնվազի 3-4, իսկ 20-23-ը՝ եւս 3-4 աստիճանով: Այդ օրերին հովային շրջաններում՝ առավելագույն ջերմաստիճանը կլինի +22, իսկ նվազագույնը՝ +15, լեռնային շրջաններում, համապատասխանաբար, +10 եւ -4 աստիճան:

Դրամավարկային տեղեկատու

Հոկտեմբերի 7-13-ն ընկած ժամանակահատվածում դրամավարկային ցուցանիշները հետեւյալն էին.

Դրամական բազա, դրամական զանգված

Փողի բազան աճել է 1 մլրդ 872 մլն դրամով եւ հոկտեմբերի 13-ին կազմել 177 մլրդ 284 մլն դրամ: Զուտ արտաքին ակտիվները (առանց սեփականաշնորհման միջոցների) աճել են 403 մլն դրամով, զուտ ներքին ակտիվները աճել են 1 մլրդ 469 մլն դրամով:

Սեպտեմբերի 30-ից հոկտմբերի 7-ն ընկած ժամանակահատվածում փողի զանգվածն աճել է 603 մլն դրամով եւ հոկտմբերի 7-ին կազմել 331 մլրդ 898 մլն դրամ: Շրջանառության մեջ կանխիկ դրամը նախորդ շաբաթվա համեմատ աճել է 3 մլրդ 31 մլն դրամով, կազմելով 125 մլրդ 990 մլն դրամ: Դրամով ցպահանջ ավանդները աճել են 6 մլն դրամով եւ կազմել 47 մլրդ 822 մլն դրամ: Դրամով ժամկետային ավանդները նվազել են 245 մլն դրամով եւ կազմել 18 մլրդ 336 մլն դրամ: Արտարժույթով ավանդները նվազել են 2 մլրդ 189 մլն դրամով եւ կազմել 139 մլրդ 750 մլն դրամին համարժեք արտարժույթ: Ընդ որում, արտարժութային ցպահանջ ավանդները կազմել են 62 մլրդ 349 մլն դրամ (նախորդ շաբաթվա համեմատ նվազել են 2 մլրդ 672 մլն դրամով), ժամկետայինները՝ 77 մլրդ 401 մլն դրամ (աճը՝ 483 մլն դրամ):

Ֆինանսական շուկա

Հոկտեմբերի 7-13-ն ընկած ժամանակահատվածում թողարկվել են 60-ամսյա 1 մլրդ դրամի ՊՊ՝ 5,2879 տոկոս տարեկան եկամտաբերությամբ եւ մարվել 30-շաբաթյա 500 մլն դրամի ՊՊ՝ 3,6956 տոկոս տարեկան եկամտաբերությամբ:

Շաբաթվա ընթացքում ԿԲ-ը ներգրավել է 2 մլրդ 300 դրամի ավանդ՝ տարեկան 1 տոկոս տոկոսադրույքով եւ մարվել 3 մլրդ 300 դրամի ավանդ՝ տարեկան 1 տոկոս տոկոսադրույքով:

Արտարժույթի շուկա

Հոկտեմբերի 7-13-ն ընկած ժամանակահատվածում ԱՄՆ դոլարի նկատմամբ փոխարժեքն արժեւորվել է 0,30 տոկոսով՝ 447,63 դրամից հասնելով 446,27 դրամի:

Նշված ժամանակահատվածում արժութային շուկայում իրականացվել են շուրջ 46,670 հազ. ԱՄՆ դոլարի առք ու վաճառքի գործարքներ, որոնց միջին կշռված փոխարժեքը կազմել է 445,73 դրամ:

ՀՀ ԿԲ մամուլի ծառայություն

EURASIAN UNDERGRADUATE EXCHANGE PROGRAM

WANT TO STUDY IN THE UNITED STATES?

The US Government invites first-, second-, and third- year undergraduate students (in five year programs) to enter an open competition for the 2006-2007 Eurasian Undergraduate Exchange Program (UGRAD). Finalists will attend classes for one year in a US university or community college!

For more information or application forms contact **IREX Armenia** or visit www.irex.org.
IREX Armenia, 29 Sayat Nova Avenue
Tel: (374 10) 52 66 23, 52 66 21, 52 66 42, www.irex.am

THE APPLICATION DEADLINE IS November 7, 2005, 17:00

MUSKIE

GET YOUR GRADUATE DEGREE IN THE UNITED STATES

The US Government invites graduate students and professionals from Armenia to enter an open competition for the 2006-2007 Edmund S. Muskie Graduate Fellowship Program (Muskie). Muskie can provide YOU with the opportunity for one-year non-degree, one-year degree or two-year degree study in the United States.

For more information or application forms contact **IREX Armenia** or visit www.irex.org.
IREX Armenia, 29 Sayat Nova Avenue
Tel: (374 10) 52 66 23, 52 66 21, 52 66 42, www.irex.am

THE APPLICATION DEADLINE IS October 31, 2005, 17:00

ՄԱՍՆՈՒՅՇՈՒՄ

ԱՃՈՒՐԴ ԱՄԵՐԻԿՅԱՆ ԴԵՍՊԱՆԱՏԱՆԸ

Աճուրդի են հանվում գրասենյակային ու բնակարանային կահույք, համակարգիչներ, մեքենաներ եւ այլ ապրանքներ: Աճուրդային վաճառքը կկայանա 2005 թ. հոկտեմբերի 22-ին եւ 23-ին, ժամը 10:00-19:00 ԱՄՆ դեսպանատան պահեստում, որի հասցեն է Ցարբախ, Արարատյան 90: Ապրանքները կարող եք զննել ուրբաթ օրը, հոկտեմբերի 21-ին, ժամը 10:00-19:00 եւ շաբաթ օրը՝ հոկտեմբերի 22-ին ժամը 9:00-10:00: Զննումն անվճար է:

Լոտերը վաճառվելու են այնպես, ինչպես կան (ԱՄՆ դեսպանատունը վաճառքի հանված ապրանքների որակի վերաբերյալ երաշխիքներ չի ապահովում): Կիրառվող աճուրդային վաճառքի նոր ձեւը թույլ է տալիս գնել լոտի առանձին իրեր. եթե ուզում եք մահճակալ, ապա կարող եք գնել միայն մահճակալը:

Պահեստ մուտք գործելու համար օգտվեք Շահուրի փողոցի կողմի մուտքից:

Այն ֆիզիկական/իրավաբանական անձինք, ովքեր մաքսային վճարումներից զերծ գնումներ կատարելու իրավունք չունեն, պարտավոր են ապրանքը գնելուց հետո ՀՀ համապատասխան մարմինների հետ կարգավորել հարկային եւ մաքսային վճարումների հետ կապված հարցերը:

Մանրամասն տեղեկությունների համար կարող եք այցելել www.usa.am էջի հայտարարությունների բաժին:

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկը հայտարարում է բաց մրցույթ՝ վերստուգիչ խմբի Ֆինանսական աուդիտի բաժնի «վերստուգիչ», Գործառնական աուդիտի բաժնի «վերստուգիչ» եւ տեղեկատվական տեխնոլոգիաների աուդիտի բաժնի «վերստուգիչ» թափուր աշխատատեղերի համար

Մրցույթին կարող են մասնակցել այն քաղաքացիները, որոնք ունեն

- բարձրագույն մասնագիտական (տնտեսագիտական/տեխնիկական) կրթության պարագայում՝ 3 տարվա մասնագիտական աշխատանքային փորձ ՀՀ կենտրոնական բանկում կամ միջազգային աուդիտորական կազմակերպությունում կամ այլ կենտրոնական բանկերի ներքին աուդիտում:
- բարձրագույն ոչ մասնագիտական կրթության պարագայում՝ 5 տարվա մասնագիտական աշխատանքային փորձ ՀՀ կենտրոնական բանկում կամ միջազգային աուդիտորական կազմակերպությունում կամ այլ կենտրոնական բանկերի ներքին աուդիտում:
- գիտելիքներ հետեւյալ ոլորտներում.

Ֆինանսական աուդիտի բաժնի «վերստուգիչ» աշխատատեղի համար՝ աուդիտ, հաշվապահական հաշվառում, ՀՀ եւ միջազգային հաշվապահական եւ աուդիտի ստանդարտների իմացություն, հարկային օրենսդրություն, բանկային գործ, կենտրոնական բանկի գործունեությունը կանոնակարգող իրավական ակտեր եւ օրենքներ, քաղաքացիական օրենսգիրք, հայերեն, ռուսերեն, անգլերեն լեզուների իմացություն

Գործառնական աուդիտի բաժնի «վերստուգիչ» աշխատատեղի համար՝աուդիտ, ներքին հսկողություն եւ կազմակերպության ռիսկերի կառավարում, հաշվապահական հաշվառում, աուդիտի ստանդարտների իմացություն, բանկային գործ, կենտրոնական բանկի գործունեությունը կանոնակարգող իրավական ակտեր եւ օրենքներ, հարկային օրենսդրություն, քաղաքացիական օրենսգիրք, հայերեն, ռուսերեն, անգլերեն լեզուների իմացություն:

Տեղեկատվական տեխնոլոգիաների աուդիտի բաժնի «վերստուգիչ» աշխատատեղի համար՝ ներքին աուդիտ, տեղեկատվական տեխնոլոգիաների կառավարում, հաշվապահական հաշվառում, բանկային գործ, բանկային օրենսդրական եւ նորմատիվային դաշտի տիրապետում, հայերեն, ռուսերեն, անգլերեն լեզուների իմացություն:

Մրցույթին մասնակցել ցանկացողները մինչեւ հոկտեմբերի 25-ը կարող են դիմել ՀՀ կենտրոնական բանկի աշխատակազմի անձնակազմի կառավարման բաժին՝ ներկայացնելով հետեւյալ փաստաթղթերը.

- դիմում (ձեւը տրվում է ՀՀ կենտրոնական բանկում եւ զետեղված է ՀՀ կենտրոնական բանկի էլեկտրոնային կայքում - www. cba. am)
- ինքնակենսագրություն (ռեզյումե)
- կադրերի հաշվառման անձնական թերթիկ (ձեւը տրվում է ՀՀ կենտրոնական բանկում եւ զետեղված է ՀՀ կենտրոնական բանկի էլեկտրոնային կայքում - www. cba. am)
- անձնագրի պատճեն
- սոցիալական քարտի պատճեն
- դիպլոմի եւ դիպլոմի միջուկի պատճեններ
- զինգրքույկի պատճեն (արական սեռի ներկայացուցիչների համար)
- աշխատանքային գրքույկի պատճեն
- երկու գունավոր լուսանկար, 3x4 չափսի

Հեռախոսահամարներ՝ 56-14-40 եւ 06-34 (ներքին)

ՀՀ ԿԲ մամուլի ծառայություն

FOR YOUR INTERNAL NEWS OF ARMENIA
LOG ON TO www.azg.am

ԳՈՎԱԶԴԻ ՀԱՄԱՐ ԶԱՆԳԱՀԱՐԵԼ՝ 56-24-63

Լուսուական գործունեություն իրականացնող՝ «Ազգ օրաթերթ» ՍՊԸ, Երեւան, Հանրապետության 47: Պետական գրանցման վկայականի համարը՝ 02 Ա N 047261, տրված՝ 17.02.00 թ.:
Թողարկման պատասխանատու, գլխ. խմբ. Յակոբ Աւետիսեան: Տպաքանակ՝ 3000, ստորագրված է տպագրության՝ 17.10.2005, գինը՝ 100 դրամ, տպագրում է «Գինդ» տպագրատանը: